# ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Г. Х. САРКИСЯН

# ХРОНОЛОГИЧЕСКАЯ СИСТЕМА „ИСТОРИИ АРМЕНИИ“ МОВСЕСА ХОРЕНАЦИ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1965

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9Ա(47.925)(092 Մովսես Խորենացի

Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

A II 369/13

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1965

Աշխատության մեջ Մովսես Խորենացու ցուցումների հիման վրա վերականգնված է նրա «Հայոց պատմության» ժամանակագրական սիստեմի (համաժամանակյա) աղյուսակը, վեր են հանված և ուսումնասիրված այդ աղյուսակի առանձնահատկությունները, ինչպես և շեղումները՝ ստույգ ժամանակագրությունից: Ցույց է տրված, որ վերջիններիս պատճառը թաքնված է մասամբ Խորենացու աղբյուրների տվյալների, մասամբ էլ՝ աղբյուրների մշակման նրա ուրույն եղանակի մեջ: Բացահայտված են այդ եղանակի էությունը, Խորենացու ստեղծագործական որոշ սկզբունքները, որոնք հնարավորություն են տվել նրան, չնայած իր ունեցած նյութի մի ստվար մասի անստուգությանը, ստեղծելու պատմական իրականությանը բավականաչափ մոտ ժամանակագրական մի համակարգ, որն անփոխարինելի աղբյուր է հայ ժողովրդի պատմության վաղական ժամանակագրությունը կերտելու համար:

Աշխատության մեջ ցույց է տրված նաև, որ բացահայտված ստեղծագործական սկզբունքները կիրառման շատ ավելի լայն շրջանակ ունեն, քան ժամանակագրական համակարգն է, և ընդգրկում են Խորենացու «Հայոց պատմության» նաև այլ բնագավառներ:

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

*Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» հայ ժողովրդի պատմության հին (մինչև մ. թ. ա. IV դար) շրջանին վերաբերող տեղեկությունների մի անսպառ և իր տեսակի մեջ եզակի գանձարան է: Հայկական մյուս աղբյուրները հիշյալ ժամանակաշրջանի մասին Խորենացու երկի համեմատությամբ հաղորդում են շատ քիչ տեղեկություններ: Սակայն «Հայոց պատմության» գանձերը գտնվում են մեծ մասամբ ոչ թե շարադրանքի մակերեսին, այլ նրա ընդերքում. այնտեղից դրանք լույս աշխարհ դուրս բերելը հաճախ կապված է մեծագույն դժվարությունների հետ: Խորենացու երկի ուսումնասիրությամբ զբաղված բանասեր-պատմաբանների թիվն անցնում է տասնյակներից, բայց այս բացառիկ սկզբնաղբյուրի մանրամասն հետազոտությունը դեռ պահանջում է նորանոր ջանքեր:*

*Խորենացուց օգտվելու դժվարությունները երկու տեսակի են: Նախ, հայտնի է, որ որևէ աղբյուրի այս կամ այն տեղեկությունները ստուգման են ենթարկում զուգահեռ աղբյուրների օգնությամբ, իսկ Խորենացին հին Հայաստանի մասին իր տված տեղեկությունների համար մեծ մասամբ զուգահեռ աղբյուր չունի: Եվ ապա՝ այս վիճակը ավելի ևս բարդանում է մի այլ պարագայով: Խորենացին այն հեղինակներից չէ, որոնք միայն վերարտադրում են իրենց կարդացածն ու լսածը: Նա ոչ միայն պատմիչ է, այլև պատմաբան. և գերազանցորեն պատմաբան է: Իր իմացած բազմաթիվ փաստերը նա հետևողականորեն ներմուծում է մանրամասնորեն մշակված ու նպատակադրված մի համակարգի մեջ, լրացնելով դրանք իր*

սեփական դատողություններով ու եզրակացություններով, այն էլ մեծ մասամբ շնչելով վերջինների և փաստերի միջև եղած եզրերն ու սահմանները։

Հասկանալի է ուրեմն, որ այսչափ ինքնատիպ և աղբյուրագիտական տեսակետից այսչափ ուրույն պարագաներում գտնվող մի գործ՝ հետազոտման համար պահանջում է ընդունված սովորական ձևերից ու մեթոդներից բացի, նաև ուրույն, իր առանձնահատկությունը հաշվի առնող եղանակներ։ Անհրաժեշտ է ոչ միայն ստույգորեն բացահայտել նրա աղբյուրները, վերջնական պատասխան գտնել նրա ապրելու ժամանակի ճշգրտման հարցին (այս ուղղություններով է հիմնականում ընթացել մինչև այսօր խորենացիագիտությունը), ոչ միայն ըմբռնել նրա աշխարհայացքը, այլև ներթափանցել Խորենացու աշխատանոցը, ուսումնասիրել նրա՝ պատմական երկ շարադրելու միջոցների զինանոցը, ճանաչել փաստական նյութի մշակման նրա նախասիրած ձևերն ու մեթոդները, տեղյակ դառնալ նրա չափանիշներին, նրա պատմագիտական մտքի ընթացքի, նրա ստեղծագործական հոգեբանության օրինաչափություններին և այլն։ Խնդիրը դժվար է, բայց առանց նրա լուծման մենք ինչպես հարկն է չենք մերձենա Խորենացու բնագրին, չենք կարողանա անհրաժեշտ ճշգրտությամբ վերլուծել այն, զատել իրարից տարաբնույթ տարրերն ու շերտերը, չենք հարթի նրա պատմածից ստույգը, պատմականը վեր հանելու ճանապարհը։

Սույն աշխատությունը հետազոտման նշված ուղղությամբ կատարված մի փորձ է, որի համար առայժմ ընտրել ենք «Հայոց պատմություն» կոչվող մեծ համակարգի ենթամասերից մեկը՝ նրա ժամանակագրական հենքը, որը հայ ժողովրդի պատմության գրավոր ժամանակագրության կարևորագույն աղբյուրներից մեկն է[1]։

---

[1] Աշխատության հիմնական դրույթները զեկուցվել են 1960 թ. Մոսկվայում կայացած Արևելագետների միջազգային 25-րդ կոնգրեսի կովկասագիտության սեկցիայում և հրատարակվել կոնգրեսի նյութերի շարքում ռուսերեն և գերմաներեն լեզուներով։ Տե՛ս Г. Х. Саркисян, О хроно-

Նման ընտրությունը բացատրվում է այն դերով, որ խաղում է ժամանակագրությունը Խորենացու երկում: Այդ դերը կրավորական չէ, ինչպես սովոր ենք տեսնել այլ պատմիչների մոտ, որոնք սոսկ շարում են իրադարձությունները ավանդաբար իրենց հասած ժամանակագրական թելի վրա: Պատմական նյութի բազմաճյուղ, սինքրոնիկ շարադրման այն ձևը, որն ընտրել է Խորենացին, պահանջել է նրանից նախապես ստեղծել ժամանակագրական մի կուռ համակարգ, որը և այնուհետև դարձել է շարադրանքի ծրագիր, պայմանավորելով՝ «Հայոց պատմության» երկրորդ և երրորդ գրքերում (առաջին գիրքը դուրս է մնում համակարգից) պատմվածքի ոչ միայն ընդհանուր ընթացքը, այլ հաճախ մանրամասնությունները: Սրանով ժամանակագրական համակարգի հատկությունները փոխանցվել են և բուն շարադրանքին՝ նրա առավելությունները դարձել են սրա առավելություններ, նրա թերությունները՝ սրա թերություններ:

Այստեղից պարզ է, որ Խորենացու ժամանակագրական համակարգի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն սոսկ ժամանակագրական խնդիրների լուծման առումով (լինեն դրանք «Հայոց պատմության» ներքին ժամանակագրական խնդիրներ, թե հայ ժողովրդի պատմության գիտական ժամանակագրության կերտման խնդիրներ), այլև ընդհանրապես Խորենացու երկի ըմբռնման ու ճիշտ օգտագործման առումով:

Վերջին խնդրում էական նշանակություն ունի նաև հետևյալը: Խորենացու ժամանակագրությունը իզուր չէ, որ «համակարգ» ենք անվանել, այն համակարգ է բառիս բուն իմաստով՝ ծայրեիծայր փոխհամաձայնեցված և ներքուստ անթերի, ներքին հակասություններից բացարձակապես զուրկ (թեև ունի շեղումներ պատմական իրականությունից): Բազմատեսակ, տարաբնույթ ու հաճախ իրերամերժ ժամանակագրական նյութի (որպիսին եղել է Խորենացու ձեռքի տակ) հիման վրա

логической канве „Истории Армении" Мовсеса Хоренаци, „XXV Международный конгресс востоковедов. Доклады делегации СССР", М., 1960. Նույնը գերմաներեն:

այդչափ ներքուստ սլացիկ ու կատարյալ կառույցի ստեղծումը պահանջել է Խորենացուց որոշակի ստեղծագործական մեթոդների ու եղանակների մշակում և կիրառում։ Նույնը, ինչպես երևում է վերը ասվածից, ամբողջապես ու անվերապահորեն վերաբերում է ողջ «Հայոց պատմությանը», նրա բոլոր երեք գրքերին, որոնց սլացիկ ու սահուն շարադրանքը արդյունք է խայտաբղետ ու հաճախ հակասական նյութի՝ որոշակի մեթոդներով ու եղանակներով մանրակրկիտ մշակման։ Եվ ահա Խորենացու ստեղծագործական այդ սկզբունքները, ավելի հստակորեն ու շոշափելի, քան «Հայոց պատմության» որևէ այլ ասպարեզում, դրսևորվում են (և, հետևաբար, առավել դյուրին բացահայտելի և հետազոտելի են) նրա ժամանակագրական համակարգի բնագավառում, շնորհիվ վերջինիս յուրահատկության, այն է՝ նրա՝ թվական տվյալներից կազմված լինելուն։

Խորենացու ապրելու ու ստեղծագործելու ժամանակի պրոբլեմը որպես այդպիսին դուրս է մնացել մեր ներկա ուսումնասիրության շրջանակից։ Համարելով հանդերձ նրան V դարի երկրորդ կեսի հեղինակ, ինչպես այդ ընդունել է սովետական հայագիտությունը, մենք գիտակցաբար խուսափել ենք այդ ընդհանուր դրույթը ներկա աշխատության որևէ դատողության կամ փաստարկման ելակետ դարձնելուց, գտնելով, որ, ընդհակառակը, սույն տիպի ուսումնասիրություններն են, որոնք պետք է հետզհետե նրան սպառիչ հիմնավորում տան։

# I. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ

## 1.

«...Ոչ է պատմություն ճշմարիտ առանց ժամանակագրության»,—ասում է Մովսես Խորենացին, բացահայտելով իր ջերմեռանդ վերաբերմունքը պատմական տարեթվեր փնտրելու և գտնելու նկատմամբ։ Այս տեսակետը, անշուշտ, «Հայոց պատմության» հեղինակի առաջնահերթ տեսակետներից մեկն է եղել, և հենց դրա հետևանքն է այն կուռ ժամանակագրական ցանցը, որով պատված են «Պատմության» երկրորդ և երրորդ գրքերը։

Մովսես Խորենացուց մեզ չեն հասել ժամանակագրական այնպիսի աղյուսակներ, ինչպիսին են, օրինակ, Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» աղյուսակները։ Նրա ժամանակագրական ցուցումները ցրված են «Պատմության» հիշյալ գրքերի ամբողջ բնագրով մեկ (տե՛ս Հավելված Ա)։ Սակայն այդ ցուցումներն այնքան սպառիչ են և կազմում են այնչափ սլացիկ մի համակարգ, որ մեզ ստիպում են մտածել, թե Խորենացին, իր երկը շարադրելիս, ձեռքի տակ միշտ ունեցել է նախօրոք կազմված ժամանակագրական աղյուսակներ, որոնցից էլ վերցրել է իրեն անհրաժեշտ այս կամ այն տեղեկությունը։

Գոյություն ունեն Խորենացու ժամանակագրության ուսումնասիրման երեք հնարավոր տեսանկյուններ։ Առաջին՝ հիմնվելով Պատմահոր ցուցումների ամբողջության վրա, հնարավորին չափ հարազատորեն վերականգնել նրա օգտա-

գործած ժամանակագրական համակարգը, երկրորդ՝ ստուգել այդ համակարգի առնչությունը գիտականորեն ընդունված ժամանակագրության հետ, գտնել նրա առանձնահատկությունները, բացատրել նրա շեղումները, երրորդ՝ օգտագործել նրա տվյալները այս կամ այն ժամանակագրական հարցը ուսումնասիրելիս։ Սույն տեսանկյուններից մեզ ներկա ուսումնասիրության մեջ զբաղեցնում են միայն առաջին երկուսը։

Խորենացու ժամանակագրական տվյալները հետաքրքրել են շատերին, բայց մեծ մասամբ դրանց դիմել են միայն ուտիլիտար՝ պատմագիտության համար անմիջապես տեղեկություններ քաղելու նպատակով։ Անհամեմատ սակավ է եղել թիվն այնպիսի գիտնականների, որոնք զբաղվել են Խորենացու ժամանակագրության ներքին օրինաչափությունների ուսումնասիրմամբ։

Վերջիններից պետք է նշել Ք. Պատկանյանին և Ստ. Մալխասյանցին, որոնք, հետաքրքրվելով հանդերձ Խորենացու ժամանակագրական համակարգի առանձնահատկություններով ու շեղումներով, ձգտել են, սակայն, ոչ թե բացատրել դրանք, այլ «շտկել» համակարգը։ Այսպես, Ք. Պատկանյանը, նկատելով Խորենացու ժամանակագրության ընդհանուր տևողության որոշ պակասը գիտական ուսումնասիրություններում նույն ժամանակահատվածի համար սահմանված տևողության համեմատությամբ, լրացրել է այն՝ Խորենացու ցուցակների մեջ պարթևական մի նոր թագավորի ներմուծումով, որով միմիայն քողարկվել է, բայց ոչ վերացել նրա ժամանակագրական շեղումներից մեկը, ըստ որում մյուս շեղումները մնացել են[1]։ Ստ. Մալխասյանցը, ընդունելով Ք. Պատկանյանի այդ լրացումը, նրան ավելացրել է մի շարք այլ փոփոխություններ, որոնք բոլորն էլ հետապնդում են միևնույն նպատակը՝ հարմարեցնել Խորենացու ժամանակա-

[1] *К. Патканов*, Материалы для армянского словаря, часть II, СПб, 1884, էջ 55։

գրական համակարգը այսօրվա գիտական պատկերացումներին: Այսպիսով, իհարկե, Խորենացու ժամանակագրական կոնցեպցիան ոչ թե բացառվել է, այլ կորցրել իր նկարագիրը[2]: Խորենացու ժամանակագրության հարցերը շոշափել են նաև Ա. Գուտշմիդը[3], Ն. Մառը[4]:

Ռուս հայագետ Ա. Աննինսկին, որը հերթական փորձ է արել վերականգնելու IV—V դդ. հայոց պատմության ժամանակագրությունը, այդ աշխատանքի ընթացքում նաև արժեքավոր դիտողություններ է արել Մ. Խորենացու՝ ժամանակագրության կազմելու մեթոդների մասին[5]: Այդ դիտողություններին կանդրադառնանք համապատասխան տեղերում:

Ն. Ադոնցն էր միակը, որ ձեռնամուխ եղավ Խորենացու ժամանակագրական աղյուսակի քննական վերարտադրմանը, և հասավ զգալի հաջողությունների ինչպես այդ աղյուսակի ընդհանուր պատկերի վերականգնման գործում, այնպես էլ մի շարք մասնավոր տվյալների ճշգրտման ասպարեզում[6]:

Ուստի և մենք խնդրո առարկա ժամանակագրական աղյուսակի վերականգնման այս նոր փորձում նշանակալից չափով հենվում ենք Ն. Ադոնցի կատարածի վրա:

---

2 Ստ. Մալխասյանց, *Սեբեոսի Պատմությունը և Մովսես Խորենացի, Թիֆլիս, 1899, էջ 20 և հետ. և Մովսես Խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար թարգմանության՝ Խորենացու ժամանակագրությանը նվիրված համառոտ հավելվածը (առաջին հրատ., Երևան, 1940, երկրորդ՝ Երևան, 1961):*

3 *A. Gutschmid*, Ueber die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren, „Ver. der königl. Sächs. Gesellschaft der Wiss.“, philos.-hist. Klasse, Bd. XXIII, 1876.

4 *Н. Я. Марр*, О Начальной истории Армении Анонима. К вопросу об источниках истории Моисея Хоренского, „Византийский временник“, I, 1894, *էջ 283 և հետ.:*

5 *А. Аннинский*, Древние армянские историки как исторические источники, Одесса, 1899.

6 *Н. Адонц*, „Начальная история Армении“ у Себеоса в её отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского, „Византийский временник“, VIII, 1901, 1—2.

## 2.

Խորենացու օգտագործած ժամանակագրական համակարգը վերականգնելու համար «Հայոց պատմության» տեքստում գտնում ենք չորս տիպի ցուցումներ. նախ՝ **բացարձակ** թվական տվյալներ գրեթե բոլոր թագավորների և անխտիր բոլոր կաթողիկոսների իշխած տարիների տևողության մասին, երկրորդ՝ **հարաբերական** համաժամանակյա (սինքրոնիկ) թվական տվյալներ, որոնք կապակցում են հայոց թագավորների իշխանության տարեթվերը մի կողմից պարթև-պարսկական արքաների, մյուս կողմից՝ հռոմեական իշխողների կառավարման տարեթվերի հետ, իսկ հայ կաթողիկոսներինը՝ հայոց թագավորների տարեթվերի հետ, երրորդ՝ **հանրագումարային** տիպի թվական տվյալներ, որոնք ցույց են տալիս երկու տարբեր պատմական իրողությունների միջև ընկած ժամանակահատվածի տևողությունը: Չորրորդ տիպի ժամանակագրական ցուցումները թվեր չեն պարունակում. նրանք **նկարագրական** ձևով կապակցում են այլևայլ պատմական անցքերը կամ պատմական դեմքերին այնպիսի անունների հետ, որոնք թվագրված են առաջին երկու տիպի ցուցումներով: Այս չորրորդ տիպի ցուցումները, թվեր չպարունակելով հանդերձ, նույնպես ծայրեիծայր հիմնված են երևում Խորենացու նախօրոք ունեցած մի ժամանակագրական աղյուսակի վրա: Իսկ մի քանի դեպքերում էլ դրանք այնքան հստակ ու կոնկրետ են, որ հավասարազոր են դառնում թվական տվյալներ պարունակող ցուցումներին: Մյուս դեպքերում դրանք հնարավորություն են տալիս եթե ոչ ճշգրիտ, գոնե մոտավոր կերպով իմանալու զանազան անձերի ու դեպքերի վերաբերյալ Մովսես Խորենացու ընդունած թվագրությունը:

Թվարկած չորս տիպի ցուցումներից կարևորագույններն են, իհարկե, առաջին երկուսը: Պետք է ասել, որ միշտ չէ, որ դրանք պահպանվել են անաղարտ: Մի շարք դեպքերում աղճատված են, մի-երկու դեպքում էլ՝ թերևս կորած: Սխալներն ու բացերը ճշտելու և վերականգնելու հնարավորություն են

ընձեռում նախ և առաջ, նրանց բաղդատումը Խորենացու բուն մնացյալ ժամանակագրական տվյալների հետ, ապա և՝ ձեռագրերի տարընթերցումները, որոնցում նախնական թվերը հաճախ պահպանվել են։ Վերջապես այդ գործում լուրջ հենարան է ծառայում նաև հետևյալ հանգամանքը։ V դարից այս կողմ ապրած հայ պատմիչների ժամանակագրական համակարգերը փոխադարձ սերտ կապեր են դրսևորում, իսկ այնչափով,-որչափով խոսքը մինչև V դարն ընկած շրջանի պատմության ժամանակագրության մասին է, հիշյալ համակարգերը այս կամ այն կողմից առնչվում են Խորենացու ժամանակագրության հետ։ Բացի Սեբեոսից, մնացած հեղինակների՝ Մովսես Կաղանկատվացու, Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու, Ստեփանոս Ասողիկի, Ուխտանեսի, Սամուել Անեցու, Կիրակոս Գանձակեցու և ուրիշների ժամանակագրությունների կապերը Խորենացու համակարգի հետ շատ պարզ բնույթ են կրում՝ բոլորն էլ սերված են վերջինից։ Սրանով հնարավորություն է ստեղծվում տեղ-տեղ ստուգել ու ճշտել Խորենացու առկա ձեռագրերի որոշ աղճատված ընթերցումներ։

Առանձնակի դեր են դրավում այս տեսակետից Սեբեոսի «Պատմության» երկրորդ և երրորդ գլուխներում տեղ գտած ժամանակագրական աղյուսակները։ Խոսքն այստեղ և առաջիկայում էլ երկրորդ գլխի պարթևական և հայկական թագավորների զատ-զատ ներկայացված շարքերի և երրորդ գլխի եռաշար, մասամբ էլ՝ երկշար համաժամանակյա աղյուսակների մասին է։ Սրանց աղերսի փաստը ևս՝ Խորենացու ժամանակագրության հետ, կասկածի տեղիք չի տալիս, բայց այդ աղերսը մյուսների նման անմիջական ու տարրական բնույթ չի կրում։ Այս հարցի վերաբերյալ հակառակ տեսակետների վրա են կանգնած Ն. Ադոնցը և Ստ. Մալխասյանցը։ Վերջինս պնդում է, թե Սեբեոսն էլ մյուսների նման օգտվել է Խորենացուց, իսկ Ադոնցը, ընդհակառակը, համոզված է, որ Խորենացին է իր «Հայոց պատմության» տվյալները քաղել Սեբեոսից։ Մյուս կողմից Ն. Ադոնցը ընդունում է նաև

Խորենացու ծանոթության փաստը այն աղբյուրի հետ (որը նա համարում է Փավստոսի երկի կորած մասերը), որից, միջնորդված ձևով, գալիս են նաև Սեբեոսի «Պատմության» երկրորդ գլխի ժամանակագրական տվյալները։ Մենք ներքևում մանրամասն կանդրադառնանք այդ խնդրի քննարկմանը, բայց այժմ էլ հարկ է ընթերցողի կողմնորոշման համար երկու խոսքով ներկայացնել մեր տեսակետի էությունը։

Մեր կարծիքով Խորենացին և նրա հետևորդները՝ մի կողմից, Սեբեոսը կամ ավելի լավ է ասել՝ Անանունը՝ մյուս կողմից, ունեն ժամանակագրական տարբեր համակարգեր։ Մենք վերադառնում ենք անցյալում կիրառված ու այժմ անտեսվող թվացող «Անանուն» հորջորջմանը այն պատճառով, որ Գ. Աբգարյանի վերջին հետազոտությունները պարզեցին, որ մեզ հետաքրքրող հատվածը առնչություն չունի Սեբեոսի «Պատմության» հետ և կցվել է նրան թյուրիմացաբար[7]։ Խորենացու և Անանունի ժամանակագրությունների միջև գոյություն ունեն

---

7 Տասնամյակներ տևող վեճը մոտենում է իր վախճանին։ Գ. Աբգարյանը ոչ միայն ցույց է տալիս, որ Սեբեոսի երկին կից հատվածը պատահաբար է կցվել այդ երկին, այլև հետաքրքրական փորձ է անում գտնել հատվածի իսկական հեղինակին։ Այդ հեղինակն է, նրա կարծիքով, 11-րդ դարի պատմիչ Հովհան Տարոնացին, որը գրել է Բագրատունիների պատմությունը։ Սրա աշխատությունից մեզ հասել է մի փոքր հատված միայն, որը Գ. Աբգարյանը գտնում է, որպես խնդրո առարկա հատվածին կից մի հատված, բաժանված նրանից մի կորած թերթով։ Գ. Աբգարյանը վերլուծում է նաև Սեբեոսին կից հատվածի բովանդակությունը աղբյուրագիտական տեսակետից և գալիս կարևոր եզրակացության, որ դա մի բանաքաղություն է, բայց որում բանաքաղը շատ հարազատորեն պահպանել է քաղվող հատվածների ոչ միայն բովանդակությունը, այլև խոսքի ձևը, չփոխելով անգամ քերականական ձևերը։ Հատվածի առաջին մասի (մինչև Խորենացու և Ստ. Տարոնացու հիշատակությունը) հեղինակը, ըստ Գ. Աբգարյանի, V դարի պատմիչ է և համընկնում է Բուզանդարանի հեղինակի կամ հեղինակներից մեկի հետ։ Խորենացու և Ստ. Տարոնացու անունները պարունակող խորագիր ունեցող գլուխը, որը շատերի կողմից ընդմիջարկում է համարվել, Գ. Աբգարյանը առաջարկում է դիտել որպես Հովհան Տարոնացու երկի օրինական և օրգանական մաս, քաղված նրա ձեռքի տակ եղած Ստ. Տարոնացու (Ասողիկի) գործերից, նույն հիմունքներով, ինչ որ և

կապեր, սակայն դրանք անմիջական չեն, ինչպես կարծում էին Ն. Ադոնցն ու Ստ. Մալխասյանցը։ Կապերը ծագում են որոշակի աղբյուրների օգտագործումից։ Ժամանակագրական որոշ հատվածների համար Խորենացին և Անանունը ունեցել են ընդհանուր աղբյուրներ, մյուս հատվածների համար՝ տարբեր։

Նկատի ունենալով այս հանգամանքը ու ելնելով Խորենացու աղյուսակի վերականգնման մեր առջև կանգնած խնդրի հետ կապված գործնական պահանջներից, մինչև իր տեղում մեր տեսակետի մանրամասն հիմնավորմանը անդրադառնալը, ընդունենք առայժմ որպես օժանդակ վարկած, թե Անանունի ժամանակագրությունն ի վիճակի է, թեև այլ հիմունքներով, քան հիշատակված մյուս պատմիչների տվյալները, նպաստել Խորենացու այս կամ այն ցուցման մեջ գրիչների մեղքով ներս սպրդած սխալը սրբագրելու համար։

Խորենացու ժամանակագրությունն սկսվում է Սելևկոս Նիկատորի իշխանության առաջին տարվանից և, այսպիսով, ժամանակի հաշիվը նրա մոտ համընկնում է Սելևկյան տոմարի հետ (մ. թ. ա. 311 թ.)[8]։ Ժամանակագրությունն ընթանում է չորս զուգահեռ, միմյանց հետ սինքրոնացված, գծե-

---

մնացած հատվածները քաղված են այլ աղբյուրներից (տե՛ս Գ. Աբգարյան. Կարծեցյալ Ստեփանոս Տարոնացին նույն ինքը Ստեփանոս Տարոնացի Ասողիկն է, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 1, էջ 210 և հետ., նույնի «Երկու տարբեր հեղինակներ Սեբեոսին վերագրվող պատմությունում», «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 25 և հետ., նույնի «Մամիկոնյանների զրույցի հնագույն աղբյուրը հայ մատենագրության մեջ» (Բուզանդարանի կորած գրությունների կապակցությամբ), «Բանբեր Մատենադարանի», № 7, 1964, էջ 237 և հետ.)։

[8] Սելևկյան տոմարի ելակետն է մ. թ. ա. 312 թ. դիոս (հոկտեմբեր) ամիսը, որով այդ թվականի վրա տոմարի առաջին տարվանից ընկնում է միայն 3 ամիս, իսկ մնացած 9 ամիսները բաժին են ընկնում հաջորդ՝ 311 թվականին։ Այսպիսով ավելի դյուրին է հաշվել սելևկյան տոմարը 311 թվականի սկզբից, չմոռանալով, իհարկե, արված վերապահության մասին։ Տե՛ս V. *Grumel*, Traité d'études byzantines, I. La chronologie. P., 1958, էջ 209։

բով։ Դրանցից առաջին գիծը կազմում է սելևկյան-պարթևական-սասանյան թագավորների հաջորդական շարքը, որը շարունակում է մինչև Հազկերտ 2-րդի թագավորության առաջին տարին՝ 439 թվականը։ Այս գծի հետ սինքրոնացված է հայ թագավորների շարքը՝ Վաղարշակից մինչև Արտաշես վերջինը։ Մյուս կողմից այս շարքը մի քանի կետերում սինքրոնացված է հռոմեական երեք կայսրերի հետ (Դիոկղետիանոս, Կոստանդիոս 2-րդ, Թեոդոս 1-ին), որոնք, շնորհիվ այս հանգամանքի, իրենց ամուր տեղն ունեն Խորենացու ժամանակագրության մեջ, մինչդեռ հռոմեական շարքի մյուս կայսրերը, ինչպես և այլ գործիչներ ու սրանց հետ կապված տարբեր անձնավորություններ, սկսած Միհրդատ Պոնտացուց և վերջացրած Թեոդոս 2-րդով, թվագրված են, ինչպես ասացինք վերը, միայն մոտավոր ճշտությամբ։ Վերջին՝ չորրորդ գիծը հայ կաթողիկոսների շարքն է, Գրիգոր Լուսավորչից մինչև Սահակ Պարթև, որը սինքրոնացված է հայ թագավորների գծի հետ, բացառությամբ Սահակ կաթողիկոսի մահվան տարեթվի, որը սինքրոնացված է, այդ պահին այլևս հայ Արշակունիների բացակայության հետևանքով, Սասանյանների հետ և հանդիսանում է Խորենացու ժամանակագրական համակարգի եզրափակիչ տարեթիվը։

Ընթերցողին ներկայացվող առաջիկա աղյուսակը ծայրեիծայր կազմված է բացառապես Խորենացու տվյալների հիման վրա և ընդգրկում է նրա բոլոր այն ցուցումները, որոնք թվեր են պարունակում։ Նկարագրական ցուցումները թողնված են հետագա աղյուսակին (№ 5), բացառությամբ երկուսի, առաջին՝ Քրիստոսի ծննդյանը վերաբերող ակնարկի (Հավելված Ա, № 13), որն անհրաժեշտ է տվյալ աղյուսակի մեջ՝ ընդհանուր կողմնորոշման համար և, բացի դրանից, իր հստակությամբ մոտենում է թվական տվյալներին, և երկրորդ՝ Շապուհ 1-ինի գահակալման տարվա մասին նույնչափ հստակ ցուցումի (Հավելված Ա, № 33), որը լրացնում է պակասող թվական տվյալները։ Մեր կատարած միակ ներմուծումը աղյուսակում՝ տարիների միջանցիկ թվարկումն է՝ սկսած

աղյուսակի սկզբից մինչև վերջ (աղյուսակի առաջին սյունակը), մի բան, որ արված է աղյուսակի ընկալումը դյուրացնելու համար և չի էլ կարող լրիվ իմաստով ներմուծում համարվել, քանի որ փաստորեն ընկած է Խորենացու հաշիվների հիմքում։

Իշխողների տարիների բացարձակ քանակն արտահայտող ցուցումները տրված են սովորական տառերով, հարաբերական սինքրոնացնող ցուցումները՝ շեղատառով։ Փակագծից դուրս ու առանց աստղանիշի տրված են Խորենացու ձեռագրերում հարազատորեն պահպանված թվերը։ Փակագծերի մեջ տրված են Խորենացու առկա ձեռագրերում աղճատված ձևով հանդես եկող թվերը, աստղանշանով՝ այլ աղբյուրների տվյալների կամ իր իսկ Խորենացու զուգահեռ տվյալների հիման վրա մեր կողմից ճշտված թվերը, ինչպես նաև Խորենացու մոտ պատահաբար բացակայող ու մեր կողմից վերականգնված թվերը։ Ճշտման ու վերականգնման բոլոր դեպքերի կապակցությամբ տրված են ծանոթությունները։ Վերջին սյունակում ներկայացված թվերը սույն աշխատության Ա. Հավելվածում հավաքված՝ Խորենացու ժամանակագրական ցուցումների համապատասխան հերթական համարներն են։ Դրանք հնարավորություն են տալիս ընթերցողին անմիջապես հետևելու, թե կոնկրետ ո՛ր ցուցման վրա է հիմնված աղյուսակի տվյալ թիվը կամ անունը։

A II / 36913

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Աղյուսակ 1

| Միջանցիկ թվարկում | Սելևկյան-պարթևական-սասանյան թագավորների շարքը | Հայոց թագավորների շարքը | Հայոց կաթողիկոսների շարքը | Հռոմեական շարքը | Խորենացու ցուցմունքը (տես Հավելված Ա) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Սելևկոս—31 | | | | 1 |
| 32 | Անտիոքոս Սոտեր—19 | | | | 1 |
| 51 | Անտիոքոս Թեոս—10 | | | | 1 |
| 61 | Արշակ Քաջ—31 | | | | 1, 2, 29 |
| 92 | Արտաշես—26 | | | | 2, 29 |
| 118 | Արշակ Մեծ—53 | | | | 2, 29 |
| 159 | | Վաղարշակ—22 | | | 3, 4 |
| 171 | Արշական—30 | Վաղարշակի 13-րդ տարին | | | 29 |
| 181 | | Արշակ—13 | | | 5 |
| 194 | Արշականի 24-րդ տարին | Արտաշես—25 | | | 6, 7 |
| 201 | Արշանակ—32* (31) | | | | 29 |
| 219 | Արշանակի 19-րդ (49-րդ) տարին | Տիգրան—33 | | | 8, 9 |
| 233 | Արշեզ—22* (20) | | | | 29 |
| 252 | | Արտավազդ—2* | | | 10 |
| 254 | Արշեզի 22*-րդ (20-րդ) տարին | Արշամ—20 | | | 11, 12 |
| 255 | Արշավիր—46 | | | | 29 |
| 274 | Արշավիրի 20-րդ տարին | Աբգար—38 (32) | | | 13, 14 |
| 275 | | Աբգարի 2-րդ տարին | | Հիսուս Քրիստոսի ծնունդը | 13 |
| 301 | Արտաշես—34 (33) | | | | 30 |
| 312 | Արտաշեսի 12-րդ տարին | Սանատրուկ—30 | | | 15, 16 |
| 335 | Դարեհ—30 | | | | 30 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 342 | Դարեհի 8-րդ տարին | Երվանդ—21* (20) | | | 17, 18 |
| 363 | Դարեհի 29-րդ տարին | Արտաշես—41 | | | 19, 21 |
| 365 | Արշակ —17* (19) | | | | 20, 30 |
| 382 | Արտաշես—20 | | | | 20, 30 |
| 402 | Պերոզ—34 (33) | | | | 30 |
| — | | Արտավազդ—0 | | | 22 |
| 404 | Պերոզի 3-րդ (2-րդ) տարին | Տիրան—21 | | | 23, 24 |
| 425 | Պերոզի 24-րդ (20-րդ) տարին | Տիգրան—42 | | | 25 |
| 436 | Վաղարշ—50 | | | | 30 |
| 467 | Վաղարշի 32-րդ տարին | Վաղարշ—20 | | | 26, 27 |
| 486 | Արտավան—36* (31) | | | | 30 |
| 487 | Արտավանի 2-րդ (3-րդ) տարին | Խոսրով—48 | | | 28, 31 |
| 522 | Արտաշիր 1-ին—40* | | | | 30, 33 |
| 535 | | Արտաշիր—26 | | | 32 |
| 561 | | Շապուհ—1 | | | 32 |
| 562 | Շապուհ 1-ին—46* | Տրդատ—56 (50), | | Դիոկղետիանոսի 3-րդ (2-րդ) տարին | 32, 33, 34, 39 |
| 578 | | Տրդատի 17-րդ տարին | Գրիգոր Լուսավորիչ—30 | | 36, 37 |
| 607 | | Տրդատի 46-րդ տարին | Լուսավորչի մահը | | 37 |
| 608 | Ներսեհ—9 | Տրդատի 47-րդ տարին | Արիստակես—7 | | 35, 37 |
| 614 | | Տրդատի 53-րդ տարին | Արիստակեսի մահը | | 37 |
| 615 | | Տրդատի 54-րդ տարին | Վրթանես—15 | | 38 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 617 | Որմիզդ—3 | | | | 35 |
| 618 | Որմիզդի 2-րդ տարին | Խոսրով Կոտակ—9 | | Կոստանդիանոսի 8-րդ տարին | 40, 41 |
| 620 | Շապուհ 2-րդ—70 | | | | 63 |
| 627 | | Տիրան—11 (16) | | Կոստանդիանոսի 17-րդ տարին | 42, 46 |
| 629 | | Տիրանի 3-րդ տարին | Վրթանես մանր | | 43 |
| 630 | | Տիրանի 4-րդ տարին | Հուսիկ—6 | | 43, 44 |
| 636 | | Տիրանի 10-րդ տարին | Փառներսեհ—3* (4) | | 45 |
| 638 | | Արշակ—30 | | | 47, 49 |
| 639 | | Արշակի 2-րդ տարին | Ներսես—34 | | 48, 50 |
| 668 | | Պապ—7 | | | 52 |
| 673 | | | Շահակ—3 (4) | | 51 |
| 675 | Շապուհի 56*-րդ (55-րդ, 57-րդ) տարին | Վարազդատ—4 | | Թեոդոսի 20-րդ տարին | 53, 54 |
| 676 | | Վարազդատի 2-րդ տարին | Զավեն—4 (3) | | 55 |
| 679 | | Արշակ և Վաղարշակ—5 | | | 56, 60 |
| 680 | | Արշակի 2-րդ տարին | Ասպուրակես—6*(5) | | 57 |
| 684 | | Խոսրով—5 | | | 59, 62 |
| 686 | | Խոսրովի 3-րդ տարին | Սահակ Պարթև—51 | | 61, 77 |
| 689 | | Վռամշապուհ—21 | | | 62, 67 |
| 690 | Արտաշիր 2-րդ—4 | | | | 63 |
| 691 | Վռամ 1-ին—10 | | | | 64 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| --- | --- | --- | --- | --- | --- |
| 704 | Հազկերտ 1-ին—11 | | | | 69 |
| 710 | | Խոսրով (կրկին)—1 | | | 68 |
| 711 | | Շապուհ պարսիկ—4 | | | 68, 69 |
| 715 | Վռամ 2-րդ—21 | Անիշխանություն-3 | | | 70, 71 |
| 718 | | Արտաշես—6 | | | 72 |
| 723 | | Արշակունիների բարձումը | | | 73 |
| 724 | | | Սուրմակ—1 | | 73, 74 |
| 725 | | | Բրքիշո—3 | | 74 |
| 728 | | | Շմուել—5 | | 75 |
| 736 | Հազկերտ 2-րդի 1-ին տարին | | Սահակ Պարթևի մահը | | 76, 77 |

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ[1]

1 *Սկսելով Սելևկոս 1-ինի առաջին տարվանից՝ Խորենացու ժամանակագրական հաշիվը փաստորեն համընկնում է սելևկյան տոմարի հետ (տե՛ս ներքևում, ծանոթ. 61)։*

32 *Խորենացին իր ժամանակագրական հաշիվներում գործ է ածում միմիայն ամբողջ թվեր, կոտորակներ այստեղ չկան գոնե։ Մի թագավորի իշխանության վերջը և հաջորդի սկիզբը երբեք չեն ընկնում նույն տարեթվի վրա. նոր իշխողի տարիները հաշվվում են միշտ նոր տարվանից։*

51 *Խորենացին պետք է գիտենար (Եվսեբիոս Կեսարացուց), որ Անտիոքոս Թեոսը իշխել է տասից ավելի տարիներ, բայց մնացյալ տարիները նրան չէին հետաքրքրում, որովհետև այդ թագավորի 11-րդ տարում նա թողնում է Սելևկյանների շարքը և անցնում պարթևական շարքին, որը այսպիսով Խորենացու աղյուսակում Սելևկյանների շարքի անմիջական շարունակությունն է կազմում (Մ. Խոր., II, Ա)։*

61 *Խորենացու պատկերացմամբ Սելևկոս 1-ինը անմիջապես հաջորդել է Ալեքսանդր Մակեդոնացուն. նշելով առաջին երեք Սելևկյանների իշխանության տարիները՝ 31, 19 և 10 (գումարը հավասար է 60-ի), և հաղորդելով, որ նրանցից վերջինի 11-րդ տարում պարթևները ապստամբեցին, Խորենացին հաջորդ գլխում (II, Բ) գրում է. «Որպէս ասացաք, յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի՝ թագաւորէ ի վերայ Պարթևաց Արշակ Քաջն» (Հավելված Ա, № 2)։ Այս հաղորդումը սկզբունքային նշանակություն ունի Խորենացու ամբողջ ժամանակագրական համակարգը ըմբռնելու համար։ Ինչպես ասվեց, Խորենացու մոտ տարիների հաշիվը Սելևկոս 1-ինի գահակալման տարվանից սկսելով, համընկնում է սելևկյան տոմարի հետ։ Վերոհիշյալ ցուցումը վկայում է, որ այդ համապատասխանությունը պատահական բնույթ չի կրում և որ Խորենացին իսկապես օգտվել է սելևկյան տոմարից. այս թեզը մենք ներքևում դեռ կամրապնդենք նոր փաստերով։ Սելևկյան տոմարը Հայաստան է թափանցել դեռ շատ վաղուց։ Արմավիրի հունարեն արձանագրություններից մեկը ամիսների մակեդոնյան անունների ցանկ է[2], մի*

---

[1] *Ծանոթությունները ներառող թվերը աղյուսակի 1-ին սյունակի թվերն են։*

[2] *А. И. Болтунова*, Греческие надписи Армавира, „Известия Арм. ФАН СССР", 1942, № 1—2, էջ 45։

*րան, որ մասամբ պիտի լիներ հարևան Սելևկյան պետությունից, և ամենայն հավանականությամբ, ոչ թե ինքնուրույն կերպով, այլ որպես սելևկյան տոմարի բաղադրիչ մի մաս։ Արմավիրի այդ արձանագրությունները Հ. Մանանդյանը համոզիչ կերպով թվագրում է մ. թ. ա. III—II դարերի սահմանագծին հարող ժամանակով*[3]*։ Սելևկյան տոմարով է թվագրված, ինչպես ցույց է տվել Մ. Ռոստովցևը, Ապարանի հունարեն արձանագրությունը (մ. թ. IV դարի սկիզբ)*[4]*։ Հիմք կա սրեմն կարծելու, որ այդ տոմարը օգտագործվել է Հայաստանում (թերևս այլ տոմարների շարքում) երկու այդ հուշարձանների միջև ընկած վեց հարյուրամյակների ընթացքում, իսկ Խորենացու օրինակը ցույց է տալիս, որ այն խորթ չի եղել հայերին հետագայում ևս։ Տարօրինակ բան չկա այստեղ. հարևան Ասորիքում, որի հետ սերտ ու բազմակողմանի (հատկապես գրական ու պատմագրական) կապերով կապված է եղել Հայաստանը, այս տոմարից օգտվելիս են եղել ամբողջ միջնադարի ընթացքում։*

92 *Ք. Պատկանյանը Խորենացու աղյուսակի պարթև արքաների շարքում Արտաշես 1-ինի և Արշակ Քաջի միջև ներմուծում է մի թագավոր, 20 տարի իշխանությամբ, որով ջանում է վերացնել Պարթև Արշակունիների հարստության իրական տևողության և Խորենացու ժամանակագրության տվյալների միջև եղած տարբերությունը*[5]*։ Սա մի կարկատան է Խորենացու ներքուստ ներդաշնակ ու սլացիկ ժամանակագրական համակարգի վրա, որի պակասությունները և գիտական ժամանակագրությունից ունեցած շեղումները, ինչպես կպարզվի հետագա ուսումնասիրության ընթացքում, կրում են օրգանական բնույթ և «շտկման» ենթակա չեն։*

---

[3] Հ. Մանանդյան, *Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ*, Երևան, 1946, էջ 40 և հետ.։

[4] *М. И. Ростовцев*, Апаранская греческая надпись царя Тиридата. СПб, 1911 („Анийская серия", № 6), էջ 25 և հետ.։ Կ. Վ. Տրևերը („Очерки по истории культуры древней Армении", М.—Л., 1953, էջ 280) հակված է կարծելու, թե արձանագրության տվյալները բավարար չեն այդպիսի հետևության համար, քանի որ պահպանվել է տողի վերջին մասը միայն։ Սակայն արձանագրության իր իսկ բերած պատճենում (էջ 172) կարդացվող տառերը լրիվ արդարացնում են Ռոստովցևի կռահումը։

[5] *К. Патканов*, հիշ. աշխ., էջ 55։

159 Վաղարշակի գահակալման տարին առանձին չի նշված Խորենացու մոտ։ Մենք այն իմանում ենք Խորենացու սինքրոնիկ մի այլ ցուցումից, որը կապում է Վաղարշակի 13-րդ տարին պարթևական Արշական արքայի 1-ին տարվա հետ (Հավելված Ա, № 29). այստեղից է, որ հաշվելով գտնում ենք, թե Արշակ Մեծը Վաղարշակին թագավորեցրել է Հայաստանում իր իշխանության 42-րդ տարում։ Պետք է նշել, ընդհանրապես, և սույն օրինակը այս տեսակետից ցայտուն է, որ Խորենացին սինքրոնացնող ժամանակագրական ցուցումներ տալու կամ գանց առնելու դեպքում միշտ չէ, որ հիմնվում է իր նշած իրողության կարևորության կամ անկարևորության վրա։ Այսպես, նա չի տալիս սինքրոնացնող ցուցում նաև հայ Արշակունիների բարձման տարեթվի համար, այնինչ բազմաթիվ այլ, հենց իր աչքում պակաս կարևոր իրողություններ արժանացել են նրա սինքրոնիկ ցուցումներին (տե՛ս Հավելված Ա)։

201—254 Ն. Ադոնցը իրավացիորեն նշում է, որ եթե հետևելու լինենք Խորենացու տեքստում Արշամակի իշխանության տարիների քանակությունը սահմանող 31 թվանշանին, և Արշեզի՝ 20 թվանշանին, ապա Տիգրանին տրված 33 տարիներից աղյուսակում կտեղավորվեն հազիվ 32-ը, իսկ Արտավազդը իսպառ կզրկվի իշխանության տևողությունից։ Ճիշտ է, վերջինիս համար Խորենացին տարիների թիվ չի նշում, բայց նրա պատմածը Արտավազդի գործունեության, նույն թվում՝ արշավանքի մասին (Հավելված Ա, № 10), թույլ է տալիս ենթադրելու, որ Խորենացին նրա իշխանության ժամանակաշրջանը չի սահմանափակել օրերով կամ շաբաթներով (ինչպես նա այդ արել է Արտաշեսի որդի Արտավազդի նկատմամբ, տե՛ս Հավելված Ա, № 22), և որ համապատասխան թիվը պատահաբար է բացակայում Խորենացու ցուցումների շարանում, ինչպես, օրինակ, բացակայում են նաև Արտաշիր Պապականի և Շապուհ I-ինի իշխանության տևողությունն արտահայտող թվերը, թեև նրանցից յուրաքանչյուրը ըստ Խորենացու իսկ նկարագրության, մի քանի տասնյակ տարի է իշխել (տե՛ս ծանոթ. 522—562)։ Ադոնցը առաջարկում է ընդունել Արշամակի համար 31-ի փոխարեն 32 տարի, հենվելով Սեբեոսի տված տեղեկության վրա (այդպես է և Անանունի մոտ, որ Արշամակին համապատասխանող Աշնաշին տրված է 32 տարի), իսկ Արշեզի համար՝ 22 տարի (Անանունի մոտ էլ սրան համապատասխանող Արշենին հենց այդ թիվն է տրված)։ Մեզ միանգամայն ընդունելի թվացող այս ճշտման դեպքում Տիգ-

թանը ստանում է իր 33 տարին, և Արտավազդին էլ դեռ մնում է 2 տարի։

275 Ահա Խորենացու ցուցումը Քրիստոսի ծննդյան տարեթվի մասին. «Ի սորա (Արգարի—Գ. Ա.) երկրորդ ամի թագաւորութեանն հարկին Հռոմայեցւոց բոլորովիմբ ամենայն կողմանքն Հայոց... Յայսու ժամանակաւ լինի ծնեալ Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ» (II, ԻԶ)։ Չնայած «յայսու ժամանակաւ» արտահայտությանը, ցուցումը բավական հստակ է. տատանումը հազիվ թե կարող է մեկ տարվանից ավելի լինել, ուստի և մեր հաշիվներում ընդունել ենք, թե ըստ Խորենացու Քրիստոսը ծնվել է Արգար թագավորի 2-րդ տարում։

342 Երվանդին տեքստում պահպանված 20-ի փոխարեն պետք է տալ 21 տարի, ինչպես հետևում է հենց իր Խորենացու սինքրոնացնող տվյալներից, ըստ որոնց Երվանդի թագավորության սկիզբը համապատասխանում է պարթև Դարեհի 8-րդ տարվան, իսկ Երվանդի հաջորդ Արտաշեսի գահակալության սկիզբը՝ նույն Դարեհի 29-րդ տարվան։ Ըստ Անանունի ևս Երվանդը թագավորել է 21 տարի։

263—404 Հայոց Արտաշեսի 41 տարիները, ըստ սինքրոնիկ տվյալների, պետք է համապատասխանեն պարթև Դարեհի վերջին երկու տարիների, Արշակի և Արտաշեսի բոլոր տարիների և Պերոզի առաջին երկու տարիների գումարին, սակայն առկա տեքստում երկու տարով պակաս են։ Հավասարության համար այդ երկու տարիները պետք է կամ ավելացվեն Հայոց Արտաշեսի տարիներին, կամ պակասեցվեն պարթևական թագավորների տարիներից։ Ընտրությունը ընկնում է պարթև Արշակի վրա, որի տարիների քանակությունը Խորենացու 19-ի դիմաց Անանունի մոտ սահմանված է 17 (տե՛ս Ադոնցի հիշյալ աշխատությունը, էջ 84)։ Այս 17 թիվը, ինչպես նաև 201—254 թվանշանների տակ ծանոթագրած Արշեղի 22 թիվը չկան Ասողիկի մոտ, որն ունի այնպես, ինչպես կա Խորենացու այժմյան տեքստում (19 և 20)։ Աղճատումը, ուրեմն, Ասողիկից առաջ է տեղի ունեցել։ Այն փաստը, որ հիշյալ թվերի խոտորումներն իրար հավասարակշռում են (+2, —2), ենթադրել է տալիս, որ այդ թվերի աղճատման մեջ կապ կա՝ մեկը պատահաբար աղճատվելուց հետո, մյուսը սրա համեմատ գիտակցաբար փոփոխել են համակարգի ներդաշնակությունը պահպանելու համար։ Արտավազդի թագավորությունը Խորենացին հատկացնում է միայն մի քանի օր (տե՛ս Հավելված

Ա, № 22). Հետևաբար Արտավազդը ժամանակագրական հաշիվներից դուրս է մնում։ Ստ. Մալխասյանցը (Մովսես Խորենացի. «Հայոց պատմություն», էջ 361), հակառակ Խորենացու պարզորոշ ցուցման, այնուամենայնիվ, նրան տալիս է երկու տարի թագավորություն։

486 Խորենացու ներկա տեքստում Արտավանին տրված 31 տարին, որ Ն. Ադոնցը իրավամբ անվանում է «կոպիտ սխալ», պետք է ուղղել, դարձնել 36, հետևելով Անանունին և Ասողիկին։

487 Ստ. Մալխասյանցը (էջ 361), առանց Խորենացու ժամանակագրությունից ելնող որևէ հիմքի, կրճատում է Խոսրովի թագավորության ժամանակը 7 տարով։

522—562 Սասանյան առաջին երկու թագավորների՝ Արտաշիր 1-ինի և Շապուհ 1-ինի իշխանության տևողությունները Խորենացու տեքստում ինչ-ինչ պատճառներով բացակայում են։ Մնում է լրացնել դրանք, ելնելով Խորենացու մյուս տվյալներից։ Ըստ վերջինների՝ Արտաշիր 1-ինի թագավորության սկիզբը համապատասխանում է Հայոց Խոսրովի 36-րդ տարվան։ Այդ տարվանից հաշված, Խոսրովը դեռ թագավորել է 13 տարի, որից հետո Արտաշիրը՝ Հայաստանում 26 տարի, այնուհետև Շապուհը՝ Հայաստանում 1 տարի և նրանից հետո թագավորել է Տրդատը՝ 56 տարի։ Սրա հաջորդ Խոսրովի առաջին տարին Խորենացին սինքրոնացնում է պարսից Որմիզդի երկրորդ տարվա հետ։ Արդ, եթե ստացված գումարից հանենք Որմիզդի 2 տարին և նրա նախորդ Ներսեհի թագավորության ամբողջ տևողությունը, ապա կստանանք Արտաշիր 1-ինի և Շապուհ 1-ինի թագավորության տարիների ընդհանուր գումարը՝ 86 տարի (13+26+1+56+1—2—9=86)։ Այս 86 տարիները ճիշտ երկու իշխողների միջև բաժանելիս մենք հենվում ենք Մ. Խորենացու հետևյալ ցուցմի վրա։ Շապուհը Հայաստանում թագավորում է «զթագաւորել Տրդատայ, ամ մի» (Հավելված Ա., № 32), որից հետո մեռնում է Արտաշիրը, Շապուհին թողնելով պարսից թագավորությունը։ Արտաշիրի մահվան տարին նրա մոտ ապաստանած է եղել Ճենաստանից փախած Մամգոնը՝ Մամիկոնյանների նախնին։ Շապուհը գահ բարձրանալով, չնայած Ճենաց թագավորի խնդրանքին, Մամգոնին չի հանձնում նրա ձեռքը, բայց և իր մոտ չի պահում, այլ անմիջապես ուղարկում է Հայաստան. «Իսկ Մամգոնայ... եկեալ յաշխարհս մեր՝ համդիպեցաւ գալստեանն Տրդատայ» (Հավելված Ա., № 33)։ Այստեղից հետևում է, որ Շապուհի առաջին տարին համընկնում է Տրդատի առաջին տարվա հետ, որով և վերահիշյալ

86 տարիները բաժանվում են հետևյալ կերպ՝ Արտաշիրին՝ 40, Շապուհին՝ 46։

607—630 Այս հատվածում տեղավորված կաթողիկոսների առաջնորդության սկզբի և վերջի մասին Խորենացու տված տեղեկություններն առանձնապես ցայտուն օրինակներ են հանդիսանում վերևում արդեն շեշտված այն դրույթի, որ Խորենացին խուսափել է իր ժամանակագրության մեջ կոտորակ թվեր մտցնելուց և հաշիվները վարել է, ելնելով միշտ լրիվ թվերից։ Այսպես, նա հայտնում է, որ Գրիգոր Լուսավորիչը եղել է «...մինչև ցքառասուն և վեցերորդ ամն նորին (Տրդատայ—Գ. Ս.», «Եւ յետ նորա Արիստակէս ամս եօթն, ի քառասուն և յեօթներորդ ամին Տրդատայ մինչև ցյիսուն և երրորդ ամն նորին...», «Եւ յաջորդեաց զաթոռն երեց եղբայր նորին Վրթանէս ի յիսուն և չորրորդ ամին Տրդատայ և անդր» (Հավելված Ա, № 37 և 38)։ Նույն ձևով էլ Վրթանեսին հաջորդած Հուսիկի մասին է տված (Հավելված Ա, № 43), վիճակը նույնն է և մյուս բոլոր կաթողիկոսների ու թագավորների դեպքում. ոչ մի բացառություն չկա (679—689 թվականների տակ ծանոթագրված դեպքը չի կարելի բացառություն համարել, քանի որ այն դուրս է մնում Խորենացու ժամանակագրության կենտրոնական գծից)։

636 Փառներսեհ կաթողիկոսին Խորենացու տված 4 տարիները չեն տեղավորվում իր իսկ սինքրոնիկ ցուցումներով սահմանված ժամանակահատվածի մեջ՝ Տիրանի 10-րդ տարվա և Արշակի 2-րդ տարվա միջև, ուստի և ուղղում ենք ըստ այդ տվյալների, դարձնելով 3 տարի։

675 Հայոց Վարազդատի և պարսից Շապուհ 2-րդի թագավորությունների վերաբերյալ Խորենացու տված՝ սինքրոնիկ ցուցումի ճշտումը կարևորագույն նշանակություն ունի քննության առարկա ժամանակագրական տախտակի վերջին հատվածի համար, սկսած Արշակ 2-րդի ժամանակից։ Իսկապես, եթե ընդունենք, որ Վարազդատը գահ է բարձրացել Շապուհ 2-րդի 55-րդ տարում, ինչպես ունեն «Հայոց պատմության» գրեթե բոլոր ձեռագրերը (Հավելված Ա, № 55), ապա կստացվեն մի շարք անհաղթահարելի դժվարություններ, կմթագնեն ժամանակագրության այդ կետին նախորդող և հաջորդող հատվածները։ Նախ և առաջ, ստիպված կլինենք կրճատել Արշակին տրված 30 կամ Պապին տրված 7 տարիներից մեկը, ապա և Ներսես կաթողիկոսին կամ Սահակ կաթողիկոսին տրված տարիներից մեկը։ Այնուհետև հայոց Վռամշապուհի գահակալման տարին չի համընկնի Շապուհ 2-րդի վեր-

ցին տարվա հետ, մի բան, որ շեշտված է հենց Խորենացու, թեև ոչ թվական, բայց շատ հստակ նկարագրական ցուցմունքով (Հավելված Ա, № 62), այլ կսկսվի Շապուհ 2-րդի նախավերջին տարում։ Նույն ձևով էլ պարսիկ Շապուհի քառամյա թագավորությունը Հայաստանում կավարտվի ոչ թե իր հոր՝ պարսից Հազկերտ 1-ինի թագավորության հետ միաժամանակ, որի համար ևս կա Խորենացու է՛լ ավելի հստակ ցուցումը (III, ՄԶ—Հավելված Ա, № 69), այլ կհամընկնի հիշյալ Հազկերտի նախավերջին տարվա հետ։ Բացի այդ բոլորից, Սահակ Պարթևի կաթողիկոսության շրջանը և նրա մահվան տարեթիվը, որոնք հավաստված են Խորենացու և՛ բացարձակ, և՛ սինքրոնիկ թվական տվյալներով, ստիպված կլինեինք աղճատել ու տեղաշարժել: Խորենացին հաղորդում է, որ Սահակ Պարթևը կաթողիկոս է եղել 51 տարի, «... սկսեալ յերրորդ ամէ վերջնոյ Խոսրովայ արքայի Հայոց մինչև ցսկիզբն ամին երկրորդի Յազկերտի եղելոյ Պարսից թագաւորի, յեւս ամսոյն նաւասարդի, յաւուր իւրոյ ծննդեանն» (տե՛ս ծանոթ. 736)։ Եթե ընդունելու լինենք Վարազդատի մասին վերոհիշյալ սինքրոնիկ ցուցումը, ըստ որի նա գահակալել է Շապուհ 2-րդի 55-րդ տարում, ապա պետք է կամ 51 թիվը ավելացնենք մեկով, կամ Սահակ Պարթևի մահվան տարեթիվը մեկ տարով հետ տանենք, որով այն կընկնի արդեն ոչ թե Հազկերտի, այլ նրա նախորդ Վռամի թագավորության ժամանակաշրջանին։ Հետևյալ հաշիվը այդ պարզ ցույց է տալիս. Շապուհ 2-րդի 55-րդ տարվանից մինչև Հազկերտ 2-րդի առաջին տարին ներառյալ, ըստ Խորենացու, անում է 63 տարի (Շապուհի մնացյալ 16 տարիներին գումարած Արտաշիր 2-րդի 4, Վռամ 1-ինի 10, Հազկերտ 1-ինի 11, Վռամ 2-րդի 21 և Հազկերտ 2-րդի 1 տարիները), այնինչ Վարազդատի գահակալությունից մինչև Սահակ Պարթևի մահը միայն 62 տարի (Վարազդատի 4 տարիներին գումարած Արշակի 5, Խոսրովի առաջին 2 և Սահակ Պարթևի 51 տարիները)[6]։ Պարզ է, որ վերոհիշյալ սինքրոնիկ ցուցումը կարոտ է ուղղման։ Սխալը թերևս պատկանում է իրեն Խորենացուն և պարզապես մի սայթաքում է։ Ակնա տարընթերցումը տալիս է Շապուհի 57-րդ տարին, բայց այն հանդիպում է

[6] Կարելի է առարկել, թե քանի որ Սահակի մահը տեղի է ունեցել Հազկերտ 2-րդի առաջին տարվա սկզբին (Նավասարդ ամսին), ուստի և Խորենացին նշելով, որ Սահակը կաթողիկոս է եղել 51 տարի, Հազկերտի այդ տարին հաշվի չի առել։ Բայց այդպիսի, այն էլ քիչ հավանական, ենթադրությամբ հարթվում է միայն այս խոչընդոտը, իսկ մնացածները մնում են անխախտ։

այնչափ սակավաթիվ և երկրորդական ձեռագրերում (և հարցն էլ չի լուծում), որ մենք հակված ենք այդ տարընթերցման մեջ տեսնելու ավելի շուտ մի գրչի անհաջող փորձ՝ իր նկատած անճշտությունը ուղղելու: Եթե մենք կասկածում ենք Խորենացու տվյալ սինքրոնիկ ցուցման ճշգրտության վրա, ապա ուղղման համար բնական է որպես հիմք ընդունել Խորենացու իսկ նախորդ սինքրոնիկ ցուցումը: Տվյալ դեպքում նախորդ ցուցումը Խոսրով Կոտակի գահակալման տարին առնչում է Շապուհ 2-րդի հոր՝ Որմիզդի թագավորության 2-րդ տարվա հետ: Այս կետից հաշվելով մինչև աղյուսակի վերջը և շրջանցելով վերոհիշյալ անճիշտ սինքրոնիկ ցուցումը (Վարազդատի գահակալման և Շապուհ 2-րդի 55-րդ տարվա համապատասխանության մասին), մենք ազատվում ենք վերը հիշատակված բոլոր դժվարություններից. Արշակը և Պապը, ինչպես և Ներսես և Սահակ կաթողիկոսները, պահպանում են իրենց հատկացված տարիները, Վռամշապուհը գահակալում է Շապուհ 2-րդի վերջին տարում, պարսիկ Շապուհի թագավորությունը Հայաստանում ավարտվում է պարսից Հազկերտ 2-րդի թագավորության հետ միաժամանակ, վերջապես Սահակ Պարթևի կաթողիկոսության տևողությունը մնում է 51 տարի, իսկ մահվան տարեթիվը՝ Հազկերտ 2-րդի 1-ին տարին: Փոփոխության, այսինքն մեր կարծիքով՝ ուղղման է ենթարկվում միայն Վարազդատի գահակալման տարեթիվը, որն այս դեպքում համընկնում է Շապուհ 2-րդի և ոչ թե 55-րդ, այլ 56-րդ տարվա հետ: Ն. Ադոնցը չի նկատել Խորենացու այդ թվի անճշտությունը (տե՛ս ծանոթ. 736):

679—689 III գրքի ԽԱ—ԽԶ գլուխներում Խորենացին պատմում է, որ Թեոդոս կայսրը Հայաստանի վրա միանգամից երկու թագավոր է նշանակում՝ Արշակին և Վաղարշակին: Վերջինս մահանում է թագավորության առաջին իսկ տարում: Արշակը թագավորում է 5 տարի, որից հետո տեղի է ունենում Հայաստանի բաժանումը երկու մասի: Արշակը քաշվում է փոքր՝ հռոմեական մաս, իսկ մեծ՝ պարսկական մասում նրան փոխարինում է Խոսրովը՝ թագավորելով 5 տարի (Հավելված Ա, № 62): Սրան զուգահեռ հռոմեական մասում երկու և կես տարվա ընթացքում դեռ իշխում է Արշակը (Հավելված Ա, № 60), որից հետո թագավորական իշխանությունը այդ մասում վերացվում է: Այս միակ կոտորակ թիվն է, որ հանդիպում է Խորենացու ժամանակագրական ցուցումների մեջ, բայց այն էլ, ինչպես տեսնում ենք, դուրս է մնում ժամանակագրության կենտրոնական գծից, կազմելով մի փոքրիկ ճյուղ: Ստ. Մալխասյանցը (Հավելված, էջ 367) Արշակին, հա-

կատակ Խորենացու պարզ ցուցման (Հավելված Ա., № 60), տալիս է 8 տարի թագավորության ամբողջ Հայաստանի վրա։

680 Ասպուրակես կաթողիկոսին տրված տարիների թիվը պետք է ավելացնել մեկով, ելնելով երկու սինքրոնիկ ցուցումներից, որոնք նրա կաթողիկոսության համար սահմանում են Արշակ 3-րդի 2-րդ տարվա և Խոսրովի 3-րդ տարվա միջև ընկած ժամանակամիջոցը, որն անում է 6 տարի։ Հետաքրքիր է նշել, որ կաթողիկոսների շարքում հանդիպող՝ ճշգրտման կարոտ թվերը, որոնք չորսն են (Փառներսեհի, Շահակի, Զավենի և Ասպուրակի), ճշտված վիճակում տալիս են նույն գումարը, ինչ որ չճշտված վիճակում՝ 3+3+4+6=4+4+3+5=16. Թերևս այս հանգամանքը, 363—404 ծանոթության մեջ հիշատակված համանման երևույթի պես, խոսում է այն մասին, որ վերոհիշյալ չորս ուղղումների միջև ներքին կապ կա։

736 Խորենացու ցուցումը իր ժամանակագրության այս վերջին տարեթվի մասին Ն. Ազանցը ճիշտ չի մեկնաբանել։ Վերևում մենք մեջ բերեինք համապատասխան տեքստը (տե՛ս 675 թվի տակ տրված ծանոթագրությունը կամ Հավելված Ա., № 77), որը, իրոք, կարող է առաջին հայացքից թյուրիմացության մեջ գցել, ենթադրել տալով, թե խոսքը ոչ թե երկրորդ Հազկերտի սկզբի տարվա մասին է, այլ Հազկերտի 2-րդ տարվա սկզբի մասին։ Սակայն հարցի ուսումնասիրությունը ցրում է բոլոր կասկածները։ Այսպես, Խորենացու աղբյուրը, Կորյունը, ասում է, որ Սահակ Պարթևը մահացավ «յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի, որդւոյ Վռամայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին, ... ի կատարելն ամսեանն նաւասարդի, որպէս և զօր ծննդեան երանելոյն յիշէին...» (Կորյուն. Վարք Մաշտոցի, Ե., 1941, էջ 86—88, հմմտ. նաև Ղազար Փարպեցու նույն Կորյունից ընդօրինակած տեքստը, որը, թերևս, նույնպես ազդել է Խորենացու վրա. «...ի սկզբան ամին երկրորդի Յազկերտի...» և այլն։ Ղազար Փարպեցի, Տփղիս, 1904, էջ 37)։ Սակայն առանց Կորյունին վկայակոչելու էլ, Խորենացու «...ցսկիզբն ամին երկրորդի Յազկերտի եղելոյ Պարսից թագաւորի» չի կարելի հասկանալ «2-րդ տարին» այն պատճառով, որ Խորենացու ժամանակագրական սինքրոնիկ ցուցումներում «ամ» բառը երբեք չի նախորդում թվականին, այլ միշտ հաջորդում է նրան. դրանում համոզվելու համար կարելի է համեմատել ցանկացած սինքրոնիկ ցուցումը։ Ազանցը, այսուհանդերձ, կարծում է, թե Սահակ Պարթևը, ըստ Խորենացու, վախճանվել է Հազկերտ 2-րդի երկրորդ տարում։ Ի՞նչն է պատճառը։ Պատճառը միևնույն հանգամանքն է, որը խանգա-

ում է նրան նշմարելու նաև Խորենացու մի այլ՝ վերը մանրամասն քննարկված, այն է՝ Վարազդատ թագավորի 1-ին և Շապուհ 2-րդի 55-րդ տարիների նույնացման անճշտությունը։ Խորենացին, ինչպես վերևում ասվեց և օրինակներով հիմնավորվեց, իր ժամանակագրության մեջ գործ ունի միայն ամբողջ թվերի հետ և իշխողների ժամանակը հաշվում է, սկսելով գահակալման տարվա սկզբից և ավարտելով մահվան տարվա վերջով։ Ն. Ադոնցը, որ լավ գիտեր այդ և անգամ շատ ճիշտ դիտողություն է արել այն բանասերներին, որոնք, խախտելով այդ կանոնը, Տրդատ 3-րդի գահակալման թիվը (որը ըստ Խորենացու համապատասխանում է Դիոկղետիանոս կայսրի 3-րդ տարվան) համարել են 287-ը, մեխանիկորեն գումարելով կայսրի գահակալման թվին՝ 284-ին, 3 տարի, և ցույց է տվել, որ 3-րդ տարվան իրականում համապատասխանում են 286 թվականը (այսինքն՝ 1-ին տարին՝ 284, երկրորդ տարին՝ 285, երրորդ տարին՝ 286), նույն Ն. Ադոնցն տվյալ դեպքում նմանօրինակ շեղում է թույլ տվել իր իսկ հաստատած կանոնից։ Շապուհ 2-րդի 70-ամյա թագավորության սկիզբը դնելով 346 թվականին, Ն. Ադոնցը նրա 55-րդ տարին (Վարազդատի գահակալման տարին) համարում է 401 թվականը (346+55, փոխանակ համարելու, իր իսկ պաշտպանած սկզբունքի համաձայն, 400 թվականը), որով հայոց Խոսրով 2-րդի 3-րդ տարին, այսինքն Սահակ Պարթևի կաթողիկոսության սկզբի տարին, ընկնում է 412-ի փոխարեն՝ 413 թվականի վրա։ Այնուհետև այդ թվին, նորից մեխանիկորեն, գումարվում են Սահակի կաթողիկոսության 51 տարիները։ Այսպիսով նա հասնում 464 թվականին՝ Հազկերտ 2-րդի 2-րդ տարվան, այնինչ ճիշտ հաշվարկի դեպքում կհասներ, ինչպես ցույց է տրված վերևում (ծանոթ. 675) Հազկերտի նախորդ՝ Վռամի վերջին տարվան, որը Ադոնցի մոտ համապատասխանում է 462 թվականին։ Այդ դեպքում ցույց կտրվեր նրա արդյունքի հակասությունը Խորենացու՝ Սահակ Պարթևի մահվան մասին ցուցմանը, և վերջինս ավելի մեծ ուշադրության կարժանանար, ինչպես նաև, հավանորեն, կբացահայտվեր Շապուհի և Վարազդատի սինքրոնացման մեջ եղած անճշտությունը։

## II. ԽՈՐԵՆԱՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՊԱՐԹԵՎԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ ՀՌՈՄԵԱԿԱՆ ՇԱՐՔԵՐԸ

### 1.

*Նախորդ գլխում մեր նպատակն էր վերականգնել Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը հնարավորին չափ իր նախնական տեսքին մոտ։ Այժմ անցնում ենք այդ համակարգի ուսումնասիրությանը։ Ուսումնասիրման առարկան նախ և առաջ համակարգի այն առանձնահատկություններն են, որոնք մասամբ դուրս են մնացել հետազոտողների ուշադրությունից, մասամբ էլ անհրաժեշտ չափով չեն ուսումնասիրվել, և որոնց հետազոտությունը պետք է նպաստի համակարգի տվյալների ավելի հաստատուն ու լայն օգտագործմանը՝ գիտական ժամանակագրության հարցերը լուծելիս։ Ապա նաև մեզ հետաքրքրում են պատմական իրականությունից այն շեղումները, որոնք հանդիպում են համակարգի մեջ։ Այդ շեղումների հատուկ ուսումնասիրման իմաստը հետևյալն է։ Մի ժամանակ սովորություն էր դարձել խորենացիագիտության մեջ (և այդ սովորությունը այժմ էլ բավարար չափով հաղթահարված չէ) մեր Պատմահոր մոտ հանդես եկող շեղումների ու անճշտությունների նշանակությունը չափազանցեցնել և տարածել նրա երկի ամբողջ հատվածների վրա (մեղադրանքը չի վերաբերվում, իհարկե, Խորենացու միջնադարյան անքննադատ ընթերցողներին, ինչպես նաև նրանց հետևող այժմյան որոշ բանասեր-պատմաբաններին)։ Անհրաժեշտ է ուրեմն ճշգրիտ գնահատական տալ այդ շեղումներին, պարզել նրանց ծագումը, ինչպես և տեղն ու դե-*

րը «Հայոց պատմության» մեջ և այդպիսով ազատագրել մնացած արժեքավոր նյութը ավելորդ կասկածներից։

Այստեղ մենք փորձում ենք կատարել նշված աշխատանքը այն չափով, որ չափով այն վերաբերվում է Խորենացու ժամանակագրական տվյալների բնագավառին։

Խորենացու ժամանակագրական համակարգի կարևորագույն առանձնահատկությունն է նրա կատարյալ սլացիկությունը և ներքին ներդաշնակությունը, որը տարբերում է այն շատ հեղինակների նմանօրինակ համակարգերից և թույլ չի տալիս նրանից մի բան վերցնել կամ ավելացնել։ Կարևոր առանձնահատկություն է Խորենացու՝ սելևկյան տոմարի ծանոթ լինելու և օգտագործելու հանգամանքը, որի հետևանքով նա մեզ է հասցրել առաջնակարգ նշանակություն ունեցող ժամանակագրական տվյալներ։ Հատուկ ուսումնասիրության առարկա ենք դարձնում նաև Պատմահոր այն առանձնահատուկ մեթոդները, որոնք նա կիրառել է իր ձեռքի տակ եղած ժամանակագրական աղբյուրների նյութերը մշակելիս, ինչպես և այն չափանիշները, որոնցով նա առաջնորդվել է այդ մեթոդները կիրառելիս։

Ինչ վերաբերում է շեղումներին, ապա դրանք գիտության մեջ ավելի ուշադրության են արժանացել, քան վերոհիշյալ առանձնահատկությունները, թեև միայն իրենց նշման ու երբեմն «շտկման», բայց ոչ բացատրման առումով։ Խորենացու համակարգին նայելիս դրանցից կարևորագույնները աչքի են զարնում իսկույն եթ։ «Հայոց պատմության» ժամանակագրության մեջ ընդգրկված ամբողջ ժամանակահատվածի (Սելևկոս 1-ինի գահակալման տարվանից մինչև Հազկերտ 2-րդի գահակալման տարին) տևողությունը հավասար է 736 տարվա, իրական 750 տարվա (մ. թ. ա. 311—մ. թ. 439 թթ.) փոխարեն։ Այսպիսով Խորենացու ժամանակագրությունը 14 տարով կարճ է[1]։ Պարսից և հռոմեացի իշխողների շարքերի

[1] Հենց այս հանգամանքն է, ահա, ծառայել Ք. Պատկանյանին և Ստ. Մալխասյանցին Խորենացու ժամանակագրությունը մի նոր թագավորով լրացնելու համար։

կապակցման մեջ Խորենացու մոտ գոյություն ունի անաքրոնիզմ, որը նշել են Խորենացու ժամանակագրության հարցերը շոշափած բոլոր գիտնականները։ Մի շարք դեպքերում ժամանակակիցները իրարից բաժանված են, տարբեր ժամանակի ապրողները դարձված են ժամանակակիցներ և այլն[2]։ Կան և այլ տիպի կարևոր շեղումներ, որոնք դրսևորվում են հետզհետե։

Առաջադրված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է, քննել ու վերլուծել համակարգը շարք առ շարք, հատված առ հատված։

Առաջին հերթին համակարգի առանցքը կազմող պարթևա-պարսկական շարքինն է։ Ինչպես այս, այնպես էլ մյուս շարքերի դեպքում քննության կարևորագույն կողմերից մեկն է կազմում Խորենացու և Անանունի, որպես հայ մատենագրության մեջ առկա երկու տարբեր ժամանակագրական համակարգերի հեղինակների տվյալների համեմատությունը։

Պարթևա-պարսկական շարքը երկու հեղինակների մոտ էլ ներածվում է Սելևկյան առաջին երեք թագավորների թվարկմամբ։ Այդ թագավորներն են. Սելևկոս (31 տարի, Անանունի մոտ՝ 32 տարի), Անտիոքոս Սոտեր (19 տարի), Անտիոքոս Թեոս (10 տարի)[3]։ Թվերն ընդօրինակված են առաջնակարգ աղբյուրից՝ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնից»։

Դրանց հետևում են պարթև Արշակունի թագավորները։

Աղյուսակ 2

| Խորենացու մոտ | Անանունի մոտ |
|---|---|
| Արշակ Քաջ (31 տարի) | Արշակ (56 տարի) |
| Արտաշես (26) | — |
| Արշակ Մեծ (53) | Արշակ (70) |
| Արշական (30) | — |
| Արշանակ (32) | Աշնաշ (32) |
| Արշեզ (22) | Արշեն (22) |

2 Տե՛ս Ստ. Մալխասյանցի՝ Մ. Խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար թարգմանության Հավելվածի 351 էջը (ըստ առաջին հրատարակության)։

3 Տե՛ս նախորդ գլխում 51 թվի տակ արված ծանոթությունը։

| | |
|---|---|
| Արշավիր (46) | Արշավիր (46) |
| Արտաշես (34) | Արտաշես (34) |
| Դարեհ (30) | Դարեհ (30) |
| Արշակ (17) | Արշակ (17) |
| Արտաշես (20) | Արտաշիր (46) |
| Պերոզ (34) | Պերոզ (64) |
| Վաղարշ (50) | Վաղարշակ (50) |
| Արտավան (36) | Արտավան (36) |
| Ընդամենը 461 տարի | Ընդամենը 502 տարի[4] |

Ցուցակների էական տարբերությունները կուտակված են նրանց սկզբներում և վերջերում։ Սկզբում Խորենացու մոտ, Անանունի համեմատությամբ, երկու լրացուցիչ անուն կա՝ Արտաշես և Արշական, իսկ վերջում Անանունի կողմից Արտաշիրին ու Պերոզին տրված 46 ու 64 տարիները Խորենացու մոտ ներկայացված են համապատասխանաբար 20 և 34 թվերով։ Սրա շնորհիվ Խորենացու ցուցակի տարիների գումարը նշանակալից չափով կարճ է՝ այն հավասար է 461-ի, Անանունի 502-ի դիմաց։ Կան և ոչ էական տարբերություններ՝ Անանունի Աշնաշ, Արշեն, Արտաշիր և Վաղարշակ անունները Խորենացու մոտ ներկայանում են իբրև Արշանակ, Արշեզ, Արտաշես և Վաղարշ տարբերակներով։

Ցուցակների նմանությունը, սակայն, շատ ավելի ցայտուն է, քան տարբերությունը, այնքան ցայտուն, որ հատուկ ապացուցման չի պահանջում։ Այդ նմանությունը ավելի ևս ակնառու է դառնում, երբ հաշվի ենք առնում, որ երկու ցուցակների իրար հարող գծերի մեջ կան այնպիսիները, որոնք հեռու են պատմական իրականությունից։ Այսպես, Խորենացու 14 և Անանունի 12 իշխողների դիմաց պարթև Արշակունիների՝ արդի պատմագիտության կողմից ընդունված ցուցակը պարունակում

4 Անանունը 502-ի փոխարեն նշել է 576՝ «Այս լինին ամենայն ամք. Պարթևաց տէրութեանն ամք ՇՀԶ» (ձեռագրերում՝ աղճատված ձևով՝ «ՇՀԳ»)։ 74 տարվա տարբերությունն առաջացել է նրանից, որ Անանունը Արշակի թագավորության 56 տարվա փոխարեն գումարել է նրա կյանքի տևողությունը՝ 130 տարին, որով ստացվում է ավելի 74 տարվա տարբերություն։

է 37—39 անուն[5]: Այնուհետև Անանունի և Խորենացու մատ բերված անուններից իրական պարթև Արշակունիների մեջ, եթե չհաշվենք նույն ինքը Արշակ անունը, հանդիպում են միայն երկուսը՝ Վաղարշ և Արտավան: Այնպիսի անուններ, ինչպիսիք են Դարեհ, Արտաշես, Պերոզ, Արշավիր և այլն խորթ են եղել պարթև թագավորների համար:

Այս ամենը անուրանալի է դարձնում երկու ցուցակների միջև եղած ազգակցական կապը, որը, ինչպես կհամոզվենք, տարածվում է Խորենացու և Անանունի համակարգերի նաև այլ հատվածների վրա: Այդ կապը տարբեր ձևով է մեկնաբանվել հետազոտողների կողմից: Ն. Ադոնցի և Ստ. Մալխասյանցի կարծիքների մասին արդեն ասվել է վերը: Գուտշմիդը իր ժամանակ ենթադրել է, որ Անանունի ցուցակը ոչ այլ ինչ է, եթե ոչ Խորենացու իսկ ձեռքով արած սեղմություն՝ իր ապագա ցուցակի համար[6]: Այդ կարծիքը, իհարկե, հնացած է, բայց այն հարում է Ադոնցի տեսակետին, ենթադրելով նյութի մշակման ուղղությունը Անանունից դեպի Խորենացին[7] և ոչ հակառակը՝ Խորենացուց Անանուն, ինչպես պնդում էր Ստ. Մալխասյանցը:

Որ երկու համակարգերի կապերը իսկապես այդ ուղղությունն ունեն՝ վկայում է, բացի այլևայլ հանգամանքներից, որոնց մասին դեռ կխոսվի, նաև հետևյալ հետաքրքիր փաստը:

Պրոկոպիոս Կեսարացին, VI դարի հեղինակ, իր «De aedificiis» աշխատության մեջ հաղորդում է հետևյալը. «Երբ Ալեքսանդր Մակեդոնացին պարսից թագավորին իր ձեռքը գցեց, պարսիկները հպատակվելով խաղաղություն էին պահպանում: Իսկ պարթևները, ապստամբելով մակեդոնացիների

[5] Տե՛ս „Cambridge Ancient History" IX (Պարթևական թագավորների ցուցակը) կամ N. Debevoise, A Political History of Parthia, Chicago, 1938, էջ 270 և հետ.:

[6] A. Gutschmid, հիշ. աշխ., էջ 38:

[7] Նույն այդ կարծիքին է հարում նաև Ն. Մառը, հիշ. աշխ., էջ 287 և հետ.:

դեմ և պատերազմում հաղթելով, զորս քշեցին նրանց և տիրեցին մինչև Տիգրիս գետը (ընկած երկրին)։ Նրանց ձեռքում էր գտնվում Պարսկաստանի բախտը 500 տարվա ընթացքում, մինչև որ հռոմեացիների մոտ գահակալեց Մամեայի որդի Ալեքսանդրը։ Ահա այն ժամանակ պարթևների թագավորներից մեկը իր եղբորը՝ Արշակ անունով, հայոց թագավոր կարգեց, ինչպես ասված է «Հայոց պատմության» մեջ (ὥσπερ ἡ τῶν Ἀρμενίων ἱστορία φησί)։ Այնպես որ, թող չկարծվի, թե Արշակունիները հայեր են։ Շնորհիվ ազգակցության, նրանց միջև 500 տարի խաղաղություն էր տիրում» (De aedificiis, III, 1)։

Ն. Ադոնցը, որ առաջինն է ըստ արժանվույն գնահատել այս հատվածի կարևորությունը, և Հ. Մանանդյանը հիմնավորված կերպով պնդում են, որ Պրոկոպիոսի այս ամբողջ հատվածը վերցված է իր վկայակոչած «Հայոց պատմությունից», իսկ այդ «Հայոց պատմությունը» Մար-Աբաս Մծուրնացու (ըստ Հ. Մանանդյանի) կամ Փավստոսի (ըստ Ն. Ադոնցի) պատմությունն է, որ մեզ հասել է Անանունի և Խորենացու մոտ բերված քաղվածքներով կամ վերաշարադրմամբ[8]։

Այս հատվածի տվյալներին մենք դեռ առաջիկայում կվերադառնանք տարբեր առումներով։ Այստեղ առայժմ մեզ հետաքրքրում է միայն այն փաստը, որ հենվելով «Հայոց պատմության» վրա, Պրոկոպիոսը պարթև Արշակունիների իշխանության ժամանակաշրջանը համարում է 500 տարի, շեղվելով պատմական իրականությունից (= 476 տարվա), բայց գրեթե լրիվ համամիտ լինելով Անանունի տվյալներին (502 տարի)[9]։ Այստեղից հետևում է, որ Անանունի տված համրագումարը, հետևաբար, կարող ենք եզրակացնել, նաև նրա բաղադրիչ մա-

[8] Н. Адонц, նշվ. աշխ., էջ 91։ Я. А. Манандян, „Начальная история Армении" Мар-Абаса (К вопросу об источниках Себеоса, Моисея Хоренского и Прокопия Кесарийского). „Палестинский сборник", вып. 2, 1956, էջ 69 և հետ.։

[9] Տե՛ս Н. Адонц, նշվ. աշխ., էջ 91։

սեր՝ առանձին իշխողների ժամանակաշրջանները՝ մոտ և հարազատ պետք է լինեն այն սկզբնաղբյուրին՝ «Հայոց պատմությանը», որը վկայակոչել է Պրոկոպիոսը[10], իսկ Խորենացու տվյալները համընկնում են այդ սկզբնաղբյուրի (կամ, ըստ Ն. Ադոնցի, մեզ այդ սկզբնաղբյուրը ներկայացնող Անանունի) տվյալների հետագա մշակման արդյունք:

Արդ, ո՞րն է Խորենացու կողմից իր սկզբնաղբյուրի տվյալների մշակման դրդապատճառը: Ինչպես հաճախ կտեսնենք առաջիկայում, նման դրդապատճառները Խորենացու մոտ սովորաբար երկու տիպի են լինում: Դրանք կամ անմիջականորեն մեկ այլ աղբյուրի հետևելն է, այն դեպքում, երբ այդ աղբյուրը Խորենացուն ավելի արժանահավատ է թվում, կամ իր սեփական համակարգի ներքին կարիքները, նրա ներդաշնակության պահպանման անհրաժեշտությունը, որը նորից, թեև միջնորդված ձևով, հանգում է Խորենացուն առավել արժանահավատ պատկերացող սկզբնաղբյուրների տվյալների գերադասմանը:

Տվյալ դեպքում, մեր կարծիքով, առկա են երկուսն էլ: Առաջինից դրդված Խորենացին ճշտումներ է մտցրել հատկապես շարքի սկզբնական հատվածում (տե՛ս աղյուսակ № 2), երկրորդը ստիպել է նրան կրճատել ցուցակի տարիների ընդհանուր քանակը, 502-ից հասցնելով 461-ի:

Նախ առաջինի մասին: Դեռևս Գուտշմիդը նկատել է[11], որ Խորենացու պարթևական ցուցակում նշված իշխանությունների տևողությունները ընդհանուր առմամբ արդարանում են, այն վերապահությամբ, որ նրանք հաճախ խոշորացված են,

---

10 Համեմատիր Ն. Ադոնցի հետևյալ խոսքերը. «Բոլոր տվյալների համաձայն Փավստոսի (ըստ Ն. Ադոնցի՝ «Հայոց պատմության» երկու տարբերակներից մեկի հեղինակ) մոտ եղած թագավորների ցուցակը ավելի նման է եղել, եթե միայն լրիվ չի նույնացել, Սեբեոսի մոտ պահպանված՝ Մարաբայի («Հայոց պատմության» մյուս տարբերակի հեղինակ) ցուցակին, քան Խորենացու ցուցակին» (Հիշ. աշխ. էջ 104): Առված է Անանունի երկրորդ գլխի՝ Հայոց թագավորների ցուցակի կապակցությամբ, բայց անշուշտ վերաբերվում է նաև նույն գլխի՝ պարթև թագավորների ցուցակին:

11 Տե՛ս նրա վերևում վկայակոչված աշխատությունը, էջ 18:

այսինքն մի քանի դեպքերում մեկ իշխանության տևողության մեջ պարունակում է մեկից ավելի իրականում եղած իշխանություններ։

Այս դիտողությունը տեղին է Խորենացու ցուցակի, համենայն դեպս, առաջին երեք իշխանությունների նկատմամբ։ Այժմ գիտության մեջ ընդունված է, որ Արշակ 1-ինը թագավորել է մ. թ. ա. 247—217 թթ., այսինքն՝ 30 տարի[12], Խորենացին տալիս է նրան 31 տարի։ Սրա հաջորդը՝ Արշակ 2-րդը, որի անձնական անունը առայժմ հայտնի չէ (մի գուցե՝ Արտաբան), թագավորել է 217—191 թթ., այսինքն՝ 26 տարի[13] և հենց այդքան տարի է տալիս Խորենացին երկրորդ պարթև թագավորին՝ Արտաշեսին։ Հաջորդ երեք պարթև արքաները՝ Փրիապատիոսը, նրա որդի Հրահատը և Միհրդատ 1-ինը՝ պարթևական տերության հզորության հիմնադիրը, թագավորել են հաջորդաբար 191—138 թթ., այսինքն 53 տարի[14], այնքան, ինչքան որ Խորենացին տալիս էր Արշակ Մեծին։ Մնացած դեպքերում նմանությունը այդչափ պարզ չի դրսևորվում, բայց այնտեղ էլ որոշ համապատասխանություն կարելի է տեսնել։

Պետք է ասել, որ նշված նմանությունը, եթե այն պատահականության արդյունք չէ (մի բան, որ քիչ հավանական է), ապա բացառիկ կարևոր նշանակություն ունի։ Խնդիրն այն է, որ պարթև արքաների արդի գիտական ժամանակագրությունը կազմված է ոչ թե հին ժամանակագրությունների սիստեմատիկ ու անընդմեջ տվյալների հիման վրա, ինչպես կազմված է, օրինակ, պարթևների նախորդներ՝ Աքեմենյանների կամ հաջորդներ՝ Սասանյանների ժամանակագրությունը, այլ մեծ մասամբ տարբեր հեղինակների ցրված հիշատակությունների և նշանակալի չափով՝ դրամագիտության տվյալների հիման վրա։ Հարց է ծագում, թե ի՞նչ աղբյուր է այդ, որից օգտվել է

[12] *М. М. Дьяконов*, Очерк истории древнего Ирана, М., 1961, էջ 181 և հետ.։

[13] Նույն տեղում, էջ 182։

[14] Նույն տեղում, էջ 182 և հետ.։

*Խորենացին, և որը գիտությանը առայժմ անհայտ է[15]: Այս հետաքրքրական հարցի ուսումնասիրությունը թողնում ենք ապագային:*

*Մյուս դրդապատճառը, որի ազդեցության ներքո Խորենացին կրճատել է պարթևական ցուցակի ընդհանուր տևողությունը, պարզվում է Խորենացու՝ պարթև-պարսկական շարքի երկրորդ, պարսկական հատվածի քննությունից, որին և անցնում ենք:*

## 2.

*Անանունի մոտ բերված՝ Սասանյանների ցուցակը իր ձևավորմամբ տարբերվում է պարթև արքաների ցուցակից: Մինչդեռ վերջինս տրված է այն ձևով, ինչպես մենք ներկայացրինք, այսինքն առանձին թագավորների անունների և նրանց իշխանության տևողությունների հաջորդական թվարկմամբ, առաջինը հյուսված է եռաշար սինքրոնիկ աղյուսակի մեջ, որի մնացած երկու շարքերն են կազմում հայոց թագավորները և հռոմեական կայսրերը (տե՛ս Հավելված Բ): Այս աղյուսակը ձգվում է մինչև հայ Արշակունիների անկման տարեթիվը, որն ըստ Անանունի ժամանակագրության համընկնում է պարսից Հազկերտ 1-ին իշխանության ժամանակաշրջանին: Սրան հաջորդում է մի նոր՝ երկշար սինքրոնիկ աղյուսակ, կազմված պարսկական ու բյուզանդական իշխողների զուգահեռ շարքերից, որը հասնում է մինչև Սասանյանների անկումը: Այդ երկու աղյուսակներում էլ նշված են թե՛ յուրաքանչյուր թագավորի իշխանության տևողությունը, թե՛ շարքերը սինքրոնացնող ամենամանրամասն տվյալներ, որով ստեղծվում է փոխադարձ ստուգման հնարավորություն: Այդ ստուգումը կատարել է Ն. Ադոնցը, որից և օգտվում ենք ստորև բերվող աղյուսակներում: Շարքերից որևէ մեկի առանձնացումը,*

*15 Ա. Գուտշմիդի կարծիքը, թե այդ աղբյուրը Բարսուման է, չի արդարանում Խորենացու տեքստով. Խորենացին ասում է միայն, թե ինքը Բարսումայից է քաղել տեղեկություններ Արտավանի անկման և Արտաշիր Պապականի գահակալման մասին (II, ԿԹ, Հ):*

մի բան, որ մենք անում ենք Սասանյանների նկատմամբ առաջիկա աղյուսակի չորրորդ սյունակում, դժվարություն չի ներկայացնում։ Վերցրել ենք Սասանյան թագավորների շարքի այն հատվածը, որը համապատասխանում է Խորենացու ժամանակագրության տևողությանը, այսինքն մինչև Հազկերտ 2-րդի առաջին տարին։ Անանունի մոտ շարքը շարունակվում է։

Խորենացու և Անանունի՝ Սասանյան թագավորների շարքերը համեմատելիս տեսնում ենք, որ նրանք իրար մոտ լինելով, մոտ են նաև ստույգ ժամանակագրությանը[16], թեև նրանցից յուրաքանչյուրը ուրույն ձևով է առնչվում այդ ժամանակագրությանը։

Քննենք հետևյալ աղյուսակը, որի մեջ համադրված են Սասանյան արքաների ստույգ, ապա՝ Խորենացու և Անանունի ժամանակագրությունները, վերցված ընդհանուր ժամանակա-

16 «Ստույգ» կամ «գիտական» կամ «ընդունված» ժամանակագրություն ասելով այստեղ և առաջիկայում հասկանում ենք այն ժամանակագրությունը, որը մշակված է գիտնականների կողմից առկա բոլոր համապատասխան աղբյուրների տվյալների հիման վրա և առ այսօր ընդունված է գիտության մեջ։ Հասկանալի է, որ այդ ժամանակագրության անխտիր բոլոր տվյալները չեն, որ կարելի է անվերապահորեն ստույգ համարել և նրա ճշմարտացիության աստիճանը տարբեր է պատմության տարբեր բնագավառներում։ Հայոց պատմության ժամանակագրության մեջ, մեր աշխատության հետ առնչվող շրջանակներում, մենք դժվար թե գտնենք որևէ կասկածելի տարեթիվ, այնքան մանրամասն է լուսաբանված այդ բնագավառը սկզբնաղբյուրներով։ Սասանյանների ժամանակագրությունը, թեև այդ վիճակից մեկ աստիճան ցածր է, բայց դարձյալ այժմ բավականաչափ հաստատ է։ Հայոց պատմության ժամանակագրությունը տեղ-տեղ լավ, տեղ-տեղ շատ վատ է լուսաբանված աղբյուրներով և դեռևս մի շարք հարցեր է հարուցում։ Այս է պատճառը, որ «ստույգ» ժամանակագրությանը դիմելիս ամեն անգամ պետք է ցուցաբերել կոնկրետ մոտեցում, որը մենք ջանացել ենք պահպանել։ Ի դեպ, այդ ժամանակագրության հետ Խորենացու տվյալների համեմատությունը, որին մենք դիմում ենք բազմաթիվ անգամ, երբեք նպատակ չունի «շտկելու» Խորենացու ժամանակագրությունը։ Մեր նպատակն է լինում այդպիսի դեպքերում կամ Խորենացու տվյալների առանձնահատկությունների բացահայտելը, կամ համոզվելը, որ այսինչ դեպքերում Խորենացին ունեցել է իրական ու հավաստի, թեև մեզ առայժմ անհայտ, ժամանակագրական աղբյուր։

գրական ցանկից դուրս, ինքնուրույն փակագծերում նշված է յուրաքանչյուր թագավորի իշխանության տևողությունը՝ տարիներով:

Աղյուսակ 3

| Տարիները հաշված՝ Սասանյան [illegible] | Ստույգ ժամանակագրություն | Մ. Խորենացու ժամանակագրություն | Անանունի ժամանակագրություն |
|---|---|---|---|
| 1 | Արտաշիր 1-ին (15) | Արտաշիր 1-ին (40) | Արտաշիր 1-ին[17] (50) |
| 16 | Շապուհ 1-ին (30) | | |
| 41 | | Շապուհ 1-ին (46) | |
| 46 | Որմիզդ 1-ին, Վռամ 1-ին, ապա 2-րդ և 3-րդ (21) | | |
| 51 | | | Շապուհ 1-ին (73) |
| 67 | Ներսեհ (9) | | |
| 76 | Որմիզդ 2-րդ (7) | | |
| 83 | Շապուհ 2-րդ (70) | | |
| 87 | | Ներսեհ (9) | |
| 96 | | Որմիզդ (3) | |
| 99 | | Շապուհ 2-րդ (70) | |
| 124 | | | Ներսեհ (9) |
| 133 | | | Որմիզդ (3) |
| 136 | | | Շապուհ 2-րդ (73)[18] |
| 153 | Արտաշիր 2-րդ (4) | | |
| 157 | Շապուհ 3-րդ (5) | | |
| 162 | Վռամ 4-րդ (11) | | |
| 169 | | Արտաշիր 2-րդ (4) | |
| 173 | Հազկերտ 1-ին (21) | Վռամ 1-ին (4-րդ) (10) | |
| 183 | | Հազկերտ 1-ին (11) | |
| 194 | Վռամ 5-րդ (19) | Վռամ 2-րդ (5-րդ) (21) | |
| 209 | | | Արտաշիր 2-րդ (4) |
| 213 | Հազկերտ 2-րդ | | Վռամ 1-ին (4-րդ) (11) |
| 215 | | Հազկերտ 2-րդ | |
| 224 | | | Հազկերտ 1-ին (21) |
| 245 | | | Վռամ 2-րդ (5-րդ) (22) |
| 267 | | | Հազկերտ 2-րդ |

17 Անանունի՝ «Յամին ԽԹ-երորդի Արտաշրի արքային Պարսից, և ԺԹ ամ Տրդատայ արքային Հայոց թագաւորէ Շապուհ, որդի Արտաշրի ի վերայ

Աղյուսակը ակնբախ կերպով ցույց է տալիս երեք ժամանակագրությունների նմանություններն ու տարբերությունները։ Համեմատենք իրար հետ աղյուսակի նախ 3-րդ ու 4-րդ սյունակները, այսինքն Խորենացու և Անանունի ժամանակագրությունները։

Եթե մի պահ վերանանք թվական տվյալներից, ապա կտեսնենք, որ երկու այս ցուցակների միջև բացարձակապես ոչ մի տարբերություն չկա՝ նույնն են թագավորների քանակը, անունները և հերթականությունը, նույնն են, հետևաբար, և ցուցակներից դուրս մնացած թագավորները՝ Որմիզդ 1-ինը, Վռամ 1-ինը, Վռամ 2-րդը, Վռամ 3-րդը և Շապուհ 3-րդը։ Ինչ վերաբերում է թվական տվյալներին, ապա համընկնում են Ներսեհին, Որմիզդ 2-րդին, Արտաշիր 2-րդին հատկացված տարիները և տարբերվում՝ մնացածներինը։ Տարբեր է նաև Սասանյան թագավորների շարքի համապատասխան հատվածների (սկզբից մինչև Հազկերտ 2-րդի առաջին տարին ներառյալ) տարիների հանրագումարը. Խորենացու մոտ այն հավասար է 215-ի, Անանունի մոտ՝ 267-ի։

Հարց է ծագում. եթե Խորենացու և Անանունի այս ցուցակներից մեկն ու մեկը սկզբնօրինակն է հանդիսանում և կամ, ինչպես մենք ենթադրում ենք, այս ցուցակների հիմքում միևնույն սկզբնաղբյուրն է ընկած, ապա դրանցից ո՞րն է այդ սկզբնօրինակը և կամ ո՞վ է ընդհանուր սկզբնաղբյուրի փոփոխողը։ Անանո՞ւնն է ընդարձակել ժամանակագրության տևողությունը, թե՞ Խորենացին է սեղմել այն, և ի՞նչ նպատակով։

Պատասխանն այստեղ էլ նույնն է, ինչ որ պարթևների շարքի դեպքում։ Այն ստանում ենք Անանունի ու Խորենացու

աշխարհին Պարսից...» սկզբնականի ցուցակը, ըստ որի Արտաշիրը 49 տարի է թագավորել, հակասում է նույն Անանունի «... Թագաւորեաց Արտաշիր որդի Սասանայ... ամս ԺԵ» ցուցմանը, ինչպես և ամբողջ աղյուսակի սկզբունքին, ուստի և պետք է թյուրիմացության համարել։

18 Անանունի «Յամի Ձ-երորդի Արշակայ արքային Հայոց թագաւորէ ի վերա Պարսից Շապուհ որդի Որմզդայ՝ ամս Հ» ցուցման վերջին թիվը հակասում է ամբողջ աղյուսակի սկզբունքին, և պետք է ուղղել ՀԴ (ոչ ՀԳ, ինչպես առաջարկում է Ստ. Մալխասյանցը)։

ժամանակագրությունները պատմագիտության մեջ ընդունված ժամանակագրության հետ համեմատելով։ Իհարկե, Անանունն ունի երկու պատմականորեն ստույգ թվեր՝ Վռամ 1-ինի (4-րդի) և Հազկերտ 1-ինի իշխանության տևողությունները, մինչդեռ Խորենացու համապատասխան թվերը շեղվում են ստույգ ժամանակագրությունից։ Սակայն, դրա դիմաց, Խորենացու՝ Սասանյանների շարքի մեջ հետաքրքրող հատվածի (այսինքն Արտաշիր 1-ինի գահակալման տարվանից մինչև Հազկերտ 2-րդի գահակալման տարին) ընդհանուր տևողությունը (215 տարի) գրեթե համապատասխանում է գիտական ժամանակագրության նույն հատվածին (213 տարի), իսկ եթե վերցնենք Սասանյանների սկզբից մինչև Վռամ 2-րդի (5-րդի) գահակալության ժամանակահատվածը, ապա և լրիվ համընկնում է։ Այս համապատասխանությունը (որը նախորդ աղյուսակում շեշտված է շեղատառով) շատ ավելի էական է։

Հարց է ծագում, ինչո՞վ բացատրել այն։ Եթե Խորենացու Սասանյան թագավորների ցուցակը իր բոլոր մանրամասներով ճիշտ և ճիշտ, կամ փոքր շեղումներով, համապատասխաներ ստույգ ժամանակագրությանը, ապա հանրագումարի համընկնումը միանգամայն բնական երևույթ կլիներ և ոչ մի բացատրության կարիք չէր զգա։ Բայց խնդիրը հենց այն է, որ Խորենացին իշխողների մի մասի համար ունի պատմականորեն ոչ ստույգ թվեր, հատկապես առաջին Սասանյանների համար, չհաշված այն հանգամանքը, որ մի քանի թագավորներ էլ նրա մոտ բացակայում են։ Ինչպե՞ս է պատահել ուրեմն, որ նա այդ պայմաններում, այնուամենայնիվ, հասել է ճիշտ հանրագումարի։

Կարելի է, իհարկե, այս նմանությունը համարել պատահական երևույթ։ Բայց եթե փորձենք չընթանալ թույլ դիմադրության այս ճանապարհով, ապա միայն մի եզրակացության կարող ենք հանգել, այն է, որ Խորենացուն, անկախ Սասանյանների ցուցակի մանրամասնություններից, հայտնի է եղել այդ ցուցակի հետ կապված մի հանրագումարային թիվ, ստույգ-պատմական, որով էլ նա առաջնորդվել է։ Մենք հնա-

բավարություն չենք տեսնում այլ կերպ բացատրելու հանրագումարի ստուգության և որոշ գումարելիների անճշտության միջև եղած հակասությունը։

Այստեղից էլ բխում է վերևում դրված այն հարցի պատասխանը, թե ով է եղել Սասանյանների ցուցակի մշակողը՝ Խորենացի՞ն է կրճատել նրա տևողությունը, թե՞ Անանունը՝ ընդարձակել։ Պատասխանը պարզ է. Խորենացին է կրճատել, և արել է այդ, ձգտելով հավասարեցնել հանրագումարը իրեն նախապես հայտնի ստույգ մի թվի։

Սակայն սա խնդրի մի կողմն է միայն։ Կարևորագույնը այն է, թե ի՞նչ թիվ է այդ, որով Խորենացին հարկ է համարել առաջնորդվել, ինչո՞վ է այդ թվով սահմանվող ժամանակահատվածը արժանացել Խորենացու հատուկ ուշադրությանը։ Մի բան պարզ է հենց սկզբից, որ դա մի պատահական թիվ, մի պատահական ժամանակահատված լինել չէր կարող, այլ այնպիսի մի ժամանակահատված, որ ընկած լիներ երկու կարևոր, դարագլուխ կազմող իրադարձությունների միջև։ Առաջին իրադարձությունը հայտնի է, դա Սասանյանների գահակալության սկիզբն է, կամ, որ ժամանակագրության տեսակետից նույնն է՝ պարթև Արշակունիների բարձումը։ Երկրորդ իրադարձությունը որոշելիս պետք է հաշվի առնել, որ այն չի կարող տեղի ունեցած լինել Վռամ 2-րդի (5-րդի) գահակալության տարվանից վաղ, որովհետև Խորենացու և գիտական ժամանակագրությունները համապատասխանում են հենց այդ կետում։ Վերջին փաստից հետևում է նաև, որ Խորենացուն հայտնի է եղել ոչ միայն խնդրո առարկա իրադարձության ստույգ տարեթիվը, հաշված Սասանյանների սկզբնական տարվանից, այլև այդ իրադարձության սինքրոնականությունը Վռամ 2-րդի (5-րդի) որոշակի տարվա հետ, այսինքն Խորենացին իմացել է նաև, թե Վռամի ո՞ր տարումն է, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել։

Որպես երկրորդ, որոնելի, իրադարձության հավակնորդներ առաջին հայացքից աչքի են ընկնում երկուսը՝ հենց նույն Վռամ 2-րդի (5-րդի) գահակալումը և Հազկերտ 2-րդի գահա-

կալումը։ Եվ սրանք կարծես թե բավարարում են վերջին նախապայմանին, առաջինը՝ ճիշտ և ճիշտ համընկնելով, երկրորդը՝ միայն երկու տարով շեղվելով ստույգ ժամանակագրությունից։ Բայց նրանք չեն բավարարում, մեր կարծիքով, նախորդ նախապայմանին, այն է, անհրաժեշտ չափով ծանրակշիռ իրադարձություններ չեն հանդիսանում, անգամ եթե հաշվի առնենք, որ Հազկերտ 2-րդի գահակալման տարին դա միևնույն ժամանակ Սահակ Պարթևի մահվան տարին է։ Չեն հանդիսանում, որովհետև պարզ չէ, թե ինչու իր ժամանակ հանրահայտ և շեշտված պիտի լիներ (ու այդ պատճառով էլ հայտնի դառնար Խորենացուն), թե քանի տարի է անցել Արտաշիր Պապականի գահակալության տարվանից (կամ պարթև Արշակունիների բարձումից) մինչև, ասենք Սահակ Պարթևի մահը, իսկ խոսքը այստեղ միայն ժամանակագրական այդ կոնկրետ կետերի մասին է։

Մենք միայն մի իրադարձություն ենք տեսնում, որ բավարարում է բոլոր նախապայմաններին։ Դա հայ Արշակունիների բարձումն է, որը ըստ Խորենացու աղյուսակի տեղի է ունեցել Վռամ 2-րդի (5-րդի) 9-րդ տարում և բաժանված է Սասանյանների գահակալումից, կամ պարթև Արշակունիների բարձումից 202 տարիներով։ Հայ և պարթև Արշակունիների բարձման միջև ընկած տարիների թիվը իսկապես որ կարող էր հանրահայտ լինել և կարևոր հանդիսանալ Խորենացու համար իր ձեռքի տակ եղած Սասանյան թագավորների ցուցակը մշակելիս։ Նման մի դարաշրջան պարփակող թիվ, ինչպես և նրա հարակից՝ իրադարձությունը ժամանակի պարսից արքայի հետ սինքրոնացնող թիվ, ստուգորեն պահպանումը ոչ միայն գրավոր, այլև անգամ բանավոր պատմական ավանդության մեջ, և սրանցից որևէ մեկից Խորենացու հանելը միանգամայն բնական է և չի կարող զարմանք պատճառել։

3.

Խորենացու Սասանյանների ցուցակի հաճելի «անակնկալները» սրանով չեն սպառվում։ Նորից դիտենք այդ շարքը, այս անգամ բացարձակ ժամանակագրության ֆոնի վրա, հաշվում-

ների կատարելով Խորենացու ընդունած տամարով, որ համապատասխանում է սելևկյան տամարին։ 2-րդ սյունակում ընթերցողի կողմնորոշման համար տրվում է նույն հաշիվը՝ փոխադրած մեր գործածական տամարի (համապատասխանում է գլխի վերջում բերված № 5 աղյուսակի 2-րդ սյունակին)։ Ըստ ընդունված ժամանակագրության, Սասանյանների սկիզբն

Աղյուսակ 4

| Սելևկյան տոմար | Մեր թվականություն | Սուլյզ ժամանակագրություն | Խորենացու ժամանակագրություն | Անանունի ժամանակագրություն |
|---|---|---|---|---|
| 522 | 211 | | Արտաշիր 1-ին | |
| 537 | 226 | Արտաշիր 1-ին | | |
| 553 | 242 | Շապուհ 1-ին | | |
| 562 | 251 | | Շապուհ 1-ին | |
| 564 | 253 | | | Արտաշիր 1-ին |
| 583 | 272 | Որմիզդ 1-ին, Վռամ 1-ին, Վռամ 2-րդ, Վռամ 3-րդ | | |
| 604 | 293 | Ներսեհ | | |
| 608 | 297 | | Ներսեհ | |
| 613 | 302 | Որմիզդ 2-րդ | | |
| 614 | 303 | | | Շապուհ 1-ին |
| 617 | 306 | | Որմիզդ | |
| 620 | 309 | Շապուհ 2-րդ | Շապուհ 2-րդ | |
| 687 | 376 | | | Ներսեհ |
| 690 | 379 | Արտաշիր 2-րդ | Արտաշիր 2-րդ | |
| 694 | 383 | Շապուհ 3-րդ | Վռամ 1-ին (4-րդ) | |
| 696 | 385 | | | Որմիզդ |
| 699 | 388 | Վռամ 4-րդ | | Շապուհ 2-րդ |
| 704 | 393 | | Հազկերտ 1-ին | |
| 710 | 399 | Հազկերտ 1-ին | | |
| 715 | 404 | | Վռամ 2-րդ (5-րդ) | |
| 731 | 420 | Վռամ 5-րդ | | |
| 736 | 425 | | Հազկերտ 2-րդ | |
| 750 | 439 | Հազկերտ 2-րդ | | |
| 772 | 461 | | | Արտաշիր 2-րդ |
| 776 | 465 | | | Վռամ 1-ին (4-րդ) |
| 787 | 476 | | | Հազկերտ 1-ին |
| 808 | 497 | | | Վռամ 2-րդ (5-րդ) |
| 830 | 519 | | | Հազկերտ 2-րդ |

*ընկնում է 226 թվականին (= սել. 537 թ.), ըստ Խորենացու՝ 211 թվականին (=սել. 522 թ., տե՛ս աղյուսակ № 1), ըստ Անանունի՝ 253 թվականին (=սել. 564 թ., վերջին թիվը ստանում ենք Անանունի ժամանակագրության մեջ պարունակվող Սելևկյան առաջին երեք թագավորների 61 տարիներին գումարելով պարթև թագավորների 502 տարիները և Արտաշիր 1-ինի առաջին տարին)։*

*Աղյուսակից երևում է, որ Սասանյանների բացարձակ ժամանակագրությունը՝ ըստ Անանունի շատ հեռու է ստույգ ժամանակագրությունից, իսկ Խորենացունը թեև անհամեմատ մոտ է նրան, բայց, այնուամենայնիվ, տալիս է 16 տարվա տարբերություն ցուցակի սկզբում և 14 տարվա՝ վերջում։ Սրա կողքին աղյուսակը մատնանշում է կարևորագույն ու հետևանքներով հարուստ այն փաստը, որ Խորենացու տվյալները՝ Շապուհ 2-րդի թագավորության սկզբի և վերջի մասերը միանգամայն ստույգ են (այդ հանգամանքը շեշտված է շեղատառով)։ Ու եթե այդչափ ճշգրիտ չլինեին էլ, և խոտորվեին այս կամ այն կողմ 1—2 տարով, այնուհանդերձ, կմնար որպես փաստ այդ թվերի սկզբունքային համընկնումը ստույգ ժամանակագրության հետ։*

*Սույն փաստով հաստատվում է վերևում առաջ քաշված այն թեզը, որ Խորենացին ծանոթ է եղել սելևկյան տոմարին, որովհետև Շապուհ 2-րդի թվագրումը Խորենացու կողմից կատարված է այդ, և միմիայն այդ, տոմարով։ Խորենացին պարզապես ցույց է տալիս, որ իրեն հայտնի է եղել մ. թ. ա. 311 թվականի և Շապուհ 2-րդի գահակալման տարեթվի միջև ընկած ժամանակահատվածի ստույգ տևողությունը։ Հայտնի է եղել փրկչական տոմարը Խորենացուն, թե ոչ[19], տվյալ թվագրմանը այն միանգամայն անհարիր է[20]։*

*[19] Այդ մասին տե՛ս ներքևում, էջ 66 և հետ.*

*[20] Պետք չէ շփոթել սույն № 4 աղյուսակի 2-րդ սյունակում զետեղված հաշվի հետ։ Փրկչական տոմար ասելով այստեղ հասկանում ենք այն հաշիվը, որ կարելի է կատարել Խորենացու աղյուսակում Քրիստոսի ծննդյան տեղադրման կետից։ Այդ հաշիվը արտահայտված է հաջորդ, № 5 աղյուսակի 6-րդ սյունակում։ Ըստ այդ հաշվի Շապուհ 2-րդի գահակալությունը ընկնում*

*Շապուհ 2-րդի թվագրման համար սելևկյան տոմարի կիրառումը Խորենացու կողմից՝ նրա աղբյուրը փնտրելիս դարձնում է մեր հայացքը մի շատ որոշակի ուղղությամբ՝ այն է դեպի ասորական աղբյուրները, պատմական-ժամանակագրական ժանրի երկերը, որոնք լայնորեն կիրառել են սելևկյան տոմարը։*

*Առայժմ դժվար է ասել, թե կոնկրետ ո՞ր ասորական ժամանակագրի երկն է ծառայել Խորենացուն որպես աղբյուր։ Բայց ցույց տալու համար, թե մոտավորապես ինչպիսի՞ն է եղել այդ աղբյուրը, որպես օրինակ կարելի է բերել VI դարի հեղինակ Մշիհա Զխայի ժամանակագրությունը, նվիրված Արբելենի եկեղեցու պատմությանը՝ պարթևների և Սասանյանների օրոք։ Այնտեղ կարդում ենք բառացիորեն հետևյալը. «Շապուհ 2-րդը... թագավորեց մոտավորապես 70 տարի, սկսած հունաց 620 թվականից, մինչև 690 թվականը»[21]։ Ինչպես տեսնում ենք, այս տվյալները ճշտորեն համընկնում են Խորենացու տվյալների հետ, ըստ որոնց Շապուհ 2-րդը նույնպես թագավորել է 70 տարի, սելևկյան տոմարի 620 թվականից մինչև 690 թվականը (տե՛ս նախորդ № 4 աղյուսակը)։ Բացառված չէ, որ Մշիհա Զխան և Խորենացին օգտված լինեն միևնույն աղբյուրից։*

*Ավելի ուշ շրջանի ասորական մի վարքագրության մեջ Շապուհի գահակալման թիվը համարվում է սելևկյան տոմարի 621 թվականը[22]։ Այս աղբյուրում կարևոր է մի այլ հանգամանք։ Կից բերված է նաև թվագրությունը ըստ փրկչական տոմարի և այստեղ սպասվելիք 310 թվականի փոխարեն (621—311=310) գտնում ենք 271, այսինքն 39 տարով*

*է 346 թվականին, ուստի և ասացինք, թե փրկչական տոմարը Շապուհի՝ Խորենացու կողմից ճիշտ թվագրմանը անհարիր է։*

[21] *Mešiha-Zeha*. Chronique d'Arbèle. A. Mignana, Sources syriaques, I, Mossoul, 1907, *էջ 126։*

[22] *G. Hoffmann*. Auszüge aus syrischen (Erzählungen von) Akten persischen Märtyrern, Lpz., 1880, *էջ 24։ Այստեղ Մար Սաբհայի (Պիրգուշնասպի) վարքագրության մեջ մի իրադարձություն թվագրված է հունաց 674, փրկչական 324 և Շապուհ 2-րդի 53-րդ թվականներով։*

սխալ։ Նախորդ էջի ծանոթությունում ցույց է տրված Խորենացու նմանօրինակ շեղումը՝ 37 տարով, թեև հակառակ կողմը՝ ստացվելիք 309 թվականի փոխարեն՝ 346։ Երկու հեղինակների համար բնորոշ է, ուրեմն, անհստակ պատկերացումը սելևկյան և փրկչական տոմարների առնչության մասին։ Խորենացու այս շեղման էության մասին ներքևում դեռ կխոսվի, բայց այստեղ նշենք, որ պատմագիրը առնչվում է ասորական աղբյուրներին ոչ միայն իր ճիշտ թվագրություններով, այլև իր որոշ շեղումների բնույթով։

Միշհա Զխայից վերևում բերված օրինակը ցույց է տալիս նաև, որ անշուշտ ասորական աղբյուրների ոլորտից է գալիս նաև Շապուհ 2-րդի թագավորության տևողության այն ճշգրտումը (70 տարի), որ կատարել է Մովսես Խորենացին, տարբերվելով Անանունից, որի մոտ նշված գումարը 3 տարով ավելի է։ Այս ճշգրտումը ավելի ևս հետաքրքրական կդառնա, եթե շեշտենք, որ Խորենացին ժամանակագրական նյութը մշակելիս բնականաբար իր ուշադրությունը միշտ սևեռել է ավելի երկար տևողություն ունեցող թագավորությունների վրա ու առաջին հերթին դրանք է կրճատել։ Եթե այս պարագաներում նա, այնուամենայնիվ, պահպանել է Շապուհ 2-րդի համար 70 թիվը (որը, ի դեպ, նրա ժամանակագրության մեջ ամենից խոշորն է. նրան հետևում է Հայոց Տրդատի թագավորության տևողությունը՝ 56 տարի), ապա միայն այն պատճառով, որ համոզված է եղել նրա ստուգության մեջ։ Այս հանգամանքը, ինչպես և բազմաթիվ այլ նմանօրինակ հանգամանքներ, վկայում է Մ. Խորենացու պատմագիտական սուր հոտառության մասին, թե՛ աղբյուրների ընտրության, և թե՛ նրանց տվյալների գնահատման ու օգտագործման խնդիրներում։

## 4.

Այսպիսով, Խորենացին, ինչպես պարզվեց № 3 աղյուսակից, իմացել է, որ Արտաշիր 1-ինի գահակալման և Վռամ 2-րդի (5-րդի) 9-րդ տարվա միջև, կամ որ նույնն է, պարթև և հայ Արշակունիների բարձման տարեթվերի միջև ընկած է

202 տարի։ Մյուս կողմից, ինչպես հայտնի դարձավ վերջին, № 4 աղյուսակից, նա իմացել է նաև Շապուհ 2-րդի գահակալման ու մահվան ստույգ տարեթվերը՝ սելևկյան տոմարով։ Ահա այս երկուսն են եղել այն ստույգ ելակետերը, որոնց վրա հենվելով Խորենացին նախ մշակել է պարսից թագավորների ժամանակագրության մասին իր ձեռքի տակ եղած մնացյալ ավյալները (որոնք մեզ հասել են Անանունի գրվածքում), ապա և տեղադրել այդ մշակված ցուցակը ընդհանուր ժամանակագրական ցանցում։

Անանունի մոտ հիշյալ ժամանակահատվածի (Արտաշիր Պապականի գահակալումից մինչև Վռամ 2-րդի (5-րդի) 9-րդ տարին) տևողությունն է 253 տարի (տե՛ս № 3 աղյուսակը), իսկ նրա բացարձակ թվագրությունը ընկնում է մ. թ. ա. 253—505 թթ. (=սել. տոմարի 564—816 թթ. տե՛ս № 4 աղյուսակը)։ Խորենացու խնդիրն է եղել, ուրեմն, նախ այդ հանրագումարը կրճատել-հասցնել 202-ի, ապա տեղադրել այդ 202 տարին բացարձակ ժամանակագրության մեջ այնպես, որ Շապուհ 2-րդի թագավորությունն ընկնի իր օրինական տեղը՝ 309—379 թթ. (=սել. տոմարի 620—690 թթ.)։

Կարևոր է նշել, որ խնդրի այս մասը լուծելիս, Խորենացին առաջնորդվել է նույն սկզբունքով, ինչ որ պարթևական ցուցակի մշակման ժամանակ, այն է՝ ներմուծվող փոփոխությունները կատարել է շարքի սահմանափակ հատվածներում՝ սկզբում և վերջում, հնարավորին չափ անաղարտ պահպանելով միջին մասը։ Այստեղ նա կրճատել է սկզբի երկու (Արտաշիր, Շապուհ 1-ին) և վերջին երեք (Վռամ 1-ին (4-րդ), Հազկերտ 1-ին և Վռամ 2-րդ (5-րդ)) իշխողների տարիների մի մասը և անաղարտ պահել միջին չորս թագավորների տարիները (Շապուհ 2-րդի տարիների տարբերությունը 3-ով, ինչպես ասվեց, իրականում կրճատում չէ, այլ ուղղում)։

Այսպիսով Խորենացին հասել է իր առաջին նպատակին, ստացել հանրագումարային ստույգ թիվը։ Նրա հաջորդ խնդիրն է եղել տեղադրել այդ թիվը բացարձակ ժամանակագրության մեջ։

*Եթե նորից անդրադառնանք № 3 աղյուսակին, ապա կտեսնենք, որ այնտեղ Շապուհ 2-րդի թագավորությունը ընկնում է Սասանյանների սկզբի տարվանից հաշված 99—169 թթ. վրա (2-րդ սյունակում), այսինքն 16 տարով ավելի ուշ, քան ըստ ստույգ ժամանակագրության (83—153 թթ.՝ 1-ին սյունակում)։ Աղյուսակի շարունակության մեջ տեսանք, որ Խորենացու ժամանակագրությունը և ստույգ ժամանակագրությունը հավասարակշռվում են Վռամ 2-րդի (5-րդի) գահակալման տարեթվում։ Այսպիսով, Խորենացու Սասանյանների ցուցակում Շապուհ 2-րդի և Վռամ 2-րդի (5-րդի) միջև ընկած ժամանակահատվածը 16 տարով ավելի կարճ է, քան ստույգ ժամանակագրության համապատասխան ժամանակահատվածը։*

*Այս պակասող 16 տարիները բաղկացած են երկու տարրից։ Դրանցից 11 տարին այն տարիներն են, որոնք Խորենացին, վերևում հիշատակված կրճատումը կատարելիս, վերցրել է Վռամ 1-ինի (4-րդի) և Հազկերտ 1-ինի իշխանության տարիներից (առաջինից՝ 1 տարի, երկրորդից՝ 10 տարի)։ Երկրորդ տարրը, այսինքն, մնացած 5 տարին, արդեն Խորենացու նախաձեռնությամբ չէ, որ կրճատվել է։ Այդ տարիները դեռ Խորենացու աղբյուր հանդիսացած ցուցակում բացակայող (տե՛ս Անանունի ցուցակը) Շապուհ 3-րդի (Վռամ 1-ինի (4-րդի) հոր) տարիներն են, որոնք դուրս են մնացել նաև Խորենացու ցուցակից Շապուհի հետ միասին։*

*Ի՞նչ է տեղի ունեցել այդ 16 տարիների հետ, արդյո՞ք դրանք անհետացել են Խորենացու ժամանակագրությունից։ Ե՛վ անհետացել են, և ո՛չ։ Խորենացու ժամանակագրության ընդգրկած ամբողջ ժամանակահատվածի ընդհանուր տևողության առումով, ինչպես կտեսնենք, անհետացել են, իսկ միայն Սասանյանների ցուցակի տևողության առումով՝ ոչ։ Հարցն այն է, որ այդ ցուցակի հանրագումարը, վերևում նշված 202 տարին, եղել է կանխորոշված և փոփոխման ոչ ենթակա մի ղեկավար թիվ, որի ստուգությունը Խորենացու աչքում անկասկած էր։ Ուրեմն և մեզ հետաքրքրող 16 տա-*

րիները, նրա մի հատվածից դուրս գալով, պետք է բաժին ընկնեին, և իրոք ընկել են, մի այլ հատվածի: Պակասելով վերջին իշխողներից, դրանք բաշխվել են առաջին իշխողների միջև, և գումարելիների տեղաշարժից ու փոփոխումից գումարը չի փոխվել: Բայց տարիների վերաբաշխման արդյունքը եղել է այն, որ ցուցակի միջին մասում գտնվող Շապուհ 2-րդի թագավորության ժամանակաշրջանը հիշյալ 202 տարի ժամանակահատվածի ներսում առաջ է ձգվել 16 տարով:

Թերևս այս երևույթը մնար Խորենացու համակարգի մյուս՝ լոկալ նշանակություն ունեցող շեղումների թվում, եթե նրան հայտնի չլիներ Շապուհ 2-րդի ճիշտ թվագրությունը բացարձակ ժամանակագրության մեջ, ըստ սելևկյան տոմարի, և հետևաբար, եթե նրա առջև կանգնած չլիներ վերևում հիշատակված խնդրի երկրորդ մասը՝ այն է տեղավորել Սասանյանների ցուցակը բացարձակ ժամանակագրության մեջ այնպես, որ Շապուհ 2-րդի թագավորությունը ընկնի իր օրինական տեղը:

Բայց նա լուծել է իր այդ խնդիրը ևս, և ճիշտ տեղադրելով Շապուհ 2-րդին, դրանով իսկ ակամայից 16 տարով հետ է քաշել Սասանյանների ամբողջ շարքը:

Այս հանգամանքը մի շարք հետևանքներ է ունեցել: Վերևում խոսվեց պարթև Արշակունիների իշխանության ընդհանուր տևողության կրճատման մասին՝ Խորենացու մոտ: Պատճառը պարզվում է հենց այստեղ: Աղբյուրից ստացած թիվը՝ 500 կամ 502, նրան չէր բավարարում, որովհետև այն չէր տեղավորվում մի կողմից Եվսեբիոսի տված՝ այդ հարստության գահակալման թվականի (Սելևկոս 1-ինի գահակալումից, կամ որ Խորենացու համար նույնն էր՝ Ալեքսանդրի մահվան թվականից հաշված՝ 61-րդ տարում) և մյուս կողմից՝ Սասանյանների շարքի վերոհիշյալ տեղադրման հետևանքով ստացված՝ Սասանյանների գահակալման թվականի միջև, ուստի և նա մի կողմ է դրել այդ թիվը և տեղավորել պարթև Արշակունիների շարքը սահմանված միջոցում (=461

տարվա), համապատասխանորեն սեղմելով ձեռքի տակ ունեցած ցուցակի թվերը։

Սասանյանների շարքի ոչ ճիշտ տեղադրման հետևանքով Վռամ 2-րդի (5-րդի) հետ միասին տեղից շարժվել է նաև նրա 9-րդ տարվա հետ սինքրոնացված՝ Հայ Արշակունիների բաժանման տարեթիվը՝ գնալով նույն 16 տարով դեպի ետ (428-ի փոխարեն՝ 412 թ., տե՛ս աղյուսակ № 5, 2-րդ, և 3-րդ սյունակները)։ Բնականաբար, նույնն է տեղի ունեցել նաև Խորենացու ժամանակագրության եզրափակիչ տարեթվի, այն է՝ Սահակ Պարթևի մահվան տարեթվի հետ, որը ևս է քաշվել իր հետ սինքրոնացված սասանյան Հազկերտ 2-րդի առաջին տարվա հետ միասին, բայց արդեն ոչ թե 16, այլ միայն 14 տարով, որովհետև Խորենացին շահել է 2 տարի, տալով Վռամ 2-րդին (5-րդին), իրական 19 տարիների դիմաց, 21 տարի (հետևելով, վերջ ի վերջո, սասանյան աղբյուրներին)[23]։ Սրանով էլ կրճատվել է Խորենացու ժամանակագրական աղյուսակի ընդհանուր տևողությունը համեմատած ստույգ ժամանակագրության հետ, մի փաստ, որ բազմիցս նշվել է գրականության մեջ, բայց չի բացատրվել։ Կարելի է համոզվել, թե որքան օրգանական է այս շեղումը Խորենացու համակարգի համար, և հետևաբար որքան անընդունելի՝ Բ. Պատկանյանի և Ստ. Մալխասյանցի փորձը՝ վերացնելու այն, ներմուծելով Խորենացու ցուցակների մեջ մի նոր, իբրև թե Խորենացու կողմից անտեսված, իշխողի։

Ընդհանուր հայացք ձգելով Խորենացու ժամանակագրության առանցքը կազմող սելևկյան-պարթևական-պարսկական իշխողների շարքի վրա, տեսնում ենք, որ իր ձեռքի տակ

---

[23] Հետաքրքրական է այս 21 թվի ծագումը։ Անանունը համապատասխան տեղում ունի 22. պարզ է, որ Խորենացու թիվն էլ այս թիվն է՝ մեկով պակասեցված։ Բայց այս 22-ը իր հերթին գալիս է սասանյան ժամանակագրություններից, որտեղ ևս, ի տարբերության պատմական իրականության, հենց այդ թվով է բնութագրված Վռամ 2-րդի (5-րդի) թագավորության տևողությունը (օրինակ, Միքայել Ասորու մոտ)։

եղած սխեմատիկ նյութի (հմմտ. Անանունի շարքը) խիստ երկարաձգված ավյալները (830 տարի տևողություն՝ իրական 750 տարվա դիմաց) մշակելով մի քանի մասնավոր, բայց անհամեմատ ավելի սուղ, տվյալների լույսի տակ, Խորենացին սահմանել է պատմական իրականությանը շատ ավելի մոտ պատկեր (736 տարի՝ իրական 750 տարվա դիմաց)։

5.

Վերլուծման ենթակա հերթական շարքը հռոմեականն է։ Այս շարքը, ինչպես ասվեց վերևում, ներկայացված է Խորենացու մոտ, մյուսների հետ համեմատած, շատ սակավաթիվ ժամանակագրական ցուցումներով, եթե նկատի ունենանք միայն թվեր պարունակող ցուցումները։ Դրանք են Խորենացու այն հաղորդումները, թե հայոց Տրդատը գահ է բարձրացել Դիոկղետիանոսի 3-րդ տարում (Հավելված Ա, № 34), թե Կոստանդիոսի 8-րդ տարում գահակալել է Խոսրովը (Հավելված Ա, № 40), 17-րդ տարում՝ Տիրանը (Հավելված Ա, № 42), իսկ Թեոդոս 1-ինի 20-րդ տարում գահ է բարձրացել հայոց Վարազդատը (Հավելված Ա, № 53)։ Որոշ վերապահությամբ սրանց կարելի է ավելացնել նաև Քրիստոսի ծննդյան մասին ցուցումը (Հավելված Ա, № 13), որը ինչպես կտեսնենք հետագայում, այդ ձևով էլ (այսինքն՝ որպես թվական տվյալ) ընկալվել է Խորենացու տվյալները օգտագործած մատենագիրների կողմից և վճռող դեր է խաղացել, նրանց ժամանակագրությունների ձևավորման գործում (տե՛ս ներքևում, էջ 67)։

Խորենացու աղբյուրներն այս բնագավառում միանգամայն վստահելի են. դրանք են՝ Եվսեբիոս Կեսարացին և վաղ-բյուզանդական այլ ժամանակագիրներ։ Նույն այս, ինչպես և ուրիշ վստահելի աղբյուրներից Խորենացին առել է հինգ տասնյակից ավելի անուններ՝ հռոմեական կայսրերի, պետական ու ռազմական գործիչների ու սրանց հետ առնչվող այլևայլ պատմական անձնավորությունների՝ որոնցով հագեցրել է իր հռոմեական շարքը, չտալով սակայն սրանց կապակցությամբ առանձին ժամանակագրական ցուցումներ և

բնութագրելով լոկ որպես այս կամ այն հայ թագավորի ժամանակակիցների կամ վերոհիշյալ երեք թվագրված կայսրերի նախորդների ու հետնորդների։

Այսպես, օրինակ, հայոց Տիգրան թագավորի հետ Խորենացին կապում է Միհրդատին, Վալկունին (Լուկուլլոսին), Պոմպեոսին, Կրասոսին, Հուլիոս Կեսարին, Հերովդեսին, Բենտիդիոսին և ուրիշների. Արտավազդ թագավորի հետ՝ Անտոնիոսին. Աբգարի հետ՝ Օգոստոսին, Տիբերիոսին, Գերմանիկոսին. Սանատրուկի հետ՝ Կլավդիոսին, Երվանդի հետ՝ Վեսպասիանոսին, Տիտոսին. Արտաշեսի հետ՝ Դոմետիանոսին, Ներվային, Տրայանոսին, Հադրիանոսին և այլն, և այլն։ Հռոմեական շարքը, որ ամենանոսրն է, այս ձևով ներկայացված լինելով, դառնում է բավականին ստվար։

Այս շարքի մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ նա չի առնչվում սելևկյան տոմարի հետ, որի տեսանկյունով մենք դիտեցինք և վերլուծեցինք պարթևա-պարսկական շարքը։ Այդ տոմարի տեսակետից դիտելու դեպքում հռոմեական շարքը ներկայանում է որպես անաքրոնիզմների մի շարան։ Հենց Քրիստոսի ծննդյան տարին, օրինակ, այդ տոմարով Խորենացու մոտ ընկնում է 275 թվականին (= մ. թ. ա. 37 թ. տե՛ս աղյուսակ № 5, 1-ին, 2-րդ և 6-րդ սյունակներ)։ Դիոկղետիանոս կայսրի գահակալումը (284 թ.) ընկնում է 562 թվականին (= մ. թ. 249 թ., տե՛ս նույն սյունակները)։ Ուստի, նպատակ ունենալով բացահայտել այդ շարքի ներքին առանձնահատկությունները և օրինաչափությունները, անհրաժեշտ է առժամանակ հրաժարվել սելևկյան տոմարի տեսանկյունից և ուսումնասիրել շարքը ինքնուրույն, առանձին վերցված։ Դրա համար պայմանականորեն կարող ենք որպես ելակետ ընդունել Խորենացու սակավաթիվ ցուցումներում նշված տարեթվերից որևէ մեկը։ Հարմարագույնն է ընդունել որպես հիմք Քրիստոսի ծննդյան տարեթիվը։ Սրանով հեշտացրած կլինենք մեր հաշիվների ու դատողությունների ընկալումը ընթերցողի կողմից, ինչպես և համեմատությունը ստույգ ժամանակագրության հետ, որը մենք սովոր ենք

*պատկերացնել ըստ փրկչական տոմարի։ Այսպիսով, որպես ելակետ, այսինքն՝ 1 թվական ընդունում ենք Աբգար Թագավորի իշխանության 2-րդ տարին, երբ, ըստ Խորենացու, ծնվել է Հիսուս Քրիստոսը (աղյուսակ № 5, 6-րդ սյունակ)։ Այս ելակետի համեմատ էլ աղյուսակում դասավորում ենք նաև Խորենացու մյուս՝ և՛ թվեր պարունակող, և՛ չպարունակող տվյալները։ Բոլոր գործիչներին կից աղյուսակում տրված են նրանց ստույգ տարեթվերը՝ համեմատության համար. թվեր չպարունակող տվյալները գրանցված են շեղատառով։*

*Անդրադառնալով նախ և առաջ թվական հիմք ունեցող տվյալներին, գտնում ենք, որ նրանց խոտորումը պատմական ստույգ տարեթվերի համեմատ՝ ի պատիվ Խորենացու՝ կամ գոյություն չունի, կամ աննշան է։ Այսպես, ըստ Խորենացու տվյալների, Դիոկղետիանոսի գահակալումը ընկնում է 286 թվականին, պատմական 284-ի փոխարեն։ Կոստանդինոսի գահակալության տարեթիվը ճշգրտորեն համընկնում է պատմական տարեթվին, համապատասխանելով 337 թվականին, Թեոդոս 1-ինի գահակալումը մի փոքր շեղվում է, ընկնելով 379 թվականի փոխարեն՝ 382 թվականի վրա։ Նման չնչին խոտորումները, իհարկե, էապես չեն փոխում ընդհանուր ճշմարտացի պատկերը։*

*Դառնալով, այնուհետև, այն անձանց, որոնք միայն մոտավոր ձևով, այսինքն, որպես որևէ իշխողի ժամանակակիցներ են թվագրված, գտնում ենք, որ դրությունը մոտավորապես նույնն է, այսինքն միանգամայն բավարար է նրանց մեծագույն մասի համար, այն մասի, որը տեղավորված է շարքի միջին հատվածում՝ Քրիստոսի ծննդյան տարվանից սկսած մինչև Թեոդոս 1-ինի գահակալությունը՝ 382 թվականը։ Այսպես, օրինակ, 1 և 38 թվականների միջև հիշատակված են. Օգոստոս կայսրի մահը և Տիբերիոսի գահակալությունը (մ. թ. 14 թ.), Գերմանիկոսը՝ Արևելքում (19 թ.). 38—68 թթ. միջև Կլավդիոսը (41—53 թթ.). 68—89 թթ. միջև՝ Վեսպասիանոսը (69—79 թթ.) և Տիտոսը (79—81 թթ.) և այլն, մինչև 364—382*

*թվականները, որոնց միջև, պատմական իրողությանը համապատասխան, հիշատակված են Վալենտինիանոսը (364—375 թթ.) և Վաղեսը (346—378 թթ., տե՛ս աղյուսակ № 5)։*

*Վիճակը փոխվում է, երբ ետ ենք գնում շարքի 1 թվականից առաջ, և 382 թվականից հետո ընկած հատվածները, այսինքն շարքի սկզբի և վերջին մասերը։ Շարքի սկզբում, 56—23 թվականների միջև, տեղավորված է մ. թ. ա. 90—40-ական թվականների պատմությունը՝ Միհրդատի դաշինքը Տիգրան 2-րդի հետ (մ. թ. ա. 90-ական թթ.), Վայկունը (Լուկուլլոսը)՝ Հայաստանում (69—68 թթ.), Պոմպեոսը՝ Հայաստանում (66 թ.), Միհրդատի մահը (63 թ.), Կրասոսի պարտությունը (53 թ.), Հուլիոս Կեսարի մահը (44 թ.), Բենտիդիոսը՝ Ասորիքում (39 թ.) և այլն։ Մ. թ. ա. 23—21 թթ. միջև հիշատակված է Անտոնիոսը, որը իրականում Հայաստանում եղել է, ինչպես հայտնի է, մ. թ. ա. 34 թվականին։ Այսպիսով հռոմեական շարքի միջին հատվածի ճշգրտության դիմաց նրա սկզբնական հատվածում հանդիպում ենք նշանակալի տեղաշարժի՝ 10-ից մինչև 30—40 տարի, որի հետևանքով 80—90 տարվա պատմությունը սեղմված-տեղավորված է 56 տարիների մեջ (տե՛ս աղյուսակ № 5)։*

*Շարքի մյուս ծայրում՝ վերջում, գտնում ենք հակառակ պատկերը. այստեղ պատմական ժամանակը ձգված-երկարացված է։ Արդեն Թեոդոս 1-ինի իշխանության տևողությունը երկարաձգված է. հիշատակվում է նրա 20-րդ տարին, որին ըստ Խորենացու պատմածի հաջորդում են նրա թագավորության և մի քանի տարիներ, մինչդեռ այդ կայսրը իրականում միայն 16 տարի է իշխել։ Երկարացված է նաև՝ Արկադիոս կայսրի իշխանության ժամանակաշրջանը։ Իրական՝ 395 թվականի փոխարեն նրա գահակալությունը Խորենացու մոտ ընկնում է 404—409 թթ. միջև, իսկ մահը և նրա հաջորդ՝ Թեոդոս կայսրի գահակալությունը՝ 408 թ. փոխարեն՝ 428-ի մոտերքը, այսինքն նրա 13 տարիների փոխարեն, Խորենացին նրան թագավորել է տալիս 20 կամ ավելի տարիներ և այլն։*

*Փոփոխությունների կուտակումը շարքի սկզբում և վերջում, նրա միջին մասի անաղարտ պահպանմամբ, հիշեցնում է պարթևական և պարսկական շարքերի մշակման Խորենացու վերևում քննարկված մեթոդը:*

6.

*Ինչո՞ւմն է կայանում մշակումը տվյալ դեպքում։ Շարքի սկզբնական հատվածի սեղմումը և վերջին հատվածի ընդլայնումը վկայում են, որ այստեղ մենք գործ ունենք շարքի միջին հատվածի դեպի սկիզբը կատարված տեղաշարժի հետ՝ շարքի երկու ծայրակետերի անշարժ պահպանման պայմաններում։ Կամ ընդհակառակը (որը սակայն կունենար նույն ազդեցությունը) տեղի է ունեցել շարքի երկու ծայրակետերի (ու նրանց հարող հատվածների) տեղաշարժը դեպի վերջը, շարքի միջին հատվածի անշարժության պարագաներում։ Հետևյալ քննությունը ցույց է տալիս, որ իրականում տեղի է ունեցել դրանցից առաջինը, այսինքն տեղաշարժվողը միջին մասն է եղել:*

*Մենք համոզվեցինք, որ եթե դիտելու լինենք հռոմեական շարքը առանձին և եթե հաշվելու համար որպես ելակետ ընդունենք Քրիստոսի ծննդյան՝ Խորենացու մոտ նշված տարին, ապա շարքի միջին հիմնական հատվածը դասավորվում է նորմալ, հարազատ կամ շատ մոտ ստույգ ժամանակագրությանը: Իսկ սկզբի և եզրափակիչ հատվածները, մանավանդ սկզբնակետը և վերջնակետը, խախտված են ներկայանում։*

*Սակայն, երբ դիտում ենք հռոմեական շարքը մյուս շարքերի հետ համագործակցության մեջ, ապա տեսնում ենք հակառակ պատկերը՝ որտեղ ընթացքը կանոնավոր էր, այնտեղ առաջանում է անաքրոնիզմների շարան, որտեղ խախտված էր, այնտեղ անաքրոնիզմը վերանում է։*

*Բերենք մի քանի օրինակ անաքրոնիզմների շարանից:*

*Ըստ Խորենացու, օրինակ, Դիոկղետիանոս կայսրը (284—305) գահակալել է Արտաշիր Պապականի (226—240) թագավորության վերջում, Կոստանդիոս 2-րդը (337—361)՝*

Սասանյան Ներսեհի (293—302) ժամանակ, Հուլիանոսը (361—363)՝ Շապուհ 2-րդի (309—379) թագավորության սկզբներում, իսկ Թեոդոս 1-ինը (380—395)՝ մեջտեղում և այլն (տե՛ս աղյուսակ № 5)։ Ուրիշ խոսքով, Խորենացու մոտ հռոմեական և պարսկական շարքերի միջև գոյություն ունի խզում, որի հետևանքով հռոմեական գործիչները պատմական ասպարեզ են գալիս իրենց իրական ժամանակից, պարսկական թագավորների հետ համեմատած, միջին հաշվով 30—40 տարի վաղ։ Այս փաստը նշել են Խորենացու ժամանակագրության հարցերը շոշափած բոլոր հետազոտողները։

Անաքրոնիզմի այսպիսի չափերը դժվարացնում են Խորենացու կողմից երկու շարքերի գործիչների իրական, պատմական կապերի և առնչությունների արտացոլման հնարավորությունը և հիմք ծառայում արհեստական կապերի ու առնչությունների ստեղծման։ Այսպես, Խորենացին նկարագրում է Արտաշիր Պապականի (226—240) և հռոմեական կայսրեր Տակիտոսի (275—276) ու Փլորիանոսի (276) միջև եղած պատերազմը (III, ՀԶ), որը չէր կարող տեղի ունեցած լինել, որովհետև Արտաշիրը մահացել է հիշյալ կայսրերից 35 տարի առաջ. խոսում է Շապուհ ?-րդի (309—379) և Արկադիոս կայսրի (395—308) միջև հաստատված խաղաղության մասին (III, ԽԲ) և այլն։ Մյուս կողմից Խորենացու մոտ կան, իհարկե, և իրական կապեր. այսպես, նա ճշմարտացի նկարագրում է Հուլիանոս կայսրի (361—363) և Շապուհ 2-րդի պատերազմը (III, ԺԷ), բայց այս իրական կապի արտացոլումը հնարավոր է դարձել միմիայն Շապուհ 2-րդի թագավորության երկարատևության շնորհիվ, մի բան, որ հնարավորություն է տվել պահպանել գործիչների առնչման իրական փաստը նաև անաքրոնիզմի պարագաներում։ Այսպես, Խորենացու մոտ հիշյալ պատերազմը ընկնում է Շապուհի մոտավորապես 10—15-րդ տարիներին, մինչդեռ այն իրականում տեղի է ունեցել նույն այդ թագավորի 53—55-րդ տարիներին։

Անաքրոնիզմի մասին ասվածը իրավացի է, ամբողջ այն հատվածի վերաբերյալ, որի մասին մենք նշեցինք, թե սասան-

ձին ու ինքնուրույն դիտելիս, այն բավարար պատմական ստուգություն է ցուցաբերում, այսինքն հռոմեական շարքի միջին մասի (1—382 թթ.) վերաբերյալ։ Եվ սա, իհարկե, նշանակում է, որ մեր երկու ենթադրություններից իրավաչափ է առաջինը, այսինքն, շարքի միջին հատվածն է, որ հետադարձ շարժում է կատարել։

Այժմ անաքրոնիզմի տեսակետից ստուգենք շարքի նախնական և եզրափակիչ մասերը, որոնք, ձևափոխված լինելով, պետք է որ այլ պատկեր ներկայացնեն։ Պատկերն իսկապես այլ է. շարքի առավել ձևափոխված տեղերում՝ սկզբնակետում և վերջնակետում, ինչպես արդեն ասվեց, անաքրոնիզմ չկա, վերանում է, պատմական դեպքերը մնում են իրենց շրջանակների մեջ։ Համոզվենք նախ, որ այդ հիրավի այդպես է։

Քննենք շարքի եզրափակիչ մասը։

Ըստ Խորենացու տվյալների, Թեոդոս 2-րդը գահ է բարձրացել Վռամ 1-ինի (4-րդի) իշխանության ամենավերջում կամ նրա հաջորդ Հազկերտ 1-ինի իշխանության ամենասկզբում (տե՛ս Հավելված Ա, № 64 և 66)։ Սա, իհարկե, պատմականորեն լրիվ ճիշտ չէ, և այստեղ դեռ 10 տարվա չափ անաքրոնիզմ կա (Հազկերտ 1-ինը գահ է բարձրացել 399 թ., իսկ Թեոդոս 2-րդը՝ 408-ին)։ Սակայն համեմատած հռոմեական շարքի հիմնական մասին հատուկ 30—40 տարվա անաքրոնիզմի հետ, այս անաքրոնիզմը չնչին է, բայց սա էլ գնալով նվազում է ու վերջապես անհետանում։ Այսպես, հայ Արշակունիների բարձման տարին, երբ, ինչպես տեսանք, Խորենացին դնում է Վռամ 2-րդի 9-րդ տարում, համապատասխանում է, ըստ նույն Խորենացու, Թեոդոս 2-րդի մոտավորապես 20-րդ տարվան[24]։ Քանի որ Վռամը իրականում գահակալել է 420

[24] Թեոդոս 2-րդը, ինչպես ասվեց, գահակալել է, ըստ Խորենացու, մոտավորապես Հազկերտ 1-ինի հետ միաժամանակ։ Քանի որ Հազկերտ 1-ինը, ըստ Խորենացու, թագավորել է ընդամենը 11 տարի, իսկ նրա հաջորդ՝ Վռամ 2-րդի 9-րդ տարում տեղի է ունեցել հայ Արշակունիների բարձումը, ապա այդ իրադարձությունը, ըստ Խորենացու, ընկնում է Թեոդոս 2-րդի մոտավորապես 20-րդ տարվա վրա։

թվականին, իսկ Թեոդոսը՝ 408-ին, ապա իսկապես առաջինի 9-րդ տարին համապատասխանում է վերջինիս 20 տարվան. զուգադրումը պատմականորեն ճիշտ է: Ստույգ սինքրոնիզմը պահպանվում է մինչև Խորենացու աղյուսակի վերջը:

Պատահականությո՞ւն է արդյոք այս: Ոչ մի դեպքում: Բոլոր պարագաները վկայում են, որ Խորենացին գիտակցաբար ամեն ինչ դասավորել է այնպես, որ ապահովի այդ սինքրոնիզմի պահպանումը: Դեռևս պարսկական շարքը դիտելիս պարզվեց, որ Վռամ 2-րդի 9-րդ տարին պատահական թիվ չի եղել Խորենացու համար, այլ ժամանակագրական կռվան է հանդիսացել: Այժմ էլ պարզվում է, որ նրան համապատասխանող՝ Թեոդոս 2-րդի 20-րդ տարին նույնպիսի ժամանակագրական կռվան է հռոմեական շարքի համար: Ըստ էության, այդ շարքի վերջին հատվածի երկարաձգումը, որի մասին առավել վերևում, կատարվել է հենց այդ կռվանը իր տեղում պահպանելու նպատակով: Եթե այդ թիվը կռվան չհանդիսանար, ապա Թեոդոսն էլ, ու նրա հետ միասին՝ շարքի ամբողջ հատվածը, հետ կքաշվեին շարքի միջին հատվածի հետադարձ շարժման համընթաց, որով և կապահովվեր վերջին հատվածի կանոնավոր ժամանակագրությունը: Դեռ ավելին, Խորենացին օգտվելով այն հանգամանքից, որ Թեոդոս 2-րդը երկար է թագավորել (42 տարի), կարող էր և հետ քաշել նրան և միևնույն ժամանակ թողնել որպես ժամանակակից Հայ Արշակունիների բարձմանը, որը կհամընկներ եթե ոչ նրա 20-րդ տարվան, ապա, ասենք, 40-րդ տարվան[24ա]: Սրանով նա թե՛ կապահովեր հռոմեական շարքի վերջին հատվածի կանոնավոր ժամանակագրությունը, թե՛ Հայ Արշակունիների բարձումը Թեոդոս 2-րդի ժամանակին կթողներ: Սակայն նա նույնիսկ այդ չի արել և զոհաբերել է հիշյալ հատվածի ժամանակագրության սպացիկությունը, որովհետև նրա նպատակն է եղել կցել Հայ Արշակունիների բարձումը Թեոդոս 2-րդի ոչ թե որևէ պատահական, այլ հատկապես 20-րդ տար-

[24ա] Դրա նման մի բան նա արել է, Շապուհ 2-րդի և Հուլիանոսի սինքրոնացման դեպքում (տե՛ս վերը, էջ 60):

վան։ Պետք է կարծել, ուրեմն, որ նա այդ արել է մեզ հետաքրքրող սինքրոնիզմի մասին առույգ տեղեկություններ ունենալով և ձգտելով կիրառել այդ տեղեկությունները իր աշխատանքում։

Այժմ դառնանք հռոմեական շարքի սկզբին. դրությունը այստեղ էլ նույնն է, մի փոքր տարբերությամբ։ Այստեղ մենք կարող ենք դատել անաքրոնիզմի վերացման մասին, ելնելով հռոմեական շարքի համադրությունից ոչ թե պարթևական շարքի հետ, որը կրում է հատկապես այդ հատվածում (Արշանակ, Արշեղ) որոշ չափով պայմանական ու սիմվոլիկ բնույթ, այլ հայկական շարքի հետ։

Հռոմեական շարքը սկսվում է Միհրդատի, Վայկունի (Լուկուլլոսի) և Պոմպեոսի անուններով, և նրանք ներկայանում են որպես Հայոց Տիգրանի (մ. թ. ա. 95—56 թթ.) ժամանակակիցներ, որ պատմականորեն միանգամայն առույգ է և ոչ մի անաքրոնիզմ չի պարունակում։ Միհրդատի հետ Տիգրանը շփվել է սկսած մ. թ. ա. I դարի 90-ական թվականներից, Լուկուլլոսի հետ՝ 70—69 թթ., Պոմպեոսի հետ՝ 66—64 թթ.։ Անաքրոնիզմը սկսվում է մի փոքր հետո, երբ Խորենացին Տիգրանի ժամանակին է վերագրում ոչ միայն Կրասոսի պարտությունը (53 թ.), այլև Բենտիդիոսի արշավանքը (39 թ.), և գնալով աճում է, ի վերջո հասնելով հռոմեական շարքի միջին հատվածում 30—40 տարիների։ Պատճառն այն է, որ, ինչպես նշվեց, հռոմեական շարքի ժամանակագրությունը սկզբի հատվածում ևս ձևափոխվել է միջին հատվածի հետադարձ շարժման հետևանքով, այն է՝ մոտ 90 տարվա պատմությունը սեղմվել-տեղավորվել է 56 տարիների մեջ։ Այս երևույթը՝ շարքի սլացիկ ժամանակագրության խախտումը, նույնպիսի մի զոհաբերություն է, որպիսին մենք հանդիպեցինք շարքի եզրափակիչ հատվածը քննելիս, զոհաբերություն, որ կատարել է Խորենացին Տիգրանի ու նրա՝ հռոմեական շարքը սկսող ժամանակակիցների սինքրոնիզմը պահպանելու նպատակով։ Բայց հարց է ծագում, թե արդյո՞ք այդ զոհաբերությունը անհրաժեշտ էր։ Ի՞նչն էր խանգարում Խորենացուն Տիգրանին էլ-

իր ժամանակակիցների հետ միասին, հա շարժել և պահպանել թե՛ այդ սինքրոնությունը, և թե՛ համեմատական շարքի սկզբի ընթացքը: Մի պատասխան կարող է միայն լինել, այն է, թե Խորենացու աչքում Տիգրանը այնչափ ամուր էր դամված իր բացարձակ, այսինքն՝ սելևկյան տոմարով գրված ժամանակագրական տեղին, որ չէր կարող տեղահան արվել, ու միակ ելքն էր համեմատական շարքը նրան հարմարեցնելը: Նման մի երևույթի մենք հանդիպեցինք պարսկական շարքում Շապուհ 2-րդի կապակցությամբ, որտեղ նրա անխախտ տեղը համանման հետևանքների է հասցրել: Այնտեղ Խորենացին գիտեր նրա գահակալման ստույգ տարին՝ ըստ սելևկյան տոմարի: Տիգրանի խնդրում էլ պատճառը նույնն է. Տիգրանի գահակալումը Խորենացու մոտ թվագրված է սելևկյան տոմարի 219 թվականով, որը հավասար է մ. թ. ա. 93 թվականին (տե՛ս աղյուսակ № 5): Ինչպես հայտնի է, Պլուտարքոսը խոսելով մ. թ. ա. 70 թ. դեպքերի մասին, հաղորդում է, որ Տիգրանը գահակալել է դրանից 25 տարի առաջ, այսինքն մ. թ. ա. 95 թվականին (Plut., Luc., 21) և այս հաղորդումը ներկայիս պատմագրությունը հավաստի է համարում ու նրանով է առաջնորդվում: Տիգրանի թվագրման հարցում, այսպիսով, Խորենացու և Պլուտարքոսի տվյալների միջև գործնական տարբերություն չկա, որովհետև 2 տարին չի կարելի այդպիսի տարբերություն համարել: Այն փաստը, որ Խորենացին ինչ-որ աղբյուրներից իմացել է Տիգրանի ճիշտ թվագրությունը[25] ըստ սելևկյան տոմարի, վերջնականապես հաստատում է, որ Խորենացին ծանոթ է եղել և օգտվել է այդ տոմարից:

---

[25] Որոշ հիմք ունենք կարծելու, որ Տիգրան 2-րդի գահակալման ճիշտ թվագրությունը հասել է Խորենացուն Հուլիոս Աֆրիկանոսի «Ժամանակագրություններից»: Այս հարցը դեռ կարոտ է քննության, բայց եթե այդ քննությունը արդարացնի մեր ենթադրությունը, հարկ կլինի վերանայել հիշյալ խրոնոգրաֆության՝ պատմագրության մեջ այժմ ընդունված տարեթվի հարցը, նախապատվությունը տալով Խորենացու ցուցմունքին:

*Համոզվելով, որ հռոմեական շարքի սկզբի և վերջի եզրերում անաքրոնիզմ գոյություն չունի, և որ նրա միջին՝ հիմնական մասի անաքրոնիզմը բացատրվում է այդ մասի տեղաշարժով դեպի հետ, որի հետևանքով հակադիր բնույթի ձևափոխման են ենթարկվել շարքի սկզբնական և եզրափակիչ հատվածները, մնում է գտնել, թե որն էր հիշյալ տեղաշարժի դրդապատճառը: (Կարելի է ասել, որ եթե չլիներ այդ տեղաշարժը, ապա Խորենացին, հենվելով շարքի ծայրակետերի վրա, ի վիճակի էր ստեղծել այնպիսի մի աղյուսակ, որը գրեթե զերծ կլիներ անաքրոնիզմից)*[26]:

*Վերևում մենք թվարկեցինք Խորենացու աղյուսակի պարսից և հռոմեական գործիչների տարաժամանակյա (անաքրոնիստիկ) զուգադրումներից մի քանիսը, դրանց կարելի է ավելացնել և ուրիշներ:*

*Պարզ է, որ այդ զուգադրումներից մեկն ու մեկն է, որ հանդիսացել է որոնելի դրդապատճառը, ծառայել է որպես տեղաշարժերի հիմք, իսկ բոլոր մնացածները՝ հետևանք են, կատարված տեղաշարժի արդյունք: Մեր խնդիրն է գտնել, գտնել առկա զուգադրումների շարքից այդ մեկը: Այն կարող է լինել պարսկական մի թագավորի թե՛ անմիջական, և թե՛ հայկական թագավորով միջնորդված առնչություն՝ հռոմեական որևէ կայսրի կամ գործչի հետ: Բոլոր դեպքերում այն պետք է բավարարի մի նախապայմանի. պատմականորեն սխալ լինելով հանդերձ (որպեսզի Խորենացուն բերեր սխալ եզրակացության), այդ առնչությունը Խորենացու աչքում պետք է ունենար անխախտելի հավաստիության հմայք (որպեսզի ստիպեր նրան կատարել վերոհիշյալ պատասխանատու տեղաշարժը): Այլ խոսքով, այդ առնչությունը պետք է խարսխված լիներ Խորենացուն ներքուստ միանգամայն հավաստի թվացող մի աղբյուրի վրա: Որքան էլ առաջին հայացքից ընտրության լայն*

26 *Այս «գրեթե»-ն ավելացրինք, որովհետև Խորենացուն այդ գործում, այնուամենայնիվ, կխանգարեր մի այլ շեղում՝ պարսկական ցուցակի քննության ժամանակ վեր հանված 16 տարիների պակասը:*

հնարավորություն է տալիս այս նախապայմանը, այսուհանդերձ, քննելով համոզվում ենք, որ նրան չի բավարարում պարթևա-պարսկական և հռոմեական գործիչների անմիջական առնչության՝ Խորենացու մոտ հիշատակված դեպքերից և ոչ մեկը: Դրանք բոլորն էլ կամ պատահական, կամ էլ չափազանց ընդհանուր բնույթ են կրում, այդպիսի մի կարևոր քայլի հիմք ծառայելու համար: Իմաստ չունի այստեղ և հնարավոր էլ չէ մեկ առ մեկ քննարկել բոլոր դեպքերը (որոնց մի մասը հիշատակված է վերևում, տե՛ս էջ 60 և հետ., մյուսներն էլ արտացոլված են № 5 աղյուսակում): Խորենացու «Հայոց պատմության» ուշադիր ընթերցողը ինքն էլ կարող է համոզվել ասվածի ճշմարտության մեջ:

Մնում են հայկական շարքով միջնորդված առնչությունները: Այդ խնդրին մենք կանդրադառնանք հաջորդ գլխում, որը նվիրված է հայկական շարքերին, չմոռանալով, որ լուսաբանման կարոտ մնաց ևս մի հարց՝ պարսկական ցուցակում Տապուհ 2-րդի դեպի առաջ տեղաշարժի անմիջական պատճառը:

7.

Նախքան հայկական շարքերի քննարկման անցնելը, պետք է խոսել մի խնդրի մասին ևս: Մենք բանիցս նշեցինք, որ Խորենացին ծանոթ էր սելևկյան տոմարին և օգտվում էր նրանից: Հարց է ծագում, գիտե՞ր արդյոք նա նաև փրկչական տոմարը: Այս հարցի նշանակությունը ավելի մեծ է, քան միայն Խորենացու ժամանակագրության ներքին խնդիրները: Դրական լուծման դեպքում այդ կարող էր ազդել Խորենացու կյանքի թվագրման հարցի լուծման վրա բացասական իմաստով: Առաջին հայացքից կարող է թվալ, թե Խորենացու աղյուսակի հռոմեական շարքը, որը մենք հաշվեցինք փրկչական տոմարով, կարծես թե ցուցաբերում է հեղինակի՝ այդ տոմարի հետ ծանոթ լինելը. Հռոմեական կայսրերը տեղադրված են այնտեղ Քրիստոսի ծննդյան տարեթվի նկատմամբ բավարար ճշգրտությամբ: Բայց չէ՞ որ այդ նույն երևույթը կարող է բա-

ցարվել նաև Խորենացու կողմից օգտագործված աղբյուրների՝ Եվսեբիոս Կեսարացու, Հուլիոս Աֆրիկանոսի և նրանց հետևորդների ժամանակագրական տվյալների կատարելությամբ, այն հանգամանքով, որ նրանք մատակարարել են Խորենացուն պատմական բարձր ճշգրտությամբ դասավորված ժամանակագրական նյութ։

Խորենացին ոչ միայն երբեք չի հիշատակում փրկչական տոմարը, այլև նրա ծանոթությունը այդ տոմարին թաքնված ձևով էլ չի նշմարվում այնպիսի պարագաներում, երբ մենք կարող էինք սպասել, որ այն անպայման կդրսևորվեր։ Այսպես, այդ տոմարին հետևելու դեպքում Խորենացին ոչ միայն կիմանար (իսկ նա պիտի իմանար այդ բանը նույն Եվսեբիոսից), այլև հաշվի կառներ իր ժամանակագրության մեջ այն փաստը, որ Քրիստոսի ծննդյան տարեթվի և սելևկյան տոմարի ելակետ հանդիսացող տարեթվի միջև ընկած պիտի լիներ շուրջ 310 տարի և ոչ թե 274, ինչպես Խորենացու մոտ է (տե՛ս աղյուսակ № 5)։ Ծանոթ լինելով այդ տոմարին, նա չէր հանդուրժի հռոմեական իշխողների շարքի վերջին հատվածի այն արհեստական երկարաձգումը, որի պատճառով շեղվել են մի քանի կայսրերի թվագրումները։ Եթե սրանք չկան, կշեռքի նժարը թեքվում է այն եզրակացության կողմը, որ նա ծանոթ չի եղել փրկչական տոմարին, իսկ այս հնարավոր մի փաստարկ է խլում Խորենացուն V դարից անդաշարժողների ձեռքից։

Հետաքրքիր է, որ այս հարցին անդրադարձել են նաև Խորենացու ժամանակագրական աղյուսակին հետևող միջնադարյան հայ պատմիչները, որոնց քաջ հայտնի է եղել փրկչական տոմարը։ Ի տարբերություն մեզ, նրանք լիովին համոզված են եղել, որ Խորենացին իր հաշիվներն արել է, ելակետ ընդունելով Քրիստոսի ծննդյան տարեթիվը։ Թե ինչ ձևով են օգտագործել նրանք Խորենացու տվյալները, պարզ ու հստակ երևում է Սամուել Անեցու ժամանակագրության կառուցվածքից։ Հիմք ընդունելով, ինչպես և մենք արինք, Աբգարի 2-րդ տարին, որը, ըստ Խորենացու, Քրիստոսի ծննդյան տարին է եղել,

*Սամուել Անեցին շարքի է դնում այնուհետև Աբգարին հաջորդող հայոց թագավորներին, կառավարման ժամկետների այն քանակություններով, որոնք գտնում է Խորենացու մոտ։ Կան չնչին խոտորումներ, որոնք երևի գալիս են Խորենացու կամ թերևս նաև Անեցու այս կամ այն ձեռագրից։ Բայց դրանք ամենևին չեն փոխում Խորենացու տված՝ հայոց թագավորների շարքի կերպարանքը, նամանավանդ որ գրեթե միմյանց հավասարակշռում են, տալով հանրագումարում 2 տարվա տարբերություն միայն[27]։ Սամուել Անեցու հաշիվներով հայ Արշակունիների բարձումը ընկնում է 451 թվականին։ Նույն այդ թվին մենք հանդիպում ենք և այլ միջնադարյան պատմիչների մոտ, օրինակ՝ Կիրակոս Գանձակեցու[28]։ Այդ հաշիվը, ինչպես տեսնում ենք, համընկնում է մեր № 5 աղյուսակի 6-րդ սյունակի հաշվին[29]։*

---

27 *Այսպես, Սամուել Անեցին Արտաշեսի որդի Արտավազդին տալիս է 2 տարի, մինչդեռ, ըստ Խորենացու նա թագավորել էր մի քանի օր միայն, Խոսրովի որդի Տիրանին՝ 13 տարի, Խորենացու 11 տարվա դիմաց։ Դրանց փոխարեն վերջին Արտաշեսին նախորդող անիշխանության ժամանակը նա գնահատում է 1 տարի, Խորենացու 3 տարիների դիմաց և այլն։*

28 Կիրակոս Գանձակեցի. *Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 80։*

29 *Այն փաստը, որ սյունակի համապատասխան տեղում 451 թվի փոխարեն գտնում ենք 449 թիվը, բացատրվում է Սամուել Անեցու վերևում հիշատակված 2 տարվա ավելցուկով։*

Աղյուսակ 5

*Սյունակներ.*

1. *Ժամանակի բացարձակ հաշվարկումը ըստ Մ. Խորենացու, որը համապատասխանում է սելևկյան տոմարին:*
2. *Նույնը՝ փրկչական տոմարի վերածած:*
3. *Ժամանակի հաշվարկումը՝ ելակետ ընդունելով մ. թ. 428 թվականը, որպես հայ Արշակունիների բարձման տարեթիվ:*
4. *Սելևկյան, պարթևական և պարսկական թագավորներ՝ իշխանության ստույգ տարեթվերով:*
5. *Հայոց թագավորներ և կաթողիկոսներ:*
6. *Համեմատական շարքի ժամանակի ինքնուրույն հաշվարկումը (ելակետն է Աբգար թագավորի 2-րդ տարին, որը, ըստ Խորենացու, Քրիստոսի ծննդյան տարին է):*
7. *Համեմատական գործիչներ, կայսրեր և նրանց առնչվող անձնավորություններ (շեղատառ տրված են այն անձանց անունները, որոնք Խորենացու մոտ թվագրված են մոտավոր կերպով՝ թվեր չպարունակող ցուցումներով. անուններին կից տրված են ստույգ-պատմական տարեթվերը):*

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 311 | 295 | Սելևկոս 1-ին (311—280) | | 274 | |
| 32 | 280 | 264 | Անտիոքոս 1-ին (280 262) | | | |
| 51 | 261 | 245 | Անտիոքոս 2-րդ (262—247) | | | |
| 61 | 251 | 235 | Արշակ Քաջ (մոտ. 250) | | | |
| 92 | 220 | 204 | Արտաշես | | | |
| 118 | 194 | 178 | Արշակ Մեծ | | | |
| 159 | 153 | 137 | | Վաղարշակ | | |
| 171 | 141 | 125 | Արշական | | | |
| 181 | 131 | 115 | | Արշակ | | |
| 194 | 118 | 102 | | Արտաշես | | |
| 201 | 111 | 95 | Արշանակ | | | |
| 219 | 93 | 77 | | Տիգրան (95—56) | 56 | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| 436 | 125 | 111 | Վաղարշ | | | Տիտոս 2-րդ (Անտոնինոս Օգոստոս)—138—161 թթ.: Լուկիոս Վերոս—161—169 թթ.: |
| 467 | 156 | 172 | | Վաղարշ | 193 | |
| 486 | 175 | 191 | Արտավան | | | |
| 487 | 176 | 192 | | Խոսրով | 213 | |
| 521 | 210 | 226 | Արտավանի մահը (226) | | 247 | |
| 522 | 211 | 227 | Արտաշիր (226—311) | | 248 | |
| | | | | | | Փիլիպպոս Արաբ—244—249 թթ.: Դեկիոս—249—251 թ.: Գալլոս—251—253 թթ.: Վալերիանոս—253—260 թթ.: |
| 535 | 224 | 240 | | Արտաշիրը՝ Հայաստանում | 261 | |
| | | | | | | Կլավդիոս—268—270 թթ.: Ավրելիանոս—270—275 թթ.: Քվինտիլոս—270 թ.: Տակիտոս—275—276 թթ.: Ֆլորիանոս—276 թ.: Պռոբոս—276—282 թթ.: Կարոս—282—283 թթ.: Կարինոս—283—285 թթ.: Նումերիանոս—283—284 թթ.: |
| 560 | 249 | 265 | | | 286 | Դիոկղետիանոսի գահակալումը—284 թ.: |
| 561 | 250 | 266 | | Շապուհը՝ Հայաստանում | 287 | |
| 562 | 251 | 267 | Շապուհ 1-ին (242—272) | Տրդատ | 288 | Դիոկղետիանոսի 3-րդ տարին—286 թ.: |
| 578 | 267 | 283 | | Գրիգոր Լուսավորիչ | 304 | Կոստանդիոս 1-ին—299—306 թթ.: |
| 508 | 297 | 313 | Ներսեհ (293—302) | Արիստակես | 334 | Կոստանդիանոս 1-ին—307—337 թթ.: Լիկինիոս (կառավարման վերջին տարին)—324 թ.: Նիկեայի ժողովը—325 թ.: |
| 611 | 300 | 316 | | | 337 | Կոստանդիոս 2-րդի գահակալումը—337 թ.: |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| 233 | 79 | 63 | Արշեզ | | | Միհրդատի դաշինքը Տիգրան 2-րդի հետ—մ. թ. ա. 90-ական թթ.: Լուկուլլոսը (Վայկուլը)՝ Հայաստանում—69—68 թթ.: Պոմպեոսը՝ Հայաստանում—66թ.: Միհրդատի մահը 63 թ.: Կրասոսի պարտությունը—53 թ.: Հուլիոս Կեսարի մահը 44 թ.: Հերովդեսի գահակալումը—40 թ.: Վենտիդիոսը՝ Ասիայում—39 թ.: |
| 252 | 60 | 11 | | Արտավազդ | 23 | Անտոնիոսը՝ Հայաստանում—34 թ.: |
| 254 | 58 | 12 | | Արշամ | 21 | |
| 255 | 57 | 11 | Արշավիր | | | |
| 271 | 38 | 22 | | Աբգար | —1 | |
| 275 | 37 | —21 | | Աբգարի 2-րդ տարին | +1 | *Հիսուս Քրիստոսի ծնունդը—մ. թ. 1 թ.:* |
| 301 | —11 | +6 | Արտաշես | | | Օգոստոսի մահը—14 թ.: Տիբերիոս—14—37 թթ.: Գերմանիկոսը Ասիայում—19 թ.: |
| 312 | +1 | 17 | | Սանատրուկ | 38 | |
| 335 | 21 | 40 | Դարեհ | | | Կլավդիոս—41—54 թթ.: |
| 342 | 31 | 47 | | Երվանդ | 68 | Վեսպասիանոս—69—79 թթ.: Տիտոս—79—81 թթ.: |
| 363 | 52 | 68 | | Արտաշես | 89 | |
| 365 | 54 | 70 | Արշակ | | | Դոմիտիանոս—81—96 թթ.: Ներվա—96—98 թթ.: Տրայանոս—98—117 թթ.: Հադրիանոս—117—138 թթ.: Բար-Կոխբայի ապստամբությունը—132—135 թթ.: |
| 382 | 71 | 97 | Արտաշես | | | |
| 402 | 91 | 107 | Պերոզ | | | |
| — | — | — | | Արտավազդ | — | |
| 404 | 93 | 109 | | Տիրան | 130 | |
| 425 | 111 | 130 | | Տիգրան | 151 | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 615 | 304 | 320 | | Վրթանես | 341 | |
| 617 | 306 | 322 | Որմիզդ (302—309) | | 343 | |
| 618 | 307 | 323 | | Խոսրով | 344 | Կոստանդիոս 2-րդի 8-րդ տարին—344 թ.: |
| 620 | 309 | 325 | Շապուհ 2-րդ (309—379) | | 346 | |
| 627 | 316 | 332 | | Տիրան | 353 | Կոստանդիոս 2-րդի 17-րդ տարին—353 թ.: |
| 630 | 319 | 335 | | Հուսիկ | 356 | Հուլիանոս—361—363 թթ.: Հովիանոս—363—364 թթ.: |
| 636 | 325 | 341 | | Փառներսեհ | 362 | |
| 638 | 327 | 343 | | Արշակ | 364 | |
| 639 | 328 | 344 | | Ներսես | 365 | Վալենտինիանոս—364—375 թթ.: Վաղես—364—378 թթ.: |
| 656 | 345 | 361 | | | 382 | Թեոդոս 1-ինի գահակալումը—379 թ.: |
| 668 | 357 | 373 | | Պապ | 394 | |
| 673 | 362 | 378 | | Շահակ | 399 | |
| 675 | 364 | 380 | | Վարազդատ | 401 | Թեոդոս 1-ինի 20-րդ տարին (Ֆիկտիվ թիվ. Թեոդոսը իշխել է միայն 16 տարի): |
| 676 | 365 | 381 | | Զավեն | 402 | |
| 679 | 368 | 384 | | Արշակ (և Վաղարշակ) | 405 | |
| 680 | 369 | 385 | | Ասպուրակես | 406 | Արկադիոսի գահակալումը—395 թ.: |
| 684 | 373 | 389 | | Խոսրով | 410 | |
| 686 | 375 | 391 | | Սահակ Պարթև | 412 | |
| 689 | 378 | 394 | | Վռամշապուհ | 415 | |
| 690 | 379 | 395 | Արտաշիր 2-րդ (379—383) | | 416 | |
| 694 | 383 | 399 | Վռամ 1-ին (4-րդ) (388—399) | | 420 | Արկադիոսի մահը—Թեոդոս 2-րդի գահակալումը—408 թ.: Ըստ Խորենացու՝ Վռամ 1-ինի (4-րդի) թագավորության |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ամենավերջում կամ Հազկերտ 1-ինի թագավորության ամենասկզբում (տե՛ս |
| 701 | 393 | 409 | Հազկերտ 1-ին (399–420) | | 430 | Հավելված Ա., № 64 և 66): |
| 710 | 399 | 415 | | Խոսրով | 436 | |
| 711 | 400 | 416 | | Շապուհ պարսիկ | 437 | |
| 715 | 404 | 420 | Վռամ 2-րդ (5-րդ) (420–439) | Անիշխանություն | 441 | |
| 718 | 407 | 423 | | Արտաշես | 444 | |
| 723 | 412 | 428 | Վռամ 2-րդի (5-րդի) 9-րդ տարին | Հայ Արշակունիների բարձումը | 449 | Թեոդոս 2-րդի շուրջ 20-րդ տարին՝ շուրջ 428 թ.: |
| 724 | 413 | 429 | | Սուրմակ | 450 | |
| 725 | 414 | 430 | | Բրքիշո | 451 | |
| 728 | 417 | 433 | | Շմուել | 454 | |
| 736 | 425 | 441 | Հազկերտ 2-րդ (439–) | Սահակ Պարթևի մահը | 462 | |

# III. ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐՔԵՐԸ

## 1.

Մենք քննեցինք և հնարավորին չափ ի հայտ բերինք Մովսես Խորենացու ժամանակագրական համակարգի պարթևապարսկական և հռոմեական շարքերի, ինչպես և դրանց սինքրոնացման առանձնահատկությունները։ Այս հարցերը ուսումնասիրելիս մենք հնարավորություն ունեինք հիմնվելու պարսից և մանավանդ Հռոմի պատմության՝ աղբյուրների տված հարուստ տեղեկություններով լուսավորված և գիտականորեն լավ մշակված ժամանակագրության տվյալների վրա։ Հայկական շարքի դեպքում վիճակը անհամեմատ բարդ է, քանի որ հայոց պատմության ժամանակագրությունը հավաստված է շատ ավելի սուղ փաստերով և գիտականորեն ավելի սակավ է ուսումնասիրված։ Այդ պատճառով հայոց թագավորների շարքը քննելիս, մենք որոշ չափով պետք է ղեկավարվենք այն օրինաչափություններով, որոնք վեր հանվեցին պարսկական ու հռոմեական շարքերի կապակցությամբ, հիմնավորված կերպով ենթադրելով, որ այդ օրինաչափությունները, լինելով Մովսես Խորենացու ստեղծագործության՝ ընդհանրապես, և ժամանակագրությունը կազմելու՝ մասնավորապես, ոճի դրսևորումը, հատուկ են նաև նրա ժամանակագրության հայկական շարքին։

Նախորդ շարադրանքի ընթացքում կամա թե ակամա ըստ առիթի շոշափեցինք հայոց շարքի հետ կապված մի քանի հարցեր. այժմ անցնենք ավելի մանրամասն ուսումնասիրման։

Նախօրոք պետք է հիշեցնել մի հանգամանք, որը հայտ-

նի է Խորենացու երկի ոչ միայն ուսումնասիրողներին, այլև բոլոր ընթերցողներին. Խորենացու «Հայոց պատմության» այն մասը, որը ընդգրկում է Վաղարշակից մինչև Խոսրով Մեծը ունեցած պատմական դեպքերը, ժամանակագրական առումով էապես տարբերվում է պատմական այն պատկերից, որն այժմ ընդունված է պատմագրության մեջ: Խորենացու և ստույգ ժամանակագրության միջև այստեղ տարբերությունն այնքան մեծ է, որ մենք այն չենք կարող դասել նախորդ գլխում վերլուծված շեղումների շարքը: Դա շեղում չէ, այլ ժամանակագրական միանգամայն այլ պատկերացում հայ ժողովրդի մ. թ. ա. II—մ. թ. III դարերի պատմության մասին, պատկերացում, որի ուսումնասիրությունը մի այլ, առանձին հետազոտության գործ է: Ուստի սույն աշխատության մեջ Խորենացու ժամանակագրության այդ հատվածը քննարկվում է միմիայն հեղինակի ունեցած աղբյուրների և այդ աղբյուրների տվյալների մշակման ձևերի առումով:

Այդ կապակցությամբ շարունակում ենք Խորենացու և Անանունի ժամանակագրական համակարգի համեմատությունը, այս անգամ հայոց թագավորների շարքի գծով: Անանունն ունի հայ թագավորների երկու ցուցակ. մեկը, որ արված է անմիջապես պարթև թագավորների ցուցակից հետո և ժամանակագրական տեսակետից նրան զուգահեռ է, և մյուսը, որ հյուսված է, պարսկական, հունական ու հայկական իշխողների եռաշար սինքրոնիկ աղյուսակի մեջ և հայոց Խոսրով Մեծից հասցնում է մինչև Վռամշապուհ (տե՛ս Հավելված Բ):

Քննարկենք նախ առաջին ցուցակը: Ահա այդ ցուցակն ամբողջությամբ, Խորենացու ցուցակի համապատասխան հատվածի զուգահեռ համադրությամբ: Ցուցակների ներքին խմբավորումը (Անանունինը՝ հունական, Խորենացունը՝ արաբական թվերով նշանակված) մենք ենք կատարել, համեմատությունը ընթերցողի համար ավելի շոշափելի դարձնելու նպատակով:

Ն. Ադոնցի կարծիքով, ձախակողմյան (Անանունի) ցուցակը վավերական է, իր մի մասով միայն, որը և հանդիսացել

է Խորենացու ցուցակի անմիջական աղբյուրը, իսկ նրա մյուս մասը անկախ է և արդյունք հետագա հավելումների և աղավաղումների, կատարված նույն Խորենացու տվյալների ազդեցության ներքո։ Ցուցակի վավերական մասը, ըստ Ադոնցի,

Աղյուսակ 6

| | Անանուն | | Խորենացի |
|---|---|---|---|
| I | Արշակ (42 տարի)<br>Արշակ (13)<br>Արտաշես (25) | 1 | Վաղարշակ (22 տարի)<br>Արշակ (13)<br>Արտաշես (25) |
| II | Արտավան } Արշավիր } (12)<br>Արշակ (37) | 2 | Տիգրան (33)<br>Արտավազդ (2) |
| III | Երվանդ (21)<br>Արտաշես (52)<br>Տիրան (22)<br>Տիգրան (42) | 3 | Արշամ (20)<br>Աբգար (38)<br>Սանատրուկ (30) |
| IV | Արշամ (20)<br>Աբգար (38)<br>Սանատրուկ (30) | 4 | Երվանդ (21)<br>Արտաշես (41)<br>Արտավազդ (—)<br>Տիրան (21)<br>Տիգրան (42) |
| V | Արտաշես (41)<br>Արտավազդ } Տիգրան } (21) | | |
| VI | Վաղարշ (20)<br>Խոսրով (18) | 5 | Վաղարշ (20)<br>Խոսրով (18)<br><br>Անիշխանություն (27) |
| VII | Տրդատ (56)<br>Խոսրով (9)<br>Տիրան (48)<br>Արշակ (7)<br>Շապուհ (73)<br>Պապ (7) | 6 | Տրդատ (56)<br>Խոսրով (9)<br>Տիրան (11)<br>Արշակ (30)<br>Պապ (7) |

ավարտվում է առաջին Տիգրանով, այսինքն ընդգրկում է մեր I—III խմբերը։ Մյուս անուններից Ադոնցը, որոշ նկատառումներով, համաձայն է ցուցակում վերականգնել միմիայն Սանատրուկին և Վաղարշին։ Մնացածը, նրա կարծիքով, մա-

սամբ ընդմիջարկում է, մասամբ էլ ցուցակի առաջին մասի աղավաղված կրկնությունը:

Ի՞նչ հիմք ունի Ադոնցը դրանք անվավերական համարելու:

Անանունի ցուցակից Արշամ — Աբգար զույգի վտարման բուն հիմքը բանասիրական բնույթի չէ, այլ պատմական: Ադոնցը, ընդունելով հանդերձ, որ Աբգարի զրույցը և նրա հայացումը կարող էր արմատավորված լինել հայերի մեջ Խորենացուց առաջ և նրանից անկախ[1], ենթադրում է, սակայն, որ այդ տեղի է ունեցել Անանունի կամ առնվազն նրա աղբյուրի ժամանակից հետո[2]: Աղբյուրը՝ «Հայոց պատմությունը», Ադոնցն ընդունում է որպես IV դարի վերջին սահմանված և Փավստոսի գրչին պատկանած մի գործ, որը մեզ չի հասել: Բայց ի՞նչ պատճառով պետք է բացակայի Աբգարի զրույցի առկայությունը այդ գործում: Ադոնցը այդ հարցը չի պարզաբանում: Մենք կարծում ենք, որ Փավստոսի մոտ, ընդհակառակը, պահպանվել են Աբգարի զրույցի վերջին դրվագները, կապված Սանատրուկ արքայի և Թադեոս առաքյալի հետ, որոնք վկայում են, որ Փավստոսին այդ զրույցը պետք է որ հայտնի եղած լինի:

Ինչ վերաբերվում է մեր 5-րդ խմբին, ապա Ադոնցը այն համարում է 3-րդ խմբի տվյալների կրկնություն, մասամբ աղավաղված Խորենացու տվյալների ազդեցության ներքո: Սակայն մեր կարծիքով, որչափով որ Ադոնցը խոսք է բացում հիշյալ տվյալների ոչ թե մշակման ու համադրման մասին Անանունի կողմից (սա էլ դժվար, թեև՝ ոչ անհնարին կլիներ վերագրել այնպիսի մի հեղինակի, ինչպիսին ներկայանում է Անանունը), այլ սոսկ կրկնության ու աղավաղման, ապա նրա կարծիքը պիտի մերժվի, որովհետև 3-րդ և 5-րդ խմբերի միջև եղած նմանությունը ամենևին էլ այնքան ուժեղ չէ, որ կողմնորոշող բնույթ կրի: Բացի այդ, պատմական մի պարագա էլ

[1] Н. Адонц, Նշ. աշխ., էջ 79:

[2] Նույն տեղում, էջ 104:

գալիս է թուլացնելու Ագոնցի բանասիրական դատողություն-ները: Ագոնցին թվում է, որ Երվանդ — Արտաշես — Տիրան — Տիգրան խմբից հետո Արտաշես—Արտավազդ—Տիգրան եռյակի առաջանալը արդեն չափազանց է և կարող է միայն թյուրիմացության արդյունք հանդիսացող կրկնություն լինել: Բայց համեմատենք այս շարքը Արտաշիսյանների իրական պատմական շարքի հետ, ներածված նրանց նախորդող Երվանդով՝ Երվանդ — Արտաշես — Արտավազդ — Տիգրան — Տիգրան — Արտավազդ — Արտաշես — Տիգրան — Տիգրան — Արտավազդ — Տիգրան — Արտավազդ — Տիգրան: Թվում է թե ավելի տրամաբանական է Անանունի ցուցակում որոնել պատմական հիմք, քան բանասիրական թյուրիմացություն: Բայց դա արդեն հատուկ ուսումնասիրության առարկա կարող է լինել:

Այս բոլորից բացի կա ևս մի հանգամանք, որը Ագոնցը խիստ թերագնահատել է: Ինչպես հիշում ենք, Պրոկոպիոսի մոտ պարթև Արշակունիների իշխանության տևողությունը հաշվվում է 500 տարի և 500 տարի էլ հաշվվում է հայ և պարթև Արշակունիների միջև տիրած խաղաղության տևողությունը: Ուրիշ խոսքով, ըստ Պրոկոպիոսի, պարթև և հայ Արշակունիները իշխել են սկսել մոտավորապես միաժամանակ: Անանունը, արտացոլելով Պրոկոպիոսի և իր ընդհանուր աղբյուրը, մոտենում է այս տվյալներին այն չափով, որ նրա մոտ էլ պարթև Արշակունիները թագավորել են 502 տարի, իսկ հայ Արշակունիները սկսել են թագավորել առաջին իսկ պարթև Արշակունու օրոք, նրա նախավերջին տարում: Պետք է սպասել, ուրեմն, որ նրա մոտ հայոց շարքի տարիների գումարը, սկզբից մինչև պարթև Արշակունիների բարձումը, որը տեղի ունեցավ հայոց Խոսրովի ժամանակ, կկազմի 502—54 = 448 տարի (պարթև Արշակ Մեծը թագավորել է 56 տարի), կամ գոնե, հաշվի առնելով առանձին թվերի աղճատման հնարավորությունը, կտարբերվի այս թվից ոչ էական չափով: Այսպես էլ կա իրականում: Հայոց Արշակից մինչև Վաղարշ ներառյալ, տարիների գումարը հավասար է 439-ի և այս թիվը կիրանա

մինչև սրանից 448 թիվը ի հաշիվ Վաղարշի հաջորդ՝ Խոսրով թագավորի տարիների[3]։ Իսկ Ն. Ադոնցի վերականգնած ցուցակում, որը ինչպես ասվեց, ընդգրկում է Արշակ — Տիգրան այնուհետև Սանատրուկ և Վաղարշ թագավորներին, տարիների գումարը հավասար է 328-ի, այսինքն միանգամայն անհարիր է առկա հանգամանքներին։ Ադոնցը փորձում է խուսափել այս հակասությունից, պնդելով, որ Անանունի ցուցակում միայն Արշամիրից հետո է, որ նշվում է իրար հաջորդող թագավորների ազգակցական կապը, իսկ Արշակից մինչև Արշամիր՝ այդ կապը չի նշվում, հետևաբար և կարելի է ենթադրել, որ նրանց միջև իշխել են օտար՝ տվյալ դեպքում պարթև թագավորներ,

3 Ըստ կատարված հաշվարկի, Անանունի՝ պարթև և հայ Արշակունիների զուգահեռ ցուցակում պարթևների հարստության բարձումն ընկնում է հայոց Խոսրովի 9-րդ տարվա վրա։ Բայց չէ՞ որ գոյություն ունի նաև Անանունի մի այլ, երկրորդ ցուցակը (հաշար աղյուսակը), ըստ որի այդ իրողությունը տեղի է ունեցել Խոսրովի 30-րդ տարում, իսկ նրա 31-րդ տարվանից թագավորել է Արտաշիր Սասանյանը (տե՛ս Հավելված Բ)։ Կամ պետք է ենթադրել, որ Անանունի երկու ցուցակները միմյանց համաձայնեցված չեն, կամ առաջացող 21 տարվա տարբերությունը կարոտ է մնում բացատրման։ Բացատրման մի փորձ անենք։ Կարելի է ենթադրել, որ Անանունի մոտ Խորենացու Վաղարշակին համապատասխանող Արշակին՝ առաջին հայ Արշակունուն՝ Անանունի բնագրում տրված է եղել ոչ թե 42 (ԽԲ) տարի, ինչպես կա մեզ հասած ձեռագրում, այլ 22 (ԻԲ) տարի, ինչպես կա Խորենացու մոտ՝ Վաղարշակի համար։ Գրչության տեսակետից՝ Խ և Ի տառերի շփոթությունը՝ ձեռագրերը ընդօրինակելիս, սովորական երևույթ է տառերի արտաքին նմանության պատճառով։ Եթե ելնենք այս ենթադրությունից, ապա Անանունի ցուցակի Արշակից մինչև Վաղարշ հատվածի տարիների գումարը կկազմի արդեն ոչ թե 439 տարի, այլ 419։ Այս թիվը մինչև սրանից 448 թիվը լրացնելու համար անհրաժեշտ է Վաղարշի հաջորդ Խոսրովից վերցնել ոչ թե 9, այլ 29 տարի, իսկ Անանունի երկրորդ ցուցակի համաձայն, ինչպես ասվեց, պարթև Արշակունյաց բարձումը տեղի է ունեցել Խոսրովի 30-րդ տարում։ Այսպիսով կմնա ընդամենը 1 տարվա տարբերություն, որը կարող է լինել Անանունի ցուցակում, նրա ընդօրինակման ժամանակ, հայ Արշակունիներից մեկն ու մեկի տարիները սխալմամբ մեկով ավելացնելու, կամ պարթև Արշակունիներից որևէ մեկի տարիները սխալմամբ մեկով պակասեցնելու հետևանքով (օր. Արշամիր՝ 45, փոխանակ 46-ի ինչպես Խորենացու մոտ). այդպիսի մի շարք փաստերի հանդիպել ենք։ Ինչպես նշվեց ծանոթության սկզբում, սա բացատրման լոկ մի փորձ է։

որոնց անունները ու տարիները նշված չեն։ Այդ փորձը հակասում է Պրոկոպիոսի կողմից «Հայոց պատմությունից», այսինքն հենց ըստ Ադոնցի համոզման՝ նույն Սեբեոսի աղբյուրից վերցրած այն տեղեկության էությանը, թե պարթևների և հայերի միջև նրանց ազգակցության շնորհիվ 500 տարի խաղաղություն է տիրել։ Նշված խնդրում հետևելով Ադոնցին, մենք մեզ կզրկեինք չափանիշից Անանունի նաև պարթևական ցանկը ուսումնասիրելու գործում, որովհետև այդ ցանկում ևս ազգակցական կապը նշված է միայն առաջին երեք թագավորների միջև։ Սակայն այս վերջին հանգամանքը Ադոնցին որևէ կասկածի առիթ չի տալիս։

Ինչ վերաբերվում է Ն. Ադոնցի կողմից մերժված հատվածի մնացած մասին՝ առաջին՝ Խոսրովից մինչև Պապ, ապա դրա վավերականության խնդիրը իսկապես որոշ կասկածներ է ներշնչում։ Սկսենք հենց թեկուզ նրանից, որ Անանունի երկի կառուցվածքի տեսակետից այդ հատվածը ավելորդ է։ Անանունի եռաշար սինքրոնիկ աղյուսակը սկսվում է պարսից Արտաշիրի 1-ին և Հայոց Խոսրովի 31-րդ տարիներից։ Այդ աղյուսակին նախորդող ցուցակներից պարթևականը (տե՛ս վերջում, աղյուսակ № 6) սկսելով Արշակ 1-ինից, բնականաբար վերջանում է Արտավանով, այսինքն կանգ է առնում Արտաշիրի առջև։ Սրան զուգահեռ հայկական ցուցակը, սակայն, փոխանակ ավարտվելու Արտավանի և Արտաշիրի ժամանակակից՝ Հայոց Խոսրով թագավորով, շարունակվում է մինչև Պապ թագավորը։

Այդ հատվածը խորթ է Անանունի երկին, սակայն, ոչ միայն կառուցվածքային տեսակետից, այլև իր բովանդակությամբ։ Նրա եռաշար աղյուսակում Խոսրով, Տրդատ, Խոսրով, Տիրան, Արշակ և Պապ թագավորներին տրված է միանգամայն այլ տվյալներ, որոնք որևէ առնչություն չունեն կասկածելի հատվածի տվյալների հետ։

Միևնույն ժամանակ վերջինիս տվյալները հարում են Ասողիկին։ Համեմատելով դրանք Խորենացու տվյալների հետ, գտնում ենք որոշակի նմանություն՝ համընկնում են առաջին

խոսրովին, Տրդատին, երկրորդ Խոսրովին, Պապին տրված տարիները: Նույն թվերը ունի և Ասողիկը, որը, ինչպես հայտնի է, կրկնում է Խորենացուն: Բայց Ասողիկի մոտ կա երկու թյուրիմացական շեղում Խորենացուց, և երկուսն էլ գտնում են իրենց արտահայտությունը Անանունի մոտ: Ասողիկի մոտ Արշակին տրված է 7 տարի, Խորենացու 30-ի դիմաց, որ գրչական սխալի արդյունք է՝ Է՝ Լ-ի փոխարեն[4], և Տիրանի տարիների քանակությունը պատահաբար չի նշված: Անանունի մոտ նույն գրչական սխալը հանդես է գալիս ամենայն հարազատությամբ, իսկ Տիրանին տրված արտառոց թիվը՝ 48 տարի, հնարավոր է դարձել Ասողիկի մոտ համապատասխան թվի բացակայության պատճառով:

Այս հանգամանքները թույլ են տալիս մեզ Ն. Ադոնցի հետևելով հիշյալ հատվածը համարել ընդմիջարկման արդյունք: Ընդմիջարկումը, ըստ Ն. Ադոնցի, կատարվել է նույն Անանունի (Ադոնցի կարծիքով՝ Սեբեոսի) հաջորդ գլխի նյութից, իսկ այդ նյութն էլ, ինչպես գլխի վերնագիրն է ասում, պարթևական և հայկական ցուցակների կրկնությունը, այս անգամ ըստ «Մովսիսի Խորենացւոյ և Ստեփաննոսի Տարօնացւոյ՝ հատուածի և ճշմարիտ մատենագրաց»: Դժբախտաբար, սակայն, այդ նյութից մեզ հասել է միայն պարթևական ցանկը: Հայկական ցանկը՝ ընդմիջարկման բուն աղբյուրը՝ կորել է: Իսկ պարթևական ցանկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Անանունի մոտ այն, հետևաբար և բացակայող հայկական ցուցակը, բերված է ոչ թե անմիջապես Խորենացուց, այլ Ստեփաննոս Տարոնացուց՝ Ասողիկից, XI դարի հեղինակից ու, Ադոնցի կարծիքով, ինքն էլ մի ընդմիջարկում է VII դարի հեղինակ Սեբեոսի տեքստում: Ընդ սմին այդ ընդմիջարկումը կատարված է մի գրչի կողմից, որը գիտեր, թե Ասողիկն ինքը հետևում է Խորենացուն, ուստի և համապատասխան վերնագիր էր տվել ընդմիջարկվող հատվածին: Թե ինչպես է պատահել, որ այս ընդմիջարկումը հետագայում ինքը նորից մասամբ ընդմիջարկվել է 2-րդ գլխի մեջ,

[4] Տե՛ս Н. Адонц. Հիշ. աշխ., էջ 67:

այդ մասին Ադոնցը տալիս է համանման բացատրություն[5]:

Գ. Աբգարյանը համոզիչ կերպով ապացուցելով, որ Սեբեոսին կից հատվածը Սեբեոսի գրչին չի պատկանում, ինչպես ասվեց, փաստարկում է նաև այն դրույթը, որ Խորենացու ու Անոնիմի անունները պարունակող խորագրով գլուխը ընդմիջարկում չէ, այլ հատվածի օրգանական մաս, մեջ բերված Անոնիմի տեքստից հատվածի բուն հեղինակ, XI դ. պատմիչ Հովհան Տարոնացու կողմից: Գ. Աբգարյանը ցույց է տալիս, որ խնդրո առարկա գլուխը սերտ կապված է նախորդող և հաջորդող նյութի ու շարադրանքի հետ: Սրանով, սակայն, չի բացատրվում Ն. Ադոնցի ենթադրած երկրորդ ընդմիջարկման (այսինքն՝ այդ գլխից դեպի նախորդ գլուխը) հնարավորությունը, որի իրականանալու համար նշանակություն չպետք է ունենար այն հանգամանքը, թե արդյո՞ք այդ գլուխը օրգանական է Անանունի տեքստում, թե՞ ոչ:

Բայց մի կողմ թողնելով այդ գլխի խնդիրը, պետք է ասել, որ ընդմիջարկումը կարող էր տեղի ունենալ անմիջապես Անոնիմի տեքստից, առանց հիշյալ գլխի միջնորդության:

Այսպիսով, երբ հարց է ծագում Անանունի՝ հայ թագավորների առաջին ցուցակի որևէ մասի անվավերության մասին, ապա մեր կարծիքով, կասկածելի է միայն Խոսրով — Պապ հատվածը, իսկ մնացած անունների վավերականությունը կասկածի ենթարկելու համար անհրաժեշտ են ավելի զորեղ հիմքեր, քան տվյալ դեպքում ունեցել է Ն. Ադոնցը:

## 2.

Այժմ համեմատենք Անանունի հայ թագավորների առաջին ցուցակի վավերական մասը Խորենացու ցուցակի համապատասխան հատվածի հետ և քննարկենք Խորենացու կատարած մշակման արդյունքները: Առաջին իսկ հայացքից տեսնում ենք, որ ցուցակների հարաբերությունը այստեղ ավելի բարդ բնույթի է, քան նախորդ դեպքերում: Բանն այստեղ չի հան-

[5] Н. Адонц, հիշ. աշխ., էջ 77 և հետ.:

գում հիմնականում թվական տվյալների տարբերության: Իհարկե, այդ էլ կա. Խորենացին պակասեցրել է տարիների քանակը մոտ 80-ով, բայց այդ չէ, որ բնութագրում է Խորենացու ցուցակի կերպարանքը, այլ իշխողների այն բացառումները, ներմուծումները և տեղաշարժերը, որոնց մենք նախորդ գլուխներում հանդիպել ենք շատ սահմանափակ քանակությամբ:

Անանունի I և Խորենացու I խմբերի միջև տարբերությունն այն է, որ առաջինիս Արշակի դիմաց երկրորդն ունի Վաղարշակ: Այս խնդրի վրա մենք մանրամասն կանգ կառնենք ներքևում:

Կարևորագույն տարբերություններից մյուսը Անանունի II խմբի փոխարինումն է Խորենացու 2-րդ խմբով, այսինքն վերջինիս կողմից Տիգրան — Արտավազդ զույգի ներմուծումը Արտավան — Արշավիր — Արշակ եռյակի փոխարեն: Թե ինչու է փոխարինվել հենց այս եռյակը, դրան կարելի է միայն մասնակի պատասխան տալ. թերևս այն պատճառով, որ նրա փոխարեն ներմուծված զույգը, ըստ Խորենացու, պետք է ցուցակում գրավեր անպատճառ հենց այդ տեղը: Իսկ թե ինչ պատճառով է ներմուծվել հենց հիշյալ զույգը, և ոչ թե ինչ-որ այլ անուններ՝ այդ միանգամայն պարզ է: Տիգրան — Արտավազդ զույգը Անանունի մոտ իր հետքն անգամ չունի: և հեռու է Պրոկոպիոսի հիշատակած «Հայոց պատմության» սկզբից: Իր տվյալները այդ զույգի մասին Խորենացին մեծ մասամբ վերցրել է միանգամայն այլ միջավայրից՝ անտիկ պատմագրությունից, հատկապես Հովսեփոս Փլավիոսից: Տիգրանը և Արտավազդը Խորենացու մոտ ներկայացնում են ոչ թե որպես իրենց նախորդող Վաղարշակ — Արշակ — Արտաշեսի նման կիսավիպական անձնավորություններ կամ իրենց հաջորդող Արշամ — Աբգարի նման մասամբ շինծու (Արշամ. տե՛ս Ստ. Մալխասյանցի «Հայոց պատմության» թարգմանությունը, էջ. 393, ծան. 153), մասամբ պատմական այլ միջավայրից տեղափոխված (Աբգար) դեմքեր, այլ որպես իրական պատմական գործիչներ, պատմական իրողության համաձայն շրջա-

պատված և առնչված այնպիսի իրական դեմքերի հետ, ինչպիսիք են Միհրդատը, Լուկուլլոսը (Վալկոն), Պոմպեոսը, Կրասոսը, Անտոնիոսը և շատ ուրիշներ։ Սրա կողքին նաև հիշենք, որ Տիգրանի գահակալման տարին Խորենացու աղյուսակի մեջ տրված է պատմականորեն ստույգ (տե՛ս վերևում, էջ 64)։ Այս բոլորը խոսում է այն մասին, որ Խորենացին և՛ իրականում բավարար հիմք է ունեցել կատարելու տվյալ փոփոխությունը՝ իրեն ձեռքի տակ ունեցած ավանդական ցուցակի մեջ, և՛ այդ հիմքը ներքուստ բավարար է համարել նշված փոփոխությունները իրականացնելու համար, այսինքն անտիկ պատմիչներից քաղված տվյալներին նախապատվություն է տվել «Հայոց պատմության» տվյալների նկատմամբ։ Սա այն դեպքերից մեկն է, երբ Խորենացու՝ հունական աղբյուրների ջատագով լինելը տվել է լավագույն արդյունքներ։ Տիգրանի գահակալման թվագրումը կարևոր է ստույգ կողմն է Խորենացու ժամանակագրական համակարգում։

Խորենացու 3-րդ խումբը անվերապահորեն կրկնում է Անանունի IV խմբի տվյալները, միայն ամբողջ նյութը տեղաշարժված է ավելի վեր, դեպի ցուցակի սկիզբը։ Այս գործողության իմաստն անշուշտ եղել է տեղավորել Աբգարին և նրան շրջապատող ու նրա հետ կապված Արշամին ու Սանատրուկին այնպես, որ Աբգարը ժամանակակից դառնա Քրիստոսին, որի հետ առնչվում է նրա մասին եղած զրույցը։

Խորենացու 4-րդ խումբը արդյունք է Անանունի ցուցակի III և V խմբերի օրգանական միավորման։ V խմբի ներդրումն այստեղ Արտաշեսի տարիների թիվն է (41 տարի՝ III խմբի Արտաշեսի 52 տարիների դիմաց) և Արտավազդ անունը՝ առանց տարիների հիշատակման։ Միանգամայն պարզ է, որ միավորման նպատակը թվական շահագրգռություններից դուրս է եղել, որովհետև հակառակ դեպքում Խորենացին պարզապես կանտեսեր V խումբը և անհրաժեշտ նվազեցումը կկատարեր կամ III խմբի, կամ այլ թագավորների տարիներից, ինչպես սովորություն ուներ անելու։ Նպատակը այստեղ, անշուշտ,

շարքում Արտավազդի պահպանումն է, թեկուզ և տասնից տարիների, կամ ավելի ճիշտ, Արտաշես — Արտավազդ զույգի պահպանումը, ինչպես մեզ հուշում է Խորենացու՝ ժողովրդի բերանից մեզ պատմած Արտաշես — Արտավազդի հոյակապ վեպը։

Խորենացին մի շարք գլուխներ է նվիրում այդ վեպի շարադրմանը, վերարտադրելով այն համեմված վիպական տարրերի իր նպատակասլաց վերլուծմամբ և մեկնաբանություններով։ Այսուհանդերձ, նա հնարավորություն է տալիս հետազոտողին վերականգնելու վեպի հարազատ բովանդակությունը, եթե ոչ լրիվ չափով, գոնե հիմնականում[6]։

Չափազանց հետաքրքիր է այն, որ Արտավազդի ներմուծմամբ, Խորենացու 4-րդ խմբի հինգ իշխողների կարգը հար և նման է դառնում պատմական Երվանդյանների վերջին ներկայացուցչի և Արտաշիսյանների սկզբի չորս թագավորների հաջորդականության կարգին՝ Երվանդ — Արտաշես — Արտավազդ — Տիգրան — Տիգրան 2-րդ, մի բան, որ արդեն վաղուց նկատվել է[7]։

Ինչպես մի շարք դեպքերում տեսանք (պարթև և հայ Արշակունիների բարձման, Շապուհի և Տիգրանի դահակալման թվականությունների խնդրում), այնպես էլ այժմ համոզվում ենք, որ ժամանակագրական նյութը, անցնելով Պատմահոր մշակման բովով, ստանում է պատմական իրականությանը ավելի հարազատ կերպարանք։ Այս նշանակում է, որ բացի մեզ հայտնի աղբյուրներից, հեղինակի ձեռքի տակ եղել են նաև այլ, ընդ որում ստույգ, աղբյուրներ, որոնց մասին այժմ մեծ մասամբ միայն ենթադրություններ կարելի է անել։

Եզրափակիչ VI և V խմբերից պետք է կանգ առնել Խոսրովի վրա։ Սրանով պետք է վերջանար Անանունի առաջին

6 Տե՛ս Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ, Վաղարշապատ, 1901, էջ 325 և հետ.։

7 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Ա, Երևան, 1944, էջ 135։

*ցուցակը, բայց այն չպետք է ընդգրկեր Խոսրովի թագավորության ամբողջ ժամանակաշրջանը, այլ միայն առաջին 30 տարին (կամ 9 տարին. տե՛ս վերևում, էջ 79, ծանոթ. 3), քանի որ իր 31-րդ տարվանից սկսած՝ Խոսրովը, համաձայն Անանունի նախաշար աղյուսակի, դառնում է Սասանյանների ժամանակակից: Իրականում դժվար է ասել, թե ինչ ձևով է ներկայացված եղել Խոսրովը առաջին ցուցակում: Բացառված չէ նույնպես, որ նա չի եղել այնտեղ և մտել է Ասողիկի տեքստից, ընդմիջարկման ձևով (հաջորդ Տրդատ — Պապ հատվածի հետ միասին), իսկ վավերական ցուցակը ավարտվելիս է եղել Վաղարշով: Սրա օգտին են խոսում, օրինակ, Խոսրովին հատկացված 48 տարիները, որոնք համընկնում են Խորենացու (և Ասողիկի) տվյալների հետ և հակասում իր՝ Անանունի՝ հայկական թագավորների երկրորդ ցուցակի տվյալներին, որոնք Խոսրովին տալիս են 50 տարի:*

## 3.

*Անցնում ենք Խորենացու տվյալների համեմատությանը Անանունի նախաշար աղյուսակում պարունակվող այդ երկրորդ ցուցակի տվյալների հետ:*

Աղյուսակ 7

| Անանուն | Խորենացի |
|---|---|
| *Խոսրով (50 տարի)* | *Խոսրով (48 տարի)* |
| *Անիշխանություն (11)* | *Անիշխանություն (27)* |
| *Տրդատ (70)* | *Տրդատ (56)* |
| *Խոսրով (17)* | *Խոսրով (9)* |
| *Տիրան (12)* | *Տիրան (11)* |
| *Արշակ (18)* | *Արշակ (30)* |
| *Անիշխանություն (12)* | — |
| *Պապ (13)* | *Պապ (7)* |
| *Վարազդատ (6)* | *Վարազդատ (4)* |
| *Արշակ և Վաղարշակ (5)* | *Արշակ և Վաղարշակ (5)* |
| *Խոսրով (3)* | *Խոսրով (5)* |
| *Վռամշապուհ (8)* | *Վռամշապուհ (21)* |
| | *Խոսրով (կրկին անգամ) (1)* |
| | *Շապուհ պարսիկ (4)* |
| | *Անիշխանություն (3)* |
| | *Արտաշես (6)* |
| *Արշակունյաց հարստության քանդումը:* | *Արշակունյաց հարստության քանդումը:* |

Ստացված պատկերությունը փոխադրում է մեզ Խորենացու և Անանունի տվյալների նախորդ զուգադրումների հետ համեմատած, մի ուրիշ աշխարհ։ Ճիշտ է, երկու շարքերում էլ թագավորների անվանացանկը և հերթականությունը նույնն են (եթե վերանանք այն փաստից, որ Անանունի մոտ ցուցակը ավարտվում է Վռամշապուհով), բայց միանգամայն տարբեր են իշխողներին հատկացված տարիների քանակները։ Միակ բացառությունն է Արշակ — Վաղարշակ զույգին վերագրված տարիների թիվը, որը երկու ցուցակներում համընկնում է։

Ընդհանուր առմամբ Խորենացու ցուցակում իշխողների թագավորությունները ավելի կարճ են, բացառությամբ երկուսի՝ Երրորդ Խոսրովի և Վռամշապուհի, որոնց նա հատկացնում է ավելի տարիներ, քան Անանունի մոտ է։

Այս ամենից հետո արդյո՞ք իրավացի է Ն. Ադոնցը, պնդելիս, թե տվյալ դեպքում ևս Անանունի տվյալներն ընկած են Խորենացու ցուցակի հիմքում։ Եթե կանգնենք այս տեսակետին, ապա պետք է ընդունենք նաև, որ տվյալների մշակման հետ մեկտեղ Խորենացին ունեցել է նաև մի այլ նպատակ՝ քողարկել օգտագործած աղբյուրը, փոփոխելով բոլոր թվերը։ Սակայն քողարկման երևույթը տվյալ դեպքում աներևակայելի է, որովհետև անիմաստ է։ Իսկապես, ինչո՞ւ Խորենացին, պարթևների, Սասանյան ու վաղ-հայկական թագավորների ցուցակները ձևավորելիս, չի քողարկում իր աղբյուրի (այսինքն, ինչպես համոզված է Ադոնցը, Անանունի) տվյալները, միայն մասնակի շտկումներ մտցնելով նրանց մեջ, և հանկարծ քողարկում է նույն Անանունի տվյալներից միմիայն այն, ինչ կապված էր հայկական ցուցակի երկրորդ մասի հետ։ Քողարկման հանգամանքը, մեր կարծիքով, բացառվում է, մնում է կրճատման մասին ենթադրությունը։ Բայց տվյալ դեպքը ամբողջովին դուրս է մնում կրճատման ձևերի ու մեթոդների մասին այն պատկերացումից, որը ստացանք նախորդ դեպքերը քննելիս։ Մենք տեսանք, որ ձեռքի տակ ունեցած տվյալները մշակելիս, Խորենացին առանց անհրաժեշտության ոչ մի թիվ

*չի փոխում, հնարավորին չափ պահպանելով աղբյուրի տված թվերը և, որպես այդ նույն մոտեցման դրսևորում, խմբավորում է իր կողմից կատարվող փոփոխությունները շարքի առանձին, հնարավորին չափ սահմանափակ, հատվածներում, որպես օրենք՝ սկզբում և վերջում, որպեսզի անաղարտ մնան մնացած մասերը:*

*Ն. Ադոնցի վերոհիշյալ պնդման միակ կռվանը հետևյալ հանգամանքն է: Նա նկատել է, որ Անանունի և Խորենացու տված առաջին երեք թվերի (այսինքն՝ Խոսրովին, նրան հաջորդած անիշխանության ժամանակին և Տրդատին հատկացված տարիների) գումարները իրար հավասար են, թեև իրենք՝ թվերը երկու հեղինակների մոտ տարբեր են (Անանունի 50+11+70= Խորենացու 48+27+56=131): Եթե մի պահ ընդունենք էլ, թե Անանունի քննարկվող ցուցակը Խորենացու աղբյուրն է եղել, այնուամենայնիվ, դրանով գումարների համապատասխանությունը իր բացատրությունը չի ստանա, եթե միայն նարից առաջ չքաշենք արդեն մերժված քաղաքական հանգամանքը: Տվյալ գումարի պահպանումը՝ նրա բաղադրիչ թվերի փոփոխման պայմաններում, կարելի կլիներ որպես փաստարկ ընդունել Ադոնցի պաշտպանած թեզի համար միայն այն պարագայում, եթե նախօրոք ապացուցվեր (ինչպես վերը արվեց հանրագումարային 202 թվի նկատմամբ), որ այդ գումարի պահպանումը Խորենացու համակարգի համար ունի հատուկ և անփոխարինելի կոնստրուկտիվ, համակարգի կառուցմանն օժանդակող նպատակ: Բայց այդ նպատակը Ադոնցը չի բացահայտում ու մենք էլ չենք տեսնում: Այսպիսով համընկնումը տվյալ դեպքում մեզ պատահական է թվում:*

*Այս դատողությունները մի կողմ թողած, միջոց կա համոզվելու, որ Անանունի և Խորենացու ցուցակներն ունեն տարբեր արմատներ: Բարեբախտաբար մենք հնարավորություն ունենք քննարկվող նյութը համեմատության մեջ դնելու նույն ժամանակաշրջանի պատմությունը ավանդող այլ երկերի հետ (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Ղազար Փարպեցի): Ճիշտ է, հիշյալ հեղինակները չունեն (կամ գոնե նրանցից*

մեջ չեն հասել) ժամանակագրական աղյուսակներ, ինչպիսին կա Անանիայի մոտ, կամ ցուցումների սպառիչ շարք, որպիսին տալիս է Խորենացին։ Այսուհանդերձ, նրանցից յուրաքանչյուրըն ունի ժամանակագրական հիմք, թեկուզ և մոտավոր պատկերացում անցքերի և դեմքերի հաջորդականության, տևողության ու ժամանակակցության մասին։ Մերթ ընդ մերթ երևացող առանձին թվական տվյալներն էլ, համակարգ չկազմելով հանդերձ, ավելի շոշափելի են դարձնում տվյալ հեղինակի ժամանակագրական պատկերացումները ու, հետևաբար, ավելի համեմատելի՝ Անանիայի ու Խորենացու համակարգերի հետ։ Նման համեմատական նյութով ապահովված է ամբողջ Խոսրով — Արտաշես շարքը, որից մենք կվերցնենք երեք առավել ցուցադրելի հատվածներ։

Ա.

Առաջին հատվածը Խոսրովի և Տրդատի պատմության հենց այն ժամանակագրությունն է, որի վրա հենվում է Ագոնգը, Անանիայի երկրորդ հայկական ցուցակը Խորենացու անմիջական աղբյուր համարելիս։ Ագաթանգեղոսի մոտ ասված է, որ պարսից Արտաշիրի՝ պարթև Արտավանից գահը խլելուց հետո, հայոց Խոսրովը, որ Արտավանի ազգակիցն էր, վրիժառու եղավ Արտաշիրից, տարեց-տարի ասպատակելով ու ավերելով նրա երկիրը։ Երբ Արտաշիրը կորցրեց պատերազմում Խոսրովին ընկճելու ամեն մի հույս, նա որոշեց սպանել տալ հայոց արքային նրա սեփական երկրում։ Ուղարկեց պարթև Անակին, որին հաջողվեց հետզհետե մտերմանալ Խոսրովի հետ և հարմար ժամին սպանել նրան։ Արտաշիրը գրավեց Հայաստանը, բայց Խոսրովի որդուն, «փոքրիկ մանկիկ» Տրդատին հավատարիմ մարդիկ փախցրին հռոմեացիների մոտ։ Տրդատը այնտեղ դաստիարակվեց ու հասունացավ և կատարեց մի շարք սխրագործություններ։ Այնուհետև նա տիրացավ հայրենի գահին (Դիոկղետիանոս) կայսրի օգնությամբ։ Այս պատմությունը Խորենացին հարազատորեն ընդօրինակել է և օգտագործել իր «Հայոց պատմության» մեջ։ Ահա թե ինչ է ասում այդ մասին ինքը՝ Խորենացին. «...քարտուղարն Տրդատայ

Ագաթանգեղոս, փոքր ի շատէ պատմէ զմահն Արտաւանայ Պարսից թագաւորին, և զբառնալ տէրութեանն պարթևաց յԱրտաշրէ որդւոյ Սասանայ, և զնուաճելն Պարսից ընդ ձեռամբ նորա, և զքինախնդիր լինել Խոսրովայ հօր Տրդատայ, և ապստամբաւ հինից աւերել զաշխարհն Պարսից և Ասորեստանեայց... ասէ, թէ ամս տասն ամէպ ամէպ զայս օրինակ ասպ առեալ զամենայն երկիրն յապականութիւն դարձուցանէր: Ասէ ապա և զգալն Անակայ նենգութեամբ, հրապուրեալ ի խոստմունս Արտաշրի, որ ասացն, եթէ «զբուն պատուական զձեր սեպհական Պահլաւն, զայն անդրէն ի ձեզ դարձուցից, և զքեզ թագաւ փառաւորեցից»: Վասն որոյ յանձն առեալ Անակայ՝ սպանանէ զԽոսրով» (II, Կէ):

Այնուհետև Խորենացին վերաշարադրում է այս պատմությունը, հարստացնելով այն այլևայլ մանրամասնություններով և հաղորդում, որ «...յետ անցանելոյ երկուց ամաց գալըստեանն Անակայ ի Հայս՝ յերրորդումն սպանանէ զԽոսրով»: Պատմում է և Տրդատին փախցնելու, նրա Հռոմում կատարած քաջագործությունների, Հայաստան վերադառնալու և Դիոկղետիանոսի 3-րդ տարում հայրենի գահին հաստատվելու մասին (II, ՁԲ), ու մի քանի անգամ վկայակոչում Ագաթանգեղոսին: Խորենացու կախումը Ագաթանգեղոսից «Պատմության» այս հատվածում միանգամայն պարզ է:

Տեսնենք, սակայն, թե ինչպես են առնչվում Խորենացու և Ագաթանգեղոսի ժամանակագրական հենքերը, և ինչ դիրք է գրավում այս հարցում Անանունը: Ներկայացնենք համեմատական մի փոքր աղյուսակի ձևով Անանունի, Խորենացու և Ագաթանգեղոսի տվյալները:

Անանունի և Խորենացու տվյալները հեշտ համեմատելի են, որովհետև թվական են: Դժվար չէ նկատել, որ նրանք պարունակության և անունների տեսակետից իրար նման լինելով հանդերձ, տարբեր են ժամանակագրական առումով, և տարբերությունը ավելի ակնառու է դառնում, երբ մեջ ենք բերում Ագաթանգեղոսի տվյալները: Տեսնում ենք, որ այստեղ, ուր վերջինիս տվյալներ թվական են, նրանք համընկնում են Խո-

ընթացու տվյալների հետ, իսկ որտեղ պատմողական են, համոզիչ կերպով անտեսվում նրանց։ Եթե ընդունենք, որ Ագաթանգեղոսի Հռոմ փախցրած «փոքրիկ մանկիկը» Հայաստան գալու պահին արդեն հասունացած այր էր, պատկված հերոսա-

Աղյուսակ 8

| Անանիա | Խորենացի | Ագաթանգեղոս |
|---|---|---|
| Խոսրովի սպանությունը՝ Արտաշիրի 21-րդ տարում | Խոսրովը ասպատակում է Պարսկաստանը մինչև Արտաշիրի 11-րդ տարին։ 12-րդ տարում Հայաստան է ուղարկվում Անակը և 14-րդ տարում սպանում Խոսրովին։ | Արտաշիրի գահակալելուց հետո անցնում է 1 տարի, ապա 10 տարի Խոսրովը ասպատակում է Պարսկաստանը։ Այնուհետև Անակը ուղարկվում է Հայաստան, մտերմանում է Խոսրովին և սպանում նրան։ |
| Անիշխանությունը տևում է 11 տարի, որից հետո թագավորում է Տրդատը, Դիոկղետիանոսի 15-րդ տարում։ | Անիշխանությունը տևում է 27 տարի, որից հետո թագավորում է Տրդատը, Դիոկղետիանոսի 3-րդ տարում և սրա օգնությամբ։ | Անիշխանությունը տևում է այնքան, մինչև որ Հռոմ փախցրած «փոքրիկ մանկիկը» Տրդատը հասունանում է, սխրագործություններ է կատարում ի փառս կայսրի և վերջապես դառնում է Հայաստան ու տիրանում իր գահին (Դիոկղետիանոսի) կայսրի օգնությամբ։ |
| 20+11=31 տարի | 13+27=40 տարի | |

կան սխրագործությունների փառքով, ապա նա պետք է լիներ ոչ պակաս քան 30 տարեկան։ Նման ձևով է մտածել անշուշտ Խորենացին, հատկացնելով Տրդատի հասունանալուն 27 տարի։ Իսկ Անանիայի պատկերացումը թե՛ Խոսրովի սպանության, թե՛ Տրդատի թագավորության ժամանակագրության մասին միանգամայն այլ է։ Ագաթանգեղոսն ու Խորենացին այնքան մոտ են, որ թերևս կարիք չկա, հիշելով նաև վերջինիս երկյուղած վերաբերմունքը նրա հանդեպ, փնտրելու Խորենացու ժամանակագրական հենքի այլ հատվածի համար այլ աղբյուր, Ագաթանգեղոսից բացի[8]։

[8] Նույն կարծիքին է Ա. Անանիկին („Древние армянские историки как исторические источники", Одесса, 1899, էջ 30, 46 և հտ. (տե՛ս նույնում էջ 124, ծանոթ. 19)։

## 5.

Պակաս հետաքրքրական չէ Անանունի ու Խորենացու ժամանակագրության համեմատությունը Փավստոս Բուզանդի տվյալների հետ։ Բուզանդը տալիս է հայոց թագավորների՝ Խոսրով — Տիրան — Արշակ — Պապ — Վարազդատ — Արշակ շարքի պատմությունը։ Դրանցից համեմատության համար ամենից ցայտուն հատվածը Արշակ — Պապ զույգն է։ Ահա մի նոր աղյուսակ։

Աղյուսակ 9

| Անանուն | Փավստոս | Խորենացի |
|---|---|---|
| Արշակը թագավորում է պարսից Ներսեհի 8-րդ տարում։ Արշակի 6-րդ տարում թագավորում է Շապուհ 2-րդը։ | Արշակը և Ներսեհը հիշատակվում են որպես ժամանակակիցներ։ Արշակի թագավորության սկզբներում թագավորում է Շապուհ 2-րդը։ | Արշակը թագավորում է Շապուհ 2-րդի 19-րդ տարում։ Շապուհը Ներսեհի թոռն է։ |
| Արշակը թագավորում է 19 տարի։ | 20 դրվագներում Փավստոսը պատմում է Արշակի թագավորության երկար տարիների մասին, մինչև պարսից պատերազմը (Արշակավանի հիմնումը, ծաղկումն ու կործանումը և այլն)։ Այնուհետև մինչև պատերազմի բռնկումը անցնում է ևս 8 տարի (IV, 21)։ Պատերազմի տևողության մասին կան երեք թվական տվյալներ. «ամս աւելի քան զերեսուն» (IV, 20), «զերեսուն և չորս ամս» (IV, 50), «երեսուն ամ» (IV, 51)։ Այս թվերին համապատասխանում է Փավստոսի՝ այս պատերազմի կապակցությամբ նկարագրված ռազմական կամպանիաների քանակությունը, որոնք, սեզոնային բնույթ կրելով, պետք է մոտավորապես | Արշակը թագավորում է 30 տարի։ |

| | | |
|---|---|---|
| | հավատարմների տարիների քանակությունը։ Փավստոսը նկարագրում է 28 կամպանիա (IV, 21—49)։ | |
| Անիշխանություն՝ 11 տարի | Անիշխանություն, որի ընթացքում տեղի է ունենում պարսից թագավորի երկու մեծ արշավանք դեպի Հայաստան, քաղաքների ու բերդերի ավերում։ Այնուհետև Մեհրուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի գործունեությունը Հայաստանում։ | Անիշխանություն չի հիշատակվում։ |
| Արշակի հաջորդ Պապը թագավորում է 13 տարի։ | Պապի թագավորության ժամանակաշրջանում Փավստոսը նկարագրում է 12 առանձին կամպանիա։ | Պապը թագավորում է 7 տարի։ |

Նախորդի հետ համեմատած, այս հատվածում հակառակ պատկերն ենք տեսնում։ Անանունի ժամանակագրությունը հար և նման է Փավստոսի ժամանակագրությանը, և այդ նմանությունը ավելի ևս շեշտվում է նրանց համար ընդհանուր առնելի անժամանակությամբ (անաքրոնիզմով). երկուսի մոտ էլ պարսից Ներսեհը Արշակի ժամանակակիցն է, այնինչ իրականում Ներսեհը թագավորել է 293—302 թթ., իսկ Արշակը գահակալել է ամենավաղը՝ 340 թվականին, իսկ ավելի հավանական թվականով՝ մի տասը տարի հետո։ Որ այս նմանությունը սխեմատիկ բնույթ է կրում, երևում է այն հանգամանքից, որ Շապուհ 2-րդը (309—379) երկու հեղինակների մոտ էլ գահակալում է Արշակի օրոք։ Խորենացու մոտ ընդհակառակը Արշակն է գահակալում Շապուհի 19-րդ տարում, իսկ Ներսեհը իշխում է Արշակի պապի հոր՝ Տրդատի թագավորության վերջում։ Այստեղ էլ որոշ անաքրոնիզմ կա, բայց անհամեմատ ավելի փոքր։ Այնուհետև, Արշակի թագավորության տևողության, անիշխանության տարիների, Պապի թագավորության տևողության մասին Փավստոսի պատկերացումները լիո-

վին համարվում են Անանունի թվական տվյալներին, իսկ Խորենացու տվյալները այլ են։

Որքան էլ ընդհանուր իրադրությունը, դեպքերի փոխառամբ, նման է նախորդ դեպքին, այնուամենայնիվ, մենք դժվարանում ենք անմիջական կապ տեսնել, կամուրջ ձգել Անանունի և Փավստոսի բերված տվյալների միջև, մի բան, որ առանց վարանելու կատարեցինք Խորենացու և Ագաթանգեղոսի վերաբերմամբ։ Բանն այն է, որ ինչքան էլ իրադրությունը նման լինի, նախորդ դեպքի համեմատությամբ գոյություն ունի երկու էական տարբերություն։

Առաջին տարբերությունն այն է, որ բացի ժամանակագրական հենքի նմանությունից, մենք չունենք հավաստիք, թե Անանունը իր հաշվար աղյուսակում իսկապես անմիջականորեն օգտվել է Փավստոսից, մինչդեռ Խորենացու կախումը Ագաթանգեղոսից ակնհայտ է և իր իսկ կողմից վկայված։

Երկրորդ, եթե ընդունենք էլ որպես փաստ, որ Անանունը օգտվել է Փավստոսից, այնքան էլ հեշտ չէ ենթադրել, թե նա իր թվերը ընտրել է Փավստոսի՝ գրեթե թվերը չպարունակող շարադրանքից։ Այդպիսի մի ինքնուրույն ու խիզախ քայլ, որ կատարել է Խորենացին Ագաթանգեղոսի նկատմամբ, հազիվ թե սպասելի է Անանունի նման մատենագրից։ Մնում է ենթադրել փավստոսյան ոլորտի ինչ-որ մեզ անհայտ մի աղբյուրի առկայությունը, որի մեջ պարունակված թվերից էլ, ի շարս այլ աղբյուրների տվյալների, օգտվել է Անանունը։ Միգուցե այդ աղբյուրն է հենց իրեն՝ Փավստոսի մի աղյուսակ կամ ցուցակ, որն այժմ բացակայում է։

Սակայն Անանունի աղբյուրի հարցի լուծումը չէ, որ մենք այժմ հետապնդում ենք, որքան էլ այն հետաքրքրական ու կարևոր լինի։ Մեզ հետաքրքրող առաջնահերթ խնդիրը Խորենացու աղբյուրի խնդիրն է։ Բացառելով Խորենացու անմիջական կախումը Անանունից կամ նրա աղբյուրից, մեզ մնում է հանել միայն մի եզրակացություն, որը հենվում է մի կողմից, այն անխախտ փաստի վրա, որ Խորենացին բոլոր դեպքերում ծանոթ էր եղել Փավստոսի ժամանակագրական պատկերա-

ցումները, մյուս կողմից, այն հանգամանքի վրա, որ Խորենացու ժամանակագրության քննարկվող հատվածը ավելի մոտ է պատմական իրականությանը, քան Փավստոսի տվյալները։

Առաջին փաստից հետևում է, որ Խորենացին, այնուամենայնիվ, օգտվել է Փավստոսի տվյալներից (հմմտ. Խորենացու մոտ Արշակին վերագրված 30 տարին և Փավստոսի մոտ 30 տարվա հիշատակությունը Արշակի վարած պարսից պատերազմի կապակցությամբ)[9], ինչպես նախորդ դեպքում՝ Ագաթանգեղոսի շարադրանքից, այն տարբերությամբ միայն, որ, ինչպես միշտ, Ագաթանգեղոսի տվյալների հետ գործ ունենալիս, այս դեպքում էլ Խորենացին չափազանց զգույշ է գործել, իսկ Փավստոսից քաղած նյութերի հետ ավելի ազատ է վարվել։

Երկրորդ հանգամանքը մեզ համոզում է, որ ժամանակագրության այս հատվածի կապակցությամբ, բացի Փավստոսի տվյալներից, Խորենացին իր ձեռքի տակ ունեցել է նաև այլ, եթե ոչ սիստեմատիկ, բայց գոնե առանձին ավելի ստույգ տվյալներ, որոնք հնարավորություն են տվել նրան որոշ ճշտումներ մտցնելու Փավստոսի մատակարարած նյութի մեջ և հնարավորին չափ մոտեցնելու այն պատմական իրականությանը։

## 6.

Անցնում ենք այժմ երրորդ հատվածին, որի համար համեմատական նյութ են ծառայում Ղազար Փարպեցու ժամանակագրական տեղեկությունները։

Սակայն նախքան համեմատելը, պետք է կանգ առնել մի կարևոր խնդրի վրա։ Ղազար Փարպեցին պատկերանում է մեզ որպես վաղ միջնադարի պատմիչներից թերևս ամենից

9 Տե՛ս նաև Պ. Անանյան, Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության թվականը և պարագաները, «Բազմավէպ», 1960, № 5—6, էջ 111։ Մեր հետազոտությունը չեն խանգարում նաև Արշակին նախորդող Խոսրով և Տիրան թագավորների ու Պապին հաջորդող Վարազդատ և Արշակ թագավորների մասին Բուզանդի ժամանակագրական պատկերացումները, որոնք ավելի չնչին բնույթ ունեն, քան Արշակի ու Պապի մասին տվյալները, ու համարվում են որքան Անանունի, նույնքան էլ Խորենացու թվերին։

զգաստն ու ստուգել անկարող: Սակայն Փարպեցու մասին այդ պատկերացմանը, որն առնչվում է նրա «Պատմության» ամբողջ շարադրանքի հիման վրա, խիստ հակասում են նրա երկի առաջին էջերում արված ժամանակագրական տեղեկությունները վերջին հայ Արշակունիների մասին, այն վիճակում, ինչպես որ դրանք մեզ հասել են:

Փարպեցին սկսում է իր պատմությունը, ինչպես հայտնի է, Հայաստանի բաժանման պահից, որը տեղի է ունեցել պարսից թագավոր Շապուհի ժամանակ: Նրա թագավորության ընթացքում, ըստ Փարպեցու մեզ հասած բնագրի, Հայաստանում տեղի են ունեցել հետևյալ իրադարձությունները: Երկրի բաժանումից հետո Հայոց Արշակ թագավորը քաշվել է բյուզանդական մասը, իսկ պարսկական մասում գահակալել է մի այլ Արշակունի՝ Խոսրովը: Որոշ ժամանակից հետո («Իսկ յետ ժամանակի ինչ անցելոյ...»). Փարպեցին Խոսրովի իշխանության տարիների թիվը չի տալիս. ըստ Անանունի այն հավասար է եղել 3-ի, ըստ Խորենացու՝ 5-ի), հայ նախարարների դրդմամբ. Շապուհը Խոսրովին զրկում է գահից: «Իսկ իբրև մերժեալ լինէր Խոսրով ի թագաւորութենէն՝ խնդրէին Հայք ընդ Շապուհ՝ այլ թագաւոր իւրեանց. և նա հաւանեալ թագաւորեցուցանէր նոցա զՎռամշապուհ զեղբայր նորին Խոսրովու... Եւ արձակէր ի Հայս» (էջ 13)[10]: Վռամշապուհի օրոք արքունի դուռն է եկել Մաշտոցը և դրանից հետո ծավալվել են գրերի գյուտի հետ կապված իրադարձությունները, որոնց նկարագրությունը Փարպեցին նվիրում է մի քանի էջ: «...Եկաց յետ այսորիկ թագաւորն Վռամշապուհ ամս ԻԱ (կամ՝ ամս բազումս)[11] և հասեալ ի չերկար ծերութիւն՝ վախճանեցաւ յանկողնի իւրում...», ասում է Ղազար Փարպեցին (էջ 18):

10 Ղազար Փարպեցու էջերը արված են ըստ Թիֆլիսի 1904 թ. հրատարակության:

11 Ղազար Փարպեցու «Պատմության» քննական հրատարակությունում (Տփղիս, 1904, էջ 18) «ամս ԻԱ»-ի փոխարեն հրատարակիչները, չհետևելով նախորդ հրատարակություններին, գրել են «ամս բազումս», իսկ ձեռագրի «ամս ԻԱ»-ն իջեցրել տողատակ, համարելով հետագա ներմուծում (տե՛ս Մատենադարանի № 2639 ձեռագիր, թերթ 373):

«Յետ այսորիկ,—շարունակվում է տեքստում,— մեռաւ Ե Շապուհ արքայն Պարսից, և թագաւորեաց Վռամ որդի նորա, որ էր Կրման արքայ. յորմէ խնդրեցին իւրեանց Հայք թագաւոր զնոյն միաբանգամ զԽոսրով զեղբայր Վռամշապհոյ... Եւ եկեալ Խոսրով յաշխարհս Հայոց և կեցեալ ամիսս ութ վախճանէր, առ Շապուն յաւելեալ»:

«Եւ յետ մահուան Վռամայ արքային Պարսից թագաւորէր Յազկերտ եղբայր Վռամայ որդի Շապհոյ ի վերայ աշխարհին Պարսից: Եւ ոչ կամեցեալ Յազկերտի թագաւորեցուցանել ի վերայ աշխարհիս Հայոց յազգէն Արշակունեաց՝ թագաւորեցուցանէր ի վերայ սոցա զիւր զորդին, որում անուն էր Շապուհ...» (էջ 18):

Հազկերտը, պատմում է Փարպեցին, մեծ հույսեր էր կապում քաղաքական այս քայլի հետ: Բայց այդ հույսերն ի դերև ելան, «քանզի չև ևս յերկարեալ ի թագաւորութեանն՝ մեռանէր Յազկերտ: Ի նմին ամի և զորդի նորին զՇապուհ... յարքունիքն սատակեցին» (էջ 19):

Հազկերտից հետո թագավորում է նրա որդի Վռամը և հայերի խնդրանքով Հայաստանում թագավորեցնում Վռամշապուհի որդի Արտաշեսին:

«Յայնմհետէ բարձաւ թագաւորութիւն յազգէն Արշակունեաց ի վեցերորդ ամի Արտաշէսի...» (էջ 25):

Ահա Փարպեցու տվյալները վերջին հայ Արշակունիների ժամանակագրության մասին: Ինչպես տեսնում ենք, դրանք, թեև Խորենացու տվյալների նման սպառիչ չեն, սակայն, այնուհանդերձ, ավելի շոշափելի են, քան, ասենք, Ագաթանգեղոսի և Փավստոսի ժամանակագրական տվյալները:

Պարսից արքաների իշխանության տևողությունների մասին Փարպեցին ընդհանրապես թվեր չի բերում (եթե հաշվի չառնենք մի քանի սինքրոնացնող թվեր, ինչպես, օրինակ, երկրորդ Հազկերտի առաջին տարին, երբ մահացել է Սահակ Պարթևը, նույն Հազկերտի 12-րդ տարին, երբ ավարտվել է Սահակի հաջորդի՝ Հովսեփի կաթողիկոսությունը): Բայց սխալ կլինի վերագրել այդ երևույթը Փարպեցու անտեղյակ լինելուն:

Ուղղակի նա իր ուշադրությունը սևեռել է հայոց թագավորների վրա, հիշատակելով պարսից թագավորներին միայն անհրաժեշտության դեպքում։ Ին՞չ հավաստիք ունենք, սակայն, այդպես կարծելու։ Մեզ համար հենարան է ծառայում որոշ չափով այն փաստը, որ Փարպեցուն այդ թագավորներից բաժանում է համեմատաբար փոքր ժամանակահատված, ընդամենը կես դար, բայց հիմնականում այն, որ ինչպես հայտնի է, V և հետագա դարերում հայ պատմագրության մեջ շատ որոշակի պատկերացում է եղել IV դարի վերջի—V դարի առաջին կեսի Սասանյանների ժամանակագրության մասին։ Ահա մեր առջև են Անանունի (և նրա հետ կապված Մովսես Խորենացու) տվյալները, նամանավանդ, Կորյունի տվյալները, հեղինակ, որը Փարպեցու կարևորագույն և ամենասիրելի աղբյուրների թվին է պատկանում և որի մասին Փարպեցին ասում է, գրերի գյուտի մասին պատմելիս. «Եւ զայս թէ կամիցի ոք գիտել հաւաստեաւ՝ ի պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան, աշակերտի նորին երանելւոյն Մաշտոցի, կարդացեալ տեղեկասցի զվարս կենաց նորա և գիւտ հայերէն նշանագրացն... զոր կարգեաց գրելով ճշմարտապէս յառաջագրեալ այրն հզօր Կորիւն. ուստի և մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ համառօտեաւ» (էջ 13)։

Մի փոքր կանգ առնենք Կորյունի երկի եզրափակիչ հատվածի ժամանակագրական տվյալների վրա, որովհետև այդ տվյալները մեծապես օգնում են մեզ վեր հանելու Ղազար Փարպեցու ժամանակագրական պատկերացումները։ Հիշյալ հատվածում Կորյունը տալիս է Սասանյաններից երեքի՝ Վռամ Կրմանի, առաջին Հազկերտի և սրա որդի Վռամի ժամանակագրությունը։ Վերջինիս անունը՝ իր թագավորության տևողությունը նշանակող թվով հանդերձ, ինչպես հայտնի է, իրերի բերմամբ դուրս է մղվել Կորյունի բնագրից, և պահպանված չէ ձեռագրերում։ Բայց հատվածում թվական տվյալներն այնքան աստատ են, որ այդ թիվը հնարավոր է վերականգնել։ Ս. Աբեղյանը այդտեղ Վռամի անվան կողքին վերականգնել է «18» թիվը, բայց դրա հետ դժվար է համաձայնվել։ Կորյունի

*ավյալները հետևյալն են. Մաշտոցի կրոնավորության տարվանից մինչև երկրորդ Հազկերտի առաջին տարին անցել է 45 տարի, գրերի գյուտի տարվանից մինչև նույն այդ թվականը՝ 35 տարի։ Մաշտոցը կրոնավոր է դարձել Վռամ Կրմանի 4-րդ տարում, գրերի գյուտը տեղի է ունեցել առաջին Հազկերտի 8-րդ տարում։ Վռամ Կրմանը թագավորել է 6 տարի, առաջին Հազկերտը՝ 21 տարի։ Սրա որդի Վռամի թագավորության տևողությունը որոշելու համար պետք է. կամ ա) 45-ից հանենք երկրորդ Հազկերտի մեկ տարին, առաջին Հազկերտի 21 տարիները և նրա նախորդ Վռամ Կրմանի այն տարիները, որոնք հաջորդել են Մաշտոցի կրոնավոր դառնալուն, այսինքն՝ 2 տարի, և կամ բ) 35-ից հանենք նորից երկրորդ Հազկերտի մեկ տարին և առաջին Հազկերտի այն տարիները, որոնք հաջորդել են գրերի գյուտին, այսինքն՝ 13 տարի։ Երկու դեպքում էլ պատասխանը նույնն է՝ 21 (45—1—21—2=35—1—13=21)։ Հաշվի ստուգությունը հաստատվում է այն բանով, որ երկու ձևով էլ հաշվելիս ստանում ենք միևնույն արդյունքը։*

*Այստեղից պետք է երկու հետևություն անել։ Նախ, որ Կորյունի կարծիքով Հազկերտի որդի Վռամը իշխել է 21 տարի, այսինքն երկու տարով ավելի, քան այժմ ընդունված է։ Պետք է ասել, որ սույն թիվը, պատմական իրականությանը չհամապատասխանելով հանդերձ, պատահական թիվ չէ։ Նույն այդ թիվն, նույն Վռամի համար, հանդիպում ենք, ինչպես ասվեց, նաև Մովսես Խորենացու մոտ, իսկ Անանունի մոտ Վռամին տրված է 22 տարի (տե՛ս վերևում աղյուսակ № 3 և էջ 54, ծան. 23)։*

*Երկրորդ հետևությունն այն է, որ ըստ Կորյունի Վռամ Կրմանը իշխել է ընդամենը 6 տարի, և ոչ 10—11, ինչպես այժմ ընդունված է[12]։ Այսպիսով, մենք պիտի հաշվենք այն*

12 *Տե՛ս* Կորյուն, *Վարք Մաշտոցի, Երևան, 1941, 123 և հետ., ծան. 173—176։ Մ. Աբեղյանի հաշիվը, որը բերում է նրան եզրակացության, թե Հազկերտի որդի Վռամին Կորյունի մոտ տրված է եղել 18 տարի, հիմնված է այն ենթադրության վրա, որ Վռամ Կրմանին տրված թիվը ոչ թե այդ արքայի իշխանության բոլոր տարիների գումարն է, այլ նրա՝ իր 4-րդ տարվանից*

մարի հետ, որ Կորյունի ժամանակագրությունը որոշ չափով շեղվում է ստույգ ժամանակագրությունից, բայց ուրախալին այն է, որ այդ շեղումները արտառոց բնույթ չեն կրում։

Ահա մի համեմատական աղյուսակ։

Աղյուսակ 19

| Ստույգ ժամանակագրություն | | Կորյունի | Անանունի | Խորենացու |
|---|---|---|---|---|
| Վռամ Կրման | 11 | 6 | 11 | 10[13] |
| Հազկերտ | 21 | 21 | 21 | 11[13] |
| Վռամ | 19 | 21 | 22 | 21 |

Նույն այս շրջանակներում անխուսափելիորեն պետք է պարփակված լինեին նաև Ղազար Փարպեցու պատկերացումները հիշյալ պարսից թագավորների ժամանակագրության մասին։ Այդ պատկերացումների բնութագիրը լրացնելու համար հիշեցնենք նաև, որ Ղազար Փարպեցուն քաջ ծանոթ էր Սասանյանների այնպիսի մի ներկայացուցիչ՝ Վռամ Կրմանի նախորդ Շապուհ 3-րդը, որին չի հիշատակում ոչ մի ուրիշ հայ մատենագիր, բացառությամբ, թերևս, Եղիշեի[14] և որի գոյության մասին ոչինչ հայտնի չի եղել Անանունին և Խորենացուն։

Ո՞րն է, սակայն, Փարպեցու ժամանակագրության արատը։ Հարցն այն է, որ ըստ մեզ հասած տեքստի, Շապուհ 3-րդի մահը (388 թ.) նախորդել է Վռամշապուհի մահվանը։ Դրանով ստացվում է այդ դեպքի և՛ հաջորդ, և՛ նախորդ իրողու-

(այսինքն՝ Մաշտոցի կրոնավոր դառնալուց) հետո անցկացրած տարիների թիվը։ Մ. Աբեղյանը այսպես է հաշվում՝ $6+21+18=45$։ Այս հաշիվը, որ ելնում է արդի ժամանակագրական պատկերացումներից, չի արդարանում. սակայն, կոնտեքստով (որտեղ պարզ ասված է, թե Վռամ Կրմանը թագավորեց 6 տարի, Մաշտոցն էլ կրոնավոր դարձավ նրա 4-րդ տարում, տե՛ս «Վարք Մաշտոցի», էջ 98 և հետ.) և հակասում է մյուս հանրագումարին՝ 35 թվին, որը չի լրանա, եթե Հազկերտի օրոք Վռամին տրվի միայն 18 տարի ($13+18=31$)։

13 Այս թվերի կապակցությամբ տե՛ս վերևում, էջ 52 և հետ., ծան. 23։

14 Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1959, էջ 6։

թյունների ժամանակագրության չափազանց օտարոտի պատկեր։ Դուրս է գալիս, որ Վռամշապուհի ու Շապուհ 3-րդի մահվանից հետո թագավորել են. Պարսկաստանում՝ Վռամ Կրմանը 11 (կամ ըստ Կորյունի՝ 6) տարի և նրա օրոք, Հայաստանում՝ Խոսրովը՝ ընդամենը 8 ամիս։ Այնուհետև, Պարսկաստանում՝ Հազկերտը՝ 21 տարի, և նրա օրոք, Հայաստանում՝ նրա որդի Շապուհը՝ կարճ ժամանակով (ըստ Խորենացու՝ 4 տարի)։ Այդ Շապուհի և նրա հոր՝ Հազկերտի թագավորությունը, ինչպես և կյանքը ընդհատվել է միաժամանակ, նույնիսկ միևնույն օրը։ Ստացվում է, այսպիսով, որ պարսից երկու արքաների իշխանության շուրջ երեք տասնյակ տարիներին համաժամանակ Հայաստանում իշխել են նույնպես երկու թագավոր, բայց երկուսը միասին միայն շուրջ հինգ տարի։ Մյուս կողմից, Վռամշապուհի թագավորության սկզբները հետ են մղվում դեպի IV դարի 60-ական թվականները, իսկ դրա հետ միասին նաև գրերի գյուտը, Մաշտոցի և Սահակ Պարթևի գործունեությունը և այլն ընկնում են Շապուհ 2-րդի թագավորության այն ժամանակաշրջանին, երբ Հայաստանում իրականում գործում էին Արշակ 2-րդը և Պապը։

Հակառակ այս խառնաշփոթության, Փարպեցու տվյալները կցուցաբերեին մեծ ներդաշնակություն, եթե դրանք վերցնելու լինեինք հիշյալ սինքրոնիկ ցուցումից (Շապուհ 3-րդի մահը Վռամշապուհի մահվանը հաջորդելու մասին) անկախ։ Եթե որպես ելակետ ընդունենք պարսից թագավոր Հազկերտի և նրա որդի՝ Հայաստանում թագավորած Շապուհի մահը, որ ըստ Փարպեցու միաժամանակ է տեղի ունեցել, ապա այսպիսի պատկեր կստացվի. ա) Հայաստանի համար. Շապուհի թագավորությունը՝ կարճ ժամանակով (ընդունենք պայմանականորեն Խորենացու տված թիվը՝ 4 տարի), նրանից առաջ՝ Խոսրովը՝ 8 ամիս, ավելի վաղ՝ Վռամշապուհը՝ 21 տարի (կամ՝ «ամս բազումս») սրանից առաջ՝ Խոսրովը՝ առաջին անգամ՝ կարճ ժամանակ («ժամանակ ինչ», ըստ Անանունի՝ 3, ըստ Խորենացու՝ 5 տարի)։ Դրանից առաջ Փարպեցու մոտ հիշատակվում է, ինչպես ավելի վերևում, Արշակ 3-րդի թագավորության

միայն վերջին պահը։ Գումարը շուրջ 30—32 տարի է անում. բ) Պարսկաստանի համար. Հազկերտը թագավորել է 21 տարի (և՛ իրապես, և՛ ըստ Կորյունի), նրա նախորդը՝ Վռամ Կրմանը թագավորել է 11 տարի, իսկ ըստ Կորյունի, որը ավելի հարազատ պետք է լինի Փարպեցուն՝ 6 տարի։ Սրա նախորդ Շապուհ 3-րդի համար ստիպված ենք վերցնել այլ աղբյուրների հիման վրա գիտության մեջ ընդունված թիվը՝ 5 տարի. ուրիշ, Փարպեցուն ավելի հարազատ թիվ ձեռքի տակ չունենք։ Գումարը այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, հավասար է 32-ի։ Ուրիշ խոսքով, Փարպեցու պատմած իրադարձությունների սկզբից մինչև առաջին Հազկերտի մահը (420 թ.) անցնում է 30—32 տարի, որ գծով էլ որ հաշվելու լինենք։ Գումարների այս ներդաշնակությունը անշուշտ առհավատչյա է Փարպեցու ժամանակագրության հաստատուն հիմքի, մի բան, որ հակասում է նկարագրած խառնաշփոթությանը և հիմք ու իրավունք տալիս մեզ որոնելու նրա պատճառը[15]։

Ղազար Փարպեցու «Պատմության» բոլոր առկա ձեռագրերը ծագում են մեկ ձեռագրից, որը պահվում է Մատենադարանում 2639 համարի տակ։ Ձեռագիրը ընդօրինակված է XVII դարի երկրորդ կեսում մի այլ ձեռագրից, որի մասին ընդօրինակող գրիչն այսպես է գրել իր թողած հիշատակարանում. «Ո՛վ սուրբ ընթերցողք, և եղբարք, գիրքս հին էր և աւրինակս։ Յունան վարդապետն կարգացեալ էր զաւրինակն և նորոգեալ և զպակասութիւն թղթոյն որ պակասէ ոչ էր գտեալ, եւ ես ոչ կարացի գտանել...»[16]։ Չենք պնդում, թե փնտրվող վթարը տեղի է ունեցել հենց այս ընդօրինակման ժամանակ, այն կարող էր տեղի ունենալ Ղազար Փարպեցու և իր երկի՝

---

15 Ն. Գ. Տեր-Մինասյանը ևս այն կարծիքին է, որ տեքստի ներկա վիճակում հնարավոր չէ խմբագրել Ղազար Փարպեցու ժամանակագրական տեղեկությունների այս շարքը։ Տե՛ս Ն. Տեր-Մինասյան, Հայոց գրերի գյուտի ճշտման և այլ հարակից հարցերի մասին, «Բանբեր Մատենադարանի», № 7, 1964, էջ 32։

16 Մատենադարանի ձեռագիր № 2639, թերթ 486։

մեզ հասած հնագույն ձեռագրի միջև ընկած հազարամյակից ավելի ժամանակի ընթացքում:

Գրքի գյուտի մասին մանրամասն պատմելուց հետո, Փարպեցին եզրափակում է այսպես. «...Եկաց եւ այսօրիկ թագաւորն Վռամշապուհ ամս ԻԱ (կամ՝ «ամս բազումս») և հասեալ ի չերկար ծերութիւն՝ վախճանեցաւ յանկողնի իւրում խաղաղական հանգստիւ յաշխարհիս Հայոց:

Յետ այսորիկ մեռաւ և Շապուհ արքայն Պարսից, և թագաւորեաց Վռամ որդի նորա, որ էր Կրման արքայ. յորմէ խնդրեցին իւրեանց Հայք թագաւոր զնոյն միւսանգամ զԽոսրով...» և այլն:

Կողմնորոշողը այստեղ ոչ թե «Յետ այսորիկ մեռաւ և Շապուհ արքայն...» նախադասությունն է, ինչպես կարող էր թվալ առաջին հայացքից, այլ «յորմէ խնդրեցին»-ով սկսվող նախադասությունը: Սա է, որ որոշակի և օտարոտի իմաստ է տալիս նախորդ նախադասությանը: Եթե չլիներ այն հաղորդումը, թե հայերը Վռամ Կրմանից նոր թագավոր խնդրեցին, որ նշանակում է, թե Վռամշապուհը արդեն մեռած է, ապա այդ «եւ այսօրիկ»-ը կարող էր վերաբերվել կամ գրքի գյուտին (ինչպես նախորդ, Վռամշապուհին վերաբերվող «եւ այսօրիկը»-ը) կամ թերևս, դեռ Վռամշապուհի թագավորեցմանը՝ Շապուհի կողմից:

Մեր կարծիքն այն է, որ Փարպեցու բնագրում «...յորմէ խնդրեցին... յաւելեալ» հատվածը հաջորդել է ոչ թե Շապուհի մահվան ու Վռամ Կրմանի գահակալման մասին հաղորդմանը, ինչպես կա մեզ հասած տեքստում, այլ այդ տեքստի հաջորդ պարբերության առաջին նախադասությանը, որը հաղորդում է Վռամ Կրմանի մահվան և Հազկերտի գահակալության մասին և, այդպիսով, «յորմէ»-ն վերաբերվել է ոչ թե Վռամ Կրմանին, այլ Հազկերտին, այսինքն բնագիրը այսպիսին է եղել՝ «Յետ այսորիկ մեռաւ և Շապուհ արքայն Պարսից, և թագաւորեաց Վռամ որդի նորա, որ էր Կրման արքայ: Եւ յետ մահուան Վռամայ արքային Պարսից թագաւորէր Յազկերտ եղբայր Վռամայ որդի Շապհոյ ի վերայ աշխարհին Պարսից.

*որմէ խնդրեցին իւրեանց Հայք թագաւոր...» և այլն, մինչև «առ հարսն հանելեալ», որին հետևում էր. «Եւ ոչ կամեցեալ Յազկերտի թագաւորեցուցանել...» և այլն, ինչպես կա տեքստում:*

*Թե կոնկրետ ինչ ձևով է վթարվել այն ձեռագիրը, որից հետո ընդօրինակվել է աղավաղված տեքստը, դժվար է ասել, սակայն վերջինս նշված շտկման ենթարկելուց հետո ժամանակագրության երկու՝ պարսկական և հայկական գծերի համապատասխանությունը վերականգնվում է:*

*Համոզվելու համար, որ մեզ հասած տեքստի առաջարկված շտկումը իրավաչափ է, պետք է գտնել մի հեղինակի, որը օգտված լինի Փարպեցու ժամանակագրական տվյալներից գոնե վերջիններիս անաղարտ վիճակում:*

## 7.

*Այդ հեղինակը Մովսես Խորենացին է: Որ նա ընդհանրապես օգտվել է Ղազար Փարպեցու՝ վերջին Արշակունիներին վերաբերվող տվյալներից, դրանում դժվար չէ համոզվել: Բերենք մի երկու օրինակ: Ահա ինչպես են նկարագրում երկու հեղինակները Արշակ 3-րդի հեռանալը Այրարատից, Հայաստանի բաժանումից հետո.*

Փարպեցի

*Եւ խորհելով զայս ամենայն Արշակ թագաւորն ի միտս իւր՝ լքեալ մերժեալ թողոյր զբարի և զընտիր ժառանգութիւն նախնեաց իւրոց, զգաւառն Այրարատոյ, զհոյակապն և զհաշակաւորն և զականաւորն (հետևում է Արարատյան դաշտի հայտնի նկարագրությունը)... լաւ համարեցաւ երթալ գնել սուղ սակաւ բաժնի յերկիրն հատուածելոյ, և կալ ի հնազանդութիւն Յունաց թագաւորին, քան թէ կալ ի փափուկ գաւառի այսպիսի վայելչութեանց, և տեսանել հանապազօր զպայպանումն հատուածոց, զթշնամանս սուրբ եկեղեցւոյ... և այլն (էջ 9 և 11):*

Խորենացի

*Վասն որոյ թողեալ Արշակայ զբուն թագաւորութիւն հարց իւրոց զԱյրարատ, և զամենայն մասն բաժնին Պարսից՝ գնաց տիրել արեւմտեայ կողմանց աշխարհիս մերոյ, որ է մասն ի բաժնին Յունաց. ոչ միայն մօրն ազգազու, որ էր ի կայսերական քաղաքին, այլ լաւ համարեալ նուազ կողմանն տիրել՝ և ծառայել քրիստոնեայ թագաւորի, քան յոլովից իշխել՝ և մտանել ընդ լծով հեթանոսաց...*

*(III, ԽԲ)*

## Հայաստանում թագավորած պարսիկ Շապուհի մասին․

Եւ ոչ կամեցեալ Յազկերտի թագաւորեցուցանել ի վերայ աշխարհին Հայոց յազգէն Արշակունեաց՝ թագաւորեցուցանէր ի վերայ նոցա զիւր զորդին, որում անուն էր Շապուհ, բառ անուան հօր իւրոյ. խորհեալ չարեչար խմացմունս անձն ի միտս իւր... է զի և սովորութիւն անուան յանկչել յօրէնս մեր, հնապաս խօսիւք ընդ միմեանս և ընկերական բարեկամութեամբ, ի զբօսմունս որսոց և ի խաղս, որ լինին ի մէջ նոցա, այլ և ամուսնութեանց տուրեւառիւք հաղորդեալք առ միմեանս՝ զատուցեալք այնուհետեւ սրտիւն ի սիրոյ նոցա և յօրինացն։

Եվ սորա խորհելով զայս՝ "այսպէս՝ չզիտէր զբան սուրբ Հոգւոյն, որ ասէր, թէ «Տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան, զի են ընդունայնք»։ Որ փութանակի և արդեամբք վճիռ եառն զրեալքն՝ իրացն եղելոցն. քանզի չև ևս յերէլաբեալ ի թագաւորութեանն՝ մեռանէր Յազկերտ։ Ի նմին աւուր և զորդին նորին զՇապուհ, զոր ի տեղի Արշակունեացն թագաւորեցոյց ի վերայ աշխարհիս՝ անզգէն ի զրանն մարդկանէ զաւրէ յարքունիքն սատակեցին։ Եւ յետ մահուան Յազկերտի որդւոյ Շապհոյ թագաւորին Պարսից թագաւորեաց Վռամ որդի նորա ի վերայ աշխարհին Արեաց։ Եւ եղեալք իշխանք աշխարհին Հայոց առաջի Վռամայ արքային Պարսից, խնդրէին իւրեանց թագաւոր յազգէն Արշակունեաց։ Եւ նա թագաւորեցոյց ի վերայ նոցա զԱրտաշէս որդի Վռամշապհոյ, յազգէ թագաւորացն Հայոց (էջ 18 և 19)։

Յետ որոյ Յազկերտի ոչ ևս ի նոցանց (այսինքն՝ Արշակունիներից—Գ. Ս.), այլ զՇապուհ զորդի իւր թագաւորեցուցեալ Հայոց, հնարս զտանութեան խորհելով, իբր թէ այնպէս հնապաս առնմա լինելով նախարարքն յանգչիցին խօսիւք, տուրեւառիւք, խրախճանութեամբ և զբօսանօք որսոց, այլ և նկամուտ հարազատութեամբ մերձաւորեսցին խնամութեամբ. զի մարթ լիցի զնոսա և ի զէն մազդեզանց աղանդեցուցանել, որով ամենեքին զատչիցին ի Յունաց. ոչ զիտելով անմիտն, թէ «Տէր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց». Թէպէտ առ ժամայն աչողեցաւ... (III, ԾԵ)։

Զրաւեամ անարգարար թագաւորեալ Հայոց Շապհոյ՝ հասանել նմա համբաւ հիւանդութեան հօրն, և զնալ փութանակի, իբրամ տեղակալին հրամայելով զօրազլխի՝ անել զմեծամեծս Հայոց և տանել ի Պարսս։ Բայց իբրև եղև հասանել Շապհոյ ի Տիզբոն՝ մեռաւ հայրն նորա Յազկերտ, թագաւորեալ ամս մետասան։ Ի նմին աւուր և նա անզգէն ի զրանն մարդկանէ նենգեալ՝ սատակեցաւ ... Ընդ նոյն աւուրս թագաւորեաց Պարսից Վռամ երկրորդ... (III, ԾԷ)։

...Եւ նորա հաստատեալ զհաշտութիւնն՝ մարհակ մնացման յանցանաց կնքէ, բառ խնդրոյ նոցա (հայերի— Գ. Ս.) թագաւոր կացուցանելով զԱրտաշէս որդի Վռամշապհոյ... (III, ԾԸ)։

Օրինակները կարելի է բազմացնել, բայց, կարծում ենք, որ սրանք էլ բավական են, նախ համոզվելու համար, որ Խորենացին իսկապես օգտվել է Փարպեցուց, և երկրորդ, ընտելանալու համար այն ձևին, որով Խորենացին քաղում ու օգտագործում է նրա տված տեղեկությունները։ Գրեթե ոչ մի տեղ մենք չենք գտնում քիչ թե շատ երկար բառացի ընդօրինակություն։ Խորենացուն խորթ է Փարպեցու երկարաշունչ և հանդիսավոր ոճը. սրա տվյալները նա շարադրում է իր սեղմ ու եռանդուն ոճով, ըստ որում լրացնում է շարադրանքը այլ աղբյուրներից եկող բազմաթիվ նորանոր տեղեկություններով ու անուններով։ Օրինակ, որպես Արշակ 3-րդի՝ Հայաստանի արևմտյան կողմն անցնելու պատճառ, նա բերում է նրա մոր՝ կայսերական քաղաքում գտնվելու հանգամանքը, հիշատակում է Արշակի հետ գնացած նախարարների, պատմում է դրվագներ պարսիկ Շապուհի թագավորությունից և այլ դեպքեր, բայց այս բոլորի մեջ չի կորչում Փարպեցուց առած տեղեկությունների ինքնությունը։

Այժմ դառնանք մեզ հետաքրքրող հատվածին։

**Փարպեցի**

«...յորմէ (ըստ առկա տեքստի՝ Վռամից, ըստ վերականգնված տեքստի՝ Հազկերտից) խնդրեցին իշխանք Հայք թագաւոր զնոյն միաբանեալ զԽոսրով զեղբայր Վռամշապհոյ, զոր յառաջնումն բանսարկութեամբ եհան մերժել զնա Հայք՝ Շապհոյ արքային Պարսից ի թագաւորութենէ Հայոց։ Եւ նորա (Վռամայ կամ Յազկերտի) կատարեալ զխնդիրս նոցա՝ թագաւորեցուցանէր դարձեալ զԽոսրով զայր յոյժ ծեր։ Եւ եկեալ Խոսրով յաշխարհն Հայոց և կեցեալ ամիսս ութ՝ վախճանէր, առ հարսն յաւելաւ»։

(Այնուհետև ըստ վերականգնված տեքստի հետևում է՝) «...Եւ ոչ կամեցեալ Յազկերտի թագաւորեցուցանել ի վերայ աշխարհին Հայոց յազգէն Ար-

**Խորենացի**

Յայնմ ժամանակի երթեալ մեծին Սահակայ ի դուռն արքային Պարսից Յազկերտի՝ խնդրել զկապեալն Խոսրով, որ զկնի մահուանն Արտաշրի լուծեալ պահեցաւ արձակ յԱնուշն կոչեցեալ բերդի յաւուրս Վռամայ։ Եւ Յազկերտի հաւանեալ՝ կատարէ զհայցուածսն. տալով նմա զվերութիւնն՝ արձակէ ի Հայս։ Սա խնդրեաց զՀրահատ որդի Գազաւոնի, զոր յետ հօրն նորա մահուան հանեալ յԱնյիշելի ամրոցին՝ անդր եւ յան զՍագաստան էր զամարեալ. զոր ոչ ժամանեաց տեսանել Խոսրով, մի և եթ ի կրկնումն թագաւորեալ ամ։

Յետ որոյ Յազկերտի ոչ ևս ի նոցանց, այլ զՇապուհ զորդի իւր

շականեաց՝ թագաւորեցուցանէր ի վերայ սոցա զիւր զորդին որում անուն էր Տիգրան, բառ անուան հօր իւրոյ. խորհեալ չարեաց իմացմունս առնն ի միտս իւր...» և այլն. տե՛ս նախորդ հատվածը, որը վերևում համադրված է Խորենացու տեքստի հետ (էջ 18):

թագաւորեցուցեալ Հայոց, հնարս գտանութեան խորհելով...» և այլն. տե՛ս նախորդ համադրությունը (III, Ծե):

Այստեղ էլ դրսևորվում են օգտագործման նույն ձևերը, որոնք ի հայտ եկան նախորդ հատվածների համադրումներում: Ավելացնենք միայն, որ Փարպեցու հիշատակած ութ ամիսը օրինաչափ կերպով համապատասխանում է Խորենացու 1 տարվան. Խորենացին ժամանակագրական թվերն ընդօրինակելիս միշտ ունի դրանք իր ժամանակագրական համակարգի մեջ դնելու հեռանկարը, իսկ այդ համակարգում, ինչպես հիշում ենք, կոտորակ թվեր չեն կիրառվում:

Այժմ դիտենք Փարպեցու տեքստի շրջումից հետո ստացվող պատկերը, համադրելով այն նաև Անանունի ժամանակագրության հետ:

Աղյուսակ 11

| Անանուն | Ղ. Փարպեցի | Մ. Խորենացի |
|---|---|---|
| Արշակը թագավորում է 5 տարի՝ Արտաշիր 2-րդի 2-րդ տարվանից մինչև Վռամ Կրմանի 1-ին տարին: | Արշակի թագավորությունը ավարտվում է Շապուհ 3-րդի օրոք: | Արշակը թագավորում է 5 տարի՝ Շապուհ 2-րդի 60-րդ տարվանից մինչև 64-րդ տարին: |
| Խոսրովը թագավորում է 3 տարի՝ Վռամ Կրմանի 2-րդ տարվանից մինչև նրա 5-րդ տարին: | Խոսրովի թագավորությունը սկսվում և ավարտվում է Շապուհ 3-րդի թագավորության ընթացքում: | Խոսրովը թագավորում է 5 տարի՝ Շապուհ 2-րդի 65-րդ տարվանից մինչև 69-րդ տարին: |
| Վռամշապուհը թագավորում է 8 տարի՝ Վռամ Կրմանի 6-րդ տարվանից մինչև Հազկերտ 1-ինի 2-րդ տարին: Արշակունյաց հարստությունը ավարտվում է: | Վռամշապուհը թագավորում է Շապուհ 3-րդի օրոք, շարունակում է թագավորել Վռամ Կրմանի ժամանակ և մահանում Հազկերտ 1-ինի օրոք, թագավորելով | Վռամշապուհը թագավորում է 21 տարի՝ Շապուհ 2-րդի 70-րդ տարվանից, շարունակում է թագավորել Արտաշիր 2-րդի և Վռամ Կրմանի թագավորությունների ժամանակ և մահանում Հազկերտ 1-ինի 6-րդ տարում: |

| | |
|---|---|
| 21 տարի (կամ «ամս բազումս»)։ | |
| Խոսրովը, երկրորդ անգամ, թագավորում է 8 ամիս, Հազկերտ 1-ինի օրոք։ | Խոսրովը, երկրորդ անգամ, թագավորում է 1 տարի Հազկերտ 1-ինի 7-րդ տարվա ընթացքում։ |
| Շապուհ Պարսիկը թագավորում է Հայաստանում իր հոր՝ Հազկերտ 1-ինի օրոք և սպանվում իր հոր հետ միաժամանակ։ | Շապուհ Պարսիկը թագավորում է Հայաստանում իր հոր՝ Հազկերտ 1-ինի 8-րդ տարում և սպանվում իր հոր հետ միաժամանակ։ |
| Արտաշեսը թագավորում է 6 տարի, Վռամ 2-րդի (5-րդի) օրոք, նրա թագավորության առաջին կեսում։ Արշակունյաց հարստությունը ավարտվում է։ | Արտաշեսը թագավորում է 6 տարի, Վռամ 2-րդ (5-րդի) 21-ամյա թագավորության 5-րդ տարվանից մինչև նրա 9-րդ տարին ներառյալ։ Արշակունյաց հարստությունը ավարտվում է։ |

*Առայժմ մի կողմ թողնենք Անանունի տվյալները և ծանրանանք Խորենացու և Փարպեցու տվյալների առնչության խնդրի վրա։*

*Այն խնդիրը, որ պարբերաբար ծագել է նաև նախորդ երկու հատվածների քննարկման ժամանակ (Ագաթանգեղոսի և Փավստոսի հետ համեմատելիս), ծագում է և այժմ. դա Խորենացու և տվյալ դեպքում, Փարպեցու ժամանակագրությունների աղբյուրի բնույթն է։ Ինչպես և Ագաթանգեղոսի դեպքում էր, այդ բնույթը պարզ դրսևորվում է բերված տեղեկություններում։ Խորենացու ժամանակագրությունը նման է Փարպեցու ժամանակագրությանը, մի տարբերությամբ. այնտեղ, որ Փարպեցու մոտ հանդես է գալիս Շապուհ 3-րդը, Խորենացին առաջ է քաշում Շապուհ 2-րդին։ Բայց այս* տարբերությունը *իրականում Փարպեցու և Խորենացու միջև եղած աղբյուրի ավելի կարևոր դրսևորում է, քան վերը մեջ բերված բառացի* նմանությունները:

*Խորենացին, ինչպես երևում է, շատ բարձր է դասել Փարպեցու հաղորդածի արժանահավատությունը և աշխատել է ըստ ամենայնի հարազատ մնալ նրա տվյալներին։ Սակայն մի օր-*

ցնկաիվ, իրենից կախում չունեցող հանգամանք խանգարել է նրան իրագործելու այդ լրիվ չափով։ Միզքը այստեղ, սակայն, Խորենացունը չէ, որը ամենայն բարեխղճությամբ հետևել է այս հատվածի ժամանակագրությանը առնչվող աղբյուրներին, այլ հենց այն աղբյուրինը, որից նա առել է Սասանյան թագավորների ցուցակը։ Ինչպես հիշում ենք, այդ ցուցակի առանձնահատկություններից մեկն այն էր, որ այնտեղ բացակայում էր Շապուհ 3-րդ թագավորը (այդպես է և Անանունի մոտ)։ Խորենացին, այսպիսով, տեղեկություն չի ունեցել այդ թագավորի գոյության մասին և Փարպեցու հիշատակած Շապուհին, որը հենց Շապուհ 3-րդն է, ընդունել է որպես Շապուհ 2-րդի, վերագրելով նրան այն, ինչ Փարպեցին պատմում է Շապուհ 3-րդի մասին։ Այս է պատճառը, որ Խորենացու մոտ Արշակ 3-րդը և Խոսրովը ժամանակակից են Շապուհ 2-րդին և Վռամշապուհն իսկ գահակալում է նրա օրոք (Փարպեցու մոտ այդ բոլորը առնչվում է Շապուհ 3-րդին)։

Այս տարբերությունը, ինչպես ասվեց, փոխանակ մթնելու, ավելի ևս ընդգծում է Խորենացու և Փարպեցու միջև եղած կապը, իսկ այդ կապը դժվար է բացատրել այլ կերպ, քան նրանով, որ Խորենացին օգտվել է Փարպեցու հարացույց, մեզ չհասած տեքստից, սակայն իրենից անկախ պատճառներով ճիշտ չի ընկալել նրա որոշ տվյալները։

Անդրադառնալով այն, վերևում հարուցված, խնդրին, թե ինչպես է առնչվում Խորենացու ժամանակագրության քննարկված հատվածը (Արշակ 3-րդից մինչև Հայ Արշակունիների բարձումը) Անանունի ժամանակագրության հետ, № 11 աղյուսակում բերված նյութի հիման վրա դժվար չէ համոզվել, որ Խորենացու և Փարպեցու տվյալները իրար նման են, մինչդեռ Անանունի տվյալները չեն առնչվում ո՛չ մեկին, ո՛չ էլ մյուսին։

8.

Համրապումարի բերելով հայ թագավորների ցուցակի՝ Անանունի և Խորենացու վարիանտների մասին մեր դիտողու-

*թյունները Խոսրով Մեծից մինչև Արշակունյաց անկումը, գալիս ենք եզրակացության, որ նրանց արմատները տարբեր են։ Խորենացու ժամանակագրական գիծը համընթաց է Ագաթանգեղոսի և Փարպեցու գծին, մասամբ տարբերվելով Փավստոսի գծից, թեև վերջինս այս կամ այն չափով ծառայած պիտի լինի նրան որպես աղբյուր։ Անանունի գիծը այլ է, քան Ագաթանգեղոսինը և Ղազար Փարպեցունը և համընկնում է Փավստոսի ժամանակագրության հետ, որը սակայն իր ներկա տեքստով չէր կարող լինել Անանունի աղբյուրը։ Սրանով ենթադրվում է Փավստոսի ոլորտի՝ թվերով օժտված ինչ որ աղբյուրի առկայությունը հնում (Փավստոսի աղյուսակնե՞րը)։*

*Այժմ, երբ հրաժարվում ենք այն մտքից, թե Անանունի երկրորդ հայկական ցուցակը աղբյուր է ծառայել Խորենացու համար, մեր առաջ ծառանում է մի ուրիշ խնդիր։ Հայոց պատմության III դարի վերջի — V դարի սկզբի շրջանը շարադրող հեղինակները՝ Ագաթանգեղոսը, Ղազար Փարպեցին, մասամբ և Փավստոսը, ինչպես տեսանք, պետք է գտնվեն Խորենացու ժամանակագրության աղբյուրների շարքում։ Բայց չէ՞ որ սրանց մատուցած նյութը գերազանցորեն պատմողական է, և թվական տվյալները հազվադեպ են պատահում այդ նյութի մեջ։ Այնինչ Խորենացու շարքերը և, նույն թվում, հայկական շարքի մեջ հետաքրքրող հատվածը ծայրեիծայր օժտված են թվերով։ Հարց է ծագում. թե որտեղի՞ց են գալիս այդ թվերը։*

*Խոսրովի գահակալությունից մինչև Տրդատի գահակալությունն ընկած հատվածի մասին մենք արդեն հանել ենք մեր եզրակացությունը, գտնելով, որ Խորենացին հետևել է Ագաթանգեղոսի ինչպես թվական, այնպես էլ նկարագրական տվյալներին, օժտելով վերջիններս համապատասխան թվերով։*

*Իսկ ի՞նչ վիճակում է գտնվում այս տեսակետից Տրդատից մինչև Արտաշես վերջին հատվածը։ Փորձենք հնարավորին չափ լուսաբանել այս կարևորագույն հարցը։ Դրա համար միակ միջոցը Խորենացու տվյալների և սույն ժամանակագրության տվյալների առնչության ստուգումն է։ Եթե նրանք մոտ դուրս*

գան վերջիններիս, ապա պետք կլինի եզրակացնել, որ Խորենացին իր ձեռքի տակ ունեցել է սիստեմատիկ թվերով օժտված լավորակ աղբյուր։ Հակառակ դեպքում՝ չի ունեցել, կամ ունեցել է մասնակի տվյալներ։ Սակայն, կիրառելով վերևում մի քանի անգամ արդեն փորձված մեթոդը՝ Խորենացու տվյալների համեմատությունը գիտական ժամանակագրության տվյալների հետ, մենք պետք է մեզ հաշիվ տանք, որ նախորդ և ներկա փորձերի միջև մեծ տարբերություն կա. այնտեղ մեր տրամադրության տակ էր բազմաթիվ աղբյուրներով հավաստված ու գիտականորեն ստուգված՝ Հռոմի և պարսից պատմության ժամանակագրության սիստեմը, իսկ այստեղ մեր հավաստի, օտար աղբյուրներով խաչաձև կերպով հաստատված տվյալները շատ սակավ են։ Փաստորեն այդպիսին են միայն Արշակ թագավորի ձերբակալման ու սպանության, այնուհետև Պապ թագավորի գահակալման և մահվան թվականները, հաղորդված Ամմիանոս Մարկելլինոսի կողմից, այն է՝ համապատասխանաբար 368, 370 և 374 թվականները։ Սակայն պարզ է, որ կիրառելով միայն այս տվյալները, մենք կարող ենք հանգել գեթ շատ սահմանափակ եզրակացության, որը կվերաբերվի միմիայն Պապի թագավորության տևողությանը։ Ճիշտ է, այդ եզրակացությունը դրական է՝ Ամմիանոսի տվյալները համապատասխան են Խորենացու տվյալներին, եթե ոչ ստույգ կերպով, գոնե փոքր վերապահությամբ. երկուսի մոտ էլ Արշակի և Պապի մահվան միջև ընկած է 6 կամ 7 տարի, բայց այն տարբերությամբ, որ Խորենացու մոտ այդ տարիները լրիվ հատկացված են Պապին, իսկ Ամմիանոսը Արշակի և Պապի միջև տեսնում է 1—2 տարվա անիշխանության շրջան։

Սակայն հանել ավելի լայն եզրակացություններ, որոնք կվերաբերվեին հայկական շարքի ավելի մեծ հատվածի, մենք չենք կարող, հիմք ունենալով միայն վերոհիշյալ սահմանափակ տվյալները. անհրաժեշտ է գտնել լրացուցիչ կռվաններ՝ ստույգ թվականների շարքը համալրելու համար։

Այսպիսի կռվաններից մեկի ընտրությունը մեծ դժվարու-

թյուններ չի ներկայացնում. դա Հայ Արշակունիների բարձման տարեթիվն է (428 թ.), որը, հիմնված լինելով վերջին հաշվով նույն Խորենացու ժամանակագրական տվյալների վրա, չափազանց շատ հիմքեր ունի որպես օբյեկտիվ և իրական դիտվելու, որպեսզի այն կարելի լինի լուրջ կասկածի ենթարկել. իրավացիորեն այն այժմ ընդունված է բոլոր հետազոտողների կողմից:

Որպես երկրորդ կռվան՝ հարմարագույնն է քննարկվող հատվածի մյուս ծայրակետը՝ Տրդատի գահակալման տարեթիվը, որը, տարակուսանքներ հարուցելով հանդերձ, համեմատաբար ավելի հաստատուն է, քան շարքի մյուս տարեթվերը, վերևում առաջ քաշվածներից բացի: Այդ տարեթվի կապակցությամբ երկու հիմնական տեսակետ գոյություն ունի, որոնցից մեկի հիմքն է, դարձյալ Խորենացու հայտնի սինքրոնացնող ցուցումը (Տրդատի՝ Դիոկղետիանոսի 3-րդ տարում գահակալելու մասին), ըստ որի ստացվում է 286 թվականը, մյուսի հենարանն է Անանունի սինքրոնացնող ցուցումը (Տրդատի՝ նույն Դիոկղետիանոսի 15-րդ տարում գահակալելու մասին), որը հանգեցնում է 298 թվականին: Առաջին տեսակետը գիտության մեջ սկզբնական շրջանում տարածում գտնելով, երկրորդը այժմ ավելի համարում ունի, ամրապնդված լինելով Հ. Մանանդյանի և, վերջերս, նոր ու համոզիչ փաստերով, Պ. Անանյանի կողմից[17]:

Այսպիսով, առաջիկա համադրության ձախ կողմը կազմում են Խորենացու տվյալները հայկական շարքի համապատասխան հատվածի բացարձակ տևողության (այսինքն, Տրդատից մինչ Հայ Արշակունիների վերջը եղած թագավորներին՝ Խորենացու տված տարիների) մասին, իսկ աջ կողմը՝

17 Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, հատ. Բ, մասն Ա., Երևան, 1958, էջ 102 և հետ.: Պողոս Անանյան, *Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության թվականը և պարագաները*. «Բազմավէպ», 1959, էջ 9—23, 129—142, 225—238, 1960, էջ 53—60, 101—113: Գոյություն ունի նաև երրորդ՝ Ստ. Մալխասյանցի տեսակետը, որի մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության Գ հավելվածում:

Ամմիանոսի ցուցումները և նրանց օժանդակող՝ Արշակունիների բարձման ընդունված տարեթիվն ու Տրդատի գահակալման հավանական տարեթիվը։ Համեմատությունը առավել շոշափելի դարձնելու համար հարմար է որպես ելակետ ընդունել Արշակունիների բարձման տարեթիվը (ինչպես արված է № 5 աղյուսակի 3-րդ սյունակում), թեև, ցանկության դեպքում, որպես ելակետ կարող են ծառայել և մյուս ներկայացվող տարեթվերը։

Աղյուսակ 12

| Ըստ Խորենացու | | Ըստ ընդունված տվյալների | |
|---|---|---|---|
| Հայ Արշակունիների բարձումը | 428 | Հայ Արշակունիների բարձումը | 428 |
| Պապ թագավորի մահը | 379 | Պապ թագավորի մահը | 374 |
| Պապի գահակալությունը | 373 | Արշակ թագավորի մահը | 368 |
| Տրդատի գահակալությունը | 267 | Դիոկղետիանոսի 15-րդ տարին | 298 |

Աղյուսակի վերջին թվերը համեմատելով տեսնում ենք, որ Խորենացու մոտ պատմական նույն հատվածը ավելի ժամանակ է բռնում, քան ընդունված ժամանակագրության մեջ, և այդ տարբերությունը հասնում է 31 տարվա (=298—267)։

Այս երկարաձգման բացատրությունը առանձնապես դժվարին մի գործ չէ։ Հիշյալ 31 տարիներից 12-ը բացատրվում են այն հանգամանքով, որ Խորենացին Անանունի համեմատ, որի վրա է հիմնված ընդունված թվագրությունը, ետ է քաշում Տրդատի գահակալումը Դիոկղետիանոսի 15-րդ տարվանից մինչև նրա 3-րդ տարին, այսինքն՝ 12 տարով։ Մնում է բացատրել 19 տարին։ Այստեղ մենք մտաբերում ենք հռոմեական իշխողների շարքի միջին հատվածի (որի մեջ մտնում է նաև Դիոկղետիանոսի կայսրության ժամանակաշրջանը) հետադարձ տեղաշարժը դեպի աղյուսակի սկիզբը, որը բացահայտել ենք վերը (տե՛ս էջ 59 հետ.)։ Մեզ համար միանգամայն պարզ է, որ այդ տեղաշարժը և Տրդատի գահակալման տարեթվի տեղաշարժը (որը և հանգեցրել է հայկական շարքի տևողության երկարաձգման) իրար հետ կապված երևույթներ են։ Այդ պարզ է նամանավանդ այն պատճառով, որ հռոմեական շարքի հիշյալ հատվածի տեղաշարժը Խորենացու աղյուսակի մեջ

նույնպես հավասար է 19 տարվա, ինչպես կտեսնենք հետագայում, երբ խոսելիս լինենք այդ երևույթի պատճառի մասին։

Սրանով, սակայն, խնդրի լուծումը ոչ միայն չի ավարտվում, այլ նոր-նոր սկսվում է։ Ներկայացված աղյուսակը ի հայտ է բերում մի այլ հետաքրքրական փաստ ևս։ Այն ցույց է տալիս, որ հայկական շարքի նշված երկարաձգումը շատ անհավասարաչափ է բաշխվել շարքի տարբեր հատվածների վրա։ Այն անդրադարձել է ոչ թե ամբողջ Տրդատ — Արտաշես շարքի, այլ միայն նրա Տրդատ — Արշակ հատվածի վրա և, դեռ ավելին, մնացյալ՝ Պապ—Արտաշես հատվածը ոչ միայն երկարաձգված չէ, այլ ընդհակառակը սեղմված է 5 տարով, որի հետևանքով Խորենացու մոտ Պապի տարիները ընկնում են 368—374 թվականի փոխարեն՝ 373—379 թվականին։ Այս իր հերթին նշանակում է, որ Տրդատ — Արշակ հատվածը փաստորեն երկարաձգված է ոչ թե վերևում հիշված 31, այլ ամբողջ 36 տարով, որովհետև նրան է բաժին ընկնում նաև Պապ — Արտաշես հատվածի սեղմումի հետևանքով ավելացած 5 տարին։

Ելնելով Խորենացու ժամանակագրական համակարգի վերջին հատվածի ընդհանուր դինամիկայից, դժվար չէ պատկերացնել նաև այս սեղմումի պատճառը․ եթե նախորդ ընդարձակումը ուղեկցվում է հռոմեական շարքի միջին հատվածի հետադարձ շարժմամբ, ապա ներկա սեղմումը պետք է բացատրվի պարսկական շարքի (որին ևս կցված է հայկական շարքը սինքրոնիկ ցուցումների միջոցով) վերջին հատվածի սեղմումով։

Սակայն հայոց թագավորների շարքի երկարաձգմանը և նրա մի մասի սեղմմանը տրված մեր այս երկու բացատրությունները համարժեք չեն։ Եթե առաջինը սպառիչ է (քանի որ հռոմեական և հայկական շարքերի երկարաձգման չափերը համընկնում են, կազմելով 19-ական տարի), ապա երկրորդը դեռ պետք է շարունակվի, որովհետև պարսկական շարքի վերջին հատվածի սեղմումը շատ ավելի է, քան հայկական շարքի

համապատասխան հատվածինը։ Իսկապես, եթե պարսկական շարքի՝ Շապուհ 2-րդից մինչև Վռամ 2-րդ (5-րդ) հատվածը Խորենացու մոտ կրճատված է 16 տարով (տե՛ս վերևում, էջ 52), ապա սպասելի էր, որ նրան զուգված հայկական զուգահեռ շարքն էլ պետք է նույն չափով սեղմվեր։ Բայց այդ չկա, հայկական շարքում սեղմումը հավասար է միայն 5 տարվա։ Իր տեղում մենք վերլուծեցինք հիշյալ 16 տարիները և գտանք, որ դրանք կազմված են Հազկերտ 1-ինից առած 10, Վռամ 1-ինից (4-րդից) առած 1 և Խորենացու մոտ (և նրա անմիջական աղբյուրում) ընդհանրապես բացակայող՝ Շապուհ 3-րդի 5 տարիներից։ Այսպիսով, Խորենացու հայկական շարքի սեղմման մեջ արտահայտվել է միայն պարսկական շարքի Շապուհ 3-րդի բացակայությունը, իսկ մնացած երկու իշխողների տարիների կրճատումը իր ազդեցությունը չի թողել։ Այս հետաքրքրական երևույթը ուղղում է մեր ուշադրությունը դեպի Խորենացու՝ պարսկական շարքի աղբյուրը, որը հարազատորեն ներկայացված է Անանունի պարսկական ցուցակում։ Այստեղ, ինչպես հիշում ենք, Հազկերտ 1-ինի և Վռամ 1-ինի (4-րդի) տարիների թվերը դեռևս անաղարտ պահպանվել են, բայց Շապուհ 3-րդը իր 5 տարիներով արդեն բացակայում է։ Ուրիշ խոսքով պարսկական շարքի մեջ հետաքրքրող հատվածի սեղմումը հավասար է 5 տարվա, այսինքն համընկնում է Խորենացու հայկական շարքի համապատասխան հատվածի սեղմման չափի հետ։

Ի՞նչ է հետևում այստեղից։ Այն, որ Խորենացու հայկական թագավորների շարքի խնդրո առարկա հատվածը (այսինքն՝ Պապից մինչև Արտաշես) հենց մեզ հասած վիճակում գոյություն է ունեցել Խորենացուց առաջ և նրանից անկախ։ Այդ հատվածը և Անանունի մոտ ներկայացված պարսից թագավորների շարքի համապատասխան հատվածը իրար հետ կապված, այսինքն՝ սինքրոնացված վիճակում համատեղ կյանք են ունեցել մի ինչ-որ երկի էջերում կամ մի ժամանակագրում, որտեղից անցել են Խորենացու ձեռքը։ Խորենացին ներմուծել է այդ նյութերը իր ժամանակագրական համակարգի մեջ. բայց

որում այս անգամ անհրաժեշտ մշակումը կատարվել է ի հաշիվ պարսկական շարքի՝ նրանից պակասեցվել է ևս 11 տարի, իսկ հայկական շարքը մնացել է անաղարտ։

Կազմենք մի աղյուսակ, որը կներկայացնի զատ-զատ պահպանված քարերից վերակառուցված՝ Խորենացու ենթադրյալ աղբյուրի շենքը։ Աղյուսակի բաղկացուցիչ մասերն են, մի կողմից, Սասանյանների ավանդական (= Անանունի) ցուցակը, մյուս կողմից, Խորենացու հայկական շարքի համապատասխան հատվածը, իրար հետ սինքրոնացված վիճակում, ելակետ ընդունելով նույն 428 թվականը (№ 5 աղյուսակի 3-րդ սյունակի օրինակով)։ Այդ վերակառուցված աղյուսակը կունենա հետևյալ կերպարանքը։

Աղյուսակ 13

| Սասանյանների ավանդական (= Անանունի) ցուցակը | Հայ Արշակունիների՝ Խորենացու ցուցակը | Թվականները |
|---|---|---|
| Վռամ 2-րդի (5-րդի) 9-րդ տարին | Արշակունիների բարձումը | 428 |
| | Արտաշեսի գահակալությունը | 423 |
| Վռամ 2-րդի (5-րդի) գահակալությունը | Անիշխանության սկիզբը | 420 |
| | Շապուհ պարսիկի գահակալությունը | 416 |
| | Խոսրովի թագավորությունը (1 տարի) | 415 |
| Հազկերտ 1-ինի գահակալությունը | | 399 |
| | Վռամշապուհի գահակալությունը | 394 |
| | Խոսրովի գահակալությունը | 389 |
| Վռամ 1-ինի (4-րդի) գահակալությունը | | 388 |
| Արտաշիր 2-րդի գահակալությունը | Արշակ 3-րդի գահակալությունը | 384 |
| Շապուհ 2-րդի մահը | | 383 |
| | Վարազդատի գահակալությունը | 380 |
| | Պապի մահը | 379 |
| | Պապի գահակալությունը | 373 |
| | Արշակի մահը | 372 |

Բայց ունե՞ն արդյոք այս արհեստական, պատմականորեն էլ մասամբ անստույգ (այստեղ սղված են Շապուհ 3-րդի

5 տարիները և 5 տարի էլ՝ հայկական շարքից), աղյուսակի սինքրոնացումները ունե՞ն raison d'être, գոյության իրավունք, որպես Խորենացու աղբյուրի մոդել։ Փաստերը ցույց են տալիս, որ ունեն։ Ահա իրեն՝ Անանունի սեփական սինքրոնացված աղյուսակը։ Վերջին սյունակում կրկնվում են նախորդ աղյուսակի տվյալները՝ համեմատության համար։ Հիշենք, որ Անանունը Արշակունյաց բարձումը դնում է Հայկերտ 1-ինի երկրորդ տարում (Վռամշապուհի 8-րդ տարում), այսինքն՝ 400 թվականին, ուստի և աղյուսակը սկսվում է այդ կետից։

Աղյուսակ 14

| Սասանյաններ | Հայ Արշակունիներ | Անանունի սինքրոնացումը | Նախորդ աղյուսակի տվյալները |
|---|---|---|---|
| Հայկերտ 1-ինի 2-րդ տարին | Արշակունյաց բարձումը | 400 | |
| Հայկերտ 1-ինի գահակալությունը | | 399 | |
| | Վռամշապուհի գահակալությունը | 393 | 394 |
| | Խոսրովի գահակալությունը | 390 | 389 |
| Վռամ 1-ինի (4-րդի) գահակալությունը | | 388 | |
| | Արշակ 3-րդի գահակալությունը | 385 | 384 |
| Արտաշիր 2-րդի գահակալությունը | | 384 | |
| Շապուհ 2-րդի մահը | | 383 | |
| | Վարազդատի գահակալությունը | 379 | 380 |
| | Պապի մահը | 378 | 379 |
| | Պապի գահակալությունը | 366 | 373 |
| | Արշակի մահը | 354 | 372 |

Տեսնում ենք, որ եթե բացառենք Արշակի մահվան և Պապի գահակալման թվականները, ապա սինքրոնացումը մնացած կետերում Անանունի մոտ ± 1 տարվա տարբերությամբ համընկնում է նախորդ, արհեստական աղյուսակում ստացված սինքրոնացման և ապացուցում նրա կենսունակությունը։

Ինչ վերաբերում է նախորդ աղյուսակի մնացած՝ Անանունի մոտ բացակայող Վռամշապուհ — Արտաշես հատվածի սինքրոնացման կենսունակության, ապա այն ապացուցման կարիք չունի, լրիվ արդարանալով Ղազար Փարպեցու համապատասխան պատմողական սինքրոնացնող տվյալներով (տե՛ս վերևում, աղյուսակ № 11)։

Բայց ելնելով վերջին աղյուսակից, կարելի էր ենթադրել, թե Խորենացուն աղբյուր է ծառայել ոչ թե մի երևակայական երկ, կամ վավերագիր, այլ հենց ինքը՝ Անանունը։ Այս ենթադրությունը անհավանական է դառնում Անանունի և Խորենացու՝ հայոց շարքերի այդ հատվածի մասին տվյալների էական տարբերությամբ, ըստ որում Խորենացու տվյալները ավելի մոտ լինելով իրականությանը, պահանջում են իրենց հիմքում տեսնել մի այլ, Անանունից տարբեր, աղբյուր։ Որպես օրինակ կարող է ծառայել հայ Արշակունիների բարձման մասին տվյալների աղճատվածությունը, և հենց վերջին հայ թագավորների բացակայությունը Անանունի մոտ, ինչպես նաև այսպիսի մի երևույթ։ Ամմիանոս Մարկելլինոսի ստույգ տվյալները Արշակ 2-րդի թագավորության ավարտման և Պապի մահվան միջև ընկած ժամանակահատվածի տևողության մասին (368—374 թթ.), ինչպես ասվեց, համընկնում են Խորենացու տվյալների հետ, միակ տարբերությամբ, որ Խորենացին այդ ժամանակամիջոցը ամբողջությամբ է հատկացրել Պապին, իսկ Ամմիանոսը նշում է Պապի և Արշակի միջև 2 տարի անիշխանություն։ Անանունի մոտ համապատասխան ժամանակահատվածը հավասար է 25 տարվա, որից Պապին հատկացված է 13 տարի։

Այսպիսով, վերադառնալով վերևում արված հարցադրմանը, թե Խորենացին հայոց թագավորների շարքը կերտելիս Ագաթանգեղոսից, Փավստոսից ու Ղազար Փարպեցուց զատ ունեցե՞լ է արդյոք նաև թվական սիստեմատիկ տվյալներ պարունակող աղբյուրներ, թե՞ չի ունեցել, կարող ենք ասել, որ խնդիրը առայժմ ստանում է այսպիսի լուծում, այն է՝ շարքի վերջին, Պապ — Արտաշես հատվածի համար, ամենայն հավա-

նականությամբ, ունեցել է, իսկ Պապին նախորդող հատվածի համար, Փավստոսի տվյալներից բացի, նրա ձեռքի տակ եղել են միայն առանձին, ոչ սիստեմատիկ, թվական տվյալներ։ Վերջին կարծիքը հիմնված է գերազանցապես վերաբերմունքի այն տարբերության վրա, որ ցուցաբերում է Խորենացին շարքի ակնարկված հատվածների նկատմամբ։ Եթե վերջին հատվածի համար ունենալով սիստեմատիկ թվական տվյալներ, նա խստորեն հետևում է դրանց և հայկական շարքի երկարաձգումը չի տարածում այդ հատվածի վրա (թեև այդ հատվածում կան կարճ տևողություն ունեցող մի քանի թագավորություններ, որոնց վրա ամենից բնական կլիներ տարածել երկարաձգումը), ապա նախորդ հատվածի հետ նա ազատ է վարվում։ Ուրեմն և կարելի է ենթադրել, թե նա չի ունեցել այդպիսի մի զորեղ հիմք առաջին հատվածը անաղարտ պահելու համար, ինչպիսին ունեցել է վերջին հատվածի նկատմամբ։ Իհարկե այս կարծիքը հեռու է վերջնական լինելուց։

## 9.

Պարթևա-պարսկական, հռոմեական և հայկական իշխողների շարքերը քննարկելուց հետո, հերթը հասնում է հայ կաթողիկոսների շարքին։ Ի տարբերություն նախորդ շարքերի, այս մեկը, որքան էլ այն նշանակալի լինի պատմագիտական առումով, Խորենացու ժամանակագրական համակարգի ճանաչման համար, սակայն, էական հետաքրքրություն չի ներկայացնում, քանի որ շաղկապված է միայն մի շարքի (հայոց թագավորների) հետ և այն էլ ակներևաբար ձևավորվել է այդ շարքի ազդեցության ներքո։ Բացառություն են կազմում թերևս միայն Գրիգոր Լուսավորչի և Սահակ Պարթևի հետ կապված ժամանակագրական տվյալները և, հատկապես, վերջինիս մահվան տարեթիվը, որը կարևոր կռվան է հանդիսանում Մովսես Խորենացու ժամանակագրական համակարգում։ Այդ մասին, սակայն, արդեն բավականաչափ խոսվել է համապատասխան տեղերում և դեռ էլի կխոսվի։

Իհարկե, այն հարցը, որ առաջանում էր բոլոր շարքերի կապակցությամբ, թե որտեղից է քաղել Խորենացին համապատասխան թվական տեղեկությունները, ծագում է և կաթողիկոսների շարքի նկատմամբ։ Այս հարցին, եթե չհաշվենք Սահակ Պարթևի մասին Խորենացու տվյալները, որոնք գալիս են Կորյունից, մենք առայժմ պատասխան չունենք։ Կարող ենք ասել միայն, որ շարքի ժամանակագրական նկարագիրը, ինչպես և նրա սինքրոնացումը հայոց թագավորների շարքի հետ, մինչև Սահակ Պարթևը, ընդհանուր գծերով համընկնում է Փավստոսի մոտ հանդիպող պատկերին, ցուցաբերելով միայն մի քանի մասնակի տարբերություններ, իսկ հետագա կաթողիկոսների՝ Սուրմակի, Բրքիշոյի և Շմուելի ժամանակագրությունը հար և նման է Ղազար Փարպեցու պատմածին։

## 10.

Անդրադառնանք այժմ երկու խնդիրների լուսաբանմանը, որը մենք պարտք ենք ընթերցողին դեռ երկրորդ գլխից և որը հնարավոր է դառնում հայկական շարքի ուսումնասիրումից հետո։ Խնդիրներից առաջինն այն է, թե ին՞չ կոնկրետ պատճառով է, որ Խորենացու պարսկական շարքում Շապուհ 2-րդի թագավորության ժամանակը 11 տարով առաջ է քաշվել (տե՛ս վերևում, էջ 52)։

Խորենացին, ինչպես մենք փորձեցինք ապացուցել, որպես աղբյուր իր աչքի առջև ունեցել է այն տվյալները և այն սինքրոնիզմը, որ մենք ցույց տվինք № 13 աղյուսակում։ Բայց նա միևնույն ժամանակ ունեցել է և իր համար այնպիսի վստահելի մի աղբյուր, ինչպիսին է Ղազար Փարպեցին։ Այս երկու աղբյուրները բաղդատելիս նա նկատել է, որ Ղազար Փարպեցու մոտ հայոց Վռամշապուհի գահակալությունը ընկնում է պարսից Շապուհի թագավորության ժամանակին, մինչդեռ բուն մյուս աղբյուրի, այն տեղի է ունեցել Վռամ 1-ինի (4-րդի) օրոք։ Խորենացին նախընտրել է Ղազար Փարպեցու վերսիան և երկրորդ աղբյուրի տվյալները ենթարկել նրան։ Բայց այդ կատարելիս նա, ինչպես ասվեց, չի իմացել, որ Ղազար Փար-

պեցու խոսքը Տապուհ 3-րդին է վերաբերում (որովհետև նա տեղեկություն չի ունեցել այդպիսի մի թագավորի գոյության մասին) և սինքրոնացրել է Վռամշապուհի գահակալման տարին Տապուհ 3-րդի փոխարեն նրա պապի՝ Տապուհ 2-րդի մահվան տարվա հետ։ Դրան նա կարող էր հասնել երկու ուղիներով՝ կամ ընդլայնելով հայկական գիծը՝ Վռամշապուհի և նրա հաջորդների կառավարման տևողությունը, հասցնելով նրան մինչև Տապուհ 2-րդը, կամ, ընդհակառակը, կրճատելով պարսկական գիծը՝ Տապուհ 2-րդի հաջորդների թվերը, և սրան հասցնելով մինչև Վռամշապուհը։ Փաստերը ցույց են տալիս, որ Խորենացին նախընտրել է երկրորդ ուղին, անաղարտ պահելով հայկական շարքը։ Հենց այդ նպատակով նա վերևում կատարել է բազմիցս ակնարկված կրճատումները, մեկ տարով կրճատել է Վռամ 1-ինի (4-րդի) և 10 տարով՝ Հազկերտ 1-ինի թագավորության տևողությունը։ Այս 11 տարիների կրճատումն է, որ գումարվելով Տապուհ 3-րդի՝ Խորենացու մոտ (ինչպես և նրա աղբյուրում) բացակայող 5 տարիներին, վերջ ի վերջո հանգեցրել են Խորենացու ժամանակագրական համակարգի երկու կարևորագույն շեղումներից մեկին, նրա ընդհանուր տևողության կրճատմանը, որի մասին մանրամասն ասվեց իր տեղում։

Ինչպես տեսնում ենք, այս շեղումը, որն այնքան մտահոգություն է պատճառել հետազոտողներին, միանգամայն օբյեկտիվ հիմքեր ունի, խարսխված լինելով Խորենացու ձեռքի տակ եղած ժամանակագրական տվյալների հակասությունների վրա, որոնք Խորենացին ջանացել է հաղթահարել։

Նույնը պետք է կրկնել նաև համակարգի երկրորդ կարևորագույն շեղման մասին, այն է, նրա պարսկական և հռոմեական շարքերի միջև տեղ գտած անաքրոնիզմի մասին, որը հասնում է 35—40 տարվա։ Այս անաքրոնիզմն է, որ նկատվելով բոլոր հետազոտողների կողմից, մեծագույն խոչընդոտ է հանդիսացել Խորենացու՝ III—V դդ. վերաբերող ժամանակագրական տվյալների որպես պատմական աղբյուր անվրեպ օգտագործման խնդրում։ Ջանալով տարբեր ձևերով շրջանցել

*միջնորդված հայոց Խոսրով և նրա որդի Տրդատ թագավորներով: Պատրաստ ենք զիջելու, եթե առաջարկվի ավելի համոզիչ փաստ:*

*Հիշյալ առնչությամբ մենք մանրամասն անդրադարձել ենք վերևում (էջ 89 և հտ.): Վկայակոչելով Ագաթանգեղոսին, Խորենացին պատմում է, որ Արտավանի սպանությունից հետո, հայոց Խոսրովը պատերազմ է սկսում Արտաշիրի դեմ, սա Անակի ձեռքով սպանել է տալիս Խոսրովին, որի որդուն՝ Տրդատին, փրկում-փախցնում են Հռոմ: Հասունանալով՝ Տրդատը տիրանում է հոր գահին Դիոկղետիանոս կայսրի օրոք: Այս ամբողջ պատմությունը Խորենացին հատկացնում է 40 տարի, հենվելով Ագաթանգեղոսի մասամբ թվական, մասամբ էլ պատմողական տվյալների վրա:*

*Այս պատմության սկիզբը վերաբերում է պարթև Արշակունիների անկման և Սասանյանների գահակալելու տարվան, որը Խորենացու համակարգում հաստատուն (թեև իրապես ոչ ճիշտ տեղադրված) տարեթիվ է: Պատմության վերջը, ինչպես Խորենացին է հայտնում (շեշտելով, որ հատկապես փնտրել ու գտել է այդ տարեթիվը), ընկնում է Դիոկղետիանոսի 3-րդ տարվան, որը և նորից հաստատուն տարեթիվ է: Արդ, այդ տարեթվերի միջև Խորենացու աղյուսակում եղած 40 տարվա դիմաց գիտական ժամանակագրության մեջ նրանց միջև ընկած է 60 տարի (226—286 թթ.), կամ, ավելի ճիշտ, բացառելով առաջին տարին՝ 59 տարի[18], այսինքն պատմական ժամանակը 19 տարով ավելի երկար է, քան Խորենացու մոտ է: Աղբյուրը՝ Ագաթանգեղոսը, Խորենացու համար վստահելի լինելով, նա հիմք է ընդունել նրանից առած տվյալները և Դիոկղետիանոսին, ու սրա հետ համեմատական շարքի ամբողջ միջին հատվածը, մոտեցրել է Սասանյանների առաջին տարվանը 19 տարով: Բայց եթե հաշվի առնենք, որ Խորենացու համակարգում այդ տարեթիվն արդեն իր պատմական տեղից 15*

18 *Համաձայն Խորենացու սկզբունքի, ըստ որի Արտաշիրի գահակալության տարին ոչ թե Արտավանի անկման տարին է, այլ հաջորդ, նոր տարին:*

տարի հետ է տեղադրված (տե՛ս վերը, էջ 53), իսկ Դիոկղետիանոսինը, ընդհակառակը, 2 տարով առաջ է քաշված (տե՛ս վերը, էջ 57), ապա Դիոկղետիանոսն ու սրա հետ համեմատական շարքի միջին մասը փաստորեն հետ են քաշվել ամբողջ 37 (=16+2+19) տարով[19]։ Ստուգելով՝ կհամոզվենք, որ վերևում նշված և մասամբ թվարկված անաքրոնիստիկ անճշտությունները այդ թվի շուրջն են դասավորվում։

[19] Ա. Աննինսկին, վերևում հիշատակված իր աշխատության մեջ (էջ 46), այսպիսի բացատրություն է տալիս մեր վերլուծած սինքրոնիկ անճշտությանը. «...պարսկական Արշակունիների բարձումը Փիլիպպոսի ժամանակ (տե՛ս մեր № 5 աղյուսակը—Գ. Ս.), և այդ կայսրի օրոք Խոսրով անունով Հայոց թագավորի գոյությունը ստացվել է Խորենացու մոտ ոչ թե որևէ աղբյուրի ցուցմունքների հետևանքով, այլ Տրդատի գահակալման տարեթվի մասին իր եզրակացությունը Ագաթանգեղոսի ժամանակագրական տվյալներին հարմարեցնելու պատճառով։ Մովսես Խորենացին գիտեր Ագաթանգեղոսից, որ Տրդատի գահակալման ու նրա նախորդ Խոսրովի մահվան միջև 26 տարի անիշխանություն է եղել։ Հանելով 286-ից 26, նա ստացել է, որ Խոսրովի մահը տեղի է ունեցել 259—260 թվականին։ Այնուհետև, քանի որ նույն Ագաթանգեղոսի վկայությամբ Խոսրովը մահացել է Արտավանի մահվանից 12 տարի անց, ապա Արտավանի մահը և Պարսկաստանում Արշակունի դինաստիայի անկումը ընկել է 247 թվականի, այսինքն Փիլիպպոս կայսրի (244—249) թագավորության ժամանակաշրջանի վրա»։

Այս բացատրությունը, չհաշված մի երկու մանր անճշտություններ (Խոսրովի մահվան և Արտավանի մահվան միջև, ըստ Խորենացու, ընկած է ոչ թե 12, այլ 13 տարի, անիշխանությունը տևել է 27 և ոչ 26 տարի. ի դեպ, այս թիվը, հակառակ հեղինակի պնդման, Ագաթանգեղոսի մոտ չկա, Խորենացին է առաջարկել թիվը, հենվելով Ագաթանգեղոսի շարադրանքի էության վրա. տե՛ս վերևում, էջ 91), մեր կարծիքով միանգամայն արդարացի է և ըստ էության չի տարբերվում մեր տված բացատրությունից։ Աննինսկու սխալը սկսվում է այնտեղ, որ նա, չնշմարելով, որ Խորենացու մոտ անաքրոնիզմները մի ամբողջ շարք են կազմում, զատում է այդ շարքից առանձին դեպքեր, ու փորձում այդ դեպքերից յուրաքանչյուրին տալ առանձին բացատրություն, մինչդեռ դրանք բոլորը միասին մի բացատրություն ունեն։ Նույն ձևով էլ նա չի տեսնում, որ Խորենացու ժամանակագրությունը մի կապակցված ու վերջավորված համակարգ է կազմում, և չտեսնելով այդ, իր՝ պատմական ժամանակագրություն կազմելու փորձը հիմնում է ոչ թե Խորենացու տվյալների ամբողջության վրա, այլ նրա առանձին տվյալների վրա, կամայական կերպով ընդունելով նրանց մի, իրեն հարմար երևացող, մասը, և մերժելով մյուսը (տե՛ս նրա աշխատության 108—125 էջերը)։

## 11.

Խորենացու ժամանակագրական համակարգի բոլոր շարքերը զատ-զատ ուսումնասիրելուց հետո հնարավորություն է, ստեղծվում որոշ հանրագումարի բերելու Անանունի և Խորենացու ժամանակագրությունների առնչությունն արտահայտող փաստերը։

Անանունի եռաշար աղյուսակի և Խորենացու ժամանակագրության համապատասխան հատվածի հայոց թագավորների շարքերը համեմատելիս մենք ջանացինք ցույց տալ, որ դրանք տարբեր արմատներ ունեն ու անմիջականորեն չեն առնչվում մեկը մյուսին։

Երկու հեղինակների հռոմեական շարքերը, թեև իրար նըման են անունների կողմի տեսակետից (բայց ոչ լրիվ, երկուսն էլ ունեն փոխադարձ չկրկնվող անուններ), այսուհանդերձ, էապես տարբերվում են իրարից։ Անանունի մոտ հռոմեական և պարսկական շարքի շաղկապման անաքրոնիզմը շատ ավելի մեծ է, քան Խորենացու մոտ և ծագում է միանգամայն տարբեր պատճառից։ Մինչդեռ Խորենացու մոտ անաքրոնիզմը հիմնականում կապված է հռոմեական շարքի տևողության հետ, որով հանդերձ այդ շարքը իր մեծագույն մասում պահպանում է ներքին սլացիկությունը, Անանունի մոտ անաքրոնիզմը պայմանավորված է Խորենացու օգտագործած նույն ստույգ աղբյուրների սխալ ըմբռնմամբ։ Ինչպես ճիշտ նկատել է Ադոնցը՝ Անանունը ստուգորեն նշելով հռոմեական կայսրերի իշխանության տևողությունները՝ առանձին-առանձին վերցրած, հաշվի չի առել, սակայն, մի բան, որ քաջ հայտնի էր Խորենացուն՝ այն է, որ հիշյալ կայսրերը հաճախ իշխել են զուգահեռաբար՝ կամ որպես հռոմեական Արևելքի ու Արևմուտքի տիրակալներ, կամ որպես օգոստոսներ ու կեսարներ։ Անանունը նրանց պարզապես շարել է մեկը մյուսի հետևից, որով նրա ընդգրկած շարքը՝ Ավրելիանոսից մինչև Հոնորիոս, որն իրականում 130 տարվա տևողություն ունի, շուրջ 100 տարով երկարաձգվել է, մի բան, որը, իհարկե, բացասական հետև-

վանքներ է ունեցել պարսկական շարքի հետ սինքրոնացման գործում։

Հետևությունն այն է, որ Խորենացու և Անանունի հռոմեական շարքերը միմյանցից անկախ են, թեև դուրս են բերված միևնույն աղբյուրներից։

Առաջին հայացքից այլ է թվում վիճակը պարսկական շարքում։ Վերը, համեմատելով Արտաշիրից մինչև Հազկերտ 2-րդ շարքերի Անանունի և Խորենացու տարբերակները, մենք Անանունի շարքը փաստորեն դիտեցինք որպես Խորենացու աղբյուր։ Այժմ սակայն, երբ ծանոթանալով Անանունի եռաշար աղյուսակի մնացած երկու՝ հայկական ու հռոմեական շարքերի առնչությանը, տեսնում ենք, որ այստեղ Խորենացին անկախ է Անանունից, և որ նրանց աղերսը միմիայն երկուսի համար ընդհանուր աղբյուրներից է ծագում, դժվար չէ նույնը ենթադրել նաև պարսկական շարքերի վերաբերյալ, ընդունելով, որ հայկական հողի վրա V դարից սկսած, անկախ Խորենացուց և Անանունից, ավանդական է դարձել Սասանյանների մի ցանկ, որի առանձնահատկությունն է եղել մի քանի արքաների, հատկապես Շապուհ 3-րդի բացակայությունը։ Իզուր չէ, որ ամբողջ միջնադարյան հայ մատենագրությունը հետևում է այդ ավանդական ցուցակին։ Այս երևույթը դժվար կլիներ բացատրել միմիայն Խորենացու ներգործած ազդեցությամբ։ Այդ ավանդական ցանկից էլ հավասար հիմունքներով օգտվել են և՛ Խորենացին, և՛ Անանունը։

Այսպիսի դատողությունը անհամեմատ ավելի դյուրին է, քան եթե փորձեինք, հիմք ընդունելով պարսկական շարքերի մեծ նմանությունը, ապացուցել Խորենացու կախվածությունը Անանունի եռաշար աղյուսակի նաև մյուս երկու շարքերից։ Մեր կարծիքով, ուրեմն, Խորենացին ընդհանրապես ազատ է Անանուն պատմիչի կողմից ստեղծած եռաշար աղյուսակի ազդեցությունից, և եղած նմանությունները, ինչպես ասվեց, գալիս են ընդհանուր աղբյուրներից։

Դառնանք այժմ Անանունի առաջին հայկական, ինչպես նաև նրա պարթևական ցուցակների առնչությանը Խորենացու ժամանակագրության համապատասխան հատվածներին։

*Անանունի 2-րդ գլխի նյութը՝ պարթև արքաների շարքը և հայ թագավորների առաջին ցուցակը առայժմ կասկած չէր հարուցում, թեև չի ծառայել Մովսես Խորենացուն որպես աղբյուր։ Մենք ականատես եղանք այն փաստին, որ Անանունի մոտ հանդիպող պարթևական ցուցակը անշուշտ ընկած է Խորենացու պարթևական ցուցակի հիմքում, թեև բավականին փոփոխված է նրա կողմից։ Առավել ևս ուժեղ մշակման է ենթարկվել Խորենացու մոտ հայկական առաջին ցուցակը, բայց այդ փոփոխությունների շղարշը ևս չի խանգարում տեսնելու Անանունի մոտ պահպանված նախատիպը։*

*Բայց կա հայկական այս ցուցակի հետ կապված մի հանգամանք, որը նոր ուղղություն է տալիս Անանունի և Խորենացու ժամանակագրական նյութի նաև այս հատվածների առնչության հարցի լուծմանը։ Ինչպես գրել է դեռ Ն. Ադոնցը, Պրոկոպիոսի* «De aedificiis» *աշխատության վերը մեջբերված քաղվածքում (տե՛ս էջ 37) հեղինակը վկայակոչելով* ἡ τῶν Ἀρμενίων ἱστορία *(«Հայոց պատմությունը»), առաջին հայ Արշակունուն համարում է պարթևների թագավորի* եղբայր *ու անվանում նրան* Արշակ: *Անանունի մոտ ևս առաջին հայ Արշակունին անվանվում է* Արշակ, *բայց նա հանդես է գալիս որպես պարթևների թագավոր Արշակի* որդին, *և ոչ եղբայրը։ Խորենացու մոտ, ի տարբերություն Անանունի, առաջին հայ Արշակունին պարթև Արշակի* եղբայրն *է, ինչպես և Պրոկոպիոսի մոտ, բայց կրում է* Վաղարշակ *անունը։*

*Ակնհայտ է, որ Պրոկոպիոսի ցուցումը անհնար է բխեցնել Անանունի կամ Խորենացու տվյալներից, ինչպես և այս երկուսը՝ իրարից։ Բայց Պրոկոպիոսի վերսիան, որ իր վերսիան չէ, այլ նրա վկայակոչած «Հայոց պատմության», իր մեջ պարունակում է սաղմնային վիճակում երկու հայ հեղինակների վերսիաները, որոնք առաջինի մասնակի, բայց տարբեր բնույթի ձևափոխություններն են հանդիսանում։ Կատարված փոփոխությունների դրդապատճառը թվում է, թե կապված է այն հանգամանքի հետ, որ թե՛ Անանունը, թե՛ Խորենացին ծանոթ*

*չեն եղել պարթևական «Արշակ» անուն-տիտղոսի[20] բնույթին և դա համարելով սոսկ անձնական անուն, չեն հաշտվել այն մտքի հետ, թե երկու եղբայրներ կարող են նույն անունը կրած լինել: Այս խնդիրը նրանցից յուրաքանչյուրը իր ձևով է լուծել՝ մեկը պահպանելով ազգակցության աստիճանը, բայց փոխելով անունը, մյուսը՝ թողնելով անունը, բայց փոփոխելով ազգակցական կապը:*

*Այս տվյալները, թվում է, թույլ են տալիս օրինական համարել այսպիսի մի տեսակետ, թե Խորենացու և Անանունի ժամանակագրության այս մասերը ևս իրարից անկախ են, և նրանց նմանությունը բխում է ընդհանուր աղբյուրի՝ «Հայոց պատմության» օգտագործումից: Ի դեպ, Ն. Ադոնցը, ընդունելով հանդերձ, որ Խորենացու ժամանակագրությունը ընդհանրապես վերցված է Անանունից, միևնույն ժամանակ հավանական է համարում, որ Խորենացին ծանոթ էր եղել նաև սկզբնաղբյուրի՝ «Հայոց պատմության» այն տարբերակին, որը նա համարում է Փավստոս Բուզանդի պատմության մեզ չհասած մասը: Անանունը, նրա կարծիքով, օգտվել է մյուս, Մար-Աբաս Մծուրնացու գրչին պատկանող տարբերակից:*

*Այսպիսով, հանգում ենք եզրակացության, որ Խորենացին և Անանունը հանդես են գալիս որպես երկու հեղինակներ, որոնք իրարից անկախ հղացել ու իրականացրել են միևնույն մտագրությունը՝ ստեղծել սինքրոնիկ ժամանակագրական համակարգ: Լինելով նույն իրականության, թեև ոչ նույն ժամանակի գործիչներ, նրանք անխուսափելիորեն գործ պետք է ունենային մեծ մասամբ նույն նյութի, նույն աղբյուրների հետ, սակայն նրանցից յուրաքանչյուրը յուրովի է օգտագործել այդ աղբյուրները:*

20 *«Արշակ» անունը, ինչպես հայտնի է, եղել է ոչ թե հատուկ անուն՝ որոշ պարթև թագավորների, այլ յուրատեսակ անուն-տիտղոս, որը կրել են բոլոր պարթև թագավորներն իրենց անձնական անուններին կից (ինչպես, հռոմեական կայսրերը կրում էին «կեսար» անուն-տիտղոսը): Շատ դեպքերում, օրինակ, դրամների վրա, նրանք հանդես են գալիս միմիայն այդ անուն-տիտղոսով: Բացառված չէ, որ առաջին հայ Արշակունին (Արշակունիները) ևս կրած լինի այդ անուն-տիտղոսը:*

*Այս եզրակացությունը նպաստում է Խորենացու ապրած ժամանակը թվագրելիս՝ Անանունի ժամանակը հաշվի առնելու անհրաժեշտությունից ազատագրմանը, անհրաժեշտություն, որ երկար ժամանակ կախված էր խորենացիագիտության գլխին։ Լինի Անանունը VII դարի պատմիչ Սեբեոս, որը արդեն անհավանական է, թե XI դարի հեղինակ Հովհան Տարոնացի կամ մի այլ դարի բոլորովին ուրիշ մատենագիր — այդ հանգամանքը, որքանով որ խոսքը ժամանակագրական համակարգերի աղերսների մասին է, չի կարող դրդապատճառ հանդիսանալ Խորենացուն իր դարից տեղահանելուն։*

## IV. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

### 1.

*Մենք համոզվեցինք, որ Մովսես Խորենացին իր ժամանակագրական համակարգը կառուցելու համար օգտագործել է բազմաթիվ, բազմատեսակ ու տարբեր որակի աղբյուրներ, որոնք մատակարարում էին նրան իշխողների՝ թվերով սխեմատիկորեն օժտված շարքեր, աղբյուրներ, որոնք նրան տալիս էին որևէ մեկ կարևոր ժամանակագրական տեղեկություն, վերջապես աղբյուրներ, որոնք թվեր չպարունակելով հանդերձ ի վիճակի էին նպաստել համակարգի բաց մնացած տեղերի մոտավոր լրացմանը։*

*Ունենալով ձեռքի տակ ոչ միայն ստույգ կամ մոտավոր ստուգության նյութեր, այլև բավականաչափ ամորֆ ու անստույգ, իրականությունից հեռու տվյալներ, Խորենացին, այսուհանդերձ, կարողացել է ի մի բերել այդ բոլորը այնպես, որ գերակշռող ու կողմնորոշող դերը ստացել են ստույգ նյութերը, որի հետևանքով ի վերջո ստացվել է իր սպեցիֆիկությամբ ու վերջավորվածությամբ կատարյալ, իսկ իր պատմականությամբ հայոց մատենագրության մեջ պատմության ժամանակագրության ստեղծման նախորդ փորձերից շատ ավելի ճշմարտացի մի համակարգ։*

*Ի՞նչ ձևով, ի՞նչ մեթոդով է օգտագործել Խորենացին իր հավաքած տվյալները, որ հասել է այդ բանին։ Եթե նրա «Հայոց պատմության» ոչ մի այլ նյութ, լինի դա որևէ բնագավառ, թե տեքստի որևէ հատված, այնքան շնորհակալ տվյալներ չի*

մատուցում նրա ձևերի ու մեթոդների ուսումնասիրության համար, որքան նրա ժամանակագրական համակարգի բնագավառը, որովհետև այն հետազոտելիս անընդհատ գործ ենք ունենում թվերի հետ, որով և հնարավոր է դառնում եզրակացություններում հասնել թվաբանական խնդիրների պատասխանների աստիճանի որոշակիության։

Միշտ գոյություն է ունեցել և այժմ էլ գոյություն ունի նյութի շարադրման երկու ձև։ Մի ձևով շարադրողը խիստ կողքի է դասում ձեռքի տակ ունեցած նյութը, առանց հոգ տալու նրա համեմատման, մշակման, համաձայնեցման, սխալների վերածման մասին։ Մյուս ձևով շարադրողի հիմնական նպատակն է՝ եղած նյութի հիման վրա ստեղծել կոնցեպցիա, համակարգ։ Իհարկե, դժվար է հանդիպել երկու այս ձևերից մեկի կամ մյուսի մաքուր ներկայացուցիչներին. սովորաբար այդ ձևերը տարբեր հարաբերությամբ առկա են միևնույն հեղինակի մոտ, և նրանցից մեկն ու մեկի գերակշռությունն է, որ բնութագրում է հեղինակին։ Ինչ վերաբերում է Խորենացուն, ապա նրա մոտ շարադրման ակտիվ բնույթը հնարավորին չափ վառ է դրսևորված։

Նյութի մատուցման ձևերի այս ընդհանուր ուղղության վրա կանգնած լինելով, Խորենացին ունի իր սեփական ճանապարհը, իր «ձեռագիրը», որով անսխալ կարելի է ճանաչել նրան։ Եթե կան հեղինակներ, որոնք համակարգ, կոնցեպցիա ստեղծելու համար ընտրում են համաձայնեցման ճամփան, հարմարեցնելով, մոտեցնելով միմյանց իրերամերժ փաստերն ու տեղեկությունները, ապա Խորենացին դրանցից չէ։ Նա իր նյութի ամբողջ բազմազանության մեջ ընտրում է այնպիսի ծանրակշիռ փաստերի մի շարք, որոնք նրան միանգամայն հավաստի են թվում, և դրանք անաղարտ պահելով՝ դարձնում իր շարադրանքի առանցք, նշանաձող, կռվան։ Մնացած նյութը նա ստորադասում, ենթարկում է այդ կռվաններին, տալով նրան համապատասխան մշակում։

Հետազոտության ընթացքում Խորենացու ժամանակագրական աղյուսակի այնպիսի փաստերից, որոնք կռվան են ծա-

ռայել Խորենացու համար, մենք կարողացանք լուծել 12-ը։ Իհարկե, նա ունեցել է նաև ուրիշները, որոնք ես անհրաժեշտ է բացահայտել։ Ահա մեր առանձնացրած փաստերը՝ ժամանակագրական կարգով։ (Մանրամասնությունները տե՛ս մեր տեքստի վկայակոչված էջերում)։

1. Սելևկոս 1-ինի գահակալման տարեթիվը։

2. Պարթևների ապստամբության և Արշակ Քաջի գահակալման տարեթիվը (էջ 53)։

3. Տիգրանի գահակալման բացարձակ տարեթիվը՝ սելևկյան տոմարով (էջ 63 և հետ.)։

4. Քրիստոսի ծննդյան տարեթիվը (էջ 84 և այլ)։

5. Խորենացու այն համոզմունքը, թե Արտաշիր 1-ինի գահակալման և Տրդատի գահակալման միջև ընկած է 40 տարի (էջ 91 և 123)։

6. Տրդատի գահակալման տարեթվի համընկնումը Դիոկղետիանոս կայսրի 3-րդ տարվա հետ (նույն էջերը)։

7. Շապուհ 2-րդի գահակալման բացարձակ տարեթիվը՝ սելևկյան տոմարով (էջ 48 և հետ.)։

8. Տեղեկություն պարթև և հայ Արշակունիների բարձման տարեթվերի միջև ընկած ժամանակահատվածի տևողության մասին (էջ 44 հետ.)։

9. Շապուհ 2-րդի (որին Խորենացին տվյալ դեպքում գրել է Շապուհ 3-րդի տեղ) մահվան տարեթիվը (էջ 108 և հետ., 120 և հետ.)։

10. Վերջին հայ Արշակունիների (Պապից՝ Արտաշես) իշխանության տևողությունը (էջ 115 և հետ.)։

11. Վռամ 2-րդի (5-րդի) 9-րդ տարվա և Թեոդոս 2-րդի 20-րդ տարվա սինքրոնացումը (էջ 61 և հետ.)։

12. Սահակ Պարթևի մահվան տարեթիվը։

Այստեղ ծագում է կարևորագույն և, կասենք, ճակատագրական խնդիրը։ Ի՞նչ չափանիշներ է ունեցել Խորենացին, ինչո՞վ է առաջնորդվել նա իր ունեցած նյութի զանգվածից կալաններ, հենակետեր ընտրելիս։ Այս հարցին պատասխանելու համար պետք է վերլուծել գեթ թվարկված հենակետերի

*կազմը։ Մեր աչքում դրանք իսկույն բաժանվում են երկու խմբի՝ նրանք, որոնց աղբյուրը մեզ հայտնի է և մյուսները, որոնց աղբյուրը մենք չգիտենք։ Առաջին խմբին են պատկանում թվարկվածներից 1-ինը, 2-րդը, 4-րդը, 5-րդը, 7-րդը, 9-րդը, 12-րդը։ Սրանցից սկզբի երեքը՝ Սելևկոս 1-ինի և Արշակ 1-ինի գահակալման ու Քրիստոսի ծննդյան տարեթվերը առնված են Եվսեբիոսից, 5-րդը՝ Արտաշիրի ու Տրդատի գահակալման տարեթվերի միջև եղած տևողությունը՝ Ագաթանգեղոսից, 7-րդը՝ Շապուհ 2-րդի մասին տեղեկությունները՝ ասորական ժամանակագրություններից, 9-րդը՝ Շապուհ 3-րդի մասին տեղեկությունը՝ Ղազար Փարպեցուց, 12-րդը՝ Սահակ Պարթևի մահվան տարեթվի մասին՝ Կորյունից, Թեոդոս և Փարպեցուց։ Հետաքրքիր է նշել, որ, բացառյալ Փարպեցուն, որի անունը նա ընդհանրապես չի հիշատակում, մյուս թվարկված հեղինակներին և աղբյուրներին Խորենացին տալիս է բարձր գնահատական և անվերապահորեն հավատ է ընծայում նրանց։ Որ նա, անունը չհիշատակելով հանդերձ, նույն վերաբերմունքն ուներ նաև Փարպեցու նկատմամբ, այդ երևում է վերևում բերված փաստերից։*

*Տեսնում ենք, ուրեմն, որ Խորենացու համար որպես կռվան ծառայած յոթ փաստերը օբյեկտիվ բնույթ են կրում, այսինքն վերցված են արտաքին աղբյուրներից և ոչ թե ստեղծագործած, և այն էլ ընտրված են իրեն առաջնակարգ ու վստահելի թվացող աղբյուրներից։ Կարևոր է ընդգծել նաև այն հանգամանքը, որ թվարկված յոթ փաստերից հինգը պատմականորեն ստույգ են և իրենց արժանավոր տեղն են գտել Խորենացու համակարգում, իսկ մնացած երկուսից մեկը (5-րդը)՝ Ագաթանգեղոսի հաղորդածը՝ իսկապես սխալ է, մինչդեռ մյուսը (9-րդը)՝ Փարպեցու հաղորդածը՝ նորից պատմականորեն ստույգ տեղեկություն է, բայց Խորենացու կողմից թյուր է ըմբռնվել նրա մի այլ, զուգահեռ աղբյուրի ապակողմնորոշող սխալի հետևանքով։*

*Դառնանք մնացած հինգ կռվաններին (մեր համարակալությամբ 3-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ), որոնց աղբյուրները*

մեզ հայտնի չեն։ Ընդհանուր դրույթ է դարձել խորենացիագետների նշանակալի մասի համար այն պնդումը, թե որտեղ որ Խորենացու հաղորդածը չի հաստատվում կամ առնչվում նրա որևէ աղբյուրի տվյալի հետ, այնտեղ Խորենացին, որպես աղբյուր, վստահելի չէ։ Ներկա աշխատության մեջ մենք կիրառել ենք նման դեպքերի հետազոտման մի մեթոդ, որը մեզ միակ հնարավորն է թվում անմիջական աղբյուրների անհայտության պայմաններում։ Այդ մեթոդն է Խորենացու տվյալների համեմատությունը պատմական իրականության հետ, որչափով այդ իրականությունը հայտնի է Խորենացու հետ անառնչելի և կամ անառնչելի թվացող ստույգ աղբյուրներից։ Այդ մեթոդի գրական կողմն այն է, որ եթե Խորենացու տված տեղեկությունը համընկնում է իրական փաստի հետ, այդ նշանակում է, որ այն անպայման վերցված է արտաքին, և այն էլ ստույգ աղբյուրից։

Խորենացու նշված հինգ փաստերի համեմատությունը պատմական իրականության հետ (որ մենք զատ-զատ կատարել ենք իր տեղում) խորենացիագետների նշված դրույթի ֆոնի վրա ուժեղ տպավորություն է թողնում։ Դրանցից երեքը՝ Տիգրանի գահակալման տարեթիվը[1], պարթև և հայ Արշակունիների բարձման միջև տևողության մասին տեղեկությունը, և Վռամ 2-րդի (5-րդի) ու Թեոդոս 2-րդի սինքրոնացումը, միանգամայն համապատասխան են իրականությանը, իսկ երկուսն էլ՝ Տրդատի գահակալման համընկնումը Դիոկղետիանոսի 3-րդ տարվա հետ և հայ Արշակունիների շարքի Պապից՝ Արտաշես եզրափակիչ հատվածի իշխողների տևողությունները՝ դեռ կարոտ են ստուգման։

Ինչի՞ մասին է վկայում այս հանգամանքը։ Համենայն դեպս այն մասին, որ այս երեք տեղեկությունները ևս, նախորդ յոթի նման, Խորենացին վերցրել է արտաքին աղբյուրներից. գալով այն փաստերին, որոնք կարոտ են ստուգման, պետք է հիշենք, որ մի դեպքում Խորենացին ինքն է հայտնում, թե

[1] Հնարավոր է, որ սրա աղբյուրն էլ արդեն շոշափված է։ Տե՛ս վերևում. էջ 64, ծան. 25։

*քննել ու գտել է անհրաժեշտ տարեթիվը*[2]*, իսկ մյուս դեպքում ունենք զորեղ հիմքեր մտածելու համար, որ փաստերը Խորենացին վերցրել է ինչ-որ արտաքին աղբյուրից։*

*Խորենացու ընտրած հենակետերի կազմի վերլուծությունը հանրագումարի բերելով, կարելի է պնդել, որ մեր հեղինակը դրանք վերցրել է միմիայն արտաքին աղբյուրներից, և երբեք*

---

2 «...մանրախուզիւ քննեալ գտաք *զթագաւորելն Տրդատայ յերրորդ ամի Դիոկղետիանոսի» արտահայտությունը Պ. Անանյանը այնպես է հասկանում, թե Տրդատի գահակալման տարեթվի գյուտը Խորենացու ներքին հաշիվների հետևանք է («Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության թվականը և պարագաները», «Բազմավէպ», 1956, № 1—2, էջ 11)։ Իհարկե, այսպիսի մեկնաբանությունը բացառված չէ, նկատի առնելով «քննեալ» բառի առկայությունը։ Սակայն այդ բառը Խորենացու մոտ ունի ոչ միայն ներքին հետազոտման, վերլուծության իմաստը, այլ նաև արտաքին հետախուզության, արտաքին աղբյուրներին դիմելու իմաստը, օրինակ՝ «Այլ հաւաստի մեզ թուեցաւ որ ի Մար Աբասայ Կատինայ է քննութիւն քաղդեական Մատենից բան գտանելի» (I, ԺԸ) կամ «Եւ քննեալ թէ ով ոք նա իցէ՝ եղև վերահասու թէ նա է Արտաշատ յազգէն Մանդակունեաց» (II, ՀԸ). այստեղ «քննեալ» բառը համանիշ է «խուզեալ» բառին, ասենք, այսպիսի կոնտեքստում՝ «Եւ խուզեալ նորա զամենայն մատեանս՝ գտանէ մատեան մի հելլենացի գրով» (I, Բ.). Մեզ թվում է, որ Տրդատի գահակալության մասին արտահայտությունը պետք է ընկալվի նույն ձևով, ինչպես ընկալվում են հետևյալ խոսքերը. «Զայս ասացեալ պատմագրացն յանաց, ոչ միոյ կամ երկուց, այլ բազմաց, ընդ որ տարակուսեալ մեք՝* բազում խույզ խնդրոյ արարաք... Եւ գտանեմք *զժամանակս Կրիսոսի երկերիւր ամաւ առաջ քան զնեքտանեբայն...» և այլն (II, ԺԴ), իսկ այստեղ Խորենացու՝ արտաքին աղբյուրներին դիմելն անկասկած է։ Այս կապակցությամբ ծագում է մի այլ խնդիր ևս։ «Յեօթն և ի տասներորդի ամի թագաւորութեանն Տրդատայ,—ասում է Խորենացին,— գայր նստել յաթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի գհայրն մեր Գրիգորիոս» (II, ՂԱ)։ Պետք է ասել, որ Տրդատի գահակալության մասին նոր մեջբերված հատվածը և Գրիգոր Լուսավորչի մասին այս տեղեկությունը միակն են Խորենացու ժամանակագրական ցուցումների ամբողջ բազմության մեջ, որ զարդարված են «գտաք» և այլ բառերով, մնացած բոլորը տրված են առանց որևէ մեկնությունների։ Հավանորեն այս իզուր չէ, և նշանակում է, որ հեղինակը այդ ցուցումներին հատուկ կարևորություն է տալիս։ Սակայն այս «գտաք»-ի կապակցությամբ ևս կարող են նույն տարակուսանքները ծագել, ասենք դրանք փարատելու համար բերում ենք զուգահեռ օրինակներից մեկը, որոնք կարելի է շատ բազմացնել՝ «Երթեալ Աբգարու յարևելս՝ գտանէ թա-*

*հեղինակը չի դարձրել իր սեփական կարծիքը կամ ենթադրությունը. Խորենացու ընտրած կոչումները միշտ ունեն օբյեկտիվ հիմք։ Իսկ այն հանգամանքը, որ դրանք մեծ մասամբ ստույգ ու պատմական են, անշուշտ, վկայում է հեղինակի ունեցած պատմագետի սուր հոտառության մասին։*

*Մնում է ստորադասված նյութի զանգվածը, որտեղ վիճակը այլ է, քանի որ հենց այդ նյութն է, որ դարձել է մշակման բուն առարկան։ Պարզ է, որ այդ նյութի համաձայնեցումը հիմնական նյութին տեղի է ունեցել որոշ զոհաբերությունների գնով, որոնք մեր հետազոտության ընթացքում մանրամասն բնութագրվեցին։ Պետք է ընդգծել, սակայն, այն հմտությունը, որով Խորենացին տարել է իր մշակումը, փոփոխությունները մտցնելով միայն ամենաանհրաժեշտ դեպքում, և կատարելով այդ փոփոխությունները նյութի սահմանափակ, հնարավորին չափ փոքր հատվածներում ու այդպիսով անաղարտ պահելով իրեն հասած նյութի մեծագույն մասը։*

*Ահա այդ նյութի միջից հաստատուն կոչումներ ընտրելու և նրանցով կողմնորոշվելու մեթոդն է, որ Խորենացու՝ պատմականության նուրբ զգացումի բաղդատությամբ հանգեցրել է պատմական իրականությանը մոտ ժամանակագրական մի համակարգի կառուցմանը, մեծ մասամբ խուսափելով այն շեղումներից ու սխալներից, որոնց համար լայն հնարավորություններ էին ստեղծում ձեռքի տակ գտնված նյութի մեջ եղած բազմաթիվ սխալ ու ոչ պատմական տվյալները։*

## 2.

*Աշխատության սկզբում մենք նշեցինք, որ Խորենացու ժամանակագրական համակարգի հետազոտմանը երեք հնա-*

---

*դուրսեկալ Պարսից զԱրտաշէս...» (II, ՎԸ)։ Բացի այդ, վերջերս Պ. Անանյանին հաջողվել է համոզիչ փաստերով ցույց տալ, որ Խորենացու ցուցումը Գրիգոր Լուսավորչի՝ Տրդատի 17-րդ տարում ձեռնադրվելու մասին համապատասխանում է պատմական իրականությանը (հմտ. աշխ., «Բազմավէպ», 1960, № 3—4, էջ 53 և հետ.)։ Իսկ այս արդեն ինքնին նշանակում է, որ Խորենացին այդ տեղեկությունը վերցրել է արտաքին և հավաստի աղբյուրից։*

*բավոր մոտեցում գոյություն ունի, այն է՝ հարազատորեն վերականգնել «Հայոց պատմության» ժամանակագրական հենքը, վերլուծել ու բացատրել այդ հենքի շեղումները ընդունված գիտական ժամանակագրություններից, օգտագործել նրա տվյալները հայոց պատմության այս կամ այն ժամանակագրական հարցը լուծելիս։ Մեր ուսումնասիրության նպատակն էր՝ դիտել «Հայոց պատմության» ժամանակագրությունը առաջին երկու ասպեկտներով և, այդպիսով, նախապայման ստեղծել նրա՝ որպես պատմական աղբյուրի ավելի հաստատուն օգտագործման համար։ Քննությունից պարզվեց, որ Խորենացու ժամանակագրության շեղումները ընդունված ժամանակագրություններից պատահական բնույթ չեն կրում, և ինչպես ինքը ժամանակագրությունը մի կուռ համակարգ է ներկայացնում իրենից, այնպես էլ նրա շեղումները կազմում են մի օրինաչափ սիստեմ, որը պայմանավորված է Խորենացու աղբյուրների բնույթով և նրանց տվյալները մշակելու որոշակի մեթոդներով։*

*Երբ մենք մի անգամ ըմբռնեցինք Խորենացու ժամանակագրական համակարգի կառուցվածքն ու առանձնահատկությունները, այլևս հեշտանում է նրա տվյալների օգտագործումը և կիրառումը ժամանակագրական խնդիրների լուծման համար։ Հնարավորություն է ստեղծվում հիմնավորելու, թե ինչո՞ւ տվյալ տեղեկությունը ընդունելի, իսկ մյուսը՝ անընդունելի է, կամ ինչո՞ւ այսինչ տեղեկությունը այսպիսի ճշտման կարիք ունի։*

*Մի քանի խոսք մի երևույթի մասին, որը մենք նպատակահարմար ենք համարում անվանել «ժամանակագրական համակարգի արտադրանք»։ Ժամանակագրական համակարգը, Խորենացու կողմից որոշ աղբյուրների հիման վրա ստեղծվելուց հետո, իր հերթին դարձել է նրա պատմության յուրատեսակ աղբյուր։ Իշխողների շարքերի մեջ կատարված այս կամ այն տեղաշարժերի հետևանքով շարքերի սինքրոնացումը որոշ տեղերում խախտվել է և ստացված անախրոնիզմները «օրինականացվել» են Խորենացու կողմից, ներկայանալով նրա «Պատմության» շարադրանքի մեջ որպես պատմական*

փաստեր։ Որոշ դեպքերում իրար չառնչվող, պատմական տարբեր էպոխաներում ապրած ու գործած անձեր հանդես են գալիս որպես ժամանակակիցներ ու գործակիցներ, իսկ իրական ժամանակակիցները և գործակիցները՝ բաժանվում միմյանցից, ընկնում են տարբեր ժամանակաշրջաններ։ Այդ մասին արդեն խոսվել է, և նոր օրինակներ մենք չենք բերի, բավարարվելով վերը (էջ 59 և հետ.) արդեն ներկայացվածներով։ Այստեղ նորից հիշատակեցինք այդ հանգամանքի մասին, որպեսզի նշենք, որ Խորենացու ժամանակագրական համակարգի վերլուծությունը, պարզելով անաքրոնիզմների առաջացման ընդհանուր ու մասնավոր պատճառները, հնարավորություն է տալիս զատելու «ժամանակագրական համակարգի արտադրանքը» «Հայոց պատմության» պարունակած հարուստ հավաստի նյութից։

Վերջապես մի խնդիր, որի վրա հարկ ենք համարում ավելի հանգամանորեն կանգ առնել։ Խորենացու ժամանակագրական համակարգի ուսումնասիրությունը վեր է հանում հեղինակի որոշակի մեթոդիկան, որոշակի մոտեցումը իր տրամադրության տակ ունեցած նյութի մշակման գործին։ Հարց է ծագում, արդյոք այդ մեթոդիկան, այդ մոտեցումը վերաբերու՞մ է Խորենացու կողմից միմիայն ժամանակագրական հարցերի շարադրմանը, ո՞ւնի կիրառման նեղ շրջանակ, թե՞ նրա կիրառման շրջանակն ավելի լայն է և ընդգրկում է ժամանակագրականից բացի նաև այլ նյութեր։

Քննելով ժամանակագրական հարցերի հետ չկապված երկու օրինակներ[3], մենք կփորձենք տալ այդ հարցի մասնավոր պատասխանը։ Վերջնական և սպառիչ պատասխանը հնարավոր է Խորենացու ամբողջ երկի կամ նրա մեծ մասի՝ մեզ հետաքրքրող ուղղությամբ ուսումնասիրումից հետո։

Առաջին օրինակ։ Տիգրան 2-րդի ժամանակ տեղի ունեցած հրեաների երկու գերեվարությունների մասին պատմելիս,

3 Երկու այդ օրինակները ավելի մանրամասն քննության են առնված մեր հատուկ հոդվածում (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 3, 1956, էջ 31 և հետ.)։

*Մովսես Խորենացին նշում է, որ դրանցից առաջինը կատարել է թագավորն ինքը (II, ԺԴ, ԺՁ, III, ԼԵ), իսկ մյուսը, թագավորի հրամանով, նրա զորավարներից մեկը (II, ԺԹ, III, ԼԵ)։ Երկրորդ գերեվարության նկարագրությունը Խորենացին ընդօրինակել է Հովսեփոս Փլավիոսից*[4]*, ուր սակայն նա մտցրել է յուրչ, առաջին հայացքից կամայական թվացող փոփոխություններ, որով և այս երկրորդ գերեվարության հանգամանքների նկարագրությունը պատմական հավաստիության տեսակետից Խորենացու «Պատմության» առավել անհուսալի հատվածներից մեկն է համարվել*[5]*։ Պատկերն այսպիսին է։*

*Ըստ Խորենացու, հրեաների երկրորդ գերեվարությունը կատարել է հայ նախարար Բարզափրան Ռշտունին, որին Տիգրանը նշանակել էր հայ-պարսկական զորքերի հրամանատար և ուղարկել Ասորիք ու Պաղեստին։ Ասորիքի թագավորազն Պակորոսը դրդում է սրան խառնվել հրեաների երկպառակություններին և օգնել իրեն՝ նրանց քահանայապետ ու թագավոր Հյուրկանոսին գահընկեց անելու և նրա տեղը նստեցնելու Պակորոսի խնամի Անտիգոնոսին։ Դրա փոխարեն Պակորոսը խոստանում է Բարզափրանին 500 գեղեցիկ կին և 1000 քանքար ոսկի։ Բարզափրանը համաձայնվում է և Երուսաղեմ է ուղարկում հայոց թագավորի տակառապետ Գնել Գնունուն, որին հաջողվում է իր 500 ձիավորների հետ միասին մտնել Երուսաղեմ և համոզել Հյուրկանոսին, որ նա՝ հրեական զորավար Փասայելոսի հետ գնա Բարզափրանի մոտ բանակցություններ վարելու։ Փասայելոսի եղբայրը՝ Հերովդեսը, մնում է քաղաքում։ Բարզափրանը իր մոտ ժամանած Հյուրկանոսին և Փասայելոսին սկզբում սիրալիր է ընդունում, իսկ հետո, կալանավորում է նրանց ու հանձնում քահանայապետության տենչող Անտիգոնոսին։ Վերջինս կրծում է Հյուրկանոսի ականջները, որպեսզի սա, խեղանդամ լինելով, այլևս չկարողանա քա-*

---

4 *Jos. Flav.*, Bell. Jud.. I, 13, 1—11.

5 *Гр. Халатянц*, Армянские Аршакиды в „Истории Армении" Моисея Хоренского, I, М., 1903, *էջ 65—66։*

հանայապետ մնալ (քահանայապետները ըստ կանոնի պետք է ողջանդամ լինեին)։ Փասայելոսը ինքնասպան է լինում գլուխը քարին զարնելով։

Մինչ այդ, տակառապետը Երուսաղեմում ջանում է իր ձեռքը գցել Հերովդեսին, բայց սա փախչում է եդոմացիների մոտ։ Հայկական զորքերը մտնելով Երուսաղեմ, հափշտակում են Հյուրկանոսի ամբողջ ունեցվածքը՝ 300 քանքար արժողությամբ, բայց ուրիշ ոչ մի բանի ձեռք չեն տալիս։ Անտիգոնոսը դառնում է քահանայապետ։ Հայկական զորքերը գերելով Հյուրկանոսին ու Մարիսա քաղաքի բնակչությանը, վերադառնում են Հայաստան։ Տիգրանը հրամայում է Բարզափրանին՝ գերված հրեաներին բնակեցնել Շամիրամի քաղաքում (Վանում)։

Խորենացու այս նկարագրությունը գրեթե բառացի ընդօրինակված լինելով Փլաբիոսից, և գրեթե բոլոր մանրամասներում հետևելով նրան, միաժամանակ մի շարք կարևորագույն կետերում շեղվում է սկզբնաղբյուրից։ Նախ և առաջ ըստ Հովսեփոսի, դեպքերը տեղի են ունեցել մ. թ. ա. 40 թվականին, երբ Տիգրան 2-րդը արդեն չկար, իսկ ըստ Խորենացու՝ Տիգրան 2-րդի օրոք (մահացել է մ. թ. ա. 56 թվականին)։ Փլաբիոսի մոտ գործում են պարթևական զորքերը, Խորենացու մոտ՝ հայ-պարսկական։ Պարթևական սատրապ Բարզափարնային փոխարինել է հայկական նախարար Բարզափրան Ռշտունին։ Փլաբիոսի՝ պարթևական Պակորոս (Բակուր) արքայազնը Խորենացու մոտ չի հիշատակվում. նրա փոխարեն Պակորոս է անվանված Ասորիքի արքայազնը, որը Հովսեփոսի մոտ ներկայանում է որպես Լիսանիաս, Լիբանանի մոտերքում գտնվող Քաղկիսի թագավոր։ Պարթևական տակառապետ Պակորոսը (Բակուր) վերածվել է հայկական տակառապետ Գնել Գնունու։ Պարթևական զորքերը, ներս խուժելով Երուսաղեմ, ըստ Հովսեփոսի, ամեն ինչ թալանում են, բացի Հյուրկանոսի ունեցվածքից, իսկ ըստ Խորենացու՝ հայկական զորքերը միմիայն Հյուրկանոսի ունեցվածքն են հափշտակում։ Ըստ Հովսեփոսի՝ Հյուրկանոսին գերի են տանում պարթևները և բնա-

*կեցնում Բաբելոնում, ըստ Խորենացու՝ հայերը բնակեցնում են նրան Վան քաղաքում, Մարխա քաղաքի գերի վերցրած բնակչության հետ միասին։ Ի դեպ, վերջինների գերության մասին Հովսեփոսը ոչինչ չի պատմում, թեև հիշատակում է քաղաքը։ (Պետք է ասել, որ Հովսեփոսի այս պատմածում հայերն ու Հայաստանը ընդհանրապես չեն հիշատակվում)։ Մնացածը այս երկու պատմածներում ընդհանուր է։ Համընկնում են, մանավանդ, թվական տվյալները և տեղանունները։*

*Մովսես Խորենացու թույլ տված շեղումների մի մասը կարող էր բացատրվել թերևս, իր աղբյուրի անգիր, հիշողությամբ օգտագործումով։ Սակայն նման մի բացատրություն այնպիսի շեղումների համար, ինչպիսիք են՝ պարթևների զորքի փոխարինումը հայ-պարսկական զորքով (այդ թվում՝ պարթև սատրապի փոխարինումը հայ նախարարով) և Հյուրկանոսին Հայաստան բերելու մասին տեղեկությունը, իհարկե, չի կարող բավարար համարվել։*

*Ի՞նչ հիմք, կամ վերևում ընդունած հորջորջմամբ՝ ի՞նչ կռվան է ունեցել Խորենացին այդ փոփոխությունները կատարելիս, և ունեցե՞լ է արդյոք։ Դառնում ենք Փավստոս Բուզանդին, որը պատմելով հայկական քաղաքների բնակչության (նույն թվում՝ հրեաների) IV դարում կատարված բռնի գաղթի մասին դեպի Պարսկաստան, գրում է. «Զայս ամենայն բազմութիւն հրէից, զոր գերեցին տարան յերկրէն Հայոց, ածեալ էր յերկրէն Պաղեստինացւոց մեծի թագաւորին Հայոց Տիգրանայ ի ժամանակին՝ յորժամ գերեաց նա և ած ի Հայս զքահանայապետն հրէից զՀիրկանոս զառաջին ժամանակաւ։ Եւ էած մեծ արքայն Տիգրան զամենայն զհրէութիւն զայն բնակեցոյց ի քաղաքսն Հայոց յիւրում դարուն ի ժամանակին» (IV, 55)։*

*Ինչի՞ մասին է խոսում Փավստոսի այս վկայությունը։ Անշուշտ այն մասին, որ, իր ժամանակ, V դարում, Հայաստանի հողի վրա գոյություն է ունեցել Հյուրկանոսի գերեվարման մասին տեղական ավանդություն, կապված Տիգրան թագավորի անվան հետ։ Խորենացու կռվանը անշուշտ այդ վերսիան է,*

որը նա առել է, մի գուցե, հենց Փալատոսից: Ի տարբերություն վերջինից, Խորենացին ձեռքի տակ ունեցել է նաև Փլաբիոսի տեքստը, այսինքն ստիպված է եղել ընտրություն կատարելու երկու իրերամերժ վերսիաների միջև:

Ընտրությունը կատարելիս Խորենացին նախապատվությունը տվել է հայկական վերսիային, և դա բնական է: Նա ջերմ հայրենասեր է եղել և հավանել ու բարձր է գնահատել այդ ավանդությունը, որը բարձրացնում էր հայերի դերը ժամանակի պատմական անցքերում, ինչպես և նրանց ազգմական փառքը: Ստորադասելով Փլաբիոսի վերսիան այդ ավանդությունից, Խորենացին մշակել է այդ վերսիայի տվյալները նույն եղանակով, որին մենք հանդիպեցինք ժամանակագրության հարցերը քննարկելիս. կրճատել է ավելորդը, վերանվանել որոշ գործող անձանց և այլն[6]:

Եզրակացությունն այն է, որ Փլաբիոսի պատմածի մեջ Խորենացու ներմուծած փոփոխությունները ոչ միայն կամայական բնույթ չեն կրում, այլ ընդհակառակը, կյանքի են կոչված Խորենացուն ավելի կարևոր ու արժանահավատ երևացող զուգահեռ աղբյուրին ամենայն խստությամբ հետևելու հանգամանքով[7]:

---

6 Խորենացու մոտ քիչ չեն և այնպիսի դեպքերը, երբ նա, իրերամերժ վերսիաները «ձուլելու» փոխարեն (ինչպես արված է նկարագրված դեպքում), շարադրում է դրանք առանձին-առանձին, ու յուրաքանչյուրին տալիս իր գնահատականը: Այդ դեպքերի քննարկումը, սակայն դուրս է մնում ներկա աշխատության շրջանակներից:

7 Նշենք, որ Բուզանդի մոտ հանդիպող և Խորենացու կողմից օգտագործված վերսիան, չնայած նրա մեջ պարունակվող անաքրոնիզմին (Հյուրկանոսին պարթևները գերեվարել են Բաբելոնում մ. թ. ա. 40 թ., իսկ Տիգրան 2-րդը մահացել է դեռևս մ. թ. ա. 56 կամ 55 թ.), պատմական հիմք ունի: 40 թ. պարթևական արշավանքին, Կիկերոնի վկայությամբ, մասնակցել են նաև դաշնակիցների զորքերը: Պարթևների դաշնակիցները դեռևս 53 թվականից հայերն են եղել: Ըստ երևույթին, արշավանքին մասնակցած հայկական զորամասը որոշ քանակությամբ հրեաներ է գերեվարել Հայաստան և դրանց պատմածներն են, որ հիմք են ծառայել վերոհիշյալ ավանդության համար: Տե՛ս Я. А. Манандян, О торговле и городах Армении, Ереван, 1951.

Բերենք մի օրինակ ևս: Խորենացին 3-րդ գրքի երկու գլուխներում (ԻԶ և ԻԸ) տալիս է Տիգրանակերտ քաղաքի՝ Շապուհ 2-րդի կողմից պաշարման և առման նկարագիրը, որտեղ գտնում ենք մի շարք բառեր ու նախադասություններ, բառացիորեն ընդօրինակված Կեղծ-Կալիսթենեսի «Վարք Աղեքսանդրի Մեծի»-ի հայերեն թարգմանությունից, հատկապես Աղեքսանդր Մակեդոնացու կողմից Տյուրոս քաղաքի պաշարման և Թեբե քաղաքի առման նկարագրություններից[8]: Բերենք օրինակի համար մի պարբերություն, որպեսզի ընթերցողին պարզ լինի, թե ինչի մասին է խոսքը: Շեղատառ արված են Կեղծ-Կալիսթենեսից արված ընդօրինակումները.

(III, ԻԸ) *«Իսկ Շապուհ եկեալ ի Տիգրանակերտ, դարձեալ աղխեցին ընդդիմանալ նմա.* և ելեալ ի պարիսպն *աղաղակէին. «Գնա ի մէնջ, Շապուհ, զի մի չարիս յերկրորդումս ընդ քեզ տացուք եւ քան զառաջինն անցուցանիցեմք պատերազմաւ»: Եւ նա պատասխանեաց.* «Ով քաջքդ *ի Հայոց, որք* զանձինս արգելեալ փակեցէք ընդ պարսպօք *Տիգրանակերտի և արտաքս ձայն արկանէք սպառնալեաց.* զի քաջ արանց է յարձակ դաշտի և յազատ անդաստ կռուել, և կանանց գործ է արգելեալ փակել զինքեանս յերկիւղէ առ հանդերձեալ կռիւսն»: Եւ զայս ասացեալ՝ *դարձաւ առ գիրեալ Յոնան զինուորս, ասէ. «Եթէ ձեռամբ մարտիւ առից զայս քաղաք՝ զամենեսեան զձեզ արարից ազատս հանդերձ ընտանեօք ձերովք»: Եւ պարսկական զօրուն* շուրջ զքաղաքաւն հրամայեաց բնքանալ, և նետիւք խոցոտել զ՚ի վերայ պարսպին»:

*Այս և նման ընդօրինակումներն առիթ են ծառայել հետազոտողների համար անհավաստի և մտացածին համարելու*

---

էջ 84, Գ. Սարգսյան. *Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ, «Բանբեր Մատենադարանի», 1956, № 3, էջ 35:*

8 *Խորենացու և Կեղծ-Կալիսթենեսի տեքստերի մանրամասն համեմատությունը տե՛ս Հ. Տաշյանի «Ուսումնասիրութիւնք Սուտն-Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի» աշխատության մեջ (էջ 60—66):*

նկարագրության նաև մնացած տվյալները[9]։ Սրանց մի մասը գալիս է Փավստոսից, բայց մյուս մասը հաստատված չէ որևէ այնպիսի նյութով, որը կարելի լիներ Խորենացու անմիջական աղբյուր համարել։ Այդ պատճառով դիմում ենք վերը մի շարք անգամ փորձված միջոցին՝ համեմատությանը պատմական իրականության հետ։ «Պատմական իրականություն» տակ մենք այս դեպքում հասկանում ենք այդ իրականության արտացոլումը այնպիսի մի առաջնակարգ հավաստի աղբյուրի մեջ, ինչպիսին է Ամմիանոս Մարկելինոսի «Պատմությունը»[10]։ Այստեղ մենք գտնում ենք Շապուհ 2-րդի վարած պատերազմների մանրամասն նկարագրությունը։ Համեմատելով Խորենացու պատմածը Տիգրանակերտի պաշարման և առման մասին՝ Ամիդի, Սինգարայի, Բեզաբդայի, Բիրթայի պաշարման վերաբերյալ Ամմիանոսի պատմածի հետ, մենք զարմանալի նմանություն ենք տեսնում նրանց միջև, հատկապես այն կետերում, որտեղ դրսևորվում են Շապուհ 2-րդի վարած պատերազմների բնորոշ հատկությունները (Շապուհի՝ պաշարված քաղաքների հետ բանակցելու ձևերը, նրա պաշտոնական տիտղոսը, պաշարումների ժամանակ՝ գերի զինվորների թշնամու դեմ օգտագործելը, նվաճված քաղաքների բնակչության գերեվարությունը և այլն, երևույթներ, որոնք առանձին-առանձին վերցրած շատ պատերազմների են հատուկ եղել, բայց որպես կոմպլեքս՝ բնութագրում են հատկապես Շապուհ 2-րդի վարած պատերազմները և մասնավորապես՝ քաղաքների պաշարումները. մանրամասն համեմատությունը և վերլուծությունը տե՛ս մեր վկայակոչված հոդվածում)։ Նշված նմանությունը նույնիսկ կարծիք է առաջացրել, թե Խորենացին անմիջապես օգտվել է Ամմիանոսից։ Եթե անգամ ընդունենք այս տեսակետը,

[9] Ա. Սուքրյան, *Երևանեան պատերազմ ի Հայս և կատարած Արշակայ արքային, «Բազմավէպ», 1887, էջ 8—11։ Гр. Халатянц*, Армянские Аршакиды в „Истории Армении" Моисея Хоренского, I, М., 1903, էջ 214 և հետ.։

[10] *Аммиан Марцеллин*, История, перевод с латинского проф. Ю. А. Кулаковского, вып. I, Киев, 1906, էջ 217 և հետ.։

*սրանով հաստատվում է այն փաստը, որ Խորենացու ռեալ աղբյուրը, բացի Փավստոսից, եղել է IV դարի պատմությունը արտացոլող մի երկ։ Իրականում, սակայն, այս տեսակետը հավանական չէ բազմաթիվ պատճառներով։ Այստեղ նշենք թեկուզ այն հանգամանքը, որ եթե Խորենացին ձեռքի տակ ունենար Ամմիանոսի վառ նկարագրությունները, նա ստիպված չէր լինի դիմել իր շարադրանքը հարստացնելու համար Կեղծ-Կալիսթենեսի տեքստին։ Ուրվագծվում է, ուրեմն, Խորենացու մեզ անհայտ, բայց IV դարի պատմական անցքերը վերարտադրող և այն էլ ճշմարտացի մի աղբյուր, որը Փավստոսի հետ միասին, կոչված է ծառայել Տիգրանակերտի առման բուն նկարագրության համար։*

*Ինչ վերաբերվում է Կեղծ-Կալիսթենեսից առած նյութին, ապա մոտիկից դիտելով համոզվում ենք, որ այն հանդիսանում է նկարագրության քանակապես առավել, բայց որակապես ոչ էական մասը, որովհետև բաղկացած է այնպիսի ոճերից ու հռետորական դարձվածքներից, որոնք կարելի է մեջ բերել քաղաքի պաշարման ամեն մի դեպքի նկարագրության մեջ։ Այսպիսով Խորենացին դիմել է Կեղծ-Կալիսթենեսին միայն որպես իր շարադրանքի ճոխացման աղբյուրի, և ոչ որպես պատմական աղբյուրի։*

*Բերված օրինակներից նախ և առաջ կարելի է եզրակացնել, որ Խորենացու՝ աղբյուրների դասակարգման և օգտագործման վերևում բնութագրված սկզբունքի կիրառման ոլորտը շատ ավելի լայն է, քան նրա ժամանակագրական համակարգի շրջանակները, և որ նրա երկի համապատասխան ուսումնասիրությունը ամենայն հավանականությամբ ցույց կտա, որ այդ սկզբունքը պատկանում է «Հայոց պատմության» կարևորագույն ստեղծագործական սկզբունքների թվին։*

*Մյուս կողմից՝ բերված երկու օրինակները, իրարից էապես տարբեր լինելով, հավաստում են նաև, որ Խորենացու հիշյալ սկզբունքը նոր նյութի համեմատ դրսևորման նոր երանգներ է ստանում։ Յուրաքանչյուր նոր օրինակ այս տեսակետից ըն-*

դունակ է լրացնելու մեր պատկերացումները Խորենացու աշխատանքի մեթոդիկայի մասին, իր լուման մտցնելու նրանց մեջ։

* * *

«Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը բնութագրում է իր ստեղծողին որպես պատմիչ-պատմաբանի, գերազանցապես նույնիսկ պատմաբանի, որը միշտ ձգտում է համակարգել ու իմաստավորել ձեռքի տակ եղած նյութը և, ըստ հնարավորության, իր համակարգի մեջ բաց տեղեր չթողնել։ Իր ստեղծագործության մեջ Խորենացին ելնում է որոշակի գիտական սկզբունքներից։ Խոսքը, իհարկե, իր ժամանակվա գիտության մասին է, գիտություն, որի հանճարեղ ներկայացուցիչն է Խորենացին, բայց արդի գիտության տեսակետից էլ նրա մի շարք սկզբունքներ օտարոտի թվալով, մի այլ մասն ուսանելի է դեռ այսօր։

«Իր պատմության մեջ Մովսեսը ներկայանում է ոչ թե որպես իր ժամանակի ժամանակագիր, այլ որպես գիտնական-հետազոտող, որն ուսումնասիրել է Հայաստանի անցյալը բազմաթիվ և իր կողմից խստորեն ստուգված աղբյուրների հիման վրա»։ Այս խոսքերը, որոնց մենք լրիվ համամիտ ենք, ասված են դեռևս 65 տարի սրանից առաջ[11], սակայն անցած տասնամյակների ընթացքում Խորենացու և նրա երկի՝ նշված տեսակետից ուսումնասիրության ուղղությամբ դեռևս էական բան չի կատարված։

Մենք փորձեցինք վեր հանել Խորենացու ստեղծագործական սկզբունքներից ու օրինաչափություններից մի քանիսը։ Հասկանալի է, որ այդպիսի մի պատմիչ-գիտնական ունեցել է ստեղծագործության նաև այլ բարդ սկզբունքներ ու օրինաչափություններ, որոնք ևս պետք է դառնան ուսումնասիրու-

[11] *А. Аннинский*, Древние армянские историки как исторические источники, Одесса, 1899, *էջ 13*։

*թյան տարիքը։ Ավելորդ է կրկնել, որ դրանց ուսումնասիրությունը ինքնանպատակ չէ և վերջին հաշվով ուղղված է «Հայոց պատմության» պարունակած անթիվ գանձերը պահելուն և պատմաբանների համար լիարժեք ու վստահելի սկզբնաղբյուր դարձնելուն։*

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

## ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ

1. (II, Ա) *«Զկնի որոյ (Աղեքսանդրի Մակեդոնացւոյ) թագաւորեաց Բաբելովնի Սելեւկիոս... Սորա տիրեալ ամս երեսուն և մի՝ թողու զթագաւորութիւնն որդւոյ իւրում Անտիոքայ, անուանեցելոյն Սօտէր, ամս ինն և տասն: Զսա յաջորդէ Անտիոքոս, անուանեալն Թէոս, ամս տասն. և ի մետասաներորդին ապստամբեն Պարթեւք ի ծառայութենէ Մակեդոնացւոցն: Ուստի և թագաւորեաց Արշակ Քաջ...»:*

2. (II, Բ) *«Որպէս ասացաք՝ յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի՝ թագաւորէ ի վերայ Պարթեւաց Արշակ Քաջ... Այսպէս տիրեալ ամս երեսուն և մի, և յետ նորա Արտաշէս որդի նորա ամս քսան և վեց: Զսա պայազատէ նորին որդի Արշակ, որ կոչեցաւ Մեծ»:*

3. (II, Գ) *«...Թագաւորեցուցանէ (Արշակ Մեծ) զեղբայր իւր զՎաղարշակ աշխարհիս Հայոց»:*

4. (II, Ը) *«Բայց Վաղարշակ յետ այսպիսեաց արութեանց և բարեկարգութեանց մեռանի ի Մծբին, թագաւորեալ ամս քսան և երկուս»:*

5. (II, Թ) *«Արշակ որդի Վաղարշակայ թագաւորէ ի վերայ Հայոց ամս երեքտասան...»:*

6. (II, ԺԱ) *«Արտաշէս թագաւորէ Հայոց փոխանակ Արշակայ հօր իւրոյ ի քսան և ի չորրորդ ամի Արշականայ Պարսից արքայի...»:*

7. (II, ԺԲ) *«...իսկ Արտաշէս փափագեալ մեռանի, որպէս ասեն՝ յիւրոց զօրացն. թագաւորեալ ամս քսան և հինգ»:*

8. (II, ԺԴ) «Յետ Արտաշիսի Առաջնոյ թագաւորէ Տիգրան որդի նորա ի քառասուն և յիններորդ (տարընթերց. «ի Ի և յիններորդ», «տասններորդի», «յինն և տասններորդ») ամի Արշականայ (տարընթերց. «Արշանակայ») թագաւորի Պարսից»։

9. (II, ԺԹ) «Եւ Տիգրանայ ոչ աւելի բաւեալ քան զերեամ (տարընթերց. «զերկեամ») յետ այնորիկ (Բարզափրան Ռշտունու գլխի Պաղեստին արշավանքից հետո—Գ. Ս.)՝ վախճանի, թագաւորեալ ամս երեսուն և երիս»։

10. (II, ԻԲ) «Հայոց թագաւորէ Արտաւազդ որդի Տիգրանայ։ Սա ժառանգեցուցանէ զեղբարս իւր և զքորս ի գաւառս Աղիոյ ովտի և Առբերանոյ... Բայց այլ ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եցոյց. այլ ուտելեաց և ըմպելեաց պարապեալ... ծառայ և ստրուկ որովայնի արդարև լինելով՝ զադրիւս մեծացուցանէր։ Սա... զայրացեալ՝ հրաման տայր զօր յարուցանել զինուորս Ատրպատական նահանգին և զբնակիչս լերինն Կաւկասու հանդերձ Աղուանիւք և Վրօք. խաղայ իջանէ ի Միջագետս, և հալածականս առնէ զզօրս Հռոմայեցւոց»։

11. (II, ԻԴ) «Ի քսաներորդի ամի, ի կատարումն աւուրց թագաւորութեանն Արշէզի, ժողովեալ զօրքն Հայոց հրամանաւ նորին թագաւորեցուցին ի վերայ ինքեանց զԱրշամ, որ և Արշամ, որդի Արտաշիսի, եղբայր Տիգրանայ, հայր Աբգարու... ի նմին ամի վախճանեցաւ Արշէզ, թողեալ զթագաւորութիւնն Պարսից որդւոյ իւրում Արշաւրի...»։

12. (II, ԻԵ) «Բայց Արշամայ վարեալ զթագաւորութիւնն ամս քսան, վախճանեցաւ»։

13. (II, ԻԶ) «Թագաւորէ Աբգար որդի Արշամայ ի քսաներորդ ամի Արշաւրի արքայի Պարսից... Ի սորա երկրորդ ամի թագաւորութեանն հարկին Հռոմայեցւոց բոլորովիմբ ամենայն կողմանքն Հայոց... Զայսու ժամանակաւ լինի ծնեալ Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ»։

14. (II, ԼԴ) «...վախճանի Աբգարիոս, թագաւորեալ ամս երեսուն և ութ (տարընթերց. «երեսուն և երկու»)»։

15. (II, ԼԴ) «Յետ մահուանն Աբգարու բաժանի թագաւորութիւնն Հայոց յերկուս. քանզի Անանուն որդի նորա կալեալ թագ՝ թագաւորէ յԵդեսիայ, և քեռորդի նորա Սանատրուկ ի Հայս»։

16. (II, ԼԶ) «Սա (Սանատրուկ) թագաւորեալ յերեսներորդի ամի Արտաշիսի արքայի Պարսից, կեցեալ ամս երեսուն՝ մեռաւ յորսի...»:

17. (II, ԼԷ) «Յետ մահուանն Սանատրկոյ արքայի շփոթի իմն թագաւորութիւնն։ Քանզի Երուանդ ոմն, որդի կնոջ Արշակունւոյ, թագաւորէ յութերորդ ամի Դարեհի վերջնոյ»:

18. (II, ԽԶ) «...վախճանեցաւ (Երուանդ), կացեալ զթագաւորութիւնն ամս քսան»:

19. (II, ԽԷ) «...(Սմբատ Բագրատունին) գտեալ զԹագն Սանատրկոյ արքայի՝ դնէ ի գլուխն Արտաշիսի և թագաւորեցուցանէ ի վերայ ամենայն երկրիս Հայոց ի քսան և իններորդի ամի Դարեհի Պարսից արքայի»:

20. (II, ԾԴ) «Յետ մեռանելոյ վերջնոյ Արշակայ թագաւորի Պարսից, թագաւորեցուցանէ մերս Արտաշէս զհամանուն իւր զԱրտաշէս որդի նորին ի վերայ Պարսից աշխարհին»:

21. (II, Կ) «Եւ սորա (Արտաշիսի) այսպէս սիրելի եղեալ աշխարհիս մերոյ, թագաւորեալ ամս քառասուն և մի»:

22. (II, ԿԱ) «Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա... Որ յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ... անկանի ի խոր իմն մեծ, և խորասոյզ լեալ անհետի»:

23. (II, ԿԲ) «Թագաւորէ Հայոց Տիրան որդի Արտաշիսի յերրորդ (տարընթերց. «յերկրորդ») ամի Պերոզի առաջնոյ Պարսից արքայի»:

24. (II, ԿԲ) «Ի հանդարտութեան վարեալ զթագաւորութիւնն ամս քսան և մի. և մեռաւ ի ճանապարհի ձեան հիւսոյ կալեալ»:

25. (II, ԿԴ) «Փոխանորդէ զՏիրան եղբայր իւր Տիգրան վերջին, թագաւորեալ Հայոց ի քսաներորդի և չորրորդի (տարընթերց. «քսաներորդի») ամի Պերոզի Պարսից արքայի. և երկայնակեաց եղեալ ամս քառասուն և երկու՝ մեռանի, ոչ ինչ գործ արութեան արժանի յիշատակի ցուցեալ, այլ ի յաղջկանէ միջէ յունէ ի կալանս ըմբռնեալ, ի ժամանակին յորում վախճանեցաւ Տիտոս երկրորդ թագաւոր Հռոմայեցւոց, որ անուանեցաւ Անտոնինոս Աւգոստոս»:

26. (II, ԿԵ) «Յետ մահուանն Տիգրանայ թագաւորէ Վաղարշ որդի նորին յերեսներորդի և երկրորդի ամի համանուանն իւրոյ Վաղարշու Պարսից արքայի»:

27. (II, ԿԵ) «Սա (Վաղարշ) թագաւորեաց ամս քսան, մեռաւ»:

28. (II, ԿԵ) «Եւ առնու զթագաւորութիւնն Խոսրով որդի նորին յերրորդ (տարընթերց. «յերկրորդ») ամի Արտաւանայ Պարսից արքայի»:

29. (II, ԿԸ) «Արշակ քաջ, որ ապստամբեաց ի Սակեդոնացւոց՝ թագաւորեաց յերկրին Քուշանաց ամս երեսուն և մի. և յետ նորա որդի նորին Արտաշէս ամս քսան և վեց. ապա Արշակ նորին որդի, որ կոչեցաւ մեծ, որ զԱնտիոքոսն եսպան և զՎաղարշակ եղբայր իւր թագաւոր կացոյց Հայոց, երկրորդ իւր առնելով: Եւ ինքն չուեալ ի Բահլ՝ հաստատեաց զթագաւորութիւնն իւր ամս յիսուն և յերիս... Եւ են թագաւորք պահլաւիկք այսոքիկ: Յետ Արշակայ մեծի առնու զթագաւորութիւն նորա Արշականն, յերեքտասաներորդի ամի Վաղարշակայ թագաւորին Հայոց՝ ամս երեսուն. ապա Արշանակ՝ ամս երեսուն և մի, յետ որոյ Արշէզ ամս քսան. ապա Արշաւիր՝ ամս քառասուն և վեց»:

30. (II, ԿԹ) «Յետ Արշաւրի, որպէս ասացաք, թագաւորէ Արտաշէս ամս երեսուն և չորս (տարընթերց. «երիս»). Դարեհ ամս երեսուն. Արշակ ամս ինն և տասն. Արտաշէս ամս քսան. Պերոզ ամս երեսուն և չորս (տարընթերց. «երիս»). Վաղարշ ամս յիսուն. Արտաւան ամս երեսուն և մի: Զսա սպանեալ Ստահրացւոյն Արտաշրի, որդւոյ Սասանայ, բառնալով զթագաւորութիւնն Պարթևաց, հանելով ի նոցանէ զաշխարհն ժառանգութեան»:

31. (II, ՀԴ) «Եւ յետ անցանելոյ երկուց ամաց զպատուհասն Անակայ ի Հայս՝ յերրորդումն սպանանէ զԽոսրով, որ թագաւորեաց ամս քառասուն և ութ»:

32. (II, ՀԷ) «Եւ կալաւ (Արտաշիր) զաշխարհս մեր որպէս զմի յաշխարհացն իւրոց. պարսիկ գործակալօք, ամս քսան և վեց. և յետ նորա որդի նորին, որ անուանեցաւ Շապուհ, որ լսի Արքա-յամանակ, չթագաւորելն Տրդատայ, ամ մի»:

33. (II, ՁԱ) «Վախճանեալ Արտաշրի որդւոյ Սասանայ՝ թողու զթագաւորութիւնն Պարսից որդւոյ իւրում Շապհոյ: Ի սորա աւուրս ասեն եկեալ ի Հայս նախնի ազգին Մամիկոնէից յարևելից հիւսիսականէն, ի քաջատոհմիկ և ի գլխաւոր աշխարհէ և ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին ասեմ իսկ զՃենացն, որ ունին զրոյցս այսպիսիս»

Յամս կատարման կենացն Արտաշրի, Արբոկ ումն Ճենբակուր, որպէս ասի ի նոցա լեզուն պատիւ թագաւորութեան. որոյ երկու դայեկորդիք, Բդղոխ և Մամգոն անուն կոչեցեալ, մեծ նախարարք։ Եւ չարախօսեալ Բդղոխայն զՄամգոնայն՝ հրամայեաց թագաւորն Ճենաց Արբոկ սպանանել զՄամգոնն։ Զոր իմացեալ Մամգոնայն՝ ոչ գայ ի կոչն արքային, այլ փախուցեալ ազխիւ իւրով անկանի առ Արտաշիր թագաւորն Պարսից։ Եւ Արբոկ հրեշտակս առաքէ խնդրել զնա. և ի չլսելն Արտաշրի՝ պատերազմ ի վերայ նորա յօրինէ թագաւորն Ճենաց։ Եւ իսկոյն մեռեալ Արտաշրի՝ թագաւորէ Շապուհ։

Արդ՝ թէպէտ և ոչ տայ Շապուհ զՄամգոնն ի ձեռս տեառն իւրոյ, այլ և ոչ յԱրեաց երկրին թողու. բայց ամենայն ազխիւն իւրով առաքէ զնա իբրև զվտարանդի առ զօրավարս իւր որ ի Հայս ...Իսկ Մամգոնայ յոչ կամաց եկեալ յաշխարհս մեր՝ հանդիպեցաւ գալստեանն Տրդատայ...»։

34. (II, ՁԲ) «Քանզի ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան, վասն որոյ և մանրախուզիւ քննեալ՝ գտաք զթագաւորելն Տրդատայ յերրորդ (տարընթերց. «յերկրորդ») ամի Դիոկղետիանոսի, և գալ այսր հանդերձ մեծաւ զօրու»։

35. (II, ՁԹ) «Քանզի լսեալ էր... զզօրավարելն Ներսեհի, որ և թագաւորեաց ամս ինն, և Որմզդի, որ ապա և նա թագաւորեաց ամս երիս նահատակութեամբք»։

36. (II, ՂԱ) «Յեօթն և տասներորդի ամի թագաւորութեանն Տրդատայ գտաք նստեալ յաթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի զհայրն մեր Գրիգորիոս և ըստ Աւետարանի ծնող»։

37. (II, ՂԱ) «Վասն որոյ յիսկզբան քահանայանալոյ նորա, յեօթն և ի տասներորդ ամէ թագաւորութեանն Տրդատայ մինչև ցքառասուն և վեցերորդն ամն նորին, յորմէ հետէ ոչ ևս յաւել ումեք երևել՝ համարեալ թուին ամք երեսուն։

Եւ յետ նորա Արիստակէս ամս եօթն, ի քառասուն և յեօթներորդ ամէն Տրդատայ մինչև ցյիսուն և երրորդ ամն նորին, յորում եղև կատարումն Արիստակեայ»։

38. (II, ՂԱ) «Եւ յաջորդեաց զաթոռն երէց եղբայրն նորին Վրթանէս, ի յիսուն և ի չորրորդ ամէն Տրդատայ և անդր»։

39. (II, ՂԲ) «(Տրդատ) թագաւորեաց ամս յիսուն և վեց (տարընթերց. «յիսուն»)։

40. (III, Ը) «Յերկրորդ ամի Որմզդի Պարսից արքայի և յութերորդ ամի

ինքնակալութեանն Կոստանդեայ, յօգնականութենէ Նորին թա-գաւորեաց Խոսրով»։

41. (III, Ժ) «Բայց ոչ յերկարեաց զկեանս իւր՝ վախճանի, թագաւորեալ ամս ինն»։

42. (III, ԺԱ) «Յեօթն և ի տասներորդի ամի ինքնակալութեան իւրում Աւգոստոս Կոստանդոս, որդի Կոստանդիանոսի, թագաւորե-ցուցանէ զՏիրան որդի Խոսրովու...»։

43. (III, ԺԱ) «Իսկ յետ լնլոյ հնգետասան ամաց եպիսկոպոսութեան մե-ծին Վրթանայ՝ փոխի յաշխարհէս յերրորդ ամի Տիրանայ։ ...Եւ յաջորդէ զաթոռն Յուսիկ որդի Նորին ի չորրորդ ամին Տիրանայ, յոյժ հետեող եղեալ հարցն առաքինութեան»։

44. (III, ԺԳ) «(Յուսիկ) Էկաց յեպիսկոպոսութեանն ամս վեց»։

45. (III, ԺԶ) «...Ընտրեցին զՓառներսեհ ոմն յԱշտիշատից Տարօնոյ, և կացուցին քահանայապետ ի տասներորդ ամի Տիրանայ. որ կալաւ զաթոռն ամս չորս»։

46. (III, ԺԷ) «Խաւարեցաւ և ինքն (Տիրան), կալեալ զթագաւորութիւնն ամս մետասան (տարընթերց. «վեշտասան»)»։

47. (III, ԺԸ) «Բայց Շապուհ թագաւորեցոյց փոխանակ Տիրանայ զորդի նորա զԱրշակ...»։

48. (III, Ի) «Յերրորդ ամի թագաւորութեանն Արշակայ եկաց եպիսկոպո-սապետ Հայոց մեծն Ներսէս, որդի Աթանագինեայ, որդւոյ Յուսկան, որդւոյ Վրթանայ, որդւոյ սրբոյն Գրիգորի»։

49. (III, ԼԵ) «(Արշակ) թագաւորեաց ամս երեսուն»։

50. (III, ԼԸ) «(Ներսէս) կալաւ զաթոռ եպիսկոպոսութեանն ամս երեսուն և չորս»։

51. (III, ԼԹ) «(Սահակ) կալաւ զաթոռն ամս չորս (տարընթերց. «ե-րեք»)»։

52. (III, ԼԹ) «Եւ (Պապ) երկաթեղէն կապանօք երթեալ առաջի մեծին Թէոդոսի՝ ըստ իւրում անզգամութեանն սակրով վճարի, թա-գաւորեալ ամս եօթն»։

53. (III, Խ) «Բայց Աւգոստոս բարեացապարտն Թէոդոս, որ և մեծ, ի քսաներորդ ամին իւրում թագաւորեցոյց Հայոց փոխանակ Պապայ զՎարազդատ ոմն ի նմին տոհմէ Արշակունեաց»։

54. (III, Խ) «(Վարազդատ) եկեալ թագաւորութեամբ յաշխարհս մեր ի յիսուն և հինգ (տարընթերց. «յիսուն և եօթն») ամին Շապ-հոյ..., թագաւորեաց ամս չորս»։

55. (III, Խ) «Բայց յերկրորդ ամի Վարազդատայ նկաց եպիսկոպոսապետ Հայոց Զաւէն, ի նոյն ազգականութենէ Աղբիանու, ամս չորս» (տարընթերց. «երեք»):

56. (III, ԽԱ) «Ապա փոխանակ Վարազդատայ թագաւորեցոյց Հայոց Թէոդոս մեծ զերկուս որդիսն Պապայ, զԱրշակ և զՎաղարշակ»:

57. (III, ԽԱ) «Բայց յերկրորդ ամին Արշակայ նկաց յեպիսկոպոսապետութիւն Հայոց Ասպուրակէս, ազգական Շահակայ և Զաւենայ, ամս հինգ»:

58. (III, ԽԲ) «(Շապուհ և Արկադ) կամաւ յանձն առին բաժանել զՄիջագետս և զՀայոց աշխարհս երկքին սահմանադրութեամբ: Վասն որոյ թողեալ Արշակայ զբուն թագաւորութիւն հարց իւրոց զԱյրարատ, և զամենայն մասն բաժնին Պարսից՝ գնաց տիրել արեւմտեայ կողմանց աշխարհիս մերոյ, որ ի մասն ի բաժնին Յունաց...»:

59. (III, ԽԲ) «Զայս լուեալ Շապհոյ՝ թագաւորեցոյց Հայոց ի վերայ բաժնի իւրոյ զԽոսրով ոմն ի նմին ազգէն Արշակունեաց...»:

60. (III, ԽԳ) «(Արշակ) հիւանդացեալ անդ մաշարայական ախտիւ՝ ցերանի հիւծմամբ և մեռանի, թագաւորեալ ամենայն Հայոց ամս հինգ, և կիսոցն Հայոց ամս երկուս և կէս»:

61. (III, ԽԹ) «...Վախճանեալ եպիսկոպոսապետն Ասպուրակէս, ի տեղի նորա յաջորդէ Խոսրով զՍահակ որդի մեծին Ներսեսի, որդւոյ Աթանագինեայ, որդւոյ Յուսկան, որդւոյ Վրթանիսի, որդւոյ սրբոյն Գրիգորի»:

62. (III, Ծ) «Եւ Արտաշրի ընկեցեալ զնա (զԽոսրով) ի տէրութենէն, փոխանակ կացուցանելով զՎռամշապուհ զեղբայր նորին, ոչ զմեծն Սահակ և ոչ զոք ի նախարարացն կարգեալցն ի Խոսրովայ վրդովեաց ի պատուոյ իւրաքանչիւր, նա և հրամայեաց ևս ընդ Յոյնս զնոյն կարգ ունել: Եւ թողեալ զունդ սատար, ինքն ի Տիզբոն փութայր հասանել, ի ծերութենէ հօրն ակն ածեալ, ընդ իւր ունելով զԽոսրով՝ դնել յԱնուշն կոչեցեալ բերդին. որոյ թագաւորեալ ամս հինգ»:

63. (III, ԾԱ) «(Սահակ) չոգաւ առ Արտաշիր Պարսից արքայ, որ յետ եօթնևտասն ամի թագաւորութեան հօրն կալաւ զտէրութիւնն ամս չորս»:

64. (III, ԾԱ) «...Մեռաւ արքայն Պարսից Արտաշիր, և փոխանակ նորա թագաւորեաց Վռամ, որ և Կրմանն կոչեցաւ, ամս տասն... և էր խաղաղութիւն ի մէջ Վռամայ և Արկադեայ...»:

65. (III, ԽԲ) «Յայնմ ժամանակի հիւանդացեալ Արկադ...»:

66. (III, ԽԴ) «Վախճանեալ Արկադեայ փոխանակ նորա թագաւորէ նորին որդի, որ կոչեցաւ Թէոդոս փոքր... և խաղաղութիւն արար ընդ Յազկերտի արքային Պարսից»:

67. (III, ԽԵ) «Վռամշապուհ թագաւորեալ ամս քսան և մի՝ մեռանի, թողլով որդի տասնամեայ, անուն Արտաշէս»:

68. (III, ԽԵ) «...Զոր ոչ ժամանեաց տեսանել Խոսրով, մի և եթ ի կրկնումն թագաւորեալ ամ:

Յետ որոյ Յազկերտի ոչ ետ ի նոցանց, այլ զՇապուհ զորդի իւր թագաւորեցուցեալ Հայոց...»:

69. (III, ԽԶ) «Զբաղեալ անարգարար թագաւորեալ Հայոց Շապհոյ՝ հասանէ նմա համբաւ հիւանդութեան հօրն, և գնայ փութանակի, խրոմ տեղակալին հրամայելով զօրագլխի՝ առնել զմեծամեծս Հայոց և տանել ի Պարսս: Բայց իբրև եղև հասանել Շապհոյ ի Տիզբոն՝ մեռաւ հայրն նորա Յազկերտ, թագաւորեալ ամս մետասան: Ի նմին աւուր և նա անգէն ի դրանն մարդկանէ ննջեալ՝ սատակեցաւ»:

70. (III, ԽԶ) «Ուստի աղմկաւ և բազում խռովութեամբ մնացեալ աշխարհս մեր յանիշխանութեան ամս երիս, աւերեալ ամայանայր...»:

71. (III, ԽԶ) «Ընդ նոյն աւուրս թագաւորեաց Պարսից Վռամ երկրորդ»:

72. (III, ԽԸ) «Եւ նորա (Վռամայ) հաստատեալ զհաշտութիւնն՝ մուրհակ մնացման յանցանաց կնքէ, ըստ խնդրոյ նոցա թագաւոր կացուցանելով զԱրտաշէս որդի Վռամշապհոյ. և փոխեալ զանունն, Արտաշիր կոչելով՝ աշխարհս Հայոց ի նա հաւատայ տաանց պարսիկ վերակացուի. որ տիրեաց ամս վեց»:

73. (III, ԿԴ) «Մինչև հրամայեաց Վռամ առնուլ զթագաւորութիւնն յԱրտաշրի, և անգէն արգելուլ զնա, և զամենայն ինչս ազգի նորա առնել յարքունիս. նոյնպէս և զմեծն Սահակ, և զտունն կաթողիկոսական առնել յարքունիս, և տալ փոխանակ նորա յաթոռ եպիսկոպոսապետութեանն Հայոց զՍուրմակն զայն»:

74. (III, ԿԴ) «Բայց Սուրմակայ ոչ աւելի տևեալ քան զմի ամ՝ ի նոցին իսկ նախարարացն հալածեցաւ յաթոռոյն. որ ապա զիւրոյ գաւառին զԲզնունեաց զեպիսկոպոսութիւնն ի Պարսից արքայէն եգիտ առնել պարգև: Իսկ նախարարքն մեր խնդրէին ի Վռամայ այլ աթոռակալ. և նա նոցա զԲրքիշոյ ոմն ասորի

Սա եկեալ վատթար ընկերակցօք, ածեալ ընդ ինքեան և կանայս անկալուչս, անժուժարար և աւելորդօք և յափշտակութեամբ վախճանեցելոցն վիճակաց վարեալ ամս երիս։

75. (III, ԿԶ) «Եկեալ Շամուէլ կալաւ զաթոռ եպիսկոպոսութեանն, հետեւեալ վարուցն Բրքիշոյի... Բայց Շամուէլ կեցեալ ամս հինգ՝ մեռանի ի մերում աշխարհիս»։

76. (III, ԿԷ) «Զքսան և զմի ամ թագաւորեալ Պարսից Վռամ երկրորդ՝ մեռանի, թողլով զտէրութիւնն որդւոյ իւրում Յազկերտի»։

77. (III, ԿԷ) «Յայնժամ հասեալ մեծին Սահակայ հիւանդութիւն մահու. և առեալ զնա աշակերտացն՝ տարան ի գիւղն որ կոչի Բլուր. որպէս թէ ի վայր և յընտանեգոյն և ի զերծ տեղի մատուցեալ ի զօրացն Պարսից կոտորեց զնոսա։ Ուր և եհաս վախճան, կեցեալ եպիսկոպոսապետութեամբն ամս յիսուն և մի, սկսեալ յերրորդ ամէ վերջնոյ Խոսրովայ արքայի Հայոց մինչև ցակիզբն ամին երկրորդի Յազկերտի որդւոյ Պարսից թագաւորի, յես ամսոյն նաւասարդի, յաւուր իւրոյ ծննդեանն»։

## ԱՆԱՆՈՒՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԻՆՔՐՈՆԻԿ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԸ[1]

| Տարիների միջանցիկ համարը | Սասանյաններ | Հայ Արշակունիներ | Հռոմեական կայսրներ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | Առաջին սինքրոնիկ աղյուսակ | |
| | | (Խոսրով—50 տարի) | (Ավրեղիանոս—5 տարի) |
| 1 | Արտաշիր Ա (50 տարի) | Խոսրովի 31-րդ տարի | Ավրեղիանոսի 3-րդ տարի |
| 4 | Արտաշիրի 4-րդ տարի | 34-րդ » | Տերենտիանոս (6 ամիս) |
| 5 | 5-րդ » | 35-րդ » | Պրոբոս (6 տարի) |
| 11 | 11-րդ » | 41-րդ » | Կարոս (7) |
| 18 | 18-րդ » | 48-րդ » | Դիոկղետիանոս (22) |
| 21 | 21-րդ » | Անիշխանություն (11) | 4-րդ տարի |
| 32 | 32-րդ » | Տրդատ (70) | 15-րդ տարի |
| 40 | 40-րդ » | 9-րդ տարի | Կոստանդիանոս (9) |
| 49 | 49-րդ » | 18-րդ » | Մաքսիմ. և Գալիան. (19) |
| 51 | Շապուհ Ա (73) | 20-րդ » | 3-րդ տարի |
| 68 | 18-րդ տարի | 37-րդ » | Մաքսիմ. Բ (13) |
| 81 | 31-րդ » | 50-րդ » | Կոստանդես (17) |
| 98 | 48-րդ » | 67-րդ » | Կոստանդիանոս (32) |

[1] Անանունի ժամանակագրական թիվը, որ հասնում է մինչև Սասանյանների հարստության բարձումը, մենք սույն հավելվածում հասցրել ենք այն կետում, ուր վերջանում է Խորենացու ժամանակագրությունը՝ Հազկերտ 2-րդի առաջին տարումը։ Հաշվի ենք առել Ն. Ադոնցի կատարած բոլոր ճշտումները (տե՛ս Н. Адонц, „Начальная история Армении" у Себеоса в её отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского, „Византийский временник", VIII, 1901, 1—2, էջ 70)։

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| 102 | 52-րդ տարի | Խոսրով (17) | 5-րդ տարի |
| 119 | 69-րդ » | Տիրան (12) | 22-րդ » |
| 124 | Ներսեհ (9) | 6-րդ տարի | 27-րդ » |
| 130 | 7-րդ տարի | 12-րդ » | Կոստանդ. և Կոստաս (24) |
| 131 | 8-րդ » | Արշակ (18) | 2-րդ տարի |
| 133 | Որմիզդ (3) | 3-րդ տարի | 4-րդ տարի |
| 136 | Շապուհ Բ (73) | 6-րդ » | 7-րդ տարի |
| 154 | 19-րդ տարի | 24-րդ » | Հուլիանոս (2) |
| 156 | 21-րդ » | 26-րդ » | Վալենտինիան. և Վաղես (13) |
| 169 | 34-րդ » | 39-րդ » | Գրատիանոս (17) |
| 179 | 44-րդ » | Անիշխանություն (12) | |
| 186 | 51-րդ » | 8-րդ տարի | Թեոդոս (19) |
| 191 | 56-րդ » | Պապ (13) | 6-րդ տարի |
| 204 | 69-րդ » | Վարազդատ (6) | 19-րդ տարի |
| 205 | 70-րդ » | 2-րդ տարի | Արկադիոս (19) |
| 209 | Արտաշիր Բ (4) | 6-րդ տարի | 5-րդ տարի |
| 210 | 2-րդ տարի | Արշակ և Վաղարշ. (5) | 6-րդ » |
| 213 | Վռամ Ա (11) | 4-րդ տարի | 9-րդ » |
| 215 | 3-րդ տարի | Խոսրով (3) | 11-րդ » |
| 218 | 6-րդ » | Վռամշապուհ (8) | 14-րդ » |
| 224 | Հազկերտ Ա (21) | 7-րդ տարի | Հոնորիոս (22) |
| 225 | 2-րդ տարի | Հայ Արշակունյաց բարձումը | 2-րդ տարի |

Երկրորդ սինքրոնիկ աղյուսակ

| | | | |
|---|---|---|---|
| 224 | Հազկերտ Ա (21) | | Հոնորիոս (22) |
| 245 | Վռամ Բ (22) | | 22-րդ տարի |
| 246 | 2-րդ տարի | | Թեոդոս փոքր (22) |
| 267 | Հազկերտ Բ (19) | | 22-րդ տարի |

ՀԱՎԵԼՎԱԾ Դ

## ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆՑԸ ՏՐԴԱՏԻ ԳԱՀԱԿԱԼՄԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

*Ստ. Մալխասյանցը Տրդատի գահակալման թվականի կապակցությամբ ունի իր փաստարկված տեսակետը, որը նա համարում է Խորենացու տվյալների հիման վրա իր կողմից կազմած աղյուսակի «հիմնական եզրակացությունը»[1]։ Այդ տեսակետը անհրաժեշտ է այստեղ մանրամասն քննարկել, որովհետև այն սերտ կապված է Խորենացու ժամանակագրական համակարգից օգտվելու սկզբունքների հետ։*

*Ստ. Մալխասյանցը վեր է հանում այն հակասությունը, որ կա Խորենացու մոտ Տրդատի գահակալման տարեթվի մասին հաղորդած բացարձակ տվյալների (հայոց թագավորների իշխած տարիների գումարը 428 թվականից մինչև Տրդատի գահակալման տարին) և սինքրոնիկ տվյալների (այդ տարեթիվը Դիոկղետիանոսի 3-րդ տարվան համապատասխանելու մասին) միջև (տե՛ս վերևում, էջ 113) և խիստ քննադատում այն մասնագետներին (Ն. Ադոնց, Գարագաշյան և ուրիշներ), որոնք նախապատվությունը այս դեպքում տվել են սինքրոնիկ ցուցմանը, համարելով նրանց Խորենացու ժամանակագրության բոլոր «անտեղությունների» հեղինակներ։*

*Ինքը՝ Մալխասյանցը անվերապահորեն հավատ է ընծայում հիշյալ բացարձակ տվյալներին, և հետևելով նրանց, պնդում, թե Տրդատի գահակալությունը տեղի է ունեցել 263 թվականին։*

*Երկու մոտեցում կարող է լինել այս պնդմանը։ Մեկը, եթե այն սահմանափակվում է նշմամբ, թե հայ Արշակունիների բարձումը դնելով 428-ին, Խորենացու աղյուսակով ստացվում է, որ Տրդատը գահակալել է 263 թվականին, իսկ Դիոկղետիանոսը՝ դրանից երկու տարի առաջ՝ 261 թվականին։ Այս նշումը (թվերի որոշ ճշտումից հետո, որի մասին կխոսվի) ոչ մի ապացույցի կարիք չի զգում՝ այն համապատասխանում է իրականությանը։*

*Այլ բան է, երբ Ստ. Մալխասյանցը պնդում է, որ Տրդատի 263 թվականին գահակալելը (և, հետևաբար, հայոց դարձի 279 թ. տեղի ունենալը և այլն. տե՛ս էջ 353)· պատմական ճշմարտություն է, և փորձում է ապացու-*

---

1 Մովսես Խորենացի, *Հայոց պատմություն*, Երևան, 1940, էջ 352։

*ցել այդ թեզը ինչպես ներքին, Խորենացուց իսկ քաղած տվյալներով, այնպես էլ արտաքին փաստերով։*

*Ահա Ստ. Մալխասյանցի դատողությունները։ «Քանի որ անկասկածելի է Արշակունյաց թագավորության վերջանալու տարին, այն է 428 թվականը, մենք այս թվականից դեպի վեր բարձրացանք մինչև Տրդատ, ըստ ամենայնի հետևելով Խորենացուն, գումարելով ամեն մի թագավորի համար նրա նշանակած տարիները։ (Տողատակի ծանոթություն. այսինքն՝ Արտաշիր 6 տարի, անիշխանություն 3 տարի, Շապուհ պարսիկ 4 տարի, Խոսրով երկրորդ անգամ՝ 1 տարի, Վռամշապուհ 21 տարի, Խոսրով 5 տարի, Արշակ-Վաղարշակ 8 տարի, Վարազդատ 4 տարի, Պապ 7 տարի, Արշակ 30 տարի, Տիրան 11 տարի, Խոսրով Փոքր 9 տարի, Տրդատ 56 տարի = 165 տարի)։ Ստացվեց 165 տարի, որը դուրս գալով 428 թվականից՝ Տրդատի թագավորության առաջին տարին գտանք* 263 թվականը *(ընդգծումը հեղինակինն է)» (էջ 352)։*

*Այս թվականի պատմական ստուգությունը հաստատելու համար Ստ. Մալխասյանցը բերում է երեք ապացույց։*

*«Առաջին ապացույց։ Արտաշիր Սասանյանը թագավորեց 226-ին, նրա թագավորության տասներորդ տարում Խոսրովն սպանվեց Անակից ըստ Խորենացու, ուրեմն 236-ին. այնուհետև դարձյալ ըստ Խորենացու, Արտաշիրը Հայաստանին տիրեց 26 տարի և նրանից հետո, մինչև Տրդատի թագավորելը՝ Շապուհը դարձյալ մեկ տարի, ուրեմն միասին 27 տարի, որը ավելացնելով 236-ի վրա՝ ստանում ենք 263 թվականը—Տրդատի առաջին տարին»։*

*«Երկրորդ ապացույց։ Տրդատի թագավորության 17-րդ տարում ըստ Խորենացու տեղի ունեցան հայոց դարձը և Գր. Լուսավորչի ձեռնադրությունը, ուրեմն ըստ մեր ցուցակի 279-ին։ Եթե սրա վրա ավելացնենք բոլոր կաթողիկոսների տարիները մինչև ս. Սահակի մահը, ըստ Խորենացու ժամանակագրության, այսինքն 160 տարի՝ կստանանք 438 թվականը, որ անկասկածելի թվական է ս. Սահակի մահվան» (էջ 352)։*

*Իսկ Դիոկղետիանո՞սը, որի 3-րդ տարում թագավորել է, ըստ Խորենացու, Տրդատը։ Պարզվում է, որ Դիոկղետիանոսը, ոչ միայն Խորենացու պատկերացմամբ, այլև նրա հետ կապ չունեցող «մի հեղինակավոր ժամանակագրության» համաձայն գահակալել է ոչ թե 284-ին, այլ 261-ին։ «Սեբեոսի մոտ,— գրում է Ստ. Մալխասյանցը,— կարդում ենք, որ Հայոց եկեղեցական ժողովը Կոստանդ կայսրին գրած թղթում ի միջի այլոց գրում է. «Յամի երեքտասաներորդի կենարարի և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի թագաւորէ Դիոկղետիանոս»... Այս տարին պետք է հասկանալ հանաց թվականից, որ սկսվում է 248 թվականով ՀՔ (=առաջին տարի Հռոմի շինության տարեթվի երկրորդ հազարամյակի) ուստի և այս թվականության 13-րդ տարին համապատասխանում է փրկչական թվականի 261-ին»։ «Խնդրի համար կարևորն այն է, որ Դիոկղետիանոսի թագավորելը 261-ին դնում է*

ոչ միայն Խորենացին, այլ նաև 640-ական թվականներում գումարված Հայոց եկեղեցական ժողովը...» (էջ 353—354)։

Այս ապացույցները մի առ մի քննելուց առաջ անհրաժեշտ է անդրադառնալ Ստ. Մալխասյանցի նախնական հաշիվներին, կապված Հայկական շարքի Տրդատ—Արտաշես հատվածի տևողության հետ։ Նրա բերած թվերի գումարը իսկապես հավասար է 165-ի, սակայն 428-ից հանելով 165՝ եթե ստանում ենք 263, ապա այդ թիվը չէ, որ պետք է համարվի Տրդատի գահակալման տարեթիվ, այլ հաջորդ՝ 264 թվականը, որովհետև 165 տարիների մեջ արդեն պարունակվում է Տրդատի գահակալման տարին։ Սակայն այդ չէ կարևորը այստեղ, այլ այն, որ հենց 165 թիվը ճշգրիտ չէ, որովհետև նրա գումարելիներից մեկը սխալ է. Արշակին (Վաղարշակի եղբորը) իր օրինական 5 տարին տալու փոխարեն (տե՛ս Հավելված Ա, №№ 56—60), Ստ. Մալխասյանցը վերագրել է 8 տարի, որով գումարը 3-ով ավելի է ստացվել. այն պետք է լինի 162։

Խորենացու տվյալների հիման վրա Ստ. Մալխասյանցի կազմած աղյուսակի համապատասխան հատվածում կան նաև այլ անճշտություններ (էջ 363—367)։ Այսպես. նա թեև վերջին Արտաշեսի դիմաց գրում է 6 տարի, բայց իրականում տալիս է նրան 7 տարի՝ 422-ից մինչև 428-ը ներառյալ. Վռամշապուհի դիմաց գրում է 21 տարի, բայց իրականում նրան տալիս 22 տարի՝ 392-ից մինչև 413-ը՝ ներառյալ. Արշակի դիմաց (ինչպես ասվեց) 5-ի փոխարեն գրում է 8 տարի, բայց իրականում նրան տալիս 7 տարի՝ 380-ից մինչև 386-ը՝ ներառյալ. Վարազդատը իսպառ բացակայում է աղյուսակում, բայց նրա տարիները, բարեբախտաբար, հաշվի են առնված։ Այսպիսով, աղյուսակում իրապես տրված տարիների հանրագումարը, հավասար լինելով 166-ի, չի էլ համընկնում տեքստում տրված հանրագումարին (= 165)։

Ստույգ հանրագումարը, ինչպես ասվեց, հավասար է 162-ի։ Հանելով այն 428-ից, ստանում ենք 266, այսինքն Տրդատի գահակալման տարին Ստ. Մալխասյանցի՝ ըստ Խորենացու առաջարկած 263-ի փոխարեն ընկնում է 267 թվականի վրա (տե՛ս մեր № 5 աղյուսակի 3-րդ սյունակը)։ Սրանով վերանում է Ստ. Մալխասյանցի վերևում բերված ապացույցներից երրորդը (պետք է ասել՝ միակը, որ ճշգրիտ լինելու դեպքում կարող էր նպաստել նրա թեզի հաստատմանը), ըստ որի Խորենացուց անկախ մի աղբյուր թվագրել է Դիոկղետիանոսի գահակալությունը 261 թ. և, այդպիսով համընկել Խորենացու տվյալների հետ։ Խորենացու մոտ, ինչպես տեսնում ենք, այդ իրադարձությունը թվագրվում է 265 թվականով[1], որին

[1] Իրականում Խորենացին թվագրել է Դիոկղետիանոսի գահակալությունը (եթե հաշվելու լինենք փրկչական տոմարով) 286 թվականով, այսինքն պատմական ժամանակին (284 թ.) շատ մոտ (տե՛ս վերևում, էջ 57)։

հանելու համար համապատասխան աղբյուրում պետք է լիներ 18, և ոչ 13 թիվը (ի դեպ, պետք է ասել, որ 248 թվականով սկսված տոմարի 13-րդ տարին ընկնում է ոչ թե 261-ի, այլ՝ 260 թվականի վրա)։

Երբ Սեբեոսի մոտ հայտնվող թվագրման և Խորենացու տվյալների համապատասխանության հարցը վերանում է, ապա աչքի է զարնում այդ թվագրման տարօրինակությունը։ Այստեղ ամենևին խոսք չկա «հնդաց թվականի» մասին, ինչպես պնդում է Ստ. Մալխասյանցը, այլ շատ պարզ ասված է, որ թվագրությունը արված է փրկչական տոմարով։ Սակայն այդ տոմարով լինելու համար ապա 13 թիվը արտառոց է։ Մի խոսքով Սեբեոսի այդ տեղը օգտագործելուց առաջ կարոտ է բացատրման։

Մյուս ապացույցը իրականում ապացույց չի հանդիսանում, չհաշված, որ այստեղ էլ թվական անճշտություններ կան։

Խոսրովի սպանությունը տեղի է ունեցել, ըստ Խորենացու, Արտաշիր Պապականի ոչ թե 10-րդ տարում, ինչպես պնդում է Ստ. Մալխասյանցը, այլ 13-րդ տարում (տե՛ս վերևում, էջ 89 և հմտ. Խորենացուց բերված հատվածները), հետևաբար Արտաշրի և Տրդատի գահակալման տարիների միջև ընկած է 40, և ոչ 37 տարի։ Գումարելով 226-ին, այդ թիվը տալիս է 266, բայց ոչ 263, ինչպես կստացվեր ըստ Ստ. Մալխասյանցի։

Սակայն այստեղ տեսնում ենք, որ «անտարակուսելիորեն» հասանք ճիշտ այն թվականին, որին հանգեցինք քիչ առաջ, 428-ից հանելով 162, այսինքն 266 թվականին։ Ուրեմն Ստ. Մալխասյանցը, եթե մի պահ վերանանք նրա թույլ տված թվական մանր անճշտություններից, իրավացի՞ է։ Այո՛, իրավացի է, բայց այդ հանգամանքը ոչնչով չի նպաստում նրա տեսակետի հաստատմանը։

Ինչ՞ է կատարվել։ Ստ. Մալխասյանցը իր հաշվումների համար առանձնացրել է Խորենացու ժամանակագրության մի որոշակի հատված՝ սկսած պարթև Արշակունիների բարձումից մինչև հայ Արշակունիների բարձումը, որն ընդգրկում է 226—428 թթ.։ Միանգամայն բնական է, որ այդ տարեթվերի միջև (կամ ցանկացած այլ ժամանակահատվածի երկու ծայրակետի միջև) ընկած որ կետն էլ որ վերցնենք և հաշվենք նրա և 428-ի միջև ընկած տարիների քանակությունը ու այնուհետև հանենք այդ քանակությունը 428-ից, ապա կհանգենք նույն այդ կետին։ Մյուս կողմից, եթե հաշվենք այդ կետի և 226-ի միջև ընկած տարիների քանակությունը և ապա գումարենք այդ քանակությունը 226-ին, կստանանք նորից այդ կետը (և եթե չստանայինք, կնշանակեր, որ թվաբանական սխալ ենք կատարել)։ Ստ. Մալխասյանցը այդպես էլ արել է։ Բայց այդ համընկնումը բացարձակապես ոչինչ չի ապացուցում։

Այս բոլորը այնքան պարզ է, որ կարելի է զարմանալ, թե ինչպես է Ստ. Մալխասյանցի նման հմուտ ուսումնասիրողը գնացել այդ ճանապարհով։ Մի հանգամանք կա այստեղ, սակայն, որը որոշ չափով ընդունակ է բացատրելու այդ։ Դա այն է, որ իրերի բերմամբ Ստ. Մալխասյանցի բնա-

ված ժամանակահատվածը պատահական բնույթ չի կրում Խորենացու համար: Ինչպես մենք ցույց ենք տվել համապատասխան տեղում (տե՛ս էջ 46), այդ ժամանակահատվածը (202 տարի) կազմում է Խորենացու ժամանակագրական համակարգի ոչ միայն օրգանական մասերից, այլև ամենաէական կողմերից մեկը, և, միևնույն ժամանակ, այն լրիվ համապատասխանում է պատմական իրականությանը. Հայ և պարթև Արշակունիների յարձման միջև իսկապես ընկած է 202 տարի (226—428 թթ., տե՛ս մեր № 5 աղյուսակի 3-րդ սյունակը): Ստ. Մալխասյանցը թեև հատկապես չի նկատել այդ համապատասխանությունը, սակայն, ակամայից ընկել է հիշյալ թվի ստուգության հմայքի տակ: Նրան թվացել է, թե ի դեմս 428 և, մանավանդ, 226 թվականների, ինքը գործ ունի ոչ թե Խորենացու, այլ գիտականորեն ստուգված ու ճշտված թվերի հետ, որոնք գալիս են դրսից հաստատելու Խորենացու տվյալների կապակցությամբ արված իր եզրակացությունները: Այնինչ այդ թվերը, ավելի ճիշտ՝ նրանց միջև ընկած ժամանակահատվածի տևողությունը, գիտականորեն ստուգված ու ճշտված լինելով հանդերձ, միևնույն ժամանակ նաև Խորենացու սեփականությունն է կազմում:

Ստ. Մալխասյանցի վերջին փաստարկը ևս չի կարող ապացույց համարվել: Խորենացու ժամանակագրական տախտակը սինքրոնիկ է, և նրա շարքերը մանրամասնորեն իրար հետ համաձայնեցված են: Ստույգ ժամանակագրության հետ համեմատած, այնտեղ կան մի շարք անճշտություններ, բայց ներքնապես նրա բոլոր կետերում «ծայրերը ծայրերին հասցված են»: Սրանում է, ի դեպ, Խորենացու ժամանակագրական համակարգի «աղը»: Եթե որևէ ժամանակահատված հաշվենք աղյուսակի զուգահեռ գծերից մեկով, ապա և մյուսով կամ երրորդով, պետք է ստանանք, և իրականում միշտ ստանում ենք, նույն արդյունքը: Այստեղ զարմանալի ոչինչ չկա, զարմանալին կլիներ հակառակը: Արդ, Ստ. Մալխասյանցը հաշվում է մի դեպքում՝ Հայոց թագավորների գծով, մյուս դեպքում՝ կաթողիկոսների գծով և արդյունքի համապատասխանությունը համարում ապացույց: Այս հաշիվների մեջ էլ կան որոշ թվական անճշտություններ, որոնց մասին, սակայն, արդեն ավելորդ ենք համարում խոսել:

Որպես մասնավոր եզրակացություն պետք է ասել, որ Ստ. Մալխասյանցին չի հաջողվել ապացուցել, թե Տրդատի գահակալությունը ընկնում է 263-ի, կամ դրան մոտ մի թվականի վրա:

Որպես ընդհանուր եզրակացություն կարելի է ասել, որ Խորենացու ժամանակագրական տվյալներից օգտվելու փորձերը չեն կարող հանգեցնել ցանկալի նպատակին՝ իրական պատմական տարեթվերի հայտնաբերմանը, եթե հաշվի չեն առնվում նրա ժամանակագրական համակարգի ներքին օրինաչափությունները և առանձնահատկությունները:

## ՀԱՎԵԼՈՒՄ

(Թադ. Ավդալբեգյանի թեզերի կապակցությամբ)

*Սույն աշխատությունը արդեն շարված էր, երբ լույս տեսավ «Պատմա-բանասիրական հանդեսի» 1964 թ. չորրորդ համարը և նրա մեջ «Խորենացու «Պատմության» ժամանակաբանական սկզբնաղբյուրը վերականգնելու նոր փորձ» վերնագրով Թադ. Ավդալբեգյանի 1929 թ. մարտի 16-ին Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի պատմա-հնագիտական բաժնում կարդացած զեկուցման թեզերը (էջ 206—212)։ Քանի որ թեզերը առնչվում են մեր ներկա աշխատության թեմային, մեր պարտքն է արձագանքել դրանց։*

*Զեկուցումն ընդգրկել է խորագրված թեմայի այն մասը միայն, որ առնչվում է Խորենացու երկրորդ գրքին։ Թեզերը կամ մի գուցե ավելի ճիշտ կլինի ասել՝ զեկուցման կոնսպեկտը, շատ բովանդակալից է, և մնում է ափսոսալ, որ առկա չէ ամբողջ զեկուցումը, որովհետև կոնսպեկտով հնարավոր է վերականգնել հեղինակի մտահղացումների մի մասը միայն, իսկ մի այլ մասը թաքնված է մնում շարադրանքի խիստ հակիրճության և որոշ դեպքերում՝ պայմանականության հետևում, պայմանականություն, որ շատ բան էր ասում զեկուցողին, իսկ ընթերցողի համար նշանակալից չափով անհասկանալի է մնում։ Այսուհանդերձ, Թ. Ավդալբեգյանի հիմնական մտքերն ու առաջարկությունները բավականաչափ հստակությամբ են դրսևորվում։*

*Հեղինակն ընդգծում է Խորենացու «Հայոց պատմության»՝ որպես պատմական աղբյուրի անգերազանցելի արժեքը և շատ իրավացիորեն ընդվզում այն «աչառու պարսավի» դեմ, որին ենթարկվել է Խորենացին XIX դարի երկրորդ կեսից սկսած, և որը փոխարինել է այդ ժամանակաշրջանից առաջ իշխած «անքննադատ հիացքին»։*

*Որպես իր ուսումնասիրության ելակետ, նա նշում է «Հայոց պատմության» բոլոր առկա ձեռագրերի, ինչպես նաև կորած, բայց այլ մատենագիրների մոտ իրենց հետքը թողած ձեռագրերի օգտագործման հանգամանքը. շեշտելով միաժամանակ, որ «չի կարելի հիմնվել այս կամ այն ձեռագրի կամ մատենագրի եզակի հատվածի վրա», և որ «ժամանակագրական տարբեր տվյալներից ընդունելի է այն, որ համերաշխվում է ընդհանուր սիստե-*

մին»: Նա գոհունակությամբ մեջ է բերում «Ք. Պատկանյանի իրավացի խոսքը, թե՝ Խորենացուն պետք է հենց իրենով ստուգել» (էջ 207):

Այնուհետև Թ. Ավդալբեգյանը իր նախորդների հետ համեմատած մի շատ կարևոր քայլ է անում Խորենացու ժամանակաբանության ուսումնասիրման գործում, ընտրելով որպես հետազոտության հենակետ կամ սահմանակետ Խորենացու ժամանակագրության ոչ թե մի կետ՝ Պարթև Արշակունիների իշխանության առաջին տարին՝ մ. թ. ա. 250 թվականը[1], այլ որոնելով ու գտնելով նաև երկու այլ սահմանակետեր՝ Քրիստոսի ծննդյան և Տրդատի գահակալման տարեթվերը (այս բոլորը, իհարկե, ըստ Խորենացու):

Բոլոր այս դրույթները մեզ համար միանգամայն ընդունելի են և մասամբ նման եզրակացությունների էլ հանգել ենք, հատկապես, յուրաքանչյուր տվյալի՝ որպես նրա ստուգության չափանիշ՝ ամբողջ համակարգին հարազատ լինելու, ինչպես և ժամանակագրական սահմանակետերի, կամ, մեր հորջորջմամբ՝ կռվանների, հաստատման անհրաժեշտության հարցերում (թեև մեր պատկերացմամբ որոշ չափով այլ են կռվանների թե՛ քանակը՝ 12 կամ ավելի, թե՛ որակը. դրանք, մեր կարծիքով, հենակետեր են ոչ միայն համակարգը ուսումնասիրելու համար, այլև կռվան են հանդիսացել հենց Խորենացու համար, երբ նա կերտում էր իր ժամանակագրությունը):

Թ. Ավդալբեգյանը առաջարկել է նաև «ժամանակաբանական ստուգումների նոր եղանակ՝ քննել Խորենացու Բ գրքի ժամանակաբանությունը նախ երկու խոշոր կտորների վերածելով՝ ա) Քրիստոսից հետո, բ) Քրիստոսից առաջ», որը «հեշտացնում է գործը և կատարվող սխալների հետևանքները չի տարածում ամբողջ շղթայի վրա» (էջ 208): Հետևելով այս եղանակին, հեղինակը նախ և առաջ ձեռնարկել է պարթև և հայ Արշակունիների շարքերի՝ Քրիստոսից հետո ընկած հատվածների ուսումնասիրմանը, որի հետևանքն են հանդիսանում թվական չորս ուղղումներ, այն է՝ պարթև Արշակի տարիները 19-ից դարձնել 17, պարթև Արտավանինը՝ 31-ից՝ 36, հայոց Երվանդինը՝ 20-ից՝ 21, հայոց Վաղարշինը՝ 20-ից՝ 21: Այս ուղղումներից առաջին երեքը առաջարկվել են դեռևս Ն. Ադոնցի կողմից և լրիվ ընդունելի են մեզ համար, որովհետև անմիջապես բխում են Խորենացու բուն տված սինքրոնիկ ցուցումներից: Չորրորդը, որ նորություն է, առայժմ մեզ չի համոզում, որովհետև անհրաժեշտ չի թվում:

---

[1] Այդ թվականը թյուրիմացաբար մի դեպքում անվանված է «Բ գրքի ժամանակաբանության սկզբնակետ», մյուս դեպքում՝ «Սելևկյան հարստության հիմնադրման թվական». իրականում Բ գրքի ժամանակագրության սկզբնակետը և, որ նույնն է, Սելևկյան հարստության հիմնադրման թվականը մ. թ. ա. 312/311 թվականն է, որին Թ. Ավդալբեգյանը իր թեզերում ոչ մի անգամ չի անդրադարձել:

*Սրանից հետո Բ. Ավդալբեգյանը անցնում է իր զեկուցման հիմնական խնդրի լուծմանը, որին, բնական է, ավելի մանրամասն ու փաստարկումներով հագեցած շարադրանք է նվիրված: Այդ հիմնական խնդիրն է պարթև և Հայ Արշակունիների շարքերի՝ Քրիստոսից առաջ ընկած հատվածների ուսումնասիրությունը և նրանց ժամանակագրության վերականգնումը:*

*«Պատմական ժամանակամիջոցը 252 կամ 250 տարի է,— գրում է Բ. Ավդալբեգյանը,— Խորենացու տված գահատարիքի գումարը 210—212 է, պակասում է 40 տարի»[2]: Բացը լրացնելու փորձեր արել են Վիտոն եղբայրները, Սեն-Մարտենը և Ք. Պատկանյանը: Վիտոնների փորձը հեղինակը կամայականապես մերժում է: Սեն-Մարտենի և Ք. Պատկանյանի փորձերը նա առանձին-առանձին նույնպես մերժում է (որովհետև նրանք միայն 20-ական տարի են ավելացնում և չեն լրացնում բացը), բայց ընդունում է նրանց առաջարկների սինթեզը՝ որը տալիս է որոնելի 40 տարին: Այդ առաջարկներն են. ա) պարթև Արշականին Խորենացու մոտ հատկացված 30 տարիների փոխարեն տալ 50 տարի. հիմք՝ տարընթերցումներից մեկը հիշատակում է Արշականի 49-րդ տարին. բ) պարթև Արտաշեսին Խորենացու մոտ հատկացված 26 տարիների փոխարեն տալ 46 տարի. հիմք՝ Սամվել Անեցու, Այրիվանեցու (Ք. Պատկանյանի բերած), Մխիթար Անեցու և Խաչատուր Ջուղայեցու (Բ. Ավդալբեգյանի ավելացրած) տվյալները:*

*Սրանով լրանում է անհրաժեշտ հանրագումարը, սակայն կարիք է ստեղծվում երկարացնել նաև հայոց գիծը (միայն 20 տարով, որովհետև պարթևների գիծը երկարացնող գործողություններից մեկը կատարված է հայկական գծի սկզբնավորումից առաջ ընկած հատվածում և չի առնչվում սրա հետ), որպեսզի ուժի մեջ մնան Խորենացու 11 հայ-պարթևական սինքրոնիկ ցուցմունքները: Բ. Ավդալբեգյանը առաջարկում է 20 (Ի) տարի վերագրել Տիգրանի որդի Արտավազդին, որի համար Խորենացու ներկա տեքստում բացառության կարգով ոչ մի թիվ չի տրված, իսկ հետագա պատմիչները տալիս են 2 (Բ) տարի: «Ի տառի գլխի ջնջումը շարժում է Հայ Արշակունիների ամբողջ խրոնոլոգիան»: Որպես այս երկու ուղղումների հետևանք լրանում է պարթև և Հայ Արշակունիների համար պահանջվող ժամանակաշրջանը և միաժամանակ պահպանվում են Խորենացու բոլոր 11 սինքրոնիկ ցուցմունքները: «Միակ անախրոնիզմը,— գրում է Բ. Ավդալբեգյանը,— Տիգրան՝ Արշեզի ժամանակ՝ 1—2 տարվա տարբերությունն: Այս ուղղվում է Վարդան պատմիչով, որ Տիգրանին տալիս է 34 տարի փոխանակ 33-ի»:*

*Բ. Ավդալբեգյանի այս առաջարկները շատ սրամիտ են և նրանցից յուրաքանչյուրը առավել կամ պակաս չափով իր հիմնավորումն է գտնում մի շարք միջնադարյան մատենագիրների տվյալներում, ինչպես և հեղինակի դատողություններում: Վերջապես նրանք չափազանց գայթակղեցուցիչ են*

---

*2 Տեքստում՝ 110—112՝ վրիպակ (էջ 208):*

պատմաբանի համար, որովհետև մոտեցնում են Խորենացու ժամանակագրության այս հատվածը արդի ժամանակագրական պատկերացումներին:

